

1870
The
Fingert's



06 MAY 2010

Գ.ԵՒՈՐ ԷՐԳ.ԵՐ

ՅԱՐԱՆԱԿ ԴՄՈՒՄ 211 Ե.

ՅԱԲՈՒՆԵՐ

ՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

և պատիւ ու զօրութիւն
Որդւոյն և Սուրբ Հոգւոյն,
Սրբորդութեան
բարձունքս յաւիտեան:

19

ՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

և պատիւ ու զօրութիւն
որն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն,
Սրբանական Սրբորդութեան
Փառք ի բարձունս, փառք ի բարձունս,
Փառք ի բարձունքս յաւիտեան,
Փառք ի բարձունս, փառք ի բարձունս
Սրբանական Սրբորդութեան:

Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն,
Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն,
Հօրն ու Որդւոյն և Սուրբ Հոգւոյն.

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա, ամէն, ամէն.
ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա, ամէն
ամէն. Ալէլուիա, ամէն. ալէլուիա, ամէն.

3 ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

ՄԱՍՆ Ա.

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խո
ղազութիւն, ի մարդիկ հաճութիւն.

Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ եւ
Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և զոյկես
ըզքեզ, Խոստովանիմք, Տէր, զքեզ և երկիրպս
զանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք
Տէր, զքէն վասն մեծի փառաց քոց:

ՄԱՍՆ Բ.

Տէր Թագաւոր, Սուրբ Երկնային, Աստու
ւ Լայր Ամենակալ.

Տէր և Որդի Հօր միածին, Յիսուս Քրիստոս
Սուրբ Արդի.

ՄԱՍՆ Գ.

Տէր Աստուած, Գառն Աստուծոյ և Որդի Հօր
Որ ասեր զմերս ի կուսէն, ողորմեցար.

Բարձեր զմեզս աշխարհի, և արդ ընկալ զա-
ղաշանքս մեր. Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր,
ողորմեաց մեզ:

ՄԱՍՆ Դ.

Ձի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ եւ,
դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս. Տէր և Հո-
գիդ Սուրբ, որ ի փառս Աստուած ընդ Հօր, Ամէն.
Ղ.-Է. Բ. 14

4 ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Փառք ի բարձունքս Աստուծոյ.
Եւ փառք Որդւոյն,
Նաեւ փառք Սուրբ Հոգւոյ.
Փառք, պատիւ Երբորդութեան,
Այժմ և միշտ յաւիտեանս
Յաւիտենից, Ամէն, Ամէն.

Մ-ԴԷ. ԻԱ. 9

5 ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱՅ

- 1 Ամէն Երկրորդեր, Տէրովմով ցնծացէք
Դողով և ուրախութիւնով.
- 2 Տէր Ենովային ընծաներ մատուցէք
Հոգւով և ճմարտութիւնով:



1-15709p

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

- 2 Գանդի գերազանց բարեբար է մեր Տէրձ,
Որ մեզ ըստեղծած է, և մենք՝
Անոր խոտաւէտ արօտին ոչխարներն՝
Պիտի անոր ձայնը լըսենք :
- 3 Անոր սուրբ դռները եկէք գոհութեամբ,
Անոր շըրահները մըտէք.
Անոր ծափ զարկէք հոն, և օրհներգութեամբ
Անոր անունէն գոհացէք:
- 4 Զի ինք մեր Աստուածն է. ի յաւիտենից
Կեցած են ու պիտի կենան
Անոր խորհուրդներն ու գործերն զըթալից
Ազգէ մինչև ազգ յաւիտեան.
Սուր. ԴԵ.

Թարգ. Elias Riggs

6 ԻՋԻՐ, ԱՐՔԱՅ ՀՁՕՐ

- 1 Իջիր, Արքայ հըղօր,
Անունըդ փառաւոր
Տուր որ գովենք,
Ամենատէր եղող,
Ամէն տեղ միշտ յաղթող,
Եղիր մեր վրայ տիրող.
Բեզ կ'աղաչենք.
- 2 Իջիր, Յիսուս փրկիչ,
Եղիր մեզ պահպանիչ.

ՓՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

- Մեզ միշտ օղնէ.
Գու օգնութիւնըդ մենք
Մեզի պարիսպ ընենք,
Գու վրադ մեր յոյսն դընենք.
Տէր, մեզ լըսէ.
- 3 Իջիր, ով Սուրբ Հոգի,
Եւ հիմա տուր մեզի
Վըկայութիւն
Թէ Տէրն մեզ կը սիրէ.
Մեր սիրտն առ, դուռն տիրէ,
Մի հեռանար մեզմէ,
Հոգի սիրուն:
- 4 Ով դու Երբեակ և մի,
Մեծ գովութիւնք քեզի
Անդուլ արուն:
Գու փառքըդ տուր որ մենք
Երկնից մէջ վայելենք,
Ու քեզ փառաբանենք,
Տէր երկնային:

Թ-Է՛՛ ԺԴ. 23

Թարգ. I. F. Pettibone

7 ՍՈՒՐԲ Է ԱՍՏՈՒԱԾ

- 1 Սուրբ Էս, սուրբ Էս, սուրբ Էս, Տէր,
Իհոնա, զօրաց Աստուած,

Տիեզերք, ամէն բաներ,
 Քու զօրեզ խօսքովդ ճընած,
 Բողբոտիքըդ երբ կեցան,
 Աչքըդ խիստ ուրախացաւ:
 Յայնժամ լըսուեցան երգեր,
 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր:

2 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
 Մեծ Եհովա, այժմ և միշտ.
 Թէպէտ հող, մոխիր ենք, Տէր,
 Կը սիրենք պաշտել քեզ մընա:
 Աշխարհէս անարգութեամբ,
 Բայց անկէ մեզ ես փրկած:
 Միաբան կ'երգենք քեզ, Տէր,
 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր:

3 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես, Տէր,
 Յաղթական զօրքերն կ'երգեն:
 Եւ փրկեալ անթիւ ազգեր
 Քեզ պիտի երկրպագեն,
 Եւ հրեշտակք, սուրբերն ամէն
 Յնձութեան ձայն վերցընեն:
 Միաբան ըսուին երգեր,
 Սուրբ է, սուրբ է, սուրբ է, Տէր:

Տ Կ'ՕՐՀՆԵՆՔ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱՆ

1 Կ'օրհնենք քեզ, Աստուած, զի փրկիչը եկաւ:
 Խային վրայ մեռաւ և վերն փառքով համար-
 Ալէլուիա, մեր փրկիչը, [ձաւ:
 Ալէլուիա, ամէն:
 Ալէլուիա, քուկդ է փառքը,
 Սրբէ մեզ նորէն:

2 Կ'օրհնենք քեզ, Աստուած, զի հողիդ ալ ի՛նչաւ,
 Մեզ փրկիչը յայտնեց և խաւարը անցաւ:
 Ալէլուիա, է- այլ:
 [Գառնուկին,

3 Միշտ փառք և գովեստ տանք զԵհովան
 Որ մեր մեղքը ջնջեց ու ներեց դարձողին:
 Ալէլուիա, է- այլ:

4 Միշտ փառք և գովեստ շնորհաց Աստուծոյն,
 Որ սիրեց մեզ, փնտռեց և առաւ իր Որդւոյն:
 Ալէլուիա, է- այլ:

5 Ո՛հ, մեզ արթընցուր և Հոգւովդ նորոգէ,
 Ամէն սիրտ երկնաւոր եռանդովդ վառէ:
 Ալէլուիա, է- այլ:

6 Ո՛հ, մեզ արթընցուր, մեռեալներս ողջնցուր,
 Իրաւսի ձայնն լըսենք, որ կ'ըսէ, յինձ եկուր:
 Ալէլուիա, է- այլ:

9 ՊԱՇՏԵՑԷՔ ԶՏԷՐ

Օն, սուրբ հանդիսիւ.
 Պաշտեցէք ըզՏէր,
 Սուրբն Աստուած,
 Պաշտեցէք ըզՏէր,
 Սուրբն Աստուած,
 Պաշտեցէք ըզՏէր,
 Սուրբն Աստուած:

1 փառք Հօրդ Աստուծոյ,
 Արդար, սուրբ և անաչառ,
 Սէրդ անզըրաւ և միշտ վառ,
 Գըթած, ողորմած, անճառ:

Կրօնէրէ՛ք Երգենք արդ ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա,
 Պաշտենք ճշմարտութեամբ և հոգւով մեր
 սրտերէն:

2 փառք Բանդ Աստուծոյ,
 Օրհնեալ մեր Փրկիչ և Տէր.
 Մեզ ա՛յնքան եղաւ քո սէր,
 Մինչ իսկ մեռնիլ յանձն առեր: Կրօնէրէ՛ք

3 փառք Հոգւոյդ Սրբոյ,
 Սրբարար ազգմամբ անհուն՝
 Իբր ճի՛ ազդարար անքուն,
 Կըցորդ փառաց Հօր, Որդւոյն: Կրօնէրէ՛ք

Ս-յր. է. 12 Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

10 ՍՈՒՐԲ Է ԵՀՈՎԱՆ

1 Սուրբ է, սուրբ է, սուրբ է Եհովան.
 Ով դուք ազգեր, ցնծմամբ պաշտեցէք զայն.
 Թող անոր խօսքով լեռներ դողան,
 Թող կայստին անդուլ բլուրներ առ այն:
 Վե՛հ հանճարովն իր և տիրովն անհուն
 Մեծ է Եհովան, Տէր ամենուն:
 Սուրբ է, սուրբ է, սուրբ է Եհովան,
 Թող կայստին անդուլ բլուրներ առ այն:

2 Միշտ օրհնէ զայն, Քվ դէտ Սթօնի,
 Սուրբ Բերկրութեամբ պատմէ դու հին լուրը.
 Իր ոյժով մեղք, մահ, կը ջընջըի,
 Եւ կ'երգէ Երկիրն անհուն փառքը.
 Շուրջ իր գահուն, սուրբեր, գովեցէք զայն,
 Փառք ըզգեցած, վե՛հ, անզուգական:
 Սուրբ է, սուրբ է, սուրբ է, է- այն:

3 Միշտ օրհնեալ ես, Արքայ մշտնջեան,
 Բու որդիներդ խնդիւ կը պաշտեն քեզ.
 Սուրբ նուագին Երկնից երբ միայնան,
 Հոն կրկենն քեզ ծունըր սիրով հեղ.
 Հոն, սուրբ լուսոյ մէջ, երբոր զարթնունք մենք
 Հոն, տեսնենք պիտ' քեզ և միշտ երգենք,
 Սուրբ է, սուրբ է, սուրբ է, է- այն:

Յ-յր. ժԵ. 3, 4 Թարգ. Ա. Կ. ԿԻԼՊԷՆԿԵԱՆ

11 ՏԷՐՈՋ ԱՆԵՂ ԳԱՀՈՒՆ ԱՌՋԵՒ

- 1 Տէրոջ անեղ դահուն առջեւ
Խանարհեցէք սուրբ բերկրանքով:
Գիտցէք թէ Տէրն է սոսկ Աստուած,
ինք կեանք և մահ տայ իր ձեռքով:
- 2 Աստուածային իր անհրճ
Մեղ ձեւացուց և մարդ ըրաւ,
Երբ զերդ ոչխար էինք մօլոր,
Կրկին մեղ իր փարսխ բերաւ:
- 3 Իր հօտն ենք, իրն է մեր հոգին,
Եւ մահացու այս կերպարան.
Ինչ փառք անվերջ տանք սրտագին,
Հըզօ՛ր Աստուած, քու սուրբ անուան:
- 4 Մանենք դռներն օրհնեղգութեամբ,
Մինչեւ կրկինք ելլէ մեր ձայն.
Եւ այս երկրի բիւր բարբառներ
Մէջ տաճարիդ արձագանդ տան:
- 5 Մեծ է սահմանդ, անհունութիւն,
Եւ սերդ անհուն, անմահ է, Տէր.
Ճշմարտութիւնդ, Ժա՛յս հաստատուն,
Կեցցէ՛ երբօր անցնին դարեր:

Սուր. Դ. Ե. Թարգ. Ա. Կ. Կիիւ. Պէնկսն

12 ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ, ՍՈՒՐԲ ԵՍ, ՏԷՐ

- 1 Սուրբ էս, սուրբ էս, սուրբ էս, Տէր, Հայր
Աստուած մեր,
Քեզ կ'աղչենք սրտանց առաւրան մեր քաղցր
Երգեր:
Սուրբ էս, սուրբ էս, սուրբ էս, Տէր, տըիչ
Բիւր բարեաց,
Տէր ամէնուն, երբեակ անձ, մի Աստուած:
- 2 Սուրբ էս, սուրբ էս, սուրբ էս, ձայն տայ
սրբոց դաս,
Երբ անոնց դէմքին քու շնորհէր բաժին կուտաս:
Սուրբ գահիդ առջին անոնք ծածկած դէմքով են
Եւ հոն անդու լ' օրհնեալ անունդ գովեն:
- 3 Սուրբ էս, սուրբ էս, սուրբ էս, Տէր մեծ,
փառքովըդ
Ձը կենար երբեք պղծութեան ճըշտ մը քովդ:
Դու մաքուր հոգւոյն տաս քու գանձէդ բարիք
Ով չի՛նջ սիրոյ և սուրբ կեանաց աղբիւր լճիւր:
- 4 Սուրբ էս, սուրբ էս, սուրբ էս, Տէր, Հայր
Աստուած մեր,
Քու անունըդ միշտ կը գովին ձեռացդ գործեր,
Սուրբ էս, սուրբ էս, սուրբ էս, Տէր, տըիչ
Բիւր բարեաց,
Տէր ամէնուն, երբեակ անձ, մի Աստուած:

Ծ. Գ. 3 Թարգ. Ե. Թ. ԳԱՅԱՅԱՅ

13 ԱՊԱՀՈՎ ՏԵՐՆ ՄԵՁ ՊԱՀՆՑ

- 1 Ապահով Տէրն մեզ պահեց
Այս շարաթ ալ մահուանէ,
Եւ այսօր մեզ հոս ժողվեց,
Որ շընորհք խնդրենք իրմէ.
Ինչ հաճոյ է կիրակին,
Է նըման երկնաւորին:
- 2 Երբ շընորհքըդ, Տէր, խնդրենք
Սիրելի փրկիին ձեռքով,
Լուսափայլ երեսդ տեսնենք,
Մեր մեղքերն քաւուին քեզմով,
Թող աշխարհ անյայտ ըլլայ,
Եւ քու փառքըդ երեւնայ:
- 3 Երբ որ քեզ փառաբանենք,
Տուր որ քեզ ներկայ ճանչնանք.
Եւ քու փառքըդ մենք տեսնենք,
Երբ մէկտեղ տաճարդ կու գանք:
Համն առնել տուր, Տէր, մեզի
Յաւիտենական ճաշի:
- 4 Քարոզուած ճշմարտութիւն
Մեղաւորն թող նորոգէ,
Սիրողներն զարդարութիւն
Եւ սուրբերն մըխիթարէ:

Թող ամէն մէկ կիրակի
Պատրաստէ մեզ երկինքի:

Եւ. ԵՐ. 13, 14

14 ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏ

- 1 Ոհ, պայծառ ու գեղեցիկ օր տէրունի,
Կ'ողջունենք քու լոյսդ ըզմայլելի,
Որ այս գիշերուան խաւարը ջըրուելով,
Փայլեցաւ ժըպիտներով:
Ոհ, օր խաղաղ, սուրբ, օր երկնային,
Օր սեպհական, աստուածային,
Առաւօտ զըւարթարար ու տէրունի:
Ողջոյն քեզ, լոյսդ բերկրալի:
- 2 Վեց օրերն աշխատութեան անցան գացին,
Մարմնաւոր գործերն վերջացուցին.
Արդ ուրախանանք, հասաւ օրն հանգըստեան,
Օրն զըւարթ, տէրունական.
Ոհ, օր խաղաղ, սուրբ, Լ այլ:
- 3 Ուստի վայելենք այս պատուական ժամերն,
Ինչպէս պատուիրեց Աստուած մեր Տէրն,
Որ առաջնորդ ու ինք երկնից սուրբ հանգստեան,
Վայելենք փառք յաւիտեան:
Ոհ, օր խաղաղ, սուրբ, Լ այլ:
Մ-դ. Դ, Բ.

15 ՕՐՆ ԶՈՐ ՏԷՐՆ ՕՐՀՆԵՅ

1 Այս է այն օրն զոր Տէրն օրհնեց,
Երկինքը թող ցնծայ.

Այս օրն իրեն սեպհականեց,
Երկինն ուրախանայ,

2 Այս օր մեր Տէրն սատանային
Յաղթեց, երբոր յաբեաւ.

Ննչեցեցեց երախայրին
Գերեզմանէն ելաւ:

3 Այսօր սուրբերն կը ժողովուին,
Որ զինք սիրով յիշեն.

Իրենց Փրկչովը կ'աշայտին,
Իր փառքը կը յայտնեն:

4 Ահա մեզ օրհնելու կուգայ

Մեծ Դաւթի Որդին.

Յիսուս, ողջօշն քեզ, ովսաննա
Օծեալ թագաւորին:

Ս-դ. ճժԸ. 24

Թարգմ. Elias Riggs

16 ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏ

1 Այս առաւօտ օրհնեա
Ի նչ քաղցր է իմ հոգւոյս,
Անոր ճառագայթներն

Կու տան հրճուանք և յոյս.

Գործ աշխարհի, զըւարճութիւն
Զաւրեն թող իՏ հանգիստ սիրուն:

2

Արքայն կենաց իջած՝
Բաշխէ շնորհք երկնային.
Զայն պաշտելով՝ ազգերն
Հաւտան ու փրկուին.

Թող ընդունին մեղաւորներ
Քու խօսքըդ սուրբ, շընորհքըդ, Տէր:

3

Սուրբ Աղաւնիդ բարձրեալ,
Դուն մեզ այսօր օրհնէ.

Սրբէ, ո՛հ, մեր սրտերն,
Անոնց մէջ բընակէ,

Որ մեր հոգին կեանք գտնելով
Տէրովը փառք տայ ցնծալով:

Ս-լ. Ե. 3

Թարգ. ՄԿՐՏԻԶ Տ. ԳԻՐԷԶՃԵԱՆ

17 ՏԷՐՈՒՆԻ ՕՐՆ ՀԱՃԵԼԻ

1 Գործ հաճելի հոգւոյս է, Տէր,
Կարդալ անուանդ օրհնութիւններ.
Առաւունքու սէրդ գովաբանել,
Իր'կուսն խօսքերըդ մըտածել

- 2 Վայել է այս օրն հանգստեան
Որ խորհուրդներս յերկինս ըլլան.
Քնար ներդաշնակ թող սիրտս ըլլայ՝
Տեառն օրհնութիւն երգել հիմա:
- 3 Սիրաբն ցնծար Տէրոյ՛ համար,
Իր գործքն ու խօսք փառաւորեալ,
Խիստ մեծ է գործքն փրկութեան,
Տնօրէնութիւն իմաստութեան:
- 4 Թէ կատարեալ է փրկութիւնս,
Է պատուական երկնից բաժինս,
Թշնամիէս, որ է մեղք իմ,
Ոհ, յաւիտեան ես կ'ազատուիմ:
- 5 Հոս ունեցած բողձանքս բոլոր
Լեցուած պիտի տեսնեմ ես հոն.
Հոն տալ գովեստ քու սուրբ անուան
Ըլլայ իմ գործքս յաւիտեան:

Ս-չ. 27. Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՉՃՅԱՆ

18 ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԻՐԻԿՈՒՆԸ

- 1 Սուրբ օրն իր վախճանին
Հիմա ալ մօտեցաւ.
Իմ վրաս այս կիրակին
Ի՞նչպէս հաշիւ արուաւ:
Արդեօք ինձ փոխ արքունած
Փամերը յարդեցի՞ր:

- Բէ՛ օրըդ, ով Աստուած,
Պարտապ սեղ վատնեցի:
- 2 Դատապարտեալ հոգին
Ի՞նչ մեծ ցաւով կ'ողբայ
Վատնած այն կիրակին,
Որ պիտի չը դառնայ:
Ի՞նչ յուսահատութիւն՝
Երբ լնքնիրեն ըսէ,
«Պատրաստ կար փրկութիւն,
Բայց մերժեցի ինձ մէջ»:
- 3 Կիրակիին ժամերն
Չը յանդրգնինք պղծել,
Կամ աղծթփի օրերն
Ունայն կերպով վատնել:
Սուրբ օրը թող ըլլայ
Մեզի երկնից նրման.
Կանխաւ ճաշակը տայ
Վերին սուրբ հանգստեան:

Խ. ԵՁ. 2, 6, 7 Թարգ. Elias Higge

19 ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹԻ

- 1 Ով մեր Հայրը Լըկնաւօր,
Քաւ անունըդ սուրբ ըլլայ՝
Տէրութիւնըդ փառաւոր
Թող շուտով ամէն տեղ դայ:

1-157091



2 Գու օրհնեալ կամքդ ալ ինտոր
Վեր երկինք կը կատարուի,
Այդպէս, ով Տէր Թագաւոր
Հոս ալ միշտ ի գործ զըրուի:

3 Ով Հայր, տուր այնոր մեզի
Մեր ամէն օրուան հացն ալ,
Որ առողջութեամբ քեզի
Մտռայենք, ով Տէր օրհնեալ:

4 Մերկի Որդոյդ համար
Մի յիշեր մեր յանցանքներ,
Մենք ալ միշտ կ'ուզենք մտռալ
Մեր եղբօր ամէն պարտքեր:

5 Փորձութեան մեզ մի տանիր,
Ազատէ մեզ միշտ չարէն,
Զի քակդ է փառք և պատիւ,
Ով Տէր, յա՛խտեանս Ամէն:

Մատթ. 2.9-13

Թարգ. Elias Riggs

20 ՏԵՐՈՒՆԻ ԱՂՕԹՔ

Ով Հայր մեր որ յերկինս ես, քու ա | նունըդ
| սուրբ ըլ | ւայ. || քու Թագաւորութիւնդ զայ,
քու կամքդ ըլւայ, ինչպէս երկինքը | ինչպէս |
երկրի | զւայ. ||

Մեր հանապազորդ | հացը... տուր | մեզ
այս | օր. || և ներէ մեզ մեր պարտքերը, ինչպէս
մենք կը ներենք մեր պարտա | պաններ | բուն. ||
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ ազա-
տէ ըզ | մեզ չա | բէն. || քանզի քու կդ է Թագա-
ւորութիւնը և զօրութիւնը և փառքը | յա | ի-
սեանս | Ա | մէն:

21 ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

1 Ով Հայր մեր երկնաւոր,
Անունըդ սուրբ ըլւայ.
Դուն ես մեծ Թագաւոր,
Արքայութիւնըդ զայ,
Գու կամքդ ալ բարի
Մարդիկ թող կատարեն,
Ինչպէս կը կատարուի
Երկնից հրեշտակներէն:

2 Ձեռքէդ հաց կը խնդրենք,
Շնորհէ մեզ թողութիւն.
Մենք ալ պիտի ներենք
Մեր պարտականներուն
Մեզ մի տար փորձութիւն,
Այլ ազատէ չարէն.
Գու կդ է արքայութիւն
Եւ ոյժն ու փառքն Ամէն:

Թարգ. Elias Riggs

22 ԺԱՄՆ ԱՂՕԹՔԻ

- 1 Ժամն աղօթքի, ժամն աղօթքի,
Որ աշխարհէս զիս կը զատէ,
Որ Հօրըս աթոռին դիմեմ,
Ու իմ կարօտութիւնս յայտնեմ:
Երբ ցաւ ու վիշտ վրաս կը տիրէ,
Հոգիս հանգիստ միշտ կը գտնէ,
Փորձութենէ ալ կ'աղասոի
Քու հասնելովդ, ժամ աղօթքի:
- 2 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,
Աղերսըս թեւերովդ տարուի
Շնորհաց աթոռը նստողին,
Ձղջացեալին ձայնն լըսողին,
Իրեն դիմել կը պատուիրէ,
Շընորհք խնդրել կը հրաւիրէ:
Հոգերս անոր ձըղեմ պիտի,
Քեզ ըսպասեմ, ժամ աղօթքի:
- 3 Ժամ աղօթքի, ժամ աղօթքի,
Մըխտիթարիչ ըլլաս ինծի,
Մինչև փասգա լեռնէն նայիմ,
Տեսնեմ իմ առնըս երկնային:
Տըկար մարմինս պիտի ձըղեմ,
Տերօջըս քով պիտի ելլեմ,
Ու երթալով երգեմ պիտի,
«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի»:

Ս-Գ: ձևի:

23 ՇՆՈՐՀԱՅ ՍՈՒՐԲ ԳԱՀ

- 1 Ազատ ամէն խիստ հովերէ,
Ազատ ամէն փոթորիկէ,
Կայ տեղ մ'անդորր ու ապահով,
Եւ այն Շնորհաց գահուն է քով:
- 2 Կայ տեղ մը որ Յիսուս հեղու
Սուրբ իւզն օծման վրայ մեր գլխու,
Տեղ ամէնէն անուշ, սիրուն,
Եւ այն է մտա Շնորհաց գահուն:
- 3 Հոգեպարտը, վեհ տեսարան,
Ուր սերտ սրտեր կը միանան
— Թէև զտուտած — ջերմ հաւատքով,
Շնորհաց գահուն շուրջն անվրդով:
- 4 Մն, արծիւի առած թեւեր,
Նըսեմ երկրէս թռչինք ի վեր:
Մեզ ողջունել երկինք կու գայ,
Եւ փառք պատկէ Շնորհաց սուրբ քահ:
Ս-Գ: ձժՁ. 7 Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏՈՍԵԱՆ
Բարեփոխեց Ա. Կ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

24 ՔՈՒ ՇՆՈՐՀՔԻ, ՏԷՐ

- 1 Քու շնորհքը, Տէր, թող ինձ յիշէ:
Ո՛վ էր մեղքերն կը հասկընայ,

Կամ իր յանցանքը միտք կ'առնէ.
Ո՞վ քու առջիդ կ'արդարանայ:

2 Գու շնորհքըդ, Տէր, թող զիս ուրբէ.
Գու ըընութիւնդ ինծի ալ տուր,
Գու սուրբ խօսքով զուս զիս մաքրէ,
Ինչպէս որ է փրկիչս մաքուր:

3 Գու շնորհքըդ, Տէր, թող ինձ օգնէ,
Գանդի ես ինքս եմ խիստ տըկար.
Թշնամիէն միշտ պաշտպանէ,
Երբեք ինծմէ մի հեռանար:

4 Գու շնորհքըդ, Տէր, թող զիս ուրբէ.
Ինձ պատուիրած ես որ հսկեմ.
Դուս ալ զիս քու ձեռքովդ բռնէ,
Որ փորձութեան մէջ չը մտնեմ:

5 Գու շնորհքըդ զիս ուրբէ.
Ձիս կերակրէ երկնից հացով.
Գու խորհրդովդ առաջնորդէ,
Եւ ընդունէ զերջն ալ փառքով:

Թ-1. Ե. 15

Թարգ. Elias Riggs

25 ԱՍՏՈՒԱՅ ԱՄԻՆ ՏԵՂ Է

1 Շընորհաց աթոռն փնտուող
Չայն ամէն տեղ կը գըտնայ.
Մէնք երբոր ենք աղօթող,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ:

2 Թէ հարուստ ենք, թէ աղքատ,
Թէ առողջ կամ թէ տըկար,
Երբ մեր ձայնն է աւընդհատ,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ:

3 Երբ ճարեցրիս կը համնին,
Ու ինծի հանգիստ չըկայ,
Թող ուժերս չըլքանին,
Չի իմ Տէրս է միշտ ներկայ:

4 Ով հոգիս, փրկիչիդ եկուր,
Ինչ տաղանսս որ վրայ կու գայ.
Ան պարսպ քեզ չը թողուր,
Չի մեր Տէրն է միշտ ներկայ:

Մ-7Է ԺԸ. 20

26 ԱՂՕԹՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԷՏՔԸ

1 Աղօթքն է խօսք շատ զօրասոր,
Խորին բաղձանք կուրած սըրտի.
Ան է մեզի միջոց հըրօր,
Ձի Տէրն անով մեզ կ'ընդունի:

2 Մարդիկ անով կեանք կը գտնան,
Ազատութիւն մեղքի ուժին.
Եւ յաղթելով զըբանց մահուան,
Ուրախութեամբ երկինք կ'երկնի:

- 3 Անով երկեր, երկինք վերին,
Նորէն սիրով կը միանան.
Զի Հայր Աստուած, Աստուածորդին
Անով կ'իջնեն ի մէջ մարդկան:
- 4 Եւ Սուրբ Հոգին մեզ օգնելով
Մեր աղօթքին Տէրն կը լռուէ.
Յիսուս իր ուխտը յիշելով՝
Ամէն բան մեզ կը պարզուէ:
- 5 Յիսուս, ձայնիս դուն ունկըն դիր,
Եւ ընդունէ իմ սիրտս բոլոր.
Դուն որ անգուլ աղօթք ըրեր,
Աղօթք ընել ինձ սորվեցոր:

8-1. Ե. 16

27 ՈՎ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ

- 1 Ով Սուրբ Հայր, ինձ ցուցուցեր ես
Յոյսըս է միայն քեզմէ.
Օրէ օր զիս անցուցեր ես
Բաղմաթիւ վրտանգններէ:
Դուն, Տէր, մութրած ատենըս
Առաջնորդելիք ինձի.
Միշտ եղիր, Տէր, ապուէնըս,
Թող ապրիմ միայն քեզի:
- 2 Խորամանկ թըշնամիներըս
Միշտ կը յարձակին վրաս:

Ես գիտեմ, բոլոր օրերըս
Կախ պիտի ըլլայ պահաս:
Երկնաւոր շնորհաց աթոռը,
Հոն միայն պիտի դիմեմ.
Որ իմ նեղութեանըս օրը
Զօրութիւն քեզմէ գանեմ:

- 3 Հայր իմ, քու պաշտպանութեանըդ
Տուր որ միշտ ապաւինիմ,
Եւ քու առաջնորդութեանըդ
Զուկիդ պէս թող հեռուիմ
Քու աչքովըդ, Տէր, ուղղէ զիս,
Փորձիչէն քեզի դառնամ.
Թեւերուդ տակ, Տէր, պահէ զիս,
Միշտ քու քովըդ թող կենամ:

Ս-ւ. ճԽԾ. 18, 19 Թարգ. Elias Riggs

28 ՏԵՐՈՋԸ ՏԱՐ

- 1 Ի՛նչպէս բարեկամ է Տէրը,
Միշտ մեզի կը հաճերէ,
Կը ներէ մեր յանցանքները.
Մեր վիշտերն ալ կը կըրէ:
Քրիստոնեայ, արտօնութիւնըդ
Այս է միշտ բերկրապատար,
Քու ամէն վորձառութիւնըդ
Աղօթքով Տէրսը տար:

- 2 Շատ անգամ խաղաղութիւնը,
 Ո՛հ, ի դուր կը կորսնցնենք,
 Աղօթքի արտօնութիւնը
 Երբ մոռնանք կամ զանց ընենք,
 Մէկը կ'ա՞յ որ Յիսուսի շափ
 Քեզի ցաւակից ըլլար՝
 Վաստակ անոր, հոգերըդ
 Աղօթքով Տէրօջը տար:
- 3 Գուն յոգնած, բռնաւորուած ես,
 Սիրելիքըդ հեռացուցնի.
 Բու փրկիչըդ քեզ կ'անչա՞ծ է,
 Ինք կ'ըլլայ քեզ ապաստան,
 Յիսուսի բաց բազուկները
 Ապաւէն են փրկարար,
 Շուտ դիմէ հոն, և սմէն բան
 Աղօթքով Տէրօջը տար:

Եւ. ԻԵ. 22

Թարգ. Elias Riggs

29 ՉԻՍ ԱԼ, ՏԷՐ

- 1 Տէր, այցելութեամբդ երկիրը
 Շուտ կ'ընեն խիստ սլոտոգարիւր,
 Հիմա օրհնութեանդ անձբերը
 Թող կ'աթի իմ վրաս ալ, Տէր,
 Վրաս ալ, Տէր,
 Թող կ'աթի իմ վրաս ալ, Տէր:

- 2 Մի անցնի՛ր ինձմէ, ով Հայրըս,
 Կորսուածըս դուն փնտռէ.
 2րեակէս ներքէ մեղքերըս,
 Գըթութիւնդ ինձ պարզուէ.
 Ինձ ալ, Տէր,
 Գըթութիւնդ ինձ պարզուէ:
- 3 Մի անցնի՛ր ինձմէ, փրկիչըս,
 Քեզ սիրեմ, քեզի յարիմ.
 Բաղջըր ձայնդ լսէ ականջըս,
 Զիս կ'անչէ, քեզ հետեւիմ.
 Զիս ալ, Տէր,
 Զիս կ'անչէ, քեզ հետեւիմ:
- 4 Ուրիշներ քու ձայնդ լսած են,
 Եւ զըտած են փրկութիւն,
 Բու չընօրհարը ընդունած են.
 Տուր ինձի ալ օրհնութիւն.
 Ինձ ալ, Տէր,
 Տուր ինձի ալ օրհնութիւն:
- 5 Թէև քեզ շատ հեղ մոռցած եմ,
 Սուրբ Հոգի, մ'անցնի՛ր ինձմէ.
 Քեզ մեղքովս վատացուցած եմ,
 Ո՛հ, ներէ և զիս փրկէ.
 Զիս ալ, Տէր,
 Ո՛հ, ներէ և զիս փրկէ:

Ս-չ. 26. 6

Թարգ. Elias Riggs

30 ԱՍՏՈՒԱՅ ՊԱՇՏՊԱՆ

- 1 Մի թողուր զիս, ով Աստուածըս,
Թող քեզմէ չը մոլորիմ:
Ուժովցուր, Տէր, իմ քաջուածքըս,
Եթէ ոչ ես կ'լնեկովմ:
Պահպանէ զիս, պաշտպանէ զիս,
Որ երբեք չը կորսուիմ:
- 2 Աշխարհիս անթիւ հոգերը
Կ'արգիլեն զիս, Տէր, քեզմէ:
Սատանան իր հրատարակները
Իմ առջևս կը դլնէ:
Վարմերովը, նենգերովը
Թող զիս չը մոլորցընէ:
- 3 Ով Յիսուս, ջըբուէ վախերըս,
Գու խոստամո, նըք է հաստատան:
Դուն կընաս ներել մեղքերըս,
Ինձ լըսել տուր ձայնդ սիրոն:
Դուն ես լոյսըս, դուն ես յոյսըս,
Մի միայն փրկելըս դուն:
- 4 Ո՛հ, թէ ես սիրոյդ ուժովը,
Տէր Յիսուս, քեզի ձըդուիմ:
Ինձ օգնէ շողոյդ շնորհքովը,
Աշխարհէս հըրաժարիմ:

- Տէր, կանչէ զիս, ու քաշէ զիս,
Ես ալ պիտի հետեւիմ:
- 5 Իմ ներքին սենեակիս մէջը
Դուռը ետեւէս գոցեմ:
Ու սրտիս անկեղծ աղերսը
Աստուծոյս մատուցանեմ,
Արարելըս և փրկելըս
Առանձին տեղ թող գտնեմ:
Յուհ. Ե.Գ. Թարգ. Elias Riggs

31 ՊԱՆԴՈՒԻՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

- 1 Եհովա, առաջնորդէ զիս,
Զի պանդուխտ եմ ու կարօտ:
Շատ արկար եմ, զօրացուր զիս
Ամենակարող ձեռքովդ:
Դուն, երկնի շաց,
Կերակրէ զիս որ ապրիմ:
- 2 Բաց, ով Տէր, մաքրող աղբիւրը,
Այն ջուրով բըժըշկելիմ:
Թող ամոլի, կրակին սիւնովը
Այս տըխուր ձորէն անցնիմ:
Դուն, փրկիչ մեծ,
Ինձ եղիր ոյժ և վահան:
- 3 Երբ որ Յորդանան հասնիմ ես,
Յուրս մահուան երկիւղն վըրցուր:

Դուն որ մահը մեռցուցած ես,
 Ձիս երկինքը, Տէր, հասցուր՝
 Փառք, պատիւ քեզ
 Միշտ պիտի մատուցանեմ:

Եւ. ԺԳ. 19.

32 ԲԱՐԻ ՀՈՎԻԻԸ

- 1 Քաղցրութեամբ առաջնորդէ մեզ,
 Մինչ կ'ելինք ցաւոց ձորէն,
 Թող շքնորհօքդ զօրացընէ մեզ,
 Խափանէ մեր վախն ամէն,
 Զօրացուր մեզ
 Քու անհուն շնորհքովդդ, Տէր:
- 2 Թէպէտ և ցաւ ու շատ դառն վիշտ
 Մեզ ամէն կողմէ պատէ,
 Բայց Յիսուս մեզ կը փրկէ միշտ,
 Մեղքն ու դժոխքը կը յաղթէ.
 Խօսքն հաստատ է,
 Տէրն պիտի դայն կատարէ:
- 3 Երանի՜ թէ պաշտէի ես
 Քեզ, Փրկիչ իմ բարեբար.
 Ըլլայի երկնից զօրաց պէս,
 Որ գողնն քեզ անդադար.
 Երջանիկ եմ,
 Ե՛րբ պիտի ես հոն հասնիմ:

Սու. ԻԳ.

33 ՏԷՐՈՋԸ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂԻՆ ԱՂՕԹԻԸ

- 1 Խօսէ ինձ, Տէր, խօսի՛մ և ես,
 Արձագանդեմ՝ քու պատգամներ.
 Դու փնտռեցիր, փնտռեմ նոյնպէս,
 Քու կորուսեալ հէք զաւակներ:
- 2 Ուղղէ զիս, Տէր, ես եւս ուղղեմ
 Մոլորեալներն մեծաւ փութով.
 Ձիս կերակրէ, և կ'երակրեմ
 Անթիւներն քոյդ ման'նայով:
- 3 Ուստ ինձ, Տէր, ուսուցանել
 Քու խոստումներ շքնորհատու.
 Թեւ տուր բանիցըս թափանցել
 Իեզձ, յուսահատ շատ սրտերու:
- 4 Լիութենեդ, Տէր, զիս լեցու,
 Մինչև սրտէս բղիթին գետեր.
 Պարզ կենդանի բանիւ աղդու
 Յայտնեմ քու փառք, պատմեմ քու սէր:
- 5 Երբ, ինչպէս, ուր յարմար դատես,
 Ձիս գործածէ ըստ քու կամաց.
 Մինչև տեսնեմ քու սուրբ երես,
 Եւ մասնակցիմ քու կին փառաց:

Եւ. Գ. 12, 15 Թարգ. Տիկին ՀՌ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

34 ԱՂՕԹՔ

- 1 Ձըկայ, Տէր, ցաւ մ'այնքան շնչին
Որ չը բերուի քեզ աղօթքով:
Ձըկայ տագնապ մը դոյզն ինքնին
Որ չը շորժէ, Տէր, քու գորով:
- 2 Դուն, որ վշտաց կըզր տեղեակ,
Մեր վիշտերուն չես անտարբեր.
Սէրդ, որ հեծեց բեռներու տակ,
Ոհ, մեր բեռներն բնաւ չանտեսեր:

- 3 Ձըկայ լըռին հոգւոյ հառաչ
Որ, Տէր, չըլլայ քեզ լսելի.
Քաղցր է ուսիս ամէն կերպ խաչ,
Երբ քու խաչդ է ինձ հովանի:

- 4 Դուրսէն տագնապ, ներսէն մեղքեր.
Ահ, սիրաբա հէք ի՛նչպէս տոկար,
Թէ Տէրն ցաւոց վրայ շարտասուէր,
Եւ չը մեռնէր մեղաց համար:

ԵՔ. Բ. 18

Թարգ. Յ. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

35 ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ

- 1 Սըրտանց կու տամ փառք քեզ, ով Տէր,
Որ պահեցիր զիս այս գիշեր.
Ինձ արկարիս դուն հոգ տարիր,
Նոր լոյսն ալ ինձ տեսնել արեիր:

- 2 Տէր, այս լուսոյն հետ երեսիդ
Լոյսն ալ շնորհէ քու ծառայիդ,
Անով հոգւոյս խաւարն մեկդի
Առ, որ ըլլամ լուսոյ որդի:

- 3 Այսօր ալ ինձ առաջնորդէ,
Ազատ պահէ չարիքներէ.
Օգնէ ինձ որ բարիք գործեմ,
Քեզ և մարդիկ սրտանց սիրեմ:

Ս-Գ. Ե. 3

36 ԱՌՏՈՒԱՆ ԵՒ ԻՐԻԿՈՒԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԳ

- 1 Ի՞նչ անվախճան է, Տէր, քու սէրն,
Ամէն գիշեր քենէ կու գան
Նոր պարգեւներ, և առտուներ
Լուիկ կ'իջնեն ցօղի նըման:

- 2 Ամէն գիշեր զիս կը պահես
Ձըտեսնըւած վըտանգներէ.
Եւ առտըւանց դուն կը զրկես
Արեւդ որ զիս արթընցնէ:

- 3 Իմ անձըս քեզ կը նըրերեմ
Գիշեր ցորեկ, դուն իմ Տէրս ես.
Անթիւ շնորհքներ քեզմէ կ'առնեմ.
Փառք յաւիտեանս պիտի տամ քեզ:

ՈՂԷ. Գ. 22, 23

37 ԵՐԳ ԱՌԱԻՕՏԵԱՆ

- 1 Ի՛նչ սքտաչարժ այն քաղցր երգեր,
Որոնք մեզ կը հասնին,
Երբ մաղթելու՝ Տէրն սիրողներ
Առտուանց կը հաւաքուին:
- 2 Դէպ ի երկինք անուշ հովեր
Մաղթանքը կը տանին,
Հայրն կը լսէ անոնց ձայներ,
Կ'օրհնէ ալ լիովին:
- 3 Նոյնպէս Յիսուս կանուխ ելաւ
Ըղձիւ աղօթելու,
Ինքն անապատն առանձնացաւ
Հօրն հետ հաղորդելու:
- 4 Նոյնպէս հիմա ինք կ'աղօթէ
Լուսոյ մէջ՝ երկնային,
Մեզի համար կը մխնորդէ,
Որ դեռ ծովն ենք մթին:
- 5 Ով Տէր, մեր նաւն մըտիք այսօր,
Ալիքն հանդարտեցուր,
Եղիք մեզ նաւալար ճըղօր,
Եւ գերժ ցամաքն հասցուր:

38 ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ ԱՌԱՆՉՆԱՆԱԼ

- 1 Ես կը սիրեմ առանձնանալ
Հոգերըս ձըգելով,
Որ իրիկուան ժամերս անցնեմ
Յնծամար աղօթելով:
- 2 Ես կը սիրեմ լուռ, առանձին
Ձղջման արցունք թափելի
Իր խոստմունքներն յիշել երբ Տէրն
Միայն կրնայ լըսել:
- 3 Ես կը սիրեմ իմ միտքս բերել
Ձայն որ զիս կը հոգայ,
Ռուր հոգերս, վիշտերս ձըգել
Գըթած Տէրոջըս վըայ:
- 4 Ես կը սիրեմ երկինք նայել
Քաջ հաւատոյ աչքով
Ներուած հոգիս կը զօրանայ
Այն ցնծալի տեսքով:
- 5 Եւ վշտալից կեանքիս վերջին
Օրն երբ իմ վրաս հասնի,
Նըման ըլլայ այս մեզմ ժամուն,
Ու զիս երկինք տանի:

39 ՔՈՎՍ ԿԵՅԻՐ

- 1 Ով փրկելըս, օրն իջած է,
 Կ'աղաչեմ քեզ, քովս կեցիր.
 Թանձրը մութն արգէն կոխած է,
 Այս գիշեր իմ հիւրս եղիր:
 Երբ պակսին օգնականներըս,
 Դուն միայն ես օգնական.
 Բաղմաթիւ են վրտանդներըս,
 Ոհ, եղիր ինձի պաշտպան:
- 2 Այխարհիս պայծառութիւնը
 Շատ չանցած կը մըթըննայ,
 Փառքն ու մեծվայելութիւնը
 Շուտ աներևոյթ կ'ըլլայ:
 Բայց դուն ես յոյսի արեւը,
 Յաւիտեան դուն չես փոխուիր.
 Ճառագայթներուդ պարզեւը
 Շնորհէ ինձ, իմ քովս կեցիր:
- 3 Շատ անգամ, Տէր, քեզ մոռցած եմ,
 Սակայն դուն զիս մի մոռնար.
 Շատ անգամ քեզ թողուցած եմ,
 Բայց ինձմէ մի հեռանար,
 Ով Յիսուս, հոգւոյս փրկիչը,
 Հետս կենալ դուն խօսք տուիր.
 Երբոր զօրաւոր փորձիլը
 Յարձակի վրաս, քովս կեցիր:

- 4 Եւ վերջին թշնամիին վրայ
 Տուր որ յաղթանակ երգեմ.
 Իմ վրաս յարձակած ատենը,
 «Ո՞ր է քու խայթոցդ» ըսեմ.
 Որ մահէն, Տէր, աղատուիմ ես,
 Դառն մահուան քեզ յանձնեցիր.
 Թող մահուան մէջ չընկըղիմ ես,
 Մինչև վերջը քովս կեցիր:
 Ղ. - 1. Ի. Բ. 29 Թարգ. Elias Riggs

40 ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

- 1 Օրն հիմա կը վախճանի
 Եւ երկիր լըռիկ հանգչի,
 Քեզ պաշտել ժողովէ մեզ, Տէր,
 Վերը մինչ վառէ գիշեր
 Անթիւս լոյսեր:
 Սուրբ ես, սուրբ ես, սուրբ ես,
 Ով Տէր զօրաց:
 Յաւիտեան ես պաշտելի,
 Տիեզերք քեզմով է լի,
 Աղբիւրդ բարեաց: ԱՄՆ:
- 2 Տիեզերքն է քու խորան,
 Այս կամարն մեր սրբարան.
 Տունդ անհուն մեզ կը պատէ,
 Հայր, նոյնպէս սիրովդ գրկէ

Գու զաւակներդ:

Սուրբ ես, սուրբ ես, Լայն:

- 3 Արդ կը ծանրանայ գիշեր,
Մօտ, ա՛լ մօտ եկուր, ով Տէր.
Գու սրտիդ արոժո՛ւնն լեցուց,
Եւ քու սէրըդ փայլեցուց
Համայն երկինք:
- Սուրբ ես, սուրբ ես, Լայն:

- 4 Այս կամարն երբ խորտակէ
Այս երկիր երբսը անցնի,
Գու փառացըդ լայն, ով Տէր,
Մեղ յայտնէ, և թող շուքեր
Անհետանան:

Սուրբ ես, սուրբ ես, Լայն:

Ա—ալ. Գ. 24 Թարգ. C. C. Tracy

41 Եկէ՛ք, ՀՈՍ Եկէ՛ք

- 1 Եկէ՛ք, հոս եկէ՛ք, ա՛լ հանդիլու ատեն է.
Գործերն թողէ՛ք, հողերն թողէ՛ք.
Եկէ՛ք, հոս եկէ՛ք.
Եկէ՛ք ուր կայ խաղաղութիւն,
Ընտանեկան ուրախութիւն
Եւ եղբայրսիրութիւն.
Եկէ՛ք, հոս եկէ՛ք:

- 2 Յորեկը բոլոր աշխատութեան ատեն է,
Երեկոյեան ժամն՝ հանգստեան.
Եկէ՛ք, հոս եկէ՛ք.
Հայր, մայր, քոյրեր ու եղբայրներ,
Միացընենք, ուրախ ձայներ,
Երգենք յուսոյ երգեր.
Եկէ՛ք, հոս եկէ՛ք:
- 3 Արեւը մտաւ, լուսինը և աստղերը
Արծաթեղէն լուսով կ'իլլին,
Եկէ՛ք, հոս եկէ՛ք.
Չանոնք և մեզ Ստեղծողին
Մեր երգն ուղղենք ի միասին
Աղօթքով կաթողին.
Եկէ՛ք, հոս եկէ՛ք:
- Ս—ը. ԺԷ. 8

42 ԵՐԳ ԵՐԵԿՈՅԵԱՆ

- 1 Այսօրն անցաւ գընաց,
Խաւարը կ'երեւնայ.
Տուր որ յիշենք մահուան զիշերն,
Որ շուտ կը մօտենայ:
- 2 Յոգնած, քունով թմրած
Մեր աչքը կը գոցենք.
Գերեզմանին մէջ շատ չանցած
Ամէնքս պիտի ննջենք:

- 3 Գիշերս մեզ, Տէր, պահէ
Բոլոր վըտանդներէն,
Հրեշտակդ զրկէ, որ մեզ հսկէ
Մինչ գայ առտու նորէն,
- 4 Եւ երբ առտուն կանուխ
Անխոնջ արեւն տեսնենք,
Տուր որ անոր նըման անդուլ
Մեր ասպարէզն վազենք,
- 5 Երբ մեր վախճանը գայ,
Եւ աս կեանքէս զատուինք,
Շնորհէ, Փրկչին սիրոյն համար,
Որ մենք գերկըդ հանգչինք:

Սուր. ՂԱ. 5

43 ՏՂՈՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔԸ

- 1 Ոհ, նայէ ինձ և լըսէ զիս,
Բարեգութ հովիւ, Յիսուս.
Այս բոլոր գիշերն պահէ զիս
Մինչ վաղուան զըւարթ նոր լոյս:
- 2 Դուն այսօր զիս պաշտպանած ես,
Գոհութիւնըս ընդունէ:
Հազցուցած և կերակրած ես,
Տէր, հիմա ձայնիս լըսէ:

- 3 Կ'աղաչեմ, բոլոր մեղքերըս
Չբիսպէս ներէ, ընչէ,
Եւ սիրած բարեկամներըս
Պաշտպանէ ու միշտ օրհնէ:
- 4 Հոս փորձութենէ պահէ զիս,
Քու սիրովդդ թող ապրիմ:
Ետքն երկնից մէջ ընդունէ զիս,
Հոն քեզի հետ բընակիմ:

ՈՂ. Բ. 18

Թարգ. Elias Riggs

44 ԻՄ ՔՈՎՍ ԿԵՑԻՐ

- 1 Իմ քովս կեցիք, գիշերն կը մտանայ,
Տէր, քովս կեցիք, խաւարն կը թանձրանայ.
Երբ այլ մը իթարիչ չը գըտնուիր,
Ով թշուառաց Օգնողդ, իմ քովս կեցիք:
- 2 Շուտով կենացս օրերն կը վախճանին.
Անյայտ կ'ըլլայ ամէն ցնծում երկրին.
Հոս հաստատուն, անշարժ բան չերեւիր,
Ով դուն, որ անփոփոխ ես, քովս կեցիք:
- 3 Ներկայութեանդ կարօտ եմ անդադար,
Առանց շնորհքիդ փորձիւն յաղթող չըլլար.
Քեզի պէս ո՛վ կայ առաջնորդ ընտիր.
Ուր որ ըլլամ, ով Տէր, իմ քովս կեցիք:

- 4 Երբ զիս կ'օրհնես, երկեւզ չունիմ բընաւ,
Անոյշ կ'ըլլան ինձ արտասուք եւ ցաւ.
Դըժոխք եւ զերեզման ալ ոյժ չունին,
Երբ քովս կենաս, անոնք կը յաղթըւին:
- 5 Մինչև վերջին օրերըս մօտենան,
Մինչև երկինց դռները երևան,
Խաւար ճամբուս մէջ առաջնորդ եղիր,
Կենաց, մահուան մէջ ալ, Տէր, քովս կեցիր,
Ամէն:

Ս-դ. Դ. 8

Թարգ. Elias Riggs

45 ՄԻԱՅՆ ԱՅՍ ՕՐ

- 1 Վաղուան համար չեմ աղօթեր,
չոյր երկնաւոր.
Զիս պահպանէ մեղաց բիծէն,
Միայն այս օր,
Օգնէ, գործեմ եւ աղօթեմ
Եռանդով նոր.
Անոյշ լեզուով զայլս ըստիմեմ,
Միայն այս օր:
- 2 Ոչ թէ իմ կամք՝ այլ քու կռ ընեմ,
Տէր թագաւոր.
Իմ անձս զոհեմ սիրոյդ համար,
Միայն այս օր,
Խօսք չը խօսիմ անգութ կամ չար,
Կամ թունաւոր:

- Դիր քու կընիք լեզուիս վըրայ
Միայն այս օր:
 - 3 Սրբէ իմ սիրտս, մեղքերս ներէ,
Ով Տէր, իմ Վէմ.
Եթէ մեռնիմ այսօր, կանչէ
Վերինն Եղեմ.
Վաղուան համար չեմ աղօթեր,
չոյր երկնաւոր.
Դու զիս բռնէ, չարէն պահէ,
Միայն այս օր:
- Մ-դ. 2. 31-34 Թարգ. Տիկին ՀՈ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

46 ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԸՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՐԳԵՒՆ Է

- 1 Թէ որ Աստուած տունն չը շինէ,
Զուր կ'աշխատին զայն շինողներն.
Թէ որ քաղաքն ինք չը պահէ,
Զուր կը հրեկեն պահպաններն:
- 2 Զուր է կանուխ ելլել առտուն,
Եւ ոչ հանգչիլ ու քիչ ուտել:
Զի Տէրն կ'ուղէ իր սիրելոյն
Հանգստութիւն միայն շնորհել:
- 3 Ահա արդաք ու աղջիկներ
Ժառանգութիւն են Աստուծմէ:

Քեզի յանձնենք մեր զաւակներն,
 Եւ օրհնութիւն խնդրենք քեզմէ:

Ս-չ. ձե՛ք.

47 ԾԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍԱՀԻՒ,

- 1 Հայր բարեխնամ ազգի մարդկան,
 Մինչև վերջն իմ յոյսս է քեզի.
 Եւ երբ հասնի օր նեղութեան,
 Յոյս չեմ գըներ շնչին բանիս
- 2 Ինձ առաջնորդ քեզ ունեցայ,
 Դուն միշտ եղար սերտ բարեկամ.
 Կեանքիս մէջ քեզ միայն ճանչցայ,
 Թող կեանքս քեզմով գտնէ վախճան:
- 3 Երբ ծերութեան օրեր թշուառ
 Հասնին վրբաս, զիս մի թողուր.
 Դուրս մի ձրգեր յուսահատեալ՝
 Վերջին օրերս ողբալ տրխուր:
- 4 Մինչդեռ կ'ապրեմ դու ես ինձ վէմ,
 Երկրպագեմ քեզ ի մահուն.
 Մահէն ետքն ալ քեզ պիտ' օրհնեմ
 Անվերջ դարեր հետ սուրբերուն:

Ս-չ. Ի՛. 4 Թարգ. ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԻՉՁԵԱՆ

48 ՄԵՆՔ ԶԵՆՔ ԶԸԳԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

- 1 Մենք չենք ձրգեր Սուրբ Գիրքը,
 Աստուածաշունչ մատենան.
 Քանզի մանկանց է առաջնորդ,
 Ծերոց ալ գաւազան
 ձրբագ է ան, լոյս փառաւոր
 Կու տայ մեր մութ ճամբուն.
 Կը ցուցնէ փառք երկնաւոր,
 Բընակարան սիրուն,
 Մենք չենք ձրգեր Սուրբ Գիրքը,
 Աստուածաշունչ մատենան.
 Քանզի մանկանց է առաջնորդ,
 Ծերոց ալ գաւազան:
- 2 Մենք չենք ձրգեր Սուրբ Գիրքը,
 Քանզի միայն անկէ
 Երկնից ճամբան կընանք գտնել,
 Փախչել ալ դըժոխքէ:
 Անոր մէջ կը կարդանք թէ ո՛վ
 Իջաւ հոս երկինքէն,
 Որ իր արեւնը թափելով
 Մեզ ազատէ մեղքէն,
 Մենք չենք ձրգեր Սուրբ Գիրքը, — յ. Ե.
- 3 Մենք չենք ձրգեր Սուրբ Գիրքը,
 Լիլ քարոզենք պիտի,

Որ արձագանգը ազգերէն,
 Իրողէն անդին լսուի,
 Եւ փրկութեանը ձայն լրսեն
 Մարդիկ ամէն երկիր։
 Մենք ալ Տէրոջը Սուրբ Խօսքէն
 Բընաւ չենք հրաժարիր։
 Մենք չենք ձրգեր Սուրբ Գիրքը, Եւջ։
 Ս-ւ. ձժԹ. 105 Թ-բղ. Elias Riggs

49 ՀՐԱՇԱԼԻ ԽՕՄԲ ԿԵՆԱՅ

- 1 Ոհ, ինձ դարձեալ երգէ զանոնք,
 Հրաշալի խօսք կենաց։
 Եւս գեղափայլ տեանեմ զանոնք,
 Հրաշալի խօսք կենաց,
 Կենարար խօսք գեղեցիկ,
 Ինձ յայտնեն հաւատք, պարտիք։
 Խօսք գեղեցիկ, խօսք հրաշալի,
 Հրաշալի խօսք կենաց։
- 2 Որհնեալ Յիսուս տայ ամենուն,
 Հրաշալի խօսք կենաց։
 Լճւր, մեղաւոր, զայս ձայն սիրուն, ,
 Հրաշալի խօսք կենաց։
 Ձրի պարգու է լիողին,
 Մեզ սիրով կոչէ յերկին։
 Խօսք գեղեցիկ, Եւջ։

- 3 Ձայն տայ սիրոյ Աւետարան,
 Հրաշալի խօսք կենաց։
 Ձայն Թողութեան, խաղաղութեան,
 Հրաշալի խօսք կենաց։
 Ով Յիսուս, Փրկիչ միայն,
 Սրբացուր մեզ յաւիտեան,
 Խօսք գեղեցիկ, Եւջ։
 Յ-ւճ. ԺԲ.21 Թ-արգ. ՀՐԱՆՏ ԳԻՐԷՉՁՅԱՆ

50 ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

- 1 Գու Սուրբ Գիրքդ է ինձ հաճելի,
 Լոյս կ'ընծայէ խիստ ցնծալի՝
 Խեղճին որ խաւարի մէջ է։
 Գու խօսքդ մղար ճամբաս կ'ուղղէ,
 Եւ վախդ սանձ է իմ չար սրտիս,
 Խոստմունքդ հանդիստ կու տան խղճիս։
- 2 Գու սուրբ օրէնքդ ինձ կը յայտնեն
 Ան կանոններն որ ինձ պէտք են,
 Անոնք ազնիւ ուսում են ինձ,
 Եւ քան ըզմեղք անուշ են ինձ։
 Բողբէն զըտուած մաքուր ոսկի
 Սրտիս այնքան չէ ցանկալի։
- 3 Ըսպառնալիքդ կ'արթընցընեն,
 Ու իմ վրտանգս ինձ կը յայտնեն։
 Բայց Տեառն օրհնեալ Աւետարան
 Ձիս կը փրկէ մինչ յաւիտեան։

Մեղքս կը յաղթէ, հոգիս կ'ուղղէ,
Զբրի բայց մեծ վարձք կը շնորհէ:

- 4 Իբ սըխաշները ո՛վ գիտէ,
Ով Տէր, դուն իմ մեղքերս քաւէ,
Ամէն մեղքէ՛ դիս ետ պահէ,
Երգս օրհնութեան միշտ ընդունէ:
Զըլայ անշահ և անպիտան
Այն կենսատու. Գիրքդ յայտնութեան:

Ս-դ. յթ. 7-11

51 ՍՈՒՐԲ ԳԻՐԳՂ ԵՐԻՏԱՍԱՐԳԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴՆ ԸԼԼԱՆՈՒ Է

- 1 Երիտասարդն ինչո՞վ մաքրէ
Իրեն մալար ճամբան.
Ըզգուշութեամբ թէ որ պահէ
Քու խօսքըդ սրբազան:
- 2 Բոլոր սրտով քեզ խնդրեցի,
Թող մի տար մալորիմ.
Պատուիրանքներդ մըտածեցի,
Խօսքիդ պիտի նայիմ:
- 3 Քու օրէնքովդ կ'ուրախանամ
Անգին գանձի մը պէս.
Եւ թող մի տար որ խօսքդ մոռնամ,
Որպէս զի զիս փրկես:

Ս-դ. ձժթ. 9

52 ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՄԲԻՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՆՉԱԻՈՐՈՒԹԻՒՆ

- 1 Վըկայութիւնդ զարմանալի
Է միշտ ինձ հաճելի,
Անոր համար ալ իմ հոգիս
Զայն միշտ պահէ պիտի:
- 2 Քու Սուրբ Խօսքիդ պատուիրանքներն
Միշտ լոյս կու տան մարդուն.
Միտմիտներն ու սրգէտներն
Կ'ընեն շատ իմաստուն:
- 3 Բերանս բացի, հառաչեցի,
Խօսքիդ ես ցանկացի.
ձամբուդ մէջ դուն զիս հաստատէ,
Որ շարն չիչխէ ինծի:
- 4 Իմ վրաս քու լոյսըդ փայլեցուր,
Ծառադ լուսաւորէ.
Քու սուրբ օրէնքդ ինձ սորվեցուր,
Որ ինձ ճամբադ յայտնէ:
- 5 Կ'իջեն լացող իմ աչքերէս
Արցունք՝ գետի նրման,
Զի շատ մարդիկ չը պահեցին
Օրէնքըդ սրբազան:

Ս-դ. ձժթ. 27

53 ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

- 1 Ով դուն Սուրբ Գիրք երկնային,
Պատուական զանձս ես իմին,
Որ ըսկիզբս ինձ կը պատմես,
Ինչ ըլլալս ինձ կը յայտնես:
- 2 Մոլորեալըս կը խրատես,
Եւ փրկչին սէրն կը յայտնես.
Դուն ինձի ես կառավար,
Դատաւոր ես բարերար:
- 3 Նորոգուիլ մեզ Սուրբ Հոգւով,
Ըստանալ կեանքն հաւատքով,
Դուն կ'ըսես թէ կայ հընար,
Ու մեզ ես միշտ մըխիթար:
- 4 Երկնային փառքն կը պատմես,
Եւ կորուսան ալ կը յայտնես.
Ով դուն Սուրբ Գիրք երկնային,
Պատուական զանձս ես իմին:

Բ Տէ՛՛. Գ. 16

54 ԿԵՆԱՐԱՐ ԲԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

- 1 Թող քու Սուրբ Խօսքդ, Տէր իմ փրկիչ,
Իմ վըշտակիւր սրտիս աղէ՛:

Նա առաջնորդ ե ըսփոփիչ
Ըլլայ ինձ միշտ, ու ինձ օգնէ:

- 2 Խաբող հաճոյք իմին հոգիս
Երկար ատեն մոլորցուցին.
Սառ բարիքներս աս աշխարհիս
Իմ սէրս առ քեզ խափանեցին:
- 3 Բայց ձայնըդ, Տէր, հաւատարիմ,
Խորունկ քունէ զիս արթնցուց.
Առ քեզ դարձուց անսանձ սիրտ իմ,
Եւ իմ աչքէս արցունք վաղցուց:
- 4 Աշխարհասէրք միշտ կը զբուցեն,
Մեզ ո՞վ պիտի տայ բարութիւն.
Տէր, դէմքըդ ցոյց աստուածեղէն,
Տուր ինձ Որդւոյդ խաղաղութիւն:
Հ-ւ-Վ. ԺԵ. 4

55 ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԷՆ ՕԳՏՈՒԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

- 1 Տէր զըթուութեան, ինձ սղորմէ,
Քուկին օրէնքդ ինձ սորվեցուր.
Ճըմարտութեանդ լոյսն ինձ յայտնէ,
Քու փրկութեանդ զիս շքատ հասցուր:
- 2 Ես քու ծառայ կամ կամաւոր,
Ձիս իմացուն, ըզգաստ ըրէ՛:

Վըկայութիւնդ՝ խօսքդ զօրաւոր
Հոգւոյս ազդէ, սրտիս տիրէ:

3 Ատենն եկաւ որ Տէր Աստուած
Իր զօրութիւնն ի գործ դընէ.
Ձի անհաւատն և անաստուած
Տէրոյն օրէնք կը խափանէ:

4 Անոր համար ևս սիրեցի
Պատուիրանքներդ բոլոր սրտով.
Աղնիւ ոսկին ևս սեպեցի
Ոչինչ բան քու պատգամիդ քով:

5 Անոր համար ամէն քուկին
Պատուէրդ ուղիդ կը համարիմ:
Եւ սըտութեան ճամբան մըթին
Միշտ ատելով՝ ետ կը քաշուիմ:
ձժԹ:

Ս=չ.

56 ԵՐԿ օՐՀՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

1 Յաւտենական էակ,
Եհովա, Աստուած միակ,
Գոյ ըրիր աշխարհ համայն,
Կառավար ամենիշխան.
Դըրութիւնն տիրեցերայ
Լոկ քեզմով է ըստեղծուած:

Բընութեան կարգադրութիւն
Լոկ քեզմով է հաստատուն:

2 Մեծութեանդ չը կայ սահման
Գիտութիւնդ է անպայման,
Անպայման և զօրութիւնդ,
Մտքէ վեր է բարութիւնդ.
Դու պատճառ ևս ամենուն,
Եւ աղբիւր բարեքներուն.
Դու ողորմութիւն, սէր ևս,
Ամենուն կը հաղորդես:

3 Ով երբեակ և մի Աստուած,
Ինքնակալ Տէր զօրութեանց,
Խընամոյշ նայող, սիրող,
Ինձ եղիր առաջնորդող.
Մութ ատեն՝ կենացըս լըյս,
Եւ սըտիս՝ ցաւոց մէջ յոյս,
Մահուան մէջ՝ արելի կենաց,
Ինձ եղիր ուխտիս Աստուած:

Ս=չ. ձԳ.

Թարգ. Ա. Հ. ձԵձԻՉԵԱՆ

57 ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԲԵՐԴ Է ՀԱՍՏԱՏՈՒՆ

1 Աստուած մեր բերդ է հաստատուն,
Եւ է հըզօր պաշտպան մը.
Երբ վիշտ պատէ և փորձութիւն,
Ինքն է քաջ օգնական մը:

Ձի խաւարի իշխան,
Արթուն և ժըրաջան,
Դարանամուտ կ'ըլլայ,
Բռնել մեզ կը փութայ,
Որ տապալէ անդունդը:

- 2 Մեր զօրութիւնն է սընտօրի,
Մեր քաջութիւն խոտան է:
Այլ զօրապետ կայ խիստ արի,
Խաղաղութեան իշխանն է:
Ո՞վ է այս զօրակալ,
«Յխուս Քրիստոս Օձեալ»
Փորձի՛ր նա յաղթեց,
Եւ մահը խափանեց:
Ամենազօր փրկիչ է:

- 3 Թող սատանան յոյժ աշխատի
Իւր դաւերով բռնել մեզ:
Մենք վախ չունինք, զի Տէրն բարի
Կարող է պաշտպանել մեզ:
Դեւք ալ պատիր, անթիւ,
Մեզ պաշարեն խըսախ,
Կրնանք հոտատ կենալ
Մինչ Տէրն ամենակալ
Անյաղթ մեր ապաւնն է:

58 ՈՎ ԱՐԱՐԻՉ ՀԸՁՐ

- 1 Ով Արարիչ հըբօր,
Հայր յախտնական,
Սիրով ականջ խոնարհեցուր
Մեր փառաբանութեան:
Լըսէ մեր ձայն, թէև
Գիտենք, ով բարձրը Տէր,
Քու աթոռիդ շուրջ կ'որոտան
Միշտ այլուիաներ:
- 2 Լըսէ, ով սուրբ Աստուած,
Ձայն մահկանացութեան,
Երբ մեղաւորք սիրոյ Աղբիւրն
Օրհնաբանել բաղձան:
Ձուարթունք անթիւ, որ վերն
Իրովու ձայնով կ'երգեն,
Լըսեն ապա՞ծ, երբ յաղթական
Երգն փրկելոց լըսեն:
- 3 Ով դու երբեակ և մի,
Աղբիւր ողորմութեան,
Ո՞ր կայ հըբաշք ըսքանչելի
Քու մեծ սիրոյդ նըման:
Ոչ երկնային մի քնար,
Ի ձեռն հըրեշտակաց,
Կրնայ պատմել ըսքանչելիքն
Աստուածային շնորհաց:

- 4 Ով դու Գառնուկ գեներալ,
Քոյդ է փառաց ակոռ:
Դու ես երկնից գեղեցկութիւն,
Դու ես կեդրոն անոր:
Շնորհէ մեզ, ով Փրկիչ,
Լոյսիդ մէջ բընակիւ:
Ծեր գործն ըլլայ քեզ յաւիտեան
Սիրել, փառարանել:

Եւ. Ա. 3

Հեղինակ C.C.Tracy

59 ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԲԸ

- 1 Կ'երգեմ անճառ քոյդ զօրութիւն,
Աստուած մեր Նհովա:
Ձի լեռ, երկինք, ծովն ալ անհուն
Ոյժիդ են միշտ վըրկայ:
Կ'երգեն ամէնն իմաստութիւն,
Ձի աստղ, արեւ յաւէտ
Շողան, սուրան, իշխան, ցընծան,
Կամքովդ, Տէր, սիրաւէտ:
- 2 Կ'երգեմ, Տէր, քու բարիքդ անգին
Որ ընու երկերը յար,
Ամէն բան քու բարի կամքին
Նըլանն է յայտարար:
Աշքերս, Տէր, ուր որ դարձընեմ
Տեսեմ հրաշք մեծափառ:
Սրկիրն, երկնից կամարն վըսեմ
Փառքիդ ցոյցք են պայծառ:

- 3 Ամէն ծաղիկ կամ շնչին բոյս
Սիրոյդ է, Տէր, նըլան:
Ամպերն, հովերն մըրկալոյզ
Ծառայ են քեզ միայն:
Փոքրիկ ու մեծ կենդանիներ
Խնամքիդ են առարկայ:
Հեռու կամ մօտ յիք տեղ մը, Տէր,
Ուր որ դուն չես ներկայ:

Ս-շ. ԿԶ.

Թարգ. Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

60 ԶԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱԲԱՆԵՆՆԵՆԻ ՀՐԱԻԲ

- 1 Տըւէք Աստուծոյ, ազգեր մարդկային,
Տըւէք Աստուծոյ փառք ու զօրութիւն:
Պատիւ, գովութիւն անկ են Արարչին,
Ձի գանձ է բարեաց անճառ և անհուն:
- 2 Աստուած կ'որոտայ երկնից բարձունքէն,
Ծովեր, անդունդներ համակ կը յուզուին:
Անոր ահաւոր ձայնով համօրէն
Աշխարհ կը սարսի դողով ահագին:
- 3 Աստուած հովերուն թեով կը սուրայ,
Լեռներ կը հալին անոր երկիրդէն:
Սակայն կը տեղայ բարիք անխընայ,
Եւ է իր որդւոց ամուր տպուէն:

Ս-դ. ԻԹ.

61 ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

- 1 Աստուած ողորմի մեզի, ու | օրհնէ մեզ, || երեսը
փայ | լեցը | նէ մեր | վրայ, ||
- 2 Որ երկրի վրայ քու ճամբադ | ճանչցը | տի, || ու
ամէն ազգաց | մէջ քու | փրկու | թիւնդ: ||
- 3 Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով Աստ-
ուած, բոլոր ժողովուրդ | ները | քեզ գո լեն, ||
- 4 Աշգերը թող ուրախանան | ու ցըն | ծան. || վասն
զի ժողովուրդները ուղղութիւնով պիտի դա-
սես, ու երկրի ազգերուն դուն պի | տի ա-
ռաջնոր | դես: ||
- 5 Թող ժողովուրդները | քեզ գո | վեն, || ով Աստ-
ուած, բոլոր ժողովուրդ | ները քեզ գո | վեն: ||
- 6 Երկրը էր պատուը | պիտի | տայ. || ու Աստուած
մեր Աստուածը, | մեզ պի | տի օրհ | նէ: ||
- 7 Աստուած մեզ պի | տի օրհ | նէ, || ու երկրի ամէն
ծայրերը ան | կէ պի | տի վախ | նան, || Ա | մէն:
Սու. Կէ.

62 ԵՐԿՆԱԿԱՄԱՐ

- 1 վերն անսահման երկնակամար,
եթ երական դաշտ կապուտակ,

- Եւ աստղերու դունդն անհամար
Կը հըռչակեն Տէրն հեղինակ,
Արեւն անխոնջ մըշտ օրէ օր
Մեզ ցոյց կու տայ Տէրովը փառք:
Երկրէ երկիր պատմէ անոր
ձարտար ձեռաց գործքն և արարք:
- 2 Ու երբ պատէ մութ վերըստին,
Վարէ լուսին նոյն երգն ընտիր.
Եւ պատմութիւնն իր ծընունդին
Կրկնէ երկրին լուռ, ունկընդիր.
Մինչ իր դրացի ջահեր պայծառ,
Հանդիսաւոր վազքին ասեն,
Սփռեն այն լուրն ծայրէ ի ծայր,
Եւ վեհօրէն զայն հաստատեն:
- 3 Երբ լըռութեամբ հանդիսարար
Դառնան անոնք շուրջ մեր երկրին,
Թէ և չունին ձայն կամ բարբառ,
Բայց մարդ կ'զգայ որ կը բերկրին.
Ու ծիրանի շրջաններով
Կ'երգեն անդուլ վերերն յառած,
Եւ լուսատու նըշտններով
Կ'ըսեն, «Գործքն ենք անոր ձեռաց»
Սու. ԺԹ. 1-6 Թարգ. Թ. ԳԱՅԱՅԱՆ

63 ԲՆՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆ

- 1 Տէր, դուն համայն բնութեան իշխան,
 Գու փառքդ պատմեն Երկիր, Երկին.
 Արեւ, աստղեր քեզմով կենան,
 Բայց ի՞նչ մօտ ես դու մեր սրտին:
- 2 Դուն մեր կեանքի արեւն շողուն,
 Շողերդ պարզեն ուղին խաւար.
 Ա՛ստղ մեր յոյսին, քու լոյս ժպտուն
 Վանէ գիշերն մըթին, Երկար:
- 3 Ժըպիտ քո այդն է մեր շքեղ,
 Դէմքդ անժպիտ՝ մըթին զիշեր.
 Գու գութն է մեր պայծառ աղեղ,
 Մերն են միայն մեղքին ամպեր:
- 4 Դուն ես ամէն կեանքի արեւ,
 Բաղցըր շողերդ սըփռեն քու սէր.
 Քու լուսափառ գահիդ առջև
 Լոյսեդ ուրիշ լոյս չենք ուղեր:
- 5 Ո՛հ, Տէր, տուր մեզ ճմարտութիւնդ
 Եւ քու սիրով վառուած սրտեր.
 Ամէն մարդ թող պաշտէ անունդ,
 Եւ լոյսդ վանէ մեղքին գիշեր:

64 ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԳՈՐԾԵՐՈՎԸ ՓԱՌԱՌՈՐԵԱԼ Է

- 1 Երկինք յայտնի կը քարոզեն
 Տէրոջը վառքն ամէն ատեն.
 Օրն ալ աւուր խօսք կը յայտնէ,
 Գիշերն հանձար միշտ կը պատմէ:
- 2 Լեզու չունին և չեն խօսիր,
 Անոնք ձայները չեն լսուր.
 Բայց խօսքերնին այն տեղ կ'երթայ,
 Ուր որ արեւն իր լոյսն կու տայ:
- 3 Տէրոջն օրէնքն է Երկնային,
 կը նորոգէ մարդոց հոգին.
 Վըկայութիւնն է ճմարիտ,
 Կ'ընէ սգէտն ըզգօնամիտ:
- 4 Իր կանոններն շիտակ, սիրուն,
 Սըտից կու տան ուրախութիւն.
 Պատու իրանքներն են շատ պայծառ,
 Աշաց կու տան լոյս մշտավառ:
- 5 Անոնք ընտիր են ոսկիէն,
 Ախորժելի՛ անոյշ մեղքէն.
 Երբ քու ծառադ զանոնք պահէ,
 Մեծ հասուցում պիտի առնէ:
 Սուր յիթ.

65 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱԳԷՏ ԵՒ ԱՄԵՆՈՒՐԵՐ

- 1 Ո՛վ Տէր, դուն զիս միշտ կը քննես,
 Իմաստութեամբդ զիս կը ճանչնաս.
 Նստելիս ելլելս դուն միշտ գիտես,
 Միտքս հեռուէն կը հասկընաս:
- 2 Ես ո՞ւր երթամ քու Հոգիէդ,
 Որ տիեզերքն է տարածուած.
 Ես ո՞ւր փախչիմ քու երեսէդ,
 Որմէ բան մ'ալ չէ ծածկըած:
- 3 Թէ որ երբեք երկինք ելլեմ,
 Դուն հոն ներկայ կը գտնուիս.
 Թէ որ դժոխք մահիճս ընեմ,
 Ահա հոն ալ կ'ելլես առջիս:
- 4 Ես փառք կու տամ, ո՛վ Տէր, քեզի,
 Որ զիս ըրիբ ահեղ կերպով:
 Գործքերդ են շատ զարմանալի,
 Ձանոնք գիտցայ հաճութիւնով:
- 5 Տէր, զիս փորձէ և սիրտս քննէ,
 Իմ խորհուրդներս բոլոր ճանչցիբ.
 Թէ որ ճամբաս թիւր ու չար է,
 Առաջնորդէ ճամբուդ ընտիր:

66 ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

- 1 Աստուած, Տէր մեր, ի՞նչ փառասոր
 է քու անունդ երկրի վրայ.
 Անճառ լուսովդ երկինք բոլոր
 Յաւերժաբար կը ջուրանայ:
- 2 Երբ կը տեսնեմ երկնից կամար,
 Որ է գործք քու ճարտար մատանց,
 Պարաստեղաց, լուսինն պայծառ,
 Որ քու խօսքովդ են ըստեղծուած,
- 3 Ես զարմանքով յայնժամ կ'ըսեմ,
 Մարդն ո՞վ է, Տէր, որ դուն յիշես.
 Արդեօք ա՞յնչափ է մարդ վրսեմ,
 Որ դուն անոր միշտ այց կ'ընես:
- 4 Քանզի դուն զայն պըստկեցիր
 Իրբև պատուով հրեշտակային.
 Վերակացու դուն զայն զրբիբ
 Ձեռագործիդ՝ բոլոր երկրի՝:
- 5 Արջառ, թռչուն և ձուկ անոր
 Տըւիբ որ հնազանդ ըլլայ
 Աստուած, Տէր մեր, ի՞նչ փառասոր
 է քու անունդ երկրի վրայ:

67 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆՈՒՆ ՎՐԱՅ ԿԸ ՏԻՐԷ

- 1 Տէրն կը տիրէ, երկիր ցընծայ,
Թող կըղզկներ ու բախանան:
Մեր փրկութիւնն անկէ կու գայ,
Գահն է աթոռ արդարութեան:
- 2 Արդարութիւնն երկինք պատմեն,
Բոլոր ազգեր իր փառքն տեսնան:
Ամէն մարդիկ որ կուռք պաշտեն
Թող քու առջև ըզ ամբշնան:
- 3 Քանզի, ով Տէր, դուն բարձրը ևս
Բոլոր երկրիս մարդիկնէրկն:
Շատ բարձրացար և շատ մեծ ևս
Բոլոր երկրիս աստուածներէն:
- 4 Ով Տէրն սիրող բարեպաշտներ,
Միշտ ստեցէք ըզջարութիւն:
Տէրն կը պահէ ամէն սուրբեր,
Կու տայ անոնց իր փրկութիւն:
- 5 Արդարներուն լոյս ծագեցաւ,
Յայտնուեցաւ ճշմարտութիւն:
Ուրախութիւն պարգևեցաւ
Սըտով ու զիղ կըղզներուն:

Ս-դ. ԴԿ.

68 ՓԱՌԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐՁԻՆ

- 1 Եկէք ցնծանք Տէրոջն առջին,
Ձի նա է մեզ կեանք և պաշտպան:
Աղաղակենք մեր մեծ փրկիին,
Ձի նա է մեզ վե՛մ փրկութեան:
- 2 Ինչու որ Տէրն է մեծ Աստուած,
Աստուածներուն մեծ Թագաւոր:
Անոր ձեռքին մէջ է աշխարհս,
Լեռներ, դաշտեր, գանձեր բոլոր:
- 3 Իրենն է ծովն, զայն ինք շինեց:
Եկէք ծըռինք Տէրոջ առջին:
Ձեռքով ցամաքն ան ստեղծեց,
Տանք գոհութիւն ըստեղծողին:
- 4 Ինչու որ ան է մեր Աստուած,
Մենք ոյխարներ իր արօտին:
Անոր խօսքերն են լուսապանծ,
Մըտիկ ընենք անոր ձայնին:

Ս-դ. ԴԵ.

69 ՓԱՌԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

- 1 Ով փառաւորեալ Արքայ երկնաւոր,
Երկնի ու երկրի Տէր և Գառաւոր:

Տըկար մարդիկներ կարող չեն երգել
Բու իշխանութիւնդ մեծ և անաւոր:

2 Տէր, քու զօրութիւնդ պատմել կարող չեն,
Ծնորհքիդ մեծութիւնն խորհիլ կարող չեն
Ոչ այս աշխարհիս բոլոր բընակիչք,
Ոչ ալ երկինքի սուրբերը ամէն:

3 Տէրոջը առջև անթիւ հրեշտակներ
Գիտնալ կարող չեն անոր խորհուրդներն.
Իրենց պաշտօնն է զայն փառաբանել,
Ու միշտ կ'ատարել իր սուրբ հրամաններն:

4 Այն սուրբ հանդէսին հետ ևս կ'ուզեմ
Որ անձըս քեզի, Տէր իմ, զոհ ըրեմ:
Չնչին ընծաս դուն անտես մի ըներ,
Հաճէ ընդունել զիս, երբ քեզ կ'երգեմ:
Ս-դ. ձեթ.

70 ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱՏԵՍ Է

1 Քըննողդ համայնից, ով Տէր իմ Աստուած,
Գիտես դուն մեղքերս դաղանի գործըած.
Աչքէդ յարարթուն ոչ մէկ ծածուկ բան
Կընայ վըրիսիւ, թէպէտ անըշտան:

2 Ամէն տեսակ մեղք խօսքի, խորհրդի,
Որով իմ հոգիս միշտ կը խըռովի,
Գրքիդ մէջ անջինջ գըրուած կը մնան
Մինչև գայ վերջին անհղ դատաստան:

Ահա ևս համակ զըրւած իմ անձէս,
Վըստահ քու զըթոյք, կու գամ միայն քեզ.
Չնչի, Տէր, մեղքերս մինչդեռ չեմ մեռած,
Ըրէ զիս ժառանգ կեանքի և փառաց:

4 Յիշէ այն մեծ գին, որով Տէր Յիսուս
Կամաւ վըճարեց պարտքերը հողոյս,
Անոր արիւնով սուրբ և պատուական
Մաքրէ զիս, ըլլամ զաւակ քեզ արժան:
Ս-դ. ձեթ.

71 ՓԱՌԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Լեզուովս պիտի Աստուած գովուի,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կտրի,
Ա՛լ աւելի պիտի երգեմ:
Անոր փառք տալս չունի վախճան,
Ձի երբ օրերս հոս լըմընան,
Վերն յաւիտեանս պիտի երգեմ:

2 Բիւր երանի յուսացողին
Մեծ Աստուծոյն իսրայէլին,
Տիեզերաց Ըստեղծողին.
Տէրոջը խօսքն է հաստատուն,
Ինքն է փրկիչն աղքատներուն,
Միշտ խոսամունքներն կը կատարուին:

3 Լեզուովըս միշտ պիտի գովուի,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կտրի,

Ա՛լ աւելի պիտի երգեմ:
Անոր փառք տալս չունի վախճան,
Զի երբ օրերս հոս լըմըննան,
Վերն յաւիտեանս պիտի երգեմ:

Ս-չ. ձԻԶ.

72 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱՄ

- 1 Աստուած իմ, երբ հոգիս նայի
Ամէն ողորմութեանդ,
Ուրախութեան մէջ կ'ընկըղմի,
Սիրոյ և ցընծութեան:
- 2 Հաղարաւոր շնորհքներ քեզմէ
Ամէն օր կ'ընդունիմ:
Բայց քու պարգեւներուդ մեծն է
Այս շնորհակալ սիրտ իմ:
- 3 Բոլոր կենաց օրերն երգեմ
Տէրոջը սէրն քըթած:
Երկնից մէջ դայն պիտի կրկնեմ
Ի մէջ հըրեշտակաց:
- 4 Ես յաւիտեանս ուրախ երգեր
Կ'ուզեմ քեզի երգել:
Զեն բաւական անթիւ դարեր
Քու սէրդ փառաբանել:

Ս-չ. ձԳ.

73 ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

- 1 Հայր ամէնու է Տէր Աստուած,
Ողորմութեամբ, սիրով լեցուած:
Բազում ողորմ է և զըթած,
Այն որ երկնից մէջ է նըստած:
- 2 Առանց իր բարձրը հրամանն
Ճնճողուկ մ'անգամ գետին լիյնար:
Ասանկ զըթած Հօր մը որդին
Ի՞նչպէս անվախ իրեն չերթար:
- 3 Միայն մեղքէն թող մենք վախնանք,
Այն ատելի է Աստուծոյ:
Թէ իր պատուէրն պահած չըլլանք,
Կ'արժանանանք սաստիկ պատժոյ:

Ղ.-Կ. ԺԲ. 6, 27-31

74 ԱՍՏՈՒԱՄ ԵՐԿՆԱՒՈՐ ՀԱՅՐ ՄԵՐ

- 1 Երկնից Աստուածն որ կը պաշտենք,
Մեղ բարեկամ և Հայր ալ է:
Մեր ուխտն անոր հատուցանենք,
Որ մեր աղօթքը վեր ելլէ:
- 2 Մեր սիրտն անոր կամաւ զոհենք,
Ինքն աղօթքի խիստ կը հաճի:
Իր սէրն անհուն գիշերն յիշենք,
Թող ինքը միշտ փառաւորուի:

3 Երբ Աստուծոյ դէմ մեղանշինք,
Իր թողութիւնն սրտանց խնդրենք.
Մեզի համար մեռաւ Յիսուս,
Չունինք ուրիշ փրկիչ մը մենք:

4 Գըթած հօր պէս սիրով վառուած՝
Ներողութեամբ ինք կ'ողորմի.
Թէ հոս ծնողքէ ենք զրկուած,
Անմահ Հայր մը ունինք յերկնի:

Մէ•• Է• 18

75 ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼԽՈՒՆ ՓԱՌՔԸ

1 Պիտի երգեմ, Տէր, սէրդ ու գութ,
Ազգաց պատմեմ խոստումդ անսուտ
Փրկել ամէն հոգի, որ քեզ
Իր վէմն ընէ սրտով անկեղծ:

2 Որքա՞ն հըզօր ես, ով Աստուած,
Աղբիւր նաև ամէն բարեաց.
Բերդի պէս մեծ չը կայ էակ,
Որ մեզ սիրէ գըթով համակ:

3 Երկինք, երկիր են քոյդ միայն.
Գու ձեռքդ հիմնեց զանոնք համայն.
Թարօր, շերմոն, ազգեր մարդկան
Սնունդ կ'օրհնեն ի մի բերան:

4 Արժա՞ն, իրօք, համերգս այս պերճ.
Հայր, բարձր ըլլայ բազուկ քո մեծ.
Զի հիմ գահիդ արդար օրէնք
Եւ ըյս դէմքիդ է սէր աննենք:

5 Երնե՛կ անոնց որ շնն անմիտ.
Սիրով կ'անսան խրատու ձայնիդ.
Անոնք պիտի ցնծան, հրճուին
Գործովք իրենց միակ փրկչն:

Ս-շ. 2Թ.

76 ԱՍՏՈՒԾՈՅ ԵԱՌԱՆՆԵՐՈՒՆ

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

1 Տէրն օրհնեցէք, զի է բարի,
Իր գըթութիւնն է յաւիտեան.
Տէրով գործքերն են սըխրալի,
Մարդ զայն գովել չէ բաւական:

2 Երնե՛կ անոնց որ կը պահեն
Տէրով օրէնքն և պատուիրան,
Երնե՛կ անոնց որ միշտ կ'ընեն
Գործ գըթութեան, արդարութեան:

3 Տէր, զիս յիշէ, ինչպէս կ'ընես
Քու սիրելեացդ. ինձ տես կուր.
Ծնմարտութիւն սիրեմ քեզ պէս,
Եւ միշտ պահեմ իմ սիրտս մաքուր:

- 4 Ընարեալներուդ միշտ հեանն ըլլամ,
Տեսնեմ քու փառքդ ու վայելեմ.
Խաղաղ սրտով ուրախանամ,
Եւ անխափան կեանք ժառանգեմ:
- 5 Փրկէ ըզմեզ, ով Տէր Աստուած,
Մարդոց մէջէն ըզմեզ ժողովէ,
Մենք միշտ կ'երգենք անունդ զբթած,
Արդարութեամբդ մեզ փրկէ:

Ս-Ղ. ձե՛:

77 ԿԱՅ ԱՄԵՆՈՒՐԵՒ ԱՍՏՈՒԱԾ

- 1 Ասաղ, լուսին, պայծառ արև,
Որոտում, փայլակ, անձրև,
Փոքր բլրուր և բարձրը լեռն,
Գեղեցիկ թըռչնոց երգերն,
Որ և իցէ արարած՝
Միշտ կը քարոզէ զԱստուած:
- 2 Ծով, ցամաք, ամպեր երկնից,
Հով մեղմ կամ մըրըրկալից,
Կը գոչէ մէկտեղ համայն
Տիեզերքը բարձրաձայն
Թէ գործքովը յայտնըած
Կայ ամենուրեք Աստուած:

Ս-Ղ. ձևթ.

Թարգ. Elias Riggs

78 ՓԱՌԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

- 1 Պիտի երգեմ քեզի,
Աստուած իմ թագաւոր,
Անունդ ի՞նչ սիրելի,
Գործերդ ի՞նչ փառաւոր.
Գեղ զովկըւ կը փափաքեմ,
Մինչև մահուամբ փառաց հասնիմ:
- 2 Մարդոց իշխաններուն
Ինչո՞ւ համար յուսամ.
Մահկանացուներուն
Ինչո՞ւ ես հաւատամ:
Շուտով կ'ելլէ անոնց հոգին,
Եւ խորհուրդներն կը կորսըւին:
- 3 Աստուած է որ կայրի՝
Աչքերը կը բանայ,
Խեղճին ու պանդուխտին
Պաշտպանութիւն կու տայ.
Եւ որքըն ու անյոյս այրին
Միայն անոր կ'ապաւինին:
- 4 Աստուած զանոնք զիտէ
Որ զինքը կը սիրեն.
Անոնց կ'առաջնորդէ
Որ զինքը կը խնդրեն:

Անոնց կեանքին ինք կը հաւենի,
Յետոյ փառաց մէջ կ'ընդունի:

- 5 Երկրիս վրայ, Տէր, ինձի
Տուր որ քեզ միշտ գովեմ,
Ու վերջն ալ աւելի
Ուրախութեամբ երգեմ,
Երբոր ասկէ փոխադրուիմ,
Երբոր մահուամբ փառաց հասնիմ:
Ս-դ. ձեռք:

79 ԱԼ ՄՕՏ ԲԵՉԻ

- 1 Ալ մօտ ըլլամ, ով Տէր,
Ալ մօտ քեզի.
Թէեւ ճամբաս ըլլայ
Դառն, ցաւայի,
Միշտ աղօթեմ պիտի,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:
- 2 Թէեւ թափառական,
Գիշեր ատեն,
Մութ տեղ քարի մը վրայ
Իմ գլուխս դընեմ,
Երազներուս մէջ, Տէր,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:

- 3 Սանդուխ մը հոն տեսեմ
Բովէդ իջած,
Անթիւ սուրբ հրեշտակներ
Վրան ալ կայնած,
Որ աչք ընեն ինձի
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:
- 4 Բունէս ելած ես քեզ
Պիտի դովեմ,
Ու դառն վիշտէս Ռեթէլ
Պիտի շինեմ,
Որ տառապանքներովս
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:
- 5 Երբոր ուրախ թեւով
Ես վեր թռչիմ,
Աստղէն ու արեւէն
Երբոր անցնիմ,
Հոգիս երգէ պիտի,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:
Եւ. ԻՐ. 10.22 Թարգ. I. F. Pettibone

80 ԱՍՏՈՒԱԾ

- 1 Աստղ, լուսին, պայծառ արև,
Որտառամ, փայլակ, անձրև:

Երով, ցամաքը տարածուած,
Միշտ խօսին, «Մեծ է Աստուած»:

2 Առաւօտ և իրիկուն,
Օրն և եղանակ սիրուն,
Եթե սաստան, դաշտ հաճելի
Միշտ յայտնեն զԱստուած բարի:

3 Յօղն փայլուն և շունչ գարնան,
Վարդն անուշ և ծիածան,
Քաղցր պրտուղ, արքա բարերեր
Միշտ կ'ըսեն, «Աստուած է սէր»:

Ս-չ. ձիւ:

Հեղինակ C. C. Tracy

81 ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Ահա մեզի մանուկ ծընաւ,
Երնաւ զաւակ Դաւթի,
Մեզի որդի մը արբուեցաւ,
Ուրախութիւն երկրի:

2 Իր Հօրը Թոռին վերայ
Փառքով պիտի նւտի,
Պիտի ելլէ ու բարձրանայ,
Ըլլայ շատ անուանի:

3 Պիտի կոչուի Խորհրդակից,
Հայր յաւիտեական,

Հրգօր Աստուած և Տէր երկնից,
Խաղաղութեան Իշխան:

4 Իր տէրութիւնն է հաստատուն,
Անհուն և անվախճան,
Իշխանութեանը մեծնալուն
Պիտի յըլլայ սահման:

5 Արքայութիւնը Քրիստոսի,
Ով Տէր, շուտով թող գայ.
Եւ ցնծութեամբ թող երգուի
Ամէն տեղ Ովաննա:

Ս. թ. 6

Թարգ. Elias Riggs

82 ԲԵՌԷՆՆԷՄԻ ԱՍՏՂԸ

1 Դիւերային դաշտից վերայ
Անթիւ աստղեր կը փայլէին,
Բայց լույս մէկ աստղ լոյս կու տար
Մեղաւորի արխուր աչքին:
Ահա զօրքերը լուսափայլ
Կը հըռչակեն փառքն Արարչի,
Բայց չեն կարող Փրկիչն յայտնել.
Միայն աստղը Բեթլեհէմի:

2 Անգամ մը ես կը նաւէի,
Սաստիկ մըրբիկ, խաւար գիշեր:

Երգուն անդունդը ճեղքըւած
 Իմ նաւըս շուտ պիտի կլկէր.
 Ահով արիւնըս պողեցաւ,
 Մահ դէմ առ դէմ եկաւ ինծի.
 Յայնժամ իսկոյն աստղ մ'երևեցաւ,
 Պայծառ աստղը Բեթլեհէմի:

- 3 Իմ լոյսըս, յոյսըս այն միայն,
 Իմ մեծ վախերըս փարատեց.
 Սլեաց ու փոթորկին մէջէն
 Նաւահանգիստն առաջնորդեց:
 Արդ, ամրացած և ասպանով
 Այսօր և միշտ գովեմ պիտի,
 Ու յաւիտենական երգով,
 Միայն աստղը Բեթլեհէմի:

Մատթ. Բ. 9, 10

Թարգ. C. C. Tracy

ՅՅ ՓՐԿՁԻՆ ԵՆՈՒՆԴԸ

- 1 Լո՛ւս գիշեր, սո՛ւրբ գիշեր.
 Եսով ու ցամաք քնով են խաղաղ.
 Մեղմ կը փայլի աստղը Բեթլեհէմէ,
 Եւ հեռուէն շատ աչքեր կը զբաւէ,
 Հոն՝ ուր փրկիչը ծընաւ:
- 2 Լո՛ւս գիշեր, սո՛ւրբ գիշեր.
 Երգ մը անո հովտին վրայ

Հրեշտակներուն անթիւ խուճը կ'երգէ,
 Երգ՝ որ ցնծման աւետիս կը բերէ.
 «Տէրը, փրկիչը, եկաւ.»

- 3 Լո՛ւս գիշեր, սո՛ւրբ գիշեր.
 Ով դու երկիր, ա՛լ արթընցիր.
 Քու օրհնութիւնըդ արդ վեր թող կլկէ,
 «Փառք Աստուծոյ ի բարձունքս» երգէ,
 Խաղաղութի՛նն աշխարհի:
 Ղ.՝՛. Բ. 13, 14

ՏԷ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՆՈՒՆԴԸ

- 1 Օ՞ն, զարթիր, յոգնած հոգի, երգն անո
 զուարթուն,
 Սուրբ երկնից սրահէն, կրկին ձայն կու տայ
 մարդուն.
 Նոր խրախոյս, նոր յոյս կու տան մեզ երգին
 շեշտերն,
 Ձի ծնաւ Յիսուս, մեր Տէրն,
 Փառք քեզ արդ, օրհնեալ Հայր,
 Փառք քեզ, արդ, օրհնեալ Հայր,
 Ձի ծնաւ Յիսուս, մեր Տէրն:
- 2 Մի վախնար, մեղաց որդի, ա՛լ կտրէ քու լաց.
 Մի վախնար, վշտաց որդի, տես երկինքը բաց.
 Թող ա՛լ քեզ սարսափ չաղդէ ցուրտ մահուան
 ստուերն,

Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն:
Փառք քեզ, Եւջն:

3 Մի վախնար, վըհաս հոգի, երբ լոյսեր մարին.
Մի վախնար, ով քաջ, երբ բունն են նեաեր
չարին.

Չեր վրայէն, մեղաց զերիք, շուտ կ'իյնան
կապերն,

Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն:
Փառք քեզ, Եւջն:

4 Օն, զարթիր, յողնած հոգի, նոր օր է ծագեր,
Ա՛լ քուկդ են երկնից պերճանք և զուարթ-
նոց երգեր.

Փառքդ հագիր և թող լսունն քուերգիդ շնչ-
տերն,

Զի ծնաւ Յիսուս, մեր Տէրն:
Փառք քեզ, Եւջն:

Յովհ. Ա. 14 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՅԱՆ

85 ՅԻՍՈՒՍ ԱՆՈՒՆԸ

1 Այնպէս անոյշ անուն չըկայ,
Չըկայ այնպէս սիրուն մը,
Ինչպէս ծընաներէն առայ՛
Փրկիլն տրուած անունը,
Փափաք ունինք մեր Տէրն տեսնել,
Տեսնել մեր Հօրը տունը.

Այնպէս անոյշ անուն չըկայ,
Ինչպէս Յիսուս անունը,

2 Հրեշտակն իմա, «Յիսուս» ըսաւ,
«Դընես անոր անունը,
Քանզի մահէն պիտի փրկէ
Ռուր իր ժողովուրդը»
Փափաք ունինք, Եւջն:

3 Խային վըրայ ալ զըրեցին
Այս պատուական անունը,
Որ մարդ տեսնէ ինչո՛ւ համար
Միշտ զինքը սիրելու է:
Փափաք ունինք, Եւջն:

4 Ու հիմա Հօրը քոյն նստած,
Ինքն է մեր Ռարեխօսը.
Ուստի սիրենք ու միշտ գովենք
Մեր Տէր Յիսուս Քրիստոսը:
Փափաք ունինք, Եւջն:

Մարթ. Ա. 21 Թարգ. I. F. Pettibone

86 ՄՆՈՒՆԴ ՓՐԿՁԻՆ Ի ԲԵԹԼԵՂԷՄ

1 Բեթլեհէմի դաշտին վըրայ
Միշտ հովիւներն ի գիշերին
Իրենց հօտերն կը հըսկէին,
Հրեշտակ մ'անոնց տայ աւետիս.

Խճէբէ՛ք.— «Ի Բեթլէհէմ, ի Բեթլէհէմ
Յիսուս ծնաւ ձեզի Փրկիկիչ,
Ի Բեթլէհէմ, ի Բեթլէհէմ
Յիսուս ծընաւ մարդոց Փրկիկիչս»

2 Հրեշտակն կ'ըսէ, «Ահա վրսեմ
Ուրախութեան աւետիս ձեզ,
Քրիստոս ծընաւ ի Բեթլէհէմ,
Եւ ծնաւ Փրկիկիչ խոնարհ ու հեզ»
Խճէ.— «Ի Բեթլէհէմ» Եւյն:

3 Ազգ մարդկային արդ թող ցնծայ,
Երկինք, երկիր ուրախանան.
Յիսուս ծընաւ մեզի արքայ,
Ամօթապարտ ըլլայ սասանս
Խճէ.— «Ի Բեթլէհէմ» Եւյն:

4 Խուսնն զըւարթնոց այսօր կ'երգէ.
«Փա՛ռք ի բարձունս, խաղաղութիւն,
Եւ ի մարդիկ մեծ հաճութիւն,
Ձի ծնաւ Փրկիկիչ ի Բեթլէհէմ»
Խճէ.— «Ի Բեթլէհէմ» Եւյն:

Ղ.՝. Բ. 8-14 Թարգ. Կ. Յ. Պէ՛ՇԿԷ՛ՅԹԻՒՐԵԱՆ

87 ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿԸ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՁ

1 Գեթսեման պարէտոն մըտէք,
Դուք, դեւէն փորձըւածներ.

Ձեր Տէրոյ պայքարն տեսէք
Այն խիստ ահաւոր գիշեր.
Իր ցաւէն ետ մի քաշուիք,
Որ աղօթք ընել սորվիք.

2 Մօտեցէք այն ատենին,
Ուր փառաց Տէրն կ'անարգուի.
Նայեցէք անոր վըշտին.
Ի՛նչ ցաւով սիրտն կը լեցուի
Դուն ալ մի քաշուիր ցաւէն,
Խաչդ կըրել սորվէ իրմէն.

3 Գողգոթան ի վեր ելէք,
Հոն անոր ոտքերն դրկած՝
Այս անհուն հըրաշքն տեսէք,
Աստուծոյ Որդին զոհուած.
«Կատարեալ է» կը գոչէ.
Սորվեցէք մեռնիլ՝ անկէ:

4 Գերեզմանը մօտեցէք,
Ուր մարմինը թաղուեցաւ.
Այն դատարկ է, նայեցէք,
Ո՞վ ըրցէր՝ անկէ առաւ.
Տէրն յարեաւ ու համբարձաւ,
Մեզ ալ նոյն խոստմունք տըւաւ.

Մ.՝. ԺԴ. 32-36

88 ՅԱՌԱՋ, ՅԱՌԱՋ, ԱՐՔԱՅ ՀԶՈՐ

- 1 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հըզօր,
Քրիստոս խոնարհ և փառաւոր.
Ի՛նչ վայելու՛չ, ի հանդիսի,
Ովսանենա և արմաւենի:
- 2 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հըզօր,
Քու դէմք կ'ելլէ մահ ահաւոր.
Առջեւըդ չարն կը նըւածի,
Մահովըդ մահն կը յաղթուի:
- 3 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հըզօր,
Չօրքեր երկնից հանդիսաւոր
Նային ըսքանչանօք անհուն
Իրենց իշխանին զոհուելուն:
- 4 Յառա՛ջ, յառա՛ջ, Արքայ հըզօր,
Քու ատրութիւնդ է հոգեւոր.
Յաւէն, մահէն ա՛ռ հոս բաժին
Եւ վերը փառքդ մըտիբ կրկին:

Յ-վհ. ԺԹ. 12-15

Թարգ. C. C. Tracy

89 ԳԵՅԱՆՄԱՆԻ

- 1 Ահա կեղբոն ձօրէն կ'անցնի
Տրամած փըրկիւը սիրելի
Դէպ ի Գեթսեմանի:

- Իր դէմքն է ի՛նչ Աստուածային,
Բայց վրան ցաւ, վիշտ կը տեսնուին:
- 2 Մարդու մեղքերն կը վերցընէ,
Կրկին կրկին աղօթք կ'ընէ
Ի մէջ Գեթսեմանի.
«Ով Հայր, թէ որ է կարելի,
Թող աս գաւաթն ինձմէ անցնի»:
- 3 Իր հեզութիւնն ի՛նչ սիրելի,
Իր Հօր կամքին կը խոնարհի
Ի մէջ Գեթսեմանի.
«Ով Հայր, իմ կամքըս չէ, հասկա
Միայն քու կամքըդ թող ըլլայ»:
- 4 Հայուն աւլըսեց. ու իր Որդին
Սուրբ հրեշտակներն զօրացուցին
Ի մէջ Գեթսեմանի.
Յաւոց գաւաթն առաւ, յարեաւ,
Կրկին ուրախութեան հասաւ:
- 5 Թէ որ վիշտեր մեր վրայ հասնին,
Ու տառապանք վերէն տրուին,
Դէպ ի Գեթսեմանի
Նայինք, մեր Տէրը հոն տեսնենք,
Անոր նրման աղօթք ընենք:

90 ԳՈՂԳՈԹԱ

- 1 Անհուն սիրովն ի Գողգոթայ,
Ոհ, խաչուեցաւ Տէրն իմ բարի.
Արիւն թափեց խաչին վրայ,
Եւ ինձ շնորհեց ներում ձերի.
Ով Գողգոթայ, վեհ Գողգոթայ,
Տէրով արեան եղար վրկայ.
Ով Գողգոթայ, սուրբ Գողգոթայ,
Փրկիս մահուան եղար վրկայ:
- 2 Ժայռեր պատուին, արևն սևեռայ,
Մինչ խաչին վրայ մեռնի Յիսուս.
Եւ իր մահուամբ կ'անմահանայ
Հէք մահապարտ հոգիս անոյս.
Ով Գողգոթայ, Եւյ՛ն:
- 3 Տէր իմ Յիսուս, ով սէր անձառ,
Ի՛նչ դառն տազնայ խաչին վրայ
Գուն կըրհցիր ինձի համար,
Զիս փրկելու ի Գողգոթայ.
Ով Գողգոթայ, Եւյ՛ն:

Մ-ԴԸ. ԻԷ. 33-53 Թարգ. Կ. Յ. Պէ՛ՆԿԷ՝ՕԹԻՒՐԵԱՆ

91 ԽԱՉԻՆ ՎՐԱՅ

- 1 Ահա տեսէք Գառն Աստուծոյ,
Խաչին վրայ, խաչին վրայ.

- Արիւնն թափեց վասըն մարդոյ
Խաչին վրայ, խաչին վրայ,
Ոհ, լըսեցէք գոչումն ձերի,
Էլի, լա՞մա սարաթմանիս»
Տեսէք Փրկիչն, որ կը մեռնի
Խաչին վրայ, խաչին վրայ:
- 2 Տեսէք տարածեալ բազուկներն
Խաչին վրայ, խաչին վրայ.
Արիւնահոս կողն ու ձեռքերն
Խաչին վրայ, խաչին վրայ,
Խաւարեցաւ լոյսն արեգին,
Խաւար պատեց զերկիր, զերկին
Երբոր Յիսուս յաղթեց զհուին,
Խաչին վրայ, խաչին վրայ:
- 3 Արգ գործն վըսեմ կատարուեցաւ.
Խաչին վրայ, խաչին վրայ.
Մեծ յաղթ ու թիւն ինքն ստացաւ.
Խաչին վրայ, խաչին վրայ.
Նուաղեալ այգիքն յերկինս ուղղած՝
Գոչեց «Ամէնն է կատարեալ»
Յայնժամ հոգին առ Հայրն յանձն սծ՝
Ոհ, մեռաւ խաչին վրայ:
- 4 Ա՛հ, ո՛ւր երթամ պիտի պատմեմ
Զոհն փրկիչն խաչին վրայ.

Կ'ուրախանամ երբ կը լըսեմ
 Զոհն փրկչին խաչին վրայ,
 Այո, յաւէտ այս է հաւատքս
 Հիմա և միշտ և յաւիտեանս,
 Թէ պարգեւեց Յիսուս ինձ կեանս
 Խաչին վրայ, խաչին վրայ:

Դ.՝ Ի. 33-46, Յ.՝ Ը. ԺԹ. 25-30

92 ՓՇԵՂԼԻՆ ՊՍԱԿ

- 1 Ով սուրբ Գրքուխ, ինչո՞ւ ևս
 Յաւի մէջ ընկրղմած.
 Ինչո՞ւ վիրաւորուած ևս,
 Եւ փուշերով պատկուած:
 Ով սուրբ Գրքուխ, փառքովք
 Երկինք կը լեցրնես.
 Բայց հոս արիւնալիցրդ
 Դուն պատուական ինձ ևս:

- 2 Ոհ, ի՞նչ ցաւով լեցուած ևս,
 Ի՞նչ անարգանքներով.
 Տրամութիւնով պատած ևս,
 Բայց վերջը ցնծումով.
 Ամէն քու ցաւն ու զուժը
 Չարերը կը վրկէ.
 Մերն էր բոլոր յանցանքը,
 Պատիժն ան կը քաշէ:

- 3 Ի՞նչ խօսք, ով իմ փրկիչըս,
 Գտնեմ քեզ օրհնելու.
 Որ հաճեցար իմ անձըս
 Մահուամբըդ փրկելու.
 Տէր, սուր որ քու շնորհքովքդ
 Հաւատարիմ մընամ,
 Եւ յաւիտեան քու սէրըդ
 Բընաւ ևս չըմոռնամ:

- 4 Ձըլայ որ քեզ թողում, Տէր,
 Եւ ոչ քեզմէ թողուիմ.
 Հաւատքս քեզ կ'ընդունի, Տէր,
 Եւ միշտ քուկդ է սիրտ իմ:
 Երբ ըստառի իմ կեանքըս,
 Ու մահ ինձի հասնի,
 Տուր որ հասնին ցաւերըս,
 Հոգիս ալ քովդ հանգչի:
 Յ.՝ Ը. ԺԹ. 2, 5

93 ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՒԶԱԿԱՆ ՄԱՀԸ

- 1 Յիսուս Գրիստոս, սեւայ քուկին
 Մահուան ցաւերդ, սոսկաց հոգիս.
 Այո, մեռար դուն կամովին
 Վասն ապրոտամբ մեղաւորիս:
- 2 Դուն տանջեցար, և բընութիւն
 Ողբերգական հեծեց ձայնով:

Արեւն ծածկեց իր լոյսն փայլուն
Լացին սուրբերը մահդ ողորմէ

3 Գու մահըդ, Տէր, զոհ սրբազան,
Միշտ աչքերէնուս ըլլայ ներկայ,
Գանդի արիւնըդ պատուական
Ամէն մեղքէ մեզ կը լըւայ:

4 Յիսուս Գրիստոս, թող անդադար
Սրտիս ազդէ սերդ գերապանծ:
Գուն մեր մեղաց համար մեռար,
Միայն դուն ես փրկիչ, Աստուած:

Մ-ԳԼ-ԻԿ-45-58

94 ԽԱԶԻՆ ՏԱԿ

1 Երբ գամ կայնիմ խաչիդ մօտիկ,
Արեւ, աշխարհ կ'ելլեն աչքէս:
Ի՞նչ են երկրի փառք սընոտիք,
Գուն ցաւերովդ ինձ հերիք ես:

2 Հոս թոյլ կու տաս ինձ որ ծունգերդ
Բռնեմ, փարիմ անսուրբ ձեռքովս:
Եւ անարգել սիրուն ոտքերդ,
Ա՛հ, համբուրեմ պիղծ շրթունքովս:

3 Այդ վարդագոյն ներկած երես
Երբ կը դիտեմ, անձս կ'ուրանամ:

Եւ կ'ամչնամ գանգառներէս,
Ամէն ցաւերս ալ կը մոռնամ:

4 Թող զիս խաչիդ ըստուերին տակ,
Հոս կը տեսնեմ մեղքս անհամար:
Ա՛լ չեմ վնասուեր պատիւ, վաստակ,
Կ'ուզեմ զոհուիլ քեզի համար:

Դ-Ի. Թ. 23 Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

95 ԽԱԶԻՆ ՏԱԿ ՆՍՏԻԼԸ

1 Ո՛րչափ քաղցր է այն ժամը,
Երբ խաչին առջեւ կենամ:
Կատարեալ խաղաղութիւն մը
Գրիստոսի մահէն կ'առնեմ:
Հոն սիրով ցաւով լեցուած եմ,
Արցունքներըս կը վազեն:
Հաւատքիս մէջ հաստատուած եմ,
Կեանք կ'առնեմ իր մահուանէն:

2 Ոհ, այս սեղը ի՛նչ օրհնեալ է,
Երբ խաչիդ տակ կը նստիմ:
Գութն Աստուածային փայլած է
Շնորհալի աչքէդ, Տէր իմ:
Հոս նստած թող նայիմ մէջմը
Իր սիրոյն զարմանալի,
Եւ իր պատուական արեամբը
Աստուծոյս ես դառնայիմ:

Կ-Դ. Ա. 20

96 ՅՈՅՍ ՄԵՐ Ի ԽԱԶԵԱԼՆ ՔՐԻՍՏՈՍ

- 1 Ով խաչեալ Փրկիչ Քրիստոս,
Որ սիրող ես իմ հոգւոյս,
Քեզ միայն կը պաղատիմ,
Ողորմէ ինձ եղիկելոյս.
Թող ան ջուրը և արիւն
Որ կողէդ, Տէր, կը վազէ,
Հոգիիս ամէն մեղքերն
Մաքրելով զիս բժշկէ:
- 2 Արցունքներս թէ և վազեն
Իմ աչքէս առատապէս,
Նախանձով թէ և իմ սիրտս
Միշտ վառի խիտ սաստկապէս,
Ոհ, կարող չեն զիս սրբել
Իմ մեղքէս և զիս մաքրել
Այլ Փրկիչ իմ, դ՛ո՛ւն միայն,
Դուն կընաս մեղքերս քաւել:
- 3 Երբ հատնի իմ շունչըս, Տէր,
Երբ մահուամբ աչքերս գոցեմ,
Անծանօթ երկիրն հասնիմ,
Աթոռիդ վրայ քեզ տեսնեմ,
Ով խաչեալ Փրկիչ Քրիստոս,
Երբ ես քու առջիդ կայնիմ,
Տուր ինձի, Տէր, կ'աղաչեմ,
Որ դրկիդ մէջ ևս հանգչիմ
Թարգ. Elias Riggs

97 ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱԶԸ

- 1 Փրկիչս խաչին ներքեւը
Կ'ուզեմ առնել կայան,
Խիտ ծարաւուս երկրի մը մէջ՝
Ժայռի շուքի նրման,
Ինչ զովարար ծածկոյթ է ան
Կէս օր՝ ատքու թենէն,
Ճամբուն վրայ ալ հանգըստարան
Օրուան ծանրութենէն:
- 2 Ինչ քաղցր ու ապահով է
Փորձուած բընակարան,
Ուր Աստուծոյ արդարութիւնն
Ու սէրն կը միանան,
Ինչպէս Յակոբ նահապետին
Երազն զարմանալի,
Այնպէս խաչն ալ մինչև երկինք
Սանդուխ ինձ կը թըլի:
- 3 Երբեմն Փրկիչս խաչին վրայ
Աչքս հաւատքով տեսաւ
Զայն որ զիս վրկելու համար՝
Իր անձը զոհ տըւաւ.
Եւ տեսնելով կ'սքանչանայ
Իմ սիրտս աս բաներուն,
Իմին մեծ անարժանութեանս,
Անոր անհուն սիրոյն:

4 Կ'ընտրեմ, ով խաչ, բու շուքը
 Անվտանգ ինձ ապաւեն,
 Բընաւ ուրիշ լոյս չեմ ուզեր
 Փրկիչս դէմքին լոյսէն,
 Ա'ւրջոյս չէ երկրիս վաստակն,
 Ա'ւր չեմ փնտռեր աշխարհս.
 Իմ մեղքս միայն ամօթբոս է,
 Իաչն ալ միայն իմ փառքս:
 Թարգ. Elias Riggs

Ս. 1. Բ. 2

98 ԱՄԷՆ ԲԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ Է

- 1 Լըսեցէք սիրոյ բարբառը.
 Աղաղակ Դողդոթայէ
 Կը պատուէ պինդ ապառաժը,
 Երկրաշարժ, խաւար կ'ընէ.
 «Կատարեալ է»
 Հոգեվար փրկիչն զոյ՛է:
- 2 «Կատարեալ է.» — Ի՞նչ հաճոյք տայ,
 Ոհ, այս խօսք յոյժ սըխալի.
 Օրհնութիւն անհուն յերկնից զայ
 Շընորհօք Տէր Յիսուսի.
 «Կատարեալ է»
 Հոգեվարն, ով սուրբք) խօսի:
- 3 Սերովբէք, ձեր քընարները
 Միացէք նորէն զարնել:

Քաղցր երգով երկինքն, երկիրը
 Թող օրհնեն զիմաննուէլ:
 Ալէլուիա,
 Փառք Գառին, ուզեց մեռնել:
 Յ. 4. Ժ. 30 Թարգ. Մ. Տ. Քիրէ-ՉՅԵԱՆ

99 ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆԸ

- 1 Երբ ան խաչին ես կը նայիմ,
 Ուր որ մեռաւ փառաց Տէրն իմ,
 Իմ մեծ շահերս վնաս կը սեպեմ,
 Հըպարտութիւնս ալ կ'անարգեմ:
- 2 Զը պարծենամ ուրիշ բանով,
 Բայց թէ միայն փրկիչս մահով.
 Բոլոր փափաքս մեծ կամ չնչին
 Ես կը զոհեմ իր արիւնին.
- 3 Տես, իր գլխէն, ձեռքէն, ոտքէն
 Սէր, տրամութիւն մէկ կը վազեն.
 Ե՞րբ միացան ասոնք ասանկ,
 Ի՞նչպէս բրին փուշերն պըսակ:
- 4 Փառքն արքայից ինծի տրուէր,
 Ան շատ պզտիկ պարգև մին էր.
 Ասանկ Տէրոջ անհուն սիրոյն
 Արժան է տալ իմ կեանքս ողջոյն:

Գ. 2. Զ. 14

100 ԿԱՆԱԶԱԽԷՏ ԲԼՈՒՐԸ

1 Կանաչաւէտ բլուր մը կայ,
 - Գողգոթա իւր անուն.
 Ուր մեր փրկիչն ի մահ խայլն
 Յայտնեց իւր սէր անհուն.
 Ոհ, փոխարէն այսքան սիրոյ,
 Տէր, քեզ ի՞նչ վըճարենք:
 Իցի՛ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
 Միայն քեզ նըւիրենք:

2 Ա՛հ, ի՛նչ դառն վեշտ օրհնեալ մեր Տէրն
 - Կըրեց մեզի համար.
 Ո՛չ մի լեզու կարէ պատմել
 Յաւերն իւր անհամար.
 Ո՛հ, փոխարէն այսքան սիրոյ,
 Տէր, քեզ ի՞նչ վըճարենք:
 Իցի՛ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
 Միայն քեզ նըւիրենք:

3 Այն օր անմեղ, անբիժ ալ էր,
 Եղաւ իբր յանցաւոր,
 Որ արդարեւեր բառ ինք իրմով,
 Ու ո՛չ թէ մեղաւոր:
 Ոհ, փոխարէն այսքան սիրոյ,
 Տէր, քեզ ի՞նչ վըճարենք:
 Իցի՛ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
 Միայն քեզ նըւիրենք:

4 Այդ արիւնտ սուրբ ձեռքերուդ՝
 Համբոյր բեր, Տէր Յիսուս,
 Որովք բացիր երկնից դռներ,
 Պարզ եւեցիր մեզ յոյս:
 Ոհ, փոխարէն այսքան սիրոյ,
 Տէր, քեզ ի՞նչ վըճարենք:
 Իցի՛ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր
 Միայն քեզ նըւիրենք:

Յու՛ճ. Եթ. 17, 18 Թարգ. Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

101 ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱԶԸ

1 Իմ պարծանքըս եւ իմ փառքըս
 է ըկ խաչըն Գրիստոսի.
 Խաչն, դարուց աւերներուն վրայ
 Վեր կանգնած, վըսեմ փայլուն:
 Երբ կենաց վայրերն պատեն դիս,
 Վախ ահեղ, յոյս խաբերայ,
 Յայնժամ խաչն աչքիս առջեւը
 Աւելի կը շողշողայ:

2 Երբ իմ սիրալուս բերկրայից է
 Եւ երկինքս փայծաւ. իմ վրայ,
 Լոյսն անգամ խաչին լուսովը
 Աւելի փայլուն կ'ըլլայ:
 Բաղդ, ջընձում կամ ցաւ ու վիշտ ալ
 Նոյն խաչովը կ'օրհնուի,

Զի փրկչին սիրով կ'ըլլամ ես

Յառիտեան երանելի,

Թարգ. C. C. Tracy

Գ-ը. Զ. 14

102 ԱՊԱՒԷՆ

- 1 Այլ ապաւէն ես չեմ ուզեր,
Բայց Յիսուսի արեւնն ու սէր.
Ոչ, չեմ ուզեր ուրիշ խոստում,
Այլ լոկ անոր անուան յե՛նում.
Անշարժ վէձին յենում միայն,
Ուրիշ հիմեր են միշտ ունայն.
- 2 Երբ մութ պատէ իր դէմք սիրուն,
Յառիմ անոր շնորհաց անհուն.
Եւ երբ գոռան մըրիկ և հով,
Մընայ խարխիսըս ապահով,
Անշարժ վէձին յենում միայն,
Ուրիշ հիմեր են միշտ ունայն.
- 3 Խոր հոսանքէն այս մութ կենաց
Կ'անցնելիմ՝ լոկ իր ուխտին յե՛նած,
Հոգ չէ ցնդին թող իմ յոյսերս,
Ինքն է անշարժ յոյսըս ու սէրս:
Անշարժ վէձին յենում միայն,
Ուրիշ հիմեր են միշտ ունայն:
- 4 Ու երբ հնչեն վերջին փողեր,
Զիս չեն գրաւեր մահուան դողեր,

Զի իր արեամբ սրբուած, արդար,

Պիտի գովեմ զի՛նք անդադար:

Անշարժ վէձին յենում միայն,

Ուրիշ հիմեր են միշտ ունայն:

ԵԲ. Զ. 18

Թարգ. Յ. ԳԱՅԱՆԱՆ

103 ԽԱԶԻՆ ՄՕՏ

- 1 Ով Յիսուս, հոգիս պահէ
Միշտ խաչիդ մօտերը,
Ուր աղբիւր մը կը հոսէ
Իւր բուժող ջուրերը:
Տէր, քու խաչդ միշտ ընեմ
Փառքս ու ցընծութիւնըս,
Մինչ գետէն անդին գըտնեմ
Գովդ երանութիւնըս:
- 2 Մօտ խաչիդ հոգիս հասաւ,
Տէր, ողորմութեանըդ
Հոն իմ շըրջըս փայլեցաւ
Ասաղ առաւօտեանըդ.
Տէր, քու խաչդ միշտ ընեմ
Փառքս ու ցընծութիւնըս,
Մինչ գետէն անդին գըտնեմ
Գովդ երանութիւնըս:
- 3 Տէր, քու խաչըդ օրէ օր
Ինք աչքիս առջևը,

Անդադար մընամ անոր
 Բստուերին ներքեւը,
 Տէր, քու խաչդ միշտ ընեմ
 Փառքս ու ցընծութիւնըս,
 Մինչ գետէն անդին զըտնեմ
 Գողդ երանութիւնըս:

- 4 Մօտ խաչին ես կ'սպասեմ,
 Մինչ: Տէրօջը փառքը
 Հոն, գետէն անդին, տեսնեմ
 Ոսկեղէն եզերքը:
 Տէր, քու խաչդ միշտ ընեմ
 Փառքս ու ցընծութիւնըս,
 Մինչ գետէն անդին զըտնեմ
 Գողդ երանութիւնըս:

Թարգ. Elias Riggs

Սէթ. Բ. 19

104 ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՈՒԱՆ ՋՐՈՒԹԻՒՆԸ

- 1 Մէկը տեսայ փայտէն կախուած,
 Նեղեալ արիւնլըսայ.
 Ինձ նայեցաւ աչքով արտամած,
 Խաչին երբ մօտեցայ:
- 2 Անշուշտ բընաւ ես չեմ մոռնար,
 Ինչ նայուածքով կ'ըսէր,
 «Իմ մահըս է քեզի համար»
 Թէպէտ ինք չէր խօսեր:

- 3 Ոհ, ըզդացի տրտմութիւնով
 Մեղքերս, ու շատ լացի.
 Տեսայ որ ես մեղանչելով
 Իմ Տէրըս մեռցուցի:
- 4 «Վա՛յ ինձ, սա ա՛ղ, ալ յոյս չունիմ»
 Լալով ես կանչեցի.
 «Ո՞ր կողմ երթամ, որո՞ւ փախչիմ,
 Զի Տէրն ըսպանեցի»
- 5 Երկրորդ անգամ զըթած աչքով
 Խաչէն ինձ նայեցաւ.
 Եւ իր շընորհքը յայտնելով
 Սիրով ինձ ի ըսաւ:
- 6 «Զըբի շնորհքով ես կը քաեմ
 Մեղքերըդ, սիրելիս,
 Եօժար կամքով մահ յանձն կ'առնեմ,
 Որ յախտեան ապրիս»
- Մ - ըլ. Ժ. 45

105 ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

- 1 Հրեշտակներ, քարն վեր տուէք,
 Այդ որսէդ քաչէ, մահ, ձեռք.
 Տես, անմահ յաղթ անակաւ.
 Տէրն այսօր փառքով յարեաւ:

2 Նայեցէք, սուրբք, Յաղթողին,
Համբառնայ, տեսէք, յերկին.
Խումբք երկնից, ի մէջ ճամբուն
Մարմնացեալ Տեառն տուք ողջոյն:

3 Կը բանայ երկինք դուռն լայն,
Որ փառքով անցնի Հրակայն.
Դահլ բազմէ, Արքայդ փառաց,
Քուկդ է տէրութիւնն անանց:

4 Երկնային դասք, անդադար,
Օ՞ն, զարկէք ոսկի քլնար.
Ծրդեցէք վըսեմ երգեր
Բիւրք բիւրուց լեզուօք առ Տէր:

5 Փառք, պատիւ Էմանուէլին,
Տէր, Փրկանք, Միջնորդ մերին.
Հուշակուն երկրիս ծայրեր
Սուրբ անուանն օրհնութիւններ:

Մ-դԷ. ԻԼ. 2-4 Թարգ. Մ. Տ. ՔիՐԻՒՉՃՆԱՆ

106 ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

1 Հրեշտակն յերկնից կ'իջնայ,
Կ'ըսէ մարդկան սեռին,
«Աղամորդի, ցընծա,
Ահա քեզ աւետիս»:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Իբր անդրանիկ յարուցեւրց:

2 Երբ կ'որոտար երկինք,
Երկրի հիմն սարսեցաւ.
Ապշած ինկան մարդիկ,
Տապանը բացուեցաւ:
Քրիստոս յարեաւ, Լայն:

3 Հոս չէ ան որ մեռաւ,
Կանայք, ինչո՞ւ կ'ողբարք.
Սուգի ատենն անցաւ,
Ուրախանայ աշխարհք:
Քրիստոս յարեաւ, Լայն:

4 «Եկէք, ու զիս տեսէք»
Ըսաւ ինք, Տէրն փառաց.
«Բոլոր աշխարհ դացէք,
Ըսէք ամէն ազգաց,
Քրիստոս յարեաւ» Լայն:

5 Արդ մենք ալ յարութեան
Հանդէսը կատարենք.
Եւ ի ձայն ցնծութեան
Ուրախակց գոչենք,
Քրիստոս յարեաւ, Լայն:

Մ-ըԷ. ԺԶ. 1-18, Դ-Է. ԻԴ. 1-12

Թարգ. Մ. Ա. ԻԿՆԱՏԻՈՍՆԱՆ

107 ՅԱՐՈՒՅԵԱԼ Է ՏԷՐ

- 1 Յարուցեալ է Տէր այսօր, Ալէլուիա,
Նա յաղթող է և հըզօր, Ալէլուիա,
Իր մահուամբն հիանալի, Ալէլուիա,
Մեզ կացոյց միշտ կենդանի, Ալէլուիա:
- 2 Երգերով մեր քաղցըալուր, Ալէլուիա,
Արդ գովենք Տէրն երկնաւոր, Ալէլուիա,
Ինք կըրնց դառն վիշտ ու ցաւ, Ալէլուիա,
Որ ապրինք, մեր տեղ մեռաւ, Ալէլուիա:
- 3 Իւր կըրած այն դառն տագնապ, Ալէլուիա,
Մեր սիրոյն յաւէտ է կապ, Ալէլուիա,
Որ սրտէն յերկինս հասնի, Ալէլուիա,
Ուր Յիսուս ի սպառ հանգչի, Ալէլուիա:
- 4 Յարուցեալ է Տէրըն մեր, Ալէլուիա,
Ընկելով գըժոխս աւեր, Ալէլուիա,
Պիտ' իշխէ դարեր անվերջ, Ալէլուիա,
Ու բնակի մեր սրտից մէջ, Ալէլուիա:

Մարտի 10. 7

Թարգ. Յ. Տ. Ս. Ա. Ս. Ա. Ս.

108 ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԼ

- 1 Ձէ աստ, քանզի յարեաւ.
Մի խնդրէք զայն ընդ մեռեալս:

- Կ'ապրի նա որ մեռաւ,
Լուսաղբեաց հրեշտակն ըսաւ,
Նա յաղթեց իւր թշնամւոյն,
Եւ յայտնեց իւր զօրութիւն,
Երբ առաւ խայթն մահուանէ,
Յաղթանակ գերեզմանէ:
Ապա մի սիրտ մի ձայն,
Բոլոր երկիր ցնծան.
Ամէն մտրդիկ ալ թող գոչեն,
Եւ հրեշտակներն անդրադարձեն,
Եփրիստոս յարեաւ, Գրիստոս յարեաւ,
Յնծում, ցնծում, ցնծում աշխարհիս»
- 2 Ձէ աստ, քանզի յարեաւ.
Ձէ այլ ևս նա աստ յերկրի,
Իւր փորձութիւնն անցաւ,
Ձիք այլ ևս վիշտ կըրելի.
Նըպատակն իւր է լըցուած,
Եւ իւր գործն աստ կատարուած,
Նա որ էր ի խաչ մեռած,
Փառաւոր զահն է բաղմամբ:
Ապա մի սիրտ, մի ձայն, Լայն:
 - 3 Ձէ աստ, քանզի յարեաւ,
Եւ աչաց անյայտ եղաւ,
Բայց թէ մեռնինք իրմով,
Դարձեալ պիտ' ելլենք անով,
Ձի նովաւ կ'ապրինք միայն

Որ կ'ապրի ինք յախտեան:

Ինչ օրհնեալ խոստում և յոյս,

Պիտ' ապրինք նովաւ ի լոյս:

Ապա մի սիրտ, մի ձայն, Լայն:

Մարտի 6 Թարգ. Մ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

109 Կ'ՈՅՈՒԻ ՇՈՂՈՎ

- 1 Երկինք կ'օծուի շողով այգուն,
Լեցնեն օդ մեղեդիք.
Պարտեալ դրժոխք նստի նրկուն,
Յրնձմամբ երգեն մարդիկ,
Մինչ մեր փրկիչ, հրզօր Արքայ,
Փրչէ գըռներն մահուան,
Եւ մութ շիրմին խորքէն գուրս գայ
Քայլով վեհ, յաղթական:
Փա՛ռք Աստուծոյ, գոյնք ուժգին,
Բիւր փառք ձօնենք, արդ, Բարձրեալին,
Փառք տանք անոր միաբերան,
Ամէն փառք իր անուան,
Իր սուրբ անուան, սուրբ անուան:
- 2 Մահուան գերի՛ կրրեց շրթան
Բանախն մէջ ըստորին.
Բայց նա յարեալ, յաղթեց մահուան,
Ըրաւ զայն իր գերին,
Փայլուն զուարթունք գոյնն, զի բա՛ց

Արցունք, խունկ և վիշտեր.

Այսօր թող նոր երգեր փառաց

Գովին յարուցեալ Տէր:

Փառք Աստուծոյ, Լայն:

Ա Կ-ր. ԺԵ. 20, 54, 55, Ե. ԻԵ. 8

Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

110 ԼՄՆՅԱԻ, ԼՄՆՅԱԻ

- 1 ԻՍՈՒՍ արեւած է Աստուած, փրկու թիւնն է ձրրի,
Ամէնուն որ փրկիչն հաւատքով կ'ընդունի,
Լըմընցաւ լըմընցաւ,
Որ մեռած էր յարեալ,
Եւ անով հաւտացողն փրկու թիւն ըստացաւ,
Լըմընցաւ, Լայն:
- 2 Ճանապարհս հոս, իրաւ, է լեցուն վրտանգով.
Բայց Յիսուս ինձ է միշտ առաջնորդ ապահով,
Լըմընցաւ, Լայն:
- 3 Սիրելիքս հրեշտակաց հետը փառք վայելն,
Ապահով հոն հասած են, և այսպէս կ'երգեն,
Լըմընցաւ, Լայն:
- 4 Արքային մօտ արդայք ալ իմ աչքս կը տեսնէ,
Քանի որ կ'երգեն, ինք ժպտելով կը լրսէ,
Լըմընցաւ, Լայն:

- 5 Մարգարէք և արքայք նոյն գնդաց հետ ալ կան,
Այն ոսկի քաղաքին մէջ երգելով կը ցնծան,
Լըմընցաւ, Եւջն:
- 6 Նոյն գնդաց մէջ բաժին կայ քեղի և ինծի,
Եւ մեր երգն փրկութեան միշտ պիտի այս լինի
Լըմընցաւ, Եւջն:
- Յ-Է. Ժ. 4, ԺԹ. 30

111 ՓՐԿԻՉՍ Կ'ԱՊՐԻ

- 1 Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի.
Աս ի'նչ խրախոյս կու տայ ինծի.
Կ'ապրի, կ'ապրի Այն որ մեռաւ,
Կ'ապրի որ տայ ինձ կեանք անբաւ:
- 2 Կ'ապրի Գրբուխը յաւիտեան,
Մահուամբ՝ մահուան վրայ յաղթական.
Կ'ապրի, կ'ապրի զիս փրկելու,
Եւ իր սիրովը օրհնելու:
- 3 Կ'ապրի երկնից մէջ վառաւոր,
Տէր ամէնուն և թագաւոր.
Կ'ապրի բարձրեւը համբարձած,
Իր և մեր Հօր աջ կողմն նստած:
- 4 Կ'ապրի որ միշտ ինծի օգնէ,
Հողոյս համար-բարեկտէ.
Կ'ապրի ինձ առաջնորդելու,
Իւ զիս վտանգէ ազատելու:

- 5 Կ'ապրի որ փարատէ վախերս,
Եւ միշտ սրբէ իմ արցունքներս.
Կ'ապրի, կու տայ ինձ կեանք և լոյս,
Եւ ըստփանք ու խրախոյս:
- 6 Կ'ապրի ու միշտ զիս կը սիրէ,
Եւ միշտ հոգիս կը պաշտպանէ.
Կ'ապրի և ինձ կ'ըլլայ Արքայ,
Եւ Մարգարէ ու Քահանայ:
- 7 Կ'ապրի ու ևս պիտի ապրիմ,
Ու միշտ իր քովը բընակիմ.
Աս ի'նչ ցնծում կու տայ ինծի,
«Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի»:
- Յ-Է. ԺԹ. 25 Թարգ. Elias Riggs

112 ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՄԻ ՄԻԱՅՆ ՊԱՏԱՐԱԳԸ

- 1 Որչափ արիւն որ թափուեցաւ
Հրէական հին զոհերէն,
Մեղքերն մաքրել կարող չէ զաւ,
Կամ ազատել ըզմարդ խղճէն:
- 2 Միայն Քրիստոս՝ Գառն Աստուծոյ,
Որ յանձն առաւ ըզմահ անպարտ,
Մեզ կը սրբէ մեղաց յաղտոյ
Պատարագան անհամեմատ:

- 3 Տէր, թող նայիմ ես հաւատքով
Այն քաւչական սպտարագին,
Երբ մեղքերէս հեռանալով
Կը զղնանամ յոյժ լալազին:
- 4 Ով իմ հոգիս, դարձիր ու տես
Աստուածորդին խաչէն կախուած
Քեզի համար չարի մը պէս՝
Քու մեղքերովդ տանջուած:
- 5 Եկէք, փառք ասնք ուրախ ձայնով
Այն Գառնուկին որ մեզ սիրեց,
Իր փրկարար սէրն երգելով,
Որ անէծքէն մեզ ազատեց:

ՅԻՆ. Ա. 29

113 ՅԻՍՈՒՍ ԱՂՔԻԻՐ ԿԵՆԱՅ

- 1 Տէր Յիսուս, Իմաննուէլ,
Մեզ աղբիւր կենաց բացիր.
Մեր հոգւոց համար մեռնիլ
Եւ խաչուիլ դուն յանձն առիր:
- 2 Սուրբ կողիդ արիւնը, Տէր,
Աղբիւրի պէս որ վազեց,
Զար աւազակին մեղքերն
Կատարելապէս սրբեց:

- 3 Ով Գառն Աստուծոյ, մաքրէ
Մեր հոգին ան աղբիւրով.
Կ'աղաչենք, Յիսուս, քաւ՝
Մեր մեղքերն ան արիւնով:
- ՅԻՅ. ԻԱ. 6

114 ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ ԱՂՔԻԻՐ

- 1 Տէր Յիսուսի երակներէն
Աղբիւր մը կը յորդէ
Արեամբ լեցուած, մեր մեղքերէն
Կը լուայ ու կը մաքրէ:
- 2 Խային վըրայ խեղճ աւազակն
Երբ այն աղբիւրն տեսաւ,
Զորչարանացը ժամանակն
Խիստ շատ ուրախացաւ:
- 3 Ասոր նըման թէպէտ ըլլամ
Շատ չարագործ, ես ալ
Նոյն աղբիւրին ջըրովն կընամ
Լուացուիլ մաքուր ըլլալ:
- 4 Այն փրկարար աղբիւրն տեսայ,
Եւ տեսնելէս ի վեր
Իմ գովութեանըս առարկայ
Եղաւ քու սէրդ, ով Տէր:

5 Ու երբ հոս գովելէն դաղրի
Մահուամբ աշխար լեզուս,
Երկնէց մէջ սէրդ ա՛լ աւելի
Երգեմ, ո՞վ Տէր Յիսուս:

2-+ յ. 1

Թարգ. Elias Riggs

115 ՈՂ, Ի՛նչ ՀԻԱՆԱԼԻ ՓՐԿԻՉ

1 Յիսուս քառիչ եղաւ մեղաց,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Փրկեալ ենք արդ, պարտքն է մշարուած,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Ոհ, Ի՛նչ հիանալի
Փրկիչ իմ, Յիսուս.
Ոհ, Ի՛նչ հիանալի
Փրկիչ իմ և Տէր:

2 Կ'օրհնեմ իր սուրբ արիւնն յաւէտ,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Որ հաշտեցուց զիս չօրը հետ,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Ոհ, Ի՛նչ հիանալի, Լայն:

3 Նա բարեկամս է մըտերիմ,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Կ'ընէ զիս միշտ հաւատարիմ,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Ոհ, Ինչ հիանալի, Լայն:

4 Ինչ ոյժ կու տայ իր սէրն անգին,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Յաղթել չարին ու փորձանքին,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Ոհ, Ի՛նչ հիանալի, Լայն:

5 Անոր կու տամ իմ սիրտն ու սէր,
Ոհ, Փրկիչ հիանալի,
Աշխարհ ինձմէ բան չըսպասեր,
Ոհ, Փրկիչ հիանալի.
Ոհ, Ի՛նչ հիանալի, Լայն:
Բ Կոր. Ե., 18, 19, 21 Թարգ. Թ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

116 ՀՆԱՐԱՒՈՐ Է

1 Հընարաւօր է որ ըլլայ
Փրկչիս արեան մէջ ինձ բաժին.
Մահուանը ես առիթ եղայ,
Մեղքերս խալին զինք գաւեցին.
Ողորմութի՛ւն զարմանալի,
Որ Տէրս ինձի համար մեռնի:

2 Այն սէրը ո՞վ պիտի չափէ
Եւ խորութիւնը հասկընայ.
Ամենաբարձր սերովբէ
Ի զուր քննել պիտի ջանայ,
Գաղտնի՛ք տնհուան, անխնայի,
Ահա Անմահը կը մեռնի:

3 Կամաւ փառաց աթոռն ձրդեց,
Ինքզինքն ունայնացուց, եկաւ,
Ձիւ կորուսեալս սիրով փնտռեց,
Մահուամբ հոգիս ծախու առաւ:
Անճառելի՛ ողորմութիւն:
Ձըկայ ինձ դատապարտութիւն:

4 Յիսուս իմս է, անոր յուսամ:
Ան է իմ գլուխս. անով կ'ապրիմ:
Երբ յայտնուի երկրորդ անգամ,
Առջին ուրախ պիտի կայնիմ:
Կը մտտենամ ալ համարձակ,
Փրկչիս ձեռքէն կ'առնեմ պրտակ:

Յ-ՎՏ. Գ. 16

117 ՅԻՍՈՒՍ

1 Թէ որ բղբեզ, ով Տէր Յիսուս,
Չունենայի բաժին հոգւոյս,
Եւ քու արիւնդ մեղաւորաց
Տեղ չըստանար ներում մեզաց,
Ամէն խեղճէ կսխրղճախի,
Այսօր որո՞ւն կը դիմէի:

2 Ինձ եղկելոյս յտեղ չէր ըլլար,
Ձի սրտիդ պէս սիրտ ո՞ւր գտնար:
Միշտ գըթառատ և ըզգայուն,
Քեզ դիմողին սիրով լեցուն:

Քեզմէ ուրիշ պէտք չէ ինձ բան,
Յոյս, ապաւէն հոգւոյս միայն:
Յ-ՎՏ. Զ. 68-70 Թարգ. Տիկին ՀՌ. ՇՄԱԽՈՆԵԱՆ

118 ՈՎ ՀՈԳԻՈՅՍ ՍԻՐՈՂ ՔՐԻՍՏՈՍ

1 Ով հոգւոյս սիրող Քրիստոս,
Թող թռչիմ ես քոյդ ի ծոց:
Երբ գոռան չուրք յորդահոս
Եւ ամպեր մութ, հողմակոծ,
Բաց հրզօր թեւերդ, ա՛հ, բաց,
Ձիք սյոււր վայր ապահով:
Մինչ անցնի վախ ամպրոպաց,
Առ, Փրկիչ, զիս առ քու քով:

2 Ես չունիմ այլ ապաւէն,
Դու ես վէմբս, ոհ, Տէր իմ,
Կատաղե ալեաց մէջէն
Դէպ ի վեր քեզ կը նայիմ:
Մի թողուր զիս միայնակ,
Ձիք դադար, այլ ո՞ւր դիմեմ:
Ա՛հ, կուրծքիդ վրայ, հոն շիտակ,
Թոյլ տուր գամ և շունչ առնեմ:

3 Դու արեւս ես, դու սէր իմ,
Տէր, ամէն բան ես ինձ դուն:
Բաց ի քէն ես ո՞վ ունիմ:
Դու բարեքս ես մընայուն:

Զիս յողանածըս գերկդ առ, Տէր,
Սիրտ տուր, ա՛հ, հէք լըքեալիս,
Զիս ինկածըս գուն առ վեր,
Եւ դարման տուր խոցեալիս:

- 4 Ով փրկի իմ, շնորհքիդ ծով
Թող մեղքիս լեռներն թաղէ:
Պիղծ եմ ես բոլոր անձով
Սուրբ արևնդ իմ վրաս ցօղէ:
Գու ես ահ կենաց, ով Տէր,
Սիրադ սիրոյ գետ կը բղխէ:
Ա՛հ, ծարաւ եմ, թող քու սէր
Յորդելով զիս ողողէ:

Ս-դ. Թ. 9 Թարգ. 4. Ա. ՊԵՏՐԿԵԱՆ

119 ՔՐԻՍՏՈՍԻ ՍԷՐԸ

- 1 Զարթիր, հոգիս, ուրախ երգով,
Քու մեծ փրկիչդ օրհնէ փառքով,
Զի յոյս միայն է անյոյսին,
Իր սէրը, ոհ, ի՛նչ կաթողին:
- 2 Զիս կործանած, ինկած տեսաւ,
Բայց սիրելէն չը դադրեցաւ:
Զիս կորսրածս ինք աղատեց,
Իր սէրը, ոհ, ս՛րչափ է մեծ:
- 3 Զօրք թշնամեաց, երկիր, դրժոխք,
Թէպէտ ճամբուս են խափանողք,

- Բայց անվըտանդ զիս կ'անցընէ
Իր սէրը, ոհ, միշտ կը յաղթէ:
- 4 Երբ ներութիւնք ամպի մը պէս
Գոռան իմ շուրջըս սաստկապէս,
Ան կը կենայ միշտ մօտ ինձի:
Իր սէրը, ոհ, ի՛նչ ցանկալի:
- 5 Շատ հեղ կ'ղղամ իմ շար սրտէս,
Որ հեռանալ կ'ուզէ փրկիչս:
Թէպէտ շատ հեղ ալ զինք մտոցայ,
Իր սէրը, ոհ, միշտ կը մընայ:
- 6 Եւ երբոր մօթ ձորէն անցնիմ,
Բոլոր ուժէս ալ լըքանիմ,
Վերջին շունչիս հաճէ, Տէր իմ,
Որ քու սիրոյդ երգով մեռնիմ:
- 7 Ունիմ ես տենչ խաւարն ձրգելլ
Ան լուսափայլ աշխարհն կըլերլ
Միշտ երգելու ի լոյս անշէջ
Քու սէրըդ, ոհ, երկինքին մէջ:
- Ա. Թ-ՎՆ. Գ. 10

120 ՓՐԿՉԻՆ ՍԷՐԸ

- 1 Միշտ երգենք փրկիչն մեծ սէրը,
Որ ներած է մեր մեղքերը,

Եւ ցըրուած է մեր վախերը,
Փա՛ռք անոր անուան:

2 Մեզ արեամբ ծախու առած է,
Մուրոզը ինք փնտռած է,
Եռու ճամբաներէն բերած է,
Փա՛ռք անոր միայն:

3 Անապատ երկրէս տանողը,
Մանանն մեզ կերչընողը
Եւ յաջողութիւն արողը
Ինքն է՝ փա՛ռք փրկին:

4 Վերն պիտի տեսնենք մեր Տէրը,
Յաւիտեանս անոր մեծ սէրը
Յիշելով՝ մեր քաղցր երգերը
Պիտի մատուցուին:

5 Միշտ երգենք փրկչին մեծ սէրը,
Որ ներած է մեր մեղքերը,
Եւ ցըրուած է մեր վախերը,
Փա՛ռք անոր անուան:

Ղ.՝ ԺԹ. 10

121 ՅԻՇԷ ԶԻՍ

1 Յիսուս, փրկիչ մեղաւորաց,
Միայն քեզ կը նայիս:

Քու մեծ սիրոյդ առատութեամբ
Յիշէ զիս, ով Տէր իմ:

Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր:

2 Ըսքանչի Միջնորդ առ Հայր,
Եմ անձնատուր քեզի:
Երկնից անհուն փառքն վայելու
Յիշէ զիս, Սիրելի:
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր:

3 Ես յանցաւոր եմ և անարգ,
Բայց փրկութիւնդ է ձրի:
Քուկին ամենառատ շնորհքովդ
Յիշէ զիս, Սիրելի:
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր:

4 Երբ իմ աչքերս մահուամբ գոցեմ,
Երբ անդարման թողուիմ,
Յայնժամ, ով զուն փրկիչ միսուս,
Յիշէ զիս, կ'աղաչեմ:
Յիշէ զիս, Տէր, յիշէ զիս, Տէր:

Ղ.՝ ԻԳ. 42, 43

122 ԼՍԱՆ ԵՄ ԵՍ ՓՐԿՉԻ ՄԸ ՍԷՐՆ

1 Լրտած եմ ես փրկչի մի սէրն,
Հիանալի մի սէր է այն հարկու:
Բայց միթէ թողով նա բարձրերն,

Սուրբ սիրով լեցուած՝ ի՞նչ համար հոս եկաւ,
 Սուրբ սիրով, սուրբ գութով ի՞նչ համար,
 Ինձ, ինձ, այո, ինձ համար, ինձ, ինձ,
 ինձ համար.
 Մեր Տէրն անսահման իւր սիրով ի՛նչաւ վար
 իւր մահուամբ փրկելու քեզ և զիս:

2 Լքած եմ թէ նա անյանցանք
 Տանջեցաւ, խաչեցաւ չարաչար.
 Բայց կա՛յ տեղ մ'ըստուած թէ տանջանք
 ձաշակեց, խաչեցաւ իրօք ինձ համար,
 Տանջեցաւ, խաչեցաւ ի՞նչ համար,
 Ինձ, ինձ, Եւրոպէ:

3 Լքած եմ թէ վերն կայ երկինք,
 Յիսուսի սիրած տղոց տուն յարմար.
 Բայց կա՛յ այն տեղ վայր մը, զոր ինք
 Պատրաստեց, զարդարեց յատուկ ինձ հա-
 մար,
 Պատրաստեց, զարդարեց ի՞նչ համար,
 Ինձ, ինձ, Եւրոպէ:

4 Ինչքեմ, Տէր իմ, ըսէ, որո՞ւն
 Ես գիմեմ, թէ ո՛չ քեզ՝ անմոլար.
 Ըսէ ձայնովդ սուրբ և սիրուն
 Թէ փրկիչ և երկինք մը կա՞յ ինձ համար,
 կա՞յ փրկիչ և երկինք ինձ համար.
 Ինձ, ինձ, Եւրոպէ.
 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ
 ԻՍՏԱՆ. — Իւրաքանչիւր սունկն երգուելէն

ետքը թող ժողովուրդը, եթէ ուզէ, ըսէ Սուրբ
 Գիրքին այն համարը որ կը համապատասխանէ:

Ա. Տ-նէ պարտաւան.

Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովն ըն-
 դունելով թեան արժանի, որ Գրիստոս Յիսուս աշ-
 խարհ եկաւ մեղաւորները փրկելու: Ա. Տէր. Ա. 15

Բ. Տ-նէ պարտաւան.

Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուե-
 ցաւ, և մեր անօրէնութիւններուն համար ձեծուե-
 ցաւ, մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ
 եղաւ, և անոր վէրքերովը մենք բժշկուեցանք.
 Եւ. Եր. 5

Գ. Տ-նէ պարտաւան.

Իմ Հօրս տունը շատ ընտկարաններ կան,
 ապա թէ ո՛չ ես ձեզի պիտի ըսէի, Հիմա կ'երթամ
 ու ձեզի տեղ կը պատրաստեմ: Յովհ. ԺԳ. 2

Դ. Տ-նէ պարտաւան.

Եկէք ինձի, բոլոր յոգնած ու բռնաւոր-
 ուածներ, և ես ձեզ պիտի հանդէսեմ:
 Մարտ. ԺԱ. 28

123 ՔՐԻՍՏՈՍԻ ԶԶԱՏՈՒԻԼ

1 Փառաւորեալ Աստուածորդի,
 Սիրոյ աղբիւր կեանք աշխարհի,

Դէմքիդ լուսոյն մարդ կ'ըմայլի,
Ով սիրելի Տէր իմ Յիսուս:

2 Ոհ, այն ի՞նչ մեծ սէր ցուցուցիր,
Երբ դառն գաւաթը խըմեցիր,
Որով աշխարհըս փրկեցիր,
Ով պաշտելի Տէր իմ Յիսուս:

3 Դուն իմ հոգիս քեզի դարձուր,
Տըկար հաւատաքըս զօրացուր,
Ու փրկութիւնդ ինձի ցուցուր,
Ով կենսատու Տէր իմ Յիսուս:

4 Ոհ, չեմ ուզեր որ սէրդ մոռնամ,
Դէմքիդ լոյսէն ալ հեռանամ:
Դուն զիս բռնէ, Տէր բարեխնամ,
Եւ մարդասէր փրկիչ Յիսուս:

Յ-ԷԸ. ԷժԷ. Լեղինակ Տիկին ԼՌ-ՎԱՐԴՈՒԿԵԱՆ

124 ԱՆՃԱՌ ՍԷՐ

1 Յիսուս յայտնեց ինձ սէր անբաւ.
Խային վըրայ չարչարուեցաւ,
Փրկել հոգիս մեղսաթաթաւ:
Սիրովն անճառ, անբաւ:

Խ՜Բ. Անոր սէրն է անճառ, անբաւ,
Անոր սէրն է անճառ, անբաւ:

Սէրն զոր Յիսուս ինձ ցոյց տըւաւ՝
Սէր է անճառ, անբաւ:

2 Կըրեց վիշտեր բաղմատեսակ,
Եւ, ոհ, դըրաւ փուշէ պըսակ,
Տըւաւ իր կեանքն ինձ փրկանակ՝
Սիրովն անճառ, անբաւ:

Խ՜Բ. Անոր սէրն է, Խ-յն:

3 Խաղաղութիւն ունիմ անով:
Իր սուրբ արեան արժանիքով
է բարեխոս Աստուծոյս քով՝
Սիրովն անճառ, անբաւ:

Խ՜Բ. Անոր սէրն է, Խ-յն:

Լ-ու. Ե. 6-8

Թարգ. Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ

125 ՓՐԿՉԻՆ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

1 Փրկիչն ցուցուց ողորմութիւն
Ինձ մեղաւոր արաբածիս.
Ինձի յայտնեց իր սէրն անհուն,
Որ շըժոխքէն փրկէ հոգիս.
Աս տեսնելով կ'ուրախանամ:
Ողորմութեանն ալ փառք կու տամ:

2 Ես, բարկութեան արժան որդի,
Տէր Յիսուսէն չընորհք զըսայ:

Ինք բաժանող պատը քակեց,
Եւ ես Տէրոջս հետ միացայ,
Ո՞վ կատարեց այս գրթութիւնն.
Ողորմութիւն, ողորմութիւն,

3 Ով իմ Աստուածս, պիտի պատմեմ
Ողորմութիւնդ ամէն մարդու.
Յայնժամ ըղբեզ պիտի գովեն
Հաւատացեալք ամէն դարու.
Տրտմեալք ուրախ պիտի ըլլան,
Ողորմութիւնդ երբ հասկընան:

4 Պանդխտութեան կարճ ժամանակն՝
Ներկայութիւնդ թող հետս ըլլայ.
Ողորմութեանդ պիտի յուսամ
Երբ մահն ինձի կը մօտենայ.
Յայնժամ երկնից մէջ յաւիտեան
Փառք պիտի տամ ողորմութեանս
Ա Տէ՛ր. Ա. 15

126 ԿՈՅՐ ԲԱՐՏԻՄԷՆՈՍ

- 1 «Ողորմէ ինձ, ողորմէ ինձ,
Ով Որդի Դաւթի, Քրիստոս»
Այսպէս կ'աղաչէր ճամբուն վրայ
Կոյր, ազգաս Բաբախմէոս:
- 2 «Լուռ կեցիր», ըսին շատերը,
Սակայն ան աղաղակեց

Անհամբեր, մինչեւ որ Տէրը
Ձինք դուրսով երէն կանչեց:

- 3 Ձէր արծաթ անոր խնդրածը,
Թէպէտ էր սովոր մաքալ.
Դաւթի Որդոյն տըածը
Ձէր կարող ուրիշ մը տալ
- 4 «Տէր, վերցուր այս կուրութիւնը,
Թող աչքերս բացուին», ըսաւ.
Շուտ տեսաւ, իսկոյն և ինքը
Յիսուսի ետեւ ինկաւ:

5 Ո՛րչափ սիրան հիմա լեցուն է.
Ամենուն ալ կը խօսի:
Աս ողորմութիւնն անհուն է,
Ի՞նչ փրկիչ զարմանալի:

6 Երանի՛թ է ասոր քովը
Կոյրերուն սակեր գար.
Ինք անշուշտ անշափ շնորհքովը
Շուտ անոնց ականջ կու տար:

Մ-բլ. Ժ. 46-52 Թարգ. Elias Riggs

127 ՇՆՈՐՀՔՈՎ ՓՐԿՈՒԹԻՒՆ

- 1 Շընո՞րհք, ձայն սիրելի,
Ի՞նչ փաղցր ես դուս ինձի:

Երկիրնքն այս ձայնը թող կրկնէ,
Երկիրն ալ թող լըսէ:

2 Շընորհքն յայտնեց ճամբան,
Փրկել շար ազդ մարդկան.
Եւ այս ճամբուս շաւիղքն ամէն
Շընորհք կը ցուցընեն:

3 Շընորհքն է լոյս ոտքիս՝
Տանիլ զիս դէպ յերկինս.
Ու ես որչափ յառաջ երթամ,
Շնորհքով կը զօրանամ:

4 Շընորհքն պիտի փրկէ
Ամէն տանջանքներէ.
Ուրիմըն միշտ շընորհք խնդրենք
Ու Տէրն փառարանենք:

Տէր - Բ. 11

128 ՎՇՏԱՀԱՐ ՄԱՐԴ ՄԸ

1. Շատ հեղ ճամբան առաջս կ'ելլէր
Խեղճ մարդ մ'աղքատ և վշտահար,
Անանկ խեղճուկ աղերս կ'ընէր,
Որ «Ձէ» բսել ինձ չէր հընար:
Ձըհարցուցի անունն ինչ էր,
Ո՛ր տեղ կ'երթար, ո՛ր էր զացեր.
Իբեն քաշեց սրտիս մեծ սէրն,
Բայց չեմ գիտեր ինչ էր պատճառն:

2 Երբ աղքատիկ սեղանս դըրած՝
Հաց կ'ուտէի, ան ներս մտաւ.
Տեսայ ինքն էր յոգնած, քաղցած.
Բոլորն տուի, օրհնեց կերաւ:
Բայց մէկ բաժինն երբոր նորէն
Ինձի տըւաւ՝ կերայ ձեռքէն.
Հրեշտակային բաժին մըն էր,
Եւ մաննայի համն ինձ կու տար:

3 Յստակ վազող ջուրի մը քով
Մէյ մ'ալ տեսայ կորած ուժէ,
Ծարաւ, նայէր մարած աչքով:
Ձի չէր կրցած խմել անկէ:
Վեր հանեցի, խկոյն ելաւ,
Առաւ գաւաթս, ծարաւն անցաւ.
Կրկին լեցուց ինձի խմցուց,
Բոլորովին ծարաւս մոռցուց:

4 Բանախ մէջ էր, դատապարտուած
Իրերս մատնիչ մը մեռնելու.
Մէկէն ամօթն մեկզի ձրգած՝
Գացի իր քովն զինք պատուելու:
Հարցուց ինձի որ սէրս փորձէ
Թէ տալ իմ կեանքս սիրտս յօժար է.
«Մարմինս տկար՝ հոգիս յօժարն»
Ըսի, «Կու տամ քեզի համարն»

5 Յայնժամ իսկոյն մարդն աննշան
Տեսայ փոխուած փրկչիս դէմքին:

Երկու ձեռքի վերայ նշանն
 Բերաւ իմ Տէրս աչքիս առջին.
 Եւ խօսեցաւ անունս առաջի,
 «Դուն ինձ եկար Համբնառով.
 Այն գործերով ինչ որ ըրերս,
 Դուն մի վախնար, ինձի ըրերս»

Մատթ. ԻԵ. 35-40

Թարգ. Ա. Հ. ձեռնի ձեռն

129 ՅԻՍՈՒՍ ԻՄ ՅՈՅՈ

- 1 Տէր, քու ոսկից առջին
 Կ'իյնամ անյոյս,
 Աչք իմ յառած խաչին,
 Տուր ինձ խրատոյս,
 Թող այն արեան չիթեբր,
 Որ թափուեցան հոն, Տէր,
 Զիս ալ հանեն ի վեր,
 Յիսուս իմ յոյս
- 2 Եւ զղջման դառն արցունք
 Մինչ կը հոսին,
 Թող քու սիրոյն բարձաւք
 Ինձ ալ խօսին,
 Դուն ես տենչն իմ հոգւոյս,
 Այս է բոլոր իմ յոյս,
 Վասն իմ մեռաւ Յիսուս,
 Յոյսն անյոյսին

- 3 Թող սուրբ կողիդ վերքէն
 Դու քս ցայտէ լոյս,
 Այդ սուրբ լուսոյն խորքէն
 Թող պլպլայ յոյս.
 Լոյս տայ հեփիս անլոյս,
 Յոյս տայ սրտին անյոյս,
 Կու մահ կեանք տայ հոգւոյս,
 Իմ յոյս Յիսուս

- 4 Փառք քեզ, Տէր իմ, փառք քեզ,
 Լոյս տաս հոգւոյս,
 Եւ միշտ առատ թափես
 Յոյս ու խրատոյս
 Քու սիրոյդ բարձունքէն
 Սրբես իմ արցունքներն.
 Միշտ այս ըլլայ իմ երգն,
 Յիսուս իմ յոյս

Տէր. Բ. 13

130 ՅԻՍՈՒՍԸ ՏԵՍՆԵԼ

- 1 Յիսուսը ես տեսնել կ'ուզեմ,
 Կարօտ եմ ես անոր.
 Կ'ըսեն, դարման անկէ փնտռեմ
 Յաւոյս հազարաոր
- 2 Կոյր եմ, և ինձ ըսին, Յիսուս
 Կընայ առ տեսութիւն,

Հիւանդ, արկար անդամներուս՝
Լըման առողջութիւն:

- 3 Աղքատ եմ, ինձ աւետեցին,
Յիսուս ունի զանձեր,
Որ ինձ նրման կարօտեալին
Բաշխեւ է խոստացեր:
- 4 Մերկ եմ, ցնձմամբ ես լսեցի
Թէ իր արդարութեան
ձերմակ ըզգեստն կու տայ ինձի.
Կ'ուզեմ խնդրել և զայն:
- 5 Է անփոփոխ, կ'ըսեն, Յիսուս,
Անոր սէրն չըզակտի.
Աւա՞ղ, սիրոյն ընկերներուս
Ըստեպ չեմ վստահիր:
- 6 Է ցանկալի, Յիսուս, ըսին,
Բընաւ արատ չունի.
Ահ թէ անոր դէմքին լոյսին
Մէյըլ հանդիպէի:
- 7 Ով Հայր, զըթած, օգնէ նայեմ
Որդւոյդ քու միածին.
Նայեմ, տեսնեմ, յառիմ, փոխուիմ,
Սիրուն կերպարանքին:

Մատթ. ԺԱ. 4-6 Հեղինակ ՏԻԿԻՆ ՀՌ. ՇՄՍ.ՈՆՆԱՆ

131 ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

- 1 Քաղցր է անունը Քրիստոսի
Հաւատացեալ սըբտին.
Անով իր վախն կը խափանուի,
Վէրքերը կը բուժուին:
- 2 Կը բըժըղէ խոցուած հոգին,
Տրտմեալն ուրախ կ'ընէ.
Կենսց հաց է անօթիին,
Յօգնածն հանգիստ կ'ընէ:
- 3 Անով աղօթքներս կ'ընդունուին,
Թէև մեղքով լեցուած.
Թէև դեւերն հակառակին,
Տէրն զիս է ընդունած:

4 Դուն, Տէր, գիտես սերս ի՞նչ պաղ է,
Գործքով ալ շատ թոյլ եմ.
Բայց երբ իմ աչքս քեզ տեսնէ,
Քեզ լաւ կը ծառայեմ:

5 Հոս, Տէր, լեղուս պիտի պատմէ
Քու սէրդ ամէն մարդուն.
Թող քաղցր անունդ մըխիթարէ
Ձիս, Տէր, մահուան ժամուն:

Ա Պետ. Բ. 7, Գործ. Գ. 12

132 ՔՐԻՍՏՈՍԻ ԳԼՄԲԸ

- 1 Գեժք մը վեհ ու մէկ հատիկ
Յերկինս, յերկրիս նըմանն իւր շիք,
Չայն իբաւամբ ճանչողներուն՝
Այնքան սիրուն, այնքան սիրուն:
 - 2 Պիտի ճաշնամ, տեսնեմ երբ զԱյն,
Թէ քահանաս է, Տէրս, Արքայն.
Իբ թափանցիկ դէմքին մէջն
Գտնեմ իմ հայրս, Աստուածս, Որ էն:
 - 3 Չայն տեսնելու շատ իղձ ունիմ,
Թէն հարկ է որ նախ մեռնիմ.
Թերեւս ցոյց սոյ կողն ու ձեռքեր,
Որ ինձ համար են ծակժըկուեր:
 - 4 Ահ, զայն տեսնելս գէթ մի անգամ
Ինձ կը բաւէ բիւր հազար ամ.
Բերկըած սրտէս բղխիւն երգեր,
Գողեմ, պաշտեմ զԱստուածն իմ Տէր:
- Յ-յ. ԻՅ. 4, Ա. Յ-ձ. Գ. 2
Հեղինակ ՏԻԿԻՆ ՀՌ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

133 ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

- 1 Ոհ թէ կարող ես ըլլայի
Փրկչիս փառայն անշարիկ
Մէկ մասն միայն պատմել

- Երկինք պիտի շուտ թըռչի,
Հետ հրեշտակաց ըսկըսէի
Անոր քընար զարնել:
 - 2 Այն սուրբ արիւնն զոր ինք թափեց,
Ու մեղապարտ հոգիս փրկեց,
Պիտի ես երգէի.
Հոգիս, անոր խիտ գերապանծ
Արդարութիւնն վրբան հագած,
Հոն միշտ պիտի փայլի:
 - 3 Մեր մեծ Միջնորդն աթոռն նստած,
Վըսեմ պաշտաններովն հագուած,
Պիտի ես երգէի.
Իբ փառքն անհուն, Աստուածային
Ամէն դարու, երկրի, ազգի
Պիտի միշտ պատմէի:
 - 4 Բայց շուտ այն օրն պիտի ծագի,
Երբ Տէրը զիս պիտի տանի
Ուր զինք պիտի տեսնեմ.
Հոն իր առջև պիտի կայնիմ,
Հոն յախտեանքս օրհնելիմ.
Եւ միշտ իբ սէրն երգեմ:
- Յ-յ. Ե. 11-14 Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԻԲԷԼԵԱՆ

134 ՅՈՒՇԻՔ ԳԱԼԻԼԵԱՅ

- 1 Ձիթ ենազարդ սա լեռ ու ձոր,
Սա պարտէզներ, սիրուն ծորձոր,

Ինձ յարածամ ի յուշ կ'ածեն
 Հին պատմութիւն մը մեղրածոր,
 Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
 Անունդ անուշ է իմ սրտիս.
 Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
 Ըզօթսուսէ խօսէ ընդ իս:

2 Սա որթաշատ այգիք բերուն
 Եւ դաշտերու շուշանք շողուն
 Ինձ յարածամ ի յուշ կ'ածեն
 Անոր գործերն, խօսքերն զերուն:
 Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
 Անունդ անուշ է իմ սրտիս.
 Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
 Ըզօթսուսէ խօսէ ընդ իս:

3 Այս սերմնացանք, ո՞հ, պարտաւած,
 Այս ուռկաններ. հէք ձկնորսաց
 Ինձ յարածամ ի յուշ կ'ածեն
 Այն առականերն, զոր նա աւաց:
 Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
 Անունդ անուշ է իմ սրտիս.
 Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
 Ըզօթսուսէ խօսէ ընդ իս:

4 Իւղճ նաւորդներ հանդիպակաց,
 Գոռ մրուրնչիւնք այն կոհակաց

Ինձ յարածամ ի յուշ կ'ածեն
 Սաստաղն ծովուն ու փոթորկաց,
 Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
 Անունդ անուշ է իմ սրտիս.
 Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
 Ըզօթսուսէ խօսէ ընդ իս:

5 Սա ախտացեալք ազգի ազգի,
 Կոյրեր, կաղեր ամէն կարգի
 Ինձ յարածամ ի յուշ կ'ածեն
 Բըժիշկը մեծ այն վեհոգի:
 Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
 Անունդ անուշ է իմ սրտիս.
 Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
 Ըզօթսուսէ խօսէ ընդ իս:

6 Գալար մարդեր, հանդարտ գետեր,
 Սա հովիւներ, անոնց հօտեր
 Ինձ յարածամ ի յուշ կ'ածեն
 Քաջ շովուապետն ամենատէր:
 Ով Գալիլեա, վեհ Գալիլեա,
 Անունդ անուշ է իմ սրտիս.
 Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
 Ըզօթսուսէ խօսէ ընդ իս:

7 Այս վառապանծ ծովն ու ափեր,
 Զքնաղ վայրերն դար ու տափեր
 Ինձ յարածամ ի յուշ կ'ածեն,
 Ա՛խ, այն փրկիչը կենսարեր:

Ով Գալիլեա, վե՛հ Գալիլեա,
Անունդ անուշ է իմ սրտիս,
Ով Գալիլեա, քաղցր Գալիլեա,
Ըղթիսուսէ խօսէ ընդ իս:

Մ-ԴԸ. ԺԵ. 29-31, Մ-ԴԸ. Ա. 39

Թարգ. Ա. 4. ՊԵՏԻԿԵԱՆ

135 ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԿՈՎ ՊԱԱԿՈՒԻԼԸ

- 1 Ողջո՛յն մեծ էմանուէլին.
Թող պետութիւնք երկնից
Նրկրպագեն, զայն հըռչակեն
Արքայ, Տէր ամենից,
- 2 Թող մեր երկրին լեզուք ամէն
Ըլան հոս ձայնակից.
Անոր փառք ասան, զայն ընդունին
Արքայ, Տէր ամենից,
- 3 Ոհ, Ե՞րբ պիտի մենք զայն պաշտենք
Ի մէջ գնդաց երկնից.
Անոր երգենք ու զայն կոչենք
Արքայ, Տէր ամենից,

Ե. 14, Մ-Դ. Ա. 23

Թարգ. ԶԵՆՈՒ ՓԱՓԱԶԵԱՆ

136 ԱԼԷԼՈՒԻԱ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ

- 1 Անոր, որ մեր մեղաց համար
Կըրեց վիշտեր, ցաւ անհամար,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան:
- 2 Սիրով զօհուած սուրբ Գառնուկին,
Որ մեզ տըւաւ իր կեանքն անդին,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան:
- 3 Անոր, որ դուրս յարեաւ շիրմէն,
Յոյսն յարութեան շողաց իրմէն,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան:
- 4 Անոր, որ մեզ է սառնորդ,
Մեծ բարեխօս միակ միջնորդ,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան:
- 5 Փրկին թող տան փառք ու պատիւ
Նրկնի, երկրի սուրբերն անթիւ,
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա սուրբ անուան:
Յ-Դ. Ա. 5, 6

137 ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

- 1 Լաւ բարեկամ մը կայ վերերն,
Յիսուս Գրիստոս է իր անունն.
Այս աշխարհիս բարեկամներն
Շուտով կ'անցնին, չեն հաստատուն.

Ուստի թող ես անհոգ չլլամ
Յխուսն ընել ինձ բարեկամ:

2 Աշխարհ բոլոր փառքովն կ'անջնի,
Հաստատ մընայ Յխուս մեր վճմ.
Մարդիկ երբ չեն օգներ ինձի,
Յխուս միշտ քովս պատրաստ գտնեմ.
Ուստի, Եսայն:

3 Ան ինձ համար իր անձն զոհեց,
Որ ես երկնից հեղձրդ լլամ.
Իմ տեղըս իր արինն թափեց,
Որ ես իրմով արդարանամ.
Ուստի, Եսայն:

4 Բարեկամիս մեծ գրթութիւնն
Օրէ օր զիս սիրով կ'ուզողէ.
Յխուս միշտ իմն է, ես իրենն՝
Միշտ եր մահն իմ շունչս կտրէ.
Ետքն ալ երկնից մէջ յախտեան
Բարեկամիս հետ միանամ:

Յ-վ. ԺԵ. 13-15

138 ՅԻՍՈՒՍԻ ՔՐՈՎԷՆ

1 Յխուս, փըրկել ու բարեկամ,
Տուր որ քովէդ միշտ ընթանամ.
Առաջնորդէ բըռնած ձեռքես՝
Նոր ոտք ելող մանկան մը պէս,

2 Որ երբ քայլես ա՛լ դեզ եւին,
Փարիմ խկոյն քու աջ թեւին.
Վստահութեամբ եամբ իյնամ քու գէրկ,
Սէրդ վայելեմ քաղցրիկ ու գիրգ:

3 Դէմ դառնութեանց կ'լլամ հըսկայ,
Երբ քեզ հոգիս ինձ մտա ըզգայ.
Տուր որ քովէդ միշտ ընթանամ,
Յխուս, փըրկել ու բարեկամ:

Յ-վ. ԺԵ. 10 Հեղինակ Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ

139 ՅԻՍՈՒՍ ՄԵՄ ԲԻԻՇԿ

1 Խնչ գէշ էր իմ վիճակըս,
Երբ Տէրը զիս տեսաւ,
Եւ հոգիս դարմանը
Լոկ ինքն ինձի տըտաւ:
Մահուան շատ մտա գըտաւ զիս,
Գերեզմանէն հանեց,
Որ խղճ մարդոց պատմեմ ես
Ինտր զիս բեժըզկեց:

2 Ուրիշ ամէն ախտերը
Թեթեւ են մեզքին քով:
Կ'աւրէ բոլոր մարմինը,
Բայց բուն հոգին՝ ուժով,
Բազում և ծանր ախտեր կան,
Բայց մեզքն է ծանրագոյն:

Եւ յոյս միայն փրկչին վրան՝
կ'ըլլայ դեղ այս ցաւոյն:

- 3 Շատ բըժիշկներ տեսած եմ,
Ինծի շատ դեղ տըւին,
Բայց աւելի վատած եմ,
Բընաւ օգուտ չըբին:
Ոմանք, «Ձունիս դուն ախտ մը»,
Ըսին, «չուս կ'ազատիս»,
Իսկ այլք ըսին, «Ձիք յոյս մը,
Անշուշտ պիտի մեռնիս»:
- 4 Սակայն այն մեծ Բըժիշկըս,
Անհամեմատ սիրով,
Շուտ ընդունեց ինձ իր քրքս՝
Ինծի ողորմելով,
Նաև բացաւ աչքերբս,
Վէրքերս ինծի յայտնեց,
Յուցուց բոլոր մեղքերբս,
Շնորհքով զիս բըժըշկեց:
- 5 Խաչեալ Փրկիչ Յիսուսը
Երբ հաւատքով տեսնանք,
Մեղքի ու մահուան լուծը
Շուտով ինձաւ կ'ըզանք,
Մեզ կը կանչէ Բըժիշկը,
Գժուար պայման չըկայ:

Ձըբխապէս մեր վիշտը
Անով պիտի վերնայ:

Մարտի 17

140 ԲԱՐԻ ՀՈՎԻԻԸ

- 1 Տէր, հովուի պէս խընամէ մեզ,
Օգնութեանդ կը կարօտինք:
Չարերբու քով արածէ մեզ,
Աբօտիդ կը փափաքինք:
Տէր, հովու մեր,
Քաւեցիր մեզ, քուկդ լինինք:
- 2 Ոյխարներդ ենք, պատպանէ մեզ,
Մոլորեալն զութով փնտռէ,
Մըթութեան մէջ պատապարէ մեզ,
Փարախիդ մէջ մեզ պահէ:
Տէր, հովու մեր,
Բազուկդ մեր վրայ տարածէ:
- 3 Խոստացած էս ընդունիլ մեզ,
Թէպէտ ենք շատ մեղսալից:
Բարեգութեան ողորմիլ մեզ,
Եւ մեզքէ սրբել անբիծ:
Տէր, հովու մեր,
Կը դիմենք քեզ յաւաստից:

- 4 Պարգեւ է այդ երախտիքըդ,
կամքդ ընել մեզ զօրացուր,
Տուր որ մենք քաղենք շաւիղըդ,
Մեր սրտերն սիրովդ լեցուր՝
Տէր, հովիւ մեր,
Ոհ, հօտիդ մեզ միացուր:

Յ-ԼԵ. Ժ. 7, 9

141 ՏԷՐԸ ՔԱՋ ՀՈՎԻԻ

- 1 Ինձ Տէրը եղաւ Հովիւ կառավար,
Եւ ո՛չ մէկ բանի կարօտ չեմ ըլլար,
Օրեր անվախճան՝ դաշտերն խոտաւէտ
Պիտի ճարակիմ ընտրեալ հօտիդ հետ:
- 3 Հանդարտ ջուրերուն զիս կ'առաջնորդէ,
Իջարաւը հոգւոյս կը յագեցընէ՝
Հողիս իր խօսքովն միշտ կը նորոգէ,
Ուղիղ ճամբուն մէջ հաստատ կը պահէ:
- 4 Մահուան ալ շուքի ձորին մէջ քալեմ,
Չարէն չեմ վախնար ու վախնալու չեմ,
Գանդիւով Տէր, դուն ինձի միշտ կ'օգնես,
Եւ զաւաղանովդ կը մըխիթարես:
- 4 Քու ողորմութիւնդ իմ հետքս կու գայ,
Բոլոր կեանքիս մէջ ինձի սիրտ կու տայ՝
Տէրովը տաճարն պիտի ես հանգչիմ՝
Եւ հոն անվախճան դարեր ըրնակիմ:

Ս-Ղ. ԻԳ.

142 ԲԱՐԻ ՀՈՎԻԻԸ

- 1 Քու Հովիւս ես, բարեգութ Տէր,
Այլ բանի ես չեմ կարօտ,
Արած է զիս ջուրերու քով,
Քաղցր է ինձ քու կին արօտ՝
Քաջ հովիւդ իմ,
Զիս պահէ քեզի միշտ մօտ:
- 2 Նորոգէ, Տէր, այս սիրտն իմ շար,
Փառք, պատիւ տամ քու անուան,
Առաջնորդն իմ և արթուն դէտ,
Յոյց ինձ նեղ, ուղիղ ճամբան՝
Քաջ Հովիւդ իմ,
Տըկարիս լեր օգնական:
- 3 Արհաւիրք և կամ մահուան շուք
Պաշարեն զիս, չեմ վախնար՝
Զի դու հետս ես, և զօրեղ ցուպդ
Իմ սրտիս է մըխիթար՝
Քաջ Հովիւդ իմ,
Թշնամւոյն ձեռք զիս մի տար:
- 4 Սեղանէդ ճօխ կերակրէ զիս,
Դեմ յանդիման թշնամւոյն՝
Եւ ի զով սուրբ զիս օծէ, Տէր,
Լից բաժակն իմ լիփ լեցուն՝
Քաջ Հովիւդ իմ,
Ճաշակեմ քու սէրդ անհուն:

- 5 Յիրաւի թող միշտ իմ հետս գան
Անհամար քու բարեգներ.
Բընակիմ սուրբ հովանոյդ տակ,
Տաճարիդ մէջ շատ օրեր.
Քան չօվիւղիմ,
Երկինքէդ զիս մի զրկեր:
Ս=դ. ԻԳ. Հեղինակ Տիկին ՀՌ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

143 ԿՈՐՈՒՍԵԱՆ ԱՉԻՍԱՐԸ

- 1 Ինքնսուն և ինք կար ապահով
Պաշտպանուած, հանգիստ պառկած,
Յանկարծ ոչխար մը մոլուկով
Լերանց վրայ էր հեռացած.
Լերանց վրայ անկող ու վայրենի,
Հովուին բարեգութ խնամքէն հեռի,
Հովուին բարեգութ խնամքէն հեռի
- 2 «Տէր, ահա քովք են ինքնսուն և ինն,
Ասոնք շէն քեզ բաւական»
Պատասխանեց քաջ Հովուին թէ «Մին
Թշուառ է մոլորական,
Եւ ի՛նչ նեղութիւն որ պէտք է կրել,
Կ'երթամ անապատն ոչխարս զբռնել,
Կ'երթամ անապատն ոչխարս գտնել»
- 3 Բայց ո՛չ մէկը կրցաւ գիտնալ թէ Տէրն
Ի՛նչ խորունկ ջուրէ անցաւ,

- Ի՛նչ մութ էր իր անցուցած գիշեր,
Մինչև կորսրածն գրաւու.
Լըսեց անապատն անոր խեղճ ձայն՝
Մահուան մօտ թշուառ անօգնական,
Մահուան մօտ թշուառ անօգնական
- 4 «Տէր, ինչո՞ւ այդ արեան կարմիր շիթեր
Լեռնի վերէն կաթկըթածու»
«Գաւթէն ոչխար մը դուրս էր իջկեր
Անոր համար են թափուած»
«Ուստի՞ են, Տէր, այս ձեռագող վէրքերն»
«Շատ փուշք զիս այսպէս ըրին գիշերն,
Շատ փուշք զիս այսպէս ըրին գիշերն»
- 5 Եւ ահա մոլորածը կը գտնէ,
Մեծապէս կ'ուրախանայ.
«Ուրախ եղէք ինձի հետ», կ'ըսէ,
«Քանզի կորսրածն գրտայ»
Դասն հրեշտակաց արձագանք արժաւ,
«Ուրախ եղէք, Տէրն իրենը գտաւ,
Ուրախ եղէք, Տէրն իրենը գտաւ»
- Մ=դ. ԺԲ. 12-14
- 144 ԵՐԿԵԱՅԻՆ ՓԱՐԱՍԻՆ ԳԱՌԻՆԻՔ
- 1 Երջանիկ փարախ, երջանիկ սրօտ՝
Բարի Հովիւին փարախ.

Յաւիտեանքս կայ մէկ շովիւ, մէկ հօտ.

Ա՛լ վտանգ հոն չըկայ, ոչ վախ,

կը ծաղիկ հոն վարդ, կը ծաղկի շուշան,

Գարուն անգալար երկինք.

Ո՛չ ցուրտ և ոչ տաքութիւն կ'ըզան

Երջանիկ փարախին գառինք.

2 Կան փոքրիկ թռւմբեր, որ որ այս երկրիս

Յոյսերը պառկած կը ննջեն.

Գետնի տակ թաղուած են և աչքերնին

Այն գետինն արցունքով կը թրջեն,

Բայց ճըրագը, որ կը սպիտի երկրէ,

Վառած կը փայլի երկինք.

Եւ բարի շովիւն սիրով պահէ

Երջանիկ փարախին գառինք.

3 Մեր սրտէն վշտովն ալ մինակ կ'երթանք

Կենաց արբամալից ճամբան.

Վասն զի ցուրտ հողը լեցուած տեսանք

Սպիտակ ճակատին վրան.

Սակայն հաւատքով ու զըւարթ աչքով

Արդ վեր կը նայինք երկինք.

Ժողովուած են հոն, և ապահով,

Երջանիկ փարախին գառինք.

Յ-վճ. Ժ. 11, 16

Թարգ. Elias Riggs

145 ԱՐՔԱՅՆ ՍԻՐՈՅ Է ԻՄ ՀՈՎԻՒ

1 Արքայն սիրոյ է իմ շովիւ,

Ես մէկ բանի կարօտ չեմ.

Սիրաս կը խայտայ անհուն իրնդիւ,

Զի ինքն իմն է, ևս ինչ եմ.

2 Փըրկեալ հողիս կ'առաջնորդէ

Վըճիս, հանգարտ ջուրի քով.

Եւ խոտաւէտ արօտներէ

Կը կերակրէ զիս սիրով.

3 Ես շատ անգամ, խեռ ու յիմար,

Թողած եմ իմ բարի հօտ.

Բայց ինք փնտռեց սիրայօժար,

Կը կին բերաւ զիս իր մօտ.

4 Մահուան ձորէն ալ չեմ վախնար

Եթէ, Տէր, դուն ևս իմ հեռ.

Գուց ցուպդ ու գաւազանըդ յար

Ինձ մի խիթար են յաւէտ.

5 Կեանքիս բոլոր օրերուն մէջ,

Տէր, հեռս ըլլայ թող քու սէր.

Ու քեզ գովեմ դալեր անվերջ,

Երբ այս ձորէն ելլեմ վեր.

Սուգ. ԻԳ.

Թարգ. Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

146 ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼՈՒԽԸ ՔՐԻՍՏՈՍ Է

- 1 Յիսուս, դուն ես մեզ Առաջնորդ,
Միակ Գլուխ եկեղեցւոյն,
Եւ թողուցիր քեզ փոխանորդ
Գու. Սուրբ Հոգիդ, լոյս գերազոյնս
- 2 Յիսուս, դուն ես վճիճյազթական,
Որով կանգնի եկեղեցին,
Կանոն տրելու Աւետարանս,
Ամէն մարդիկ քեզմով փրկուինս
- 3 Յիսուս, դուն ես Հովիւ բարի,
Իր ոչխարներն նայող՝ փնտաող՝
Ով որ քեզի կը յանձնուի
Զըկայ ձեռքէդ յափշտակող
- 4 Յիսուս, դուն ես մեծ Թագաւոր,
Նոյն և քաւիչ մեծ փահանան.
Անգին արեանդ զոհ փառաւոր
Է առաջնորդ մեր փրկութեանս
- 5 Տէր, մեծ ու թիւնդ մեզի գիտցուր,
Որ քեզ միայն մեր Գլուխն ճանչնանք,
Մեր յոյս, հաւատ, սէր աւելցուր,
Որ քեզ արժան պատիւ, փառք տանք:

Եփե. Ա. 22, Կող. Ա. 18

147 ԵՐԳ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

- 1 Բացուին այսօր երկնից կամարք,
Իջիր մեզի, ով Սուրբ Հոգի,
Մեր խըղձալի սրբոց կապանք
Գու. զօրութեամբը արձրկուի
- 2 Մեղաց խաւարն է մեզ պատեր,
Թող փարատի ու չըքանայ.
Սաստիկ զղջում ու սէր առ Տէր
Մեր սիրտերուն մէջ արթըննայ
- 3 Թող մեր միաքերն լուսաւորուին
Տէրովը կամքը ճանչնալու.
Ու մեր սիրտերը համոզուին
Ամէն մեզքէ հրաժարելու
- 4 Առատարուղիս պարգեւներով,
Կարեկցութեամբ մեզի եկուր.
Փառաց երկրին փափաքներով
Դուն մեր սիրտերն այսօր լեցուր
- 5 Առաջնորդ է մեզ, կ'աղաչենք,
Ճշմարտութեան մէջ անդադար,
Որ մեր ընթացքը կատարենք
Անկեղծութեամբ մինչև ի սպառ:

Գործ. Բ. 2-4

148 ԱՂՕԹԻ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

- 1 Ով Սուրբ Հոգի, լոյս երկնային,
Դուն իմ հոգիս լուսաւորէ,
Յըբուէ խաւարն գիշերային,
Եւ ցորեկուան պարզ լոյս ծագէ:
- 2 Ով Սուրբ Հոգի, հըզօր Աստուած,
Քու զօրութեամբդ իմ սիրտս մաքրէ,
Զի ներսիդիս ժողով մեղաց
Իշխանութեամբ միշտ կը տիրէ:
- 3 Ով Սուրբ Հոգի, Մըխիթարիչ,
Տրտում հոգիս մըխիթարէ,
Սրտիս բոլոր վիշտ խոցոտիչ՝
Ուրախութեամբ դուն վարատէ:
- 4 Ով Սուրբ Հոգի, ամենազօր,
Իմ սիրտս մաւիր, հոն բընակէ,
Վերցուր անկէ կուռքերս բոլոր,
Եւ յաւիտեան հոն դուն իշխէ:

Թ-Է. Ժ. 2. 7-11

149 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՈՒՂՂՈՒԱՅ ԱՂՕԹԻ

- 1 Տէր, վար նայէ աչքով զըթած,
Աղամարդին տես կործանած:

- Մեղքն յողթ անակ կը տարածէ,
Ամէն տեղեր մարդ կ'ապաննէ:
- 2 Պաշտենեաներդ պարապ կ'ելլեն,
Մեռած մարդոց կը քարոզեն:
Հողիդ չազդած անոնց սրտին
Անոնք ի դուր կը պաղատին:
- 3 Բայց Սուրբ Հոգիդ մահն կը յողթէ,
Մեռելներուն կեանք կը բերէ:
Զոր ոսկորներ ձայնովդ կ'ելլան,
Նոր յսրութեամբ կ'ուրախանան:
Թ-Է. Ժ. 2. 13

150 ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹԻ

- 1 Իմ աղաղակս, ով Տէր, լըսէ,
Եւ Սուրբ Հոգիդ ինձ պարգեւէ:
Անեհեղ լեզուով քեզ կ'աղաչեմ,
Սնկեղծ սրտով աղօթք կ'ընեմ:
- 2 Իմ քայլերուս եղիբ պաշտպան,
Ճամբուդ մէջ թող հաստատ մընան:
Ոտքերս բընաւ չը խոտորին,
Սուրբ օրէնքիդ միշտ հետեւին:
- 3 Ողորմութիւնդ ըսքանչեի
Սիրոյդ համար ցուցուր ինձի:

Այնպէս փրկէ զիս ոսոխէն,
Իմ յոյսըս ես ամէն ատենն:

- 4 Աչքի բերի պէս զիս պահէ,
Քու թեւերուդ տակ զիս ծածկէ:
Ձիս աղատէ վրտանդներէն,
Որ իմ հոգիս կը պաշարենն:

Յ-վճ. ԺԳ. 26

151 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԸՆԳՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՂՈԹՔ

- 1 Ով Տէր Յիսուս, դուն խոստացար
Որ Սուրբ Հոգիդ զըրկես:
Ճշմարտութեան լոյսն փրկարար
Մեզի միշտ հաղորդես:
- 2 Արդ, կ'աղաչեմ բոլոր սրտով,
Ինձ Սուրբ Հոգիդ զըրկէ:
Ամէն բան թող ուղիղ կերպով
Ինձի սորվեցընէ:
- 3 Ինչպէս որ դուն ի վերնատան
Առաքելոց արտիբ
Քու Սուրբ Հոգիդ լոյս գերբնական,
Քեզմէ պարգեւ ընտիր,
- 4 Ինձի ալ տուր, որ զիս սրբէ,
Որ քու օրէնքդ սիրեմ:

Իմ միտքս բանայ, սրտիս ազդէ,
Որ միշտ քեզ ծառայեմ:

- 5 Ղվ Սուրբ Հոգի, չեմ արժանի
Տաճար քեզ ըլլալու:
Եկ, զիս ըրէ գործիք քեզի,
Քու լոյսդ տարածելու:

Յ-վճ. ԺԳ. 26

152 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ

ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՈԹՔ

- 1 Այգիիդ, Տէր, այցելու լեր,
Քու անձրեւդ միշտ զըրկէ մեզ:
Շուս կը նրաւորին հոգիք մեր,
Թէ լոյսդ մեր վրայ յըծագես:
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ:
- 2 Մի կեներ մեզմէ հեռու, Տէր,
Այլ վերէն շնորհրդ մեզ զըրկէ:
Կը յաղթեն մեզ փորձութիւնք մեր
Թէ որ զըթութիւնդ չօգնէ:
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ:
- 3 Թող սաստիկ սէր լեցընէ մեզ,
Աղօթքի մէջ զօրանանք:

Թող ան որ կը դաւանին քեզ՝
Միշտ յաղթէ չարին փորձանք.
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ:

- 4 Տէր, յաղթէ ուժով փորձողը,
Քարեղէն սիրան կակըղցուր.
Ըսկըսէ հիմա մեր գործը,
Մեղաւորն քեզի դարձուր.
Զօրացուր մեզ,
Օգնութիւնն է լոկ քեզմէ:

Գործ. Դ. 31

153 ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

- 1 Ով Սուրբ Հոգի, իջիր աբղ զու՛ն իմմէջ,
Սիրտս աշխարհէն կտրէ, ուժի՛գ տակ առ.
Դու՛ն անզօրիս շընչէ կորով անշէջ,
Որ քեզ սիրեմ սիրով մը անըսպառ:
- 2 Ես չեմ ուղեր երազ կամ խանդ մըտաց,
Ոչ ալ յանկարծ մարմնոյ հանգիստ ցըրտին,
Կամ այցելու հրեշտակ երկինք մը բաց,
Այլ կը խնդրեմ՝ վանէ մէզն իմ սըրտին:
- 3 Տուր ինձ ըզգալ որ դու՛ն միշտ իմ մօտս ես,
Եւ սորվեցուր վաբել հօգույս կիրքեր,
Ու վըտօրել կասկած, հառաչք սըրտէս,
Եւ հաւատքով անսալ ձայնիդ, ով Տէր:

- 4 Թող հրեշտակի մը պէս սիրեմ ըզքեզ,
Այդ սուրբ սիրով լեցուի թող անձս համակ,
Ու վրաս հանգչի սուրբ Աղաւնին ու հեզ,
Սիրտըս խորան ըլլայ, և սէրդ՝ կըրակ,
Հո՛ով. Բ. 26, 27 Թարգ. Թ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

154 ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

- 1 Տիեզերքը նորոգող,
Կեանք տըողը համայնից,
Կը հաւտանք քեզ) Սուրբ Հոգի,
Հօր, Որդւոյ ալ փառակից:
- 2 Առաջնորդ ես անսրխալ
Մոլորեալ մեղաւորին,
Մեր խաւարը հալածող
Անըստուեր լոյս ելկնային,
- 3 Զօրավիգ դուն ի բարձանց
Ճամարիտը փնտռողին,
Դու՛ն միսն կրնաս փոխել
Մեղապարտ սիրտն ու հոգին:
- 4 Կ'աղաչենք քեզ միտքան,
Ով գըթած օրհնեալ Հոգի,
Շընորհացոյ այցելութեան
Դու՛ն ըրէ մեզ արժանի:

5 Մեր մեղքերն ճանչնալ տուր մեզ,
 Բարեխնամ Մրիկիթարիչ,
 Տուր սրտանց զզնում ընկել,
 Ու նայիլ զէպ ի փրկիչէ:

6 Գու ձըրի պարզելենելովդ
 Սրտերնիս դուն զարգարէ,
 Որ դառնանք մենք Բրիստոսի,
 Հեռանանք միշտ մեղքերէ:

Եւ. Ա. 2

155 ՅՈՐԵԼԵԱՆ ՏԱՐԻՆ

1 Հնչեցուցէք փողերն,
 Ամէն ազգ աշխարհիս
 Մինչև երկրի ծայրերն
 Լրսեն այս աւետիս:

Հասաւ մեծ Յորելեան տարին,
 Ով մեղաւորք, դարձէք փրկիչն:

2 Յիսուս մեծ Բաճանան
 Մեզ քաւութիւն ըրաւ:
 Տրամեալք ուրախ ըլլան,
 Պատիժն մեզմէ վերցաւ:

Հասաւ մեծ Յորելեան տարին,
 Ով մեղաւորք, դարձէք փրկիչն:

3 Մեղաց գերիներուն
 Ահա աղատութիւն.
 Գրտէք ի Տէրն սիրուն
 Այս ապահովութիւն.
 Հասաւ մեծ Յորելեան տարին,
 Ով մեղաւորք, դարձէք փրկիչն:

4 Աստուծոյ Գառնուկին
 Տըւէք պատիւ և փառք,
 Բարողեցէք փրկիչն
 Անունն ըստը աշխարհք.
 Հասաւ մեծ Յորելեան տարին,
 Ով մեղաւորք, դարձէք փրկիչն:

Ղ. 18, 19

156 ՄԵՂԱՒՈՐ, ԼՍԷ ԱՍ ԶԱՅՆԸ

1 Մեղաւոր, լըսէ աս ձայնը,
 Այժմ եղիր
 Մըտաղիր
 Երկնաւոր կոչմանը:

2 Մինչդեռ կայ քեզի երկինքը
 Օթեւան,
 Լեր ժըմբան,
 Քեզ կանչեց Տէրն ինքը:

- 3 Գու առջիդ պատրաստ ինձոյք կայ,
Մի սպասեր,
Առ և կերօ
Կեանք պիտի հոգւոյդ տայ:
- Ե. Ն. Ե. 6 Թարգ. Elias Riggs

157 ԲԱՅ ԳՈՒՌԸ

- 1 Բաց դուռ մը կայ, որոն մէջէն
Խաչին փայլուն թափուց
Մեզ ցոյց կու տայ ամէն ատեն
Փրկչին մեծ գըթ ու թիւնը,
Ոհ, գութ անդամներ, իրաւ
Այն դուռն ինձի՞ համար բացաւ,
Ինձի՞, ինձի՞, ինձի՞ համար բացաւ:
- 2 Այն դուռն է ամէնուն արձակ,
Որ փրկութեան ծարւած են:
Մեծ և սղօտիկ, հարուստ, աղքատ,
Մտնել հըրաւ իրուած են. Ոհ, Լայլի:
- 3 Շուտով այն բաց դռնէն մտնել
Բլլայ մեր նըպատակը.
Մեր խաչն առնել, յարատու ելլ
Եւ ըստանալ պըսակը: Ոհ, Լայլի:

- 4 Ետքը փրկչին հետ վեր ելլենք,
Ուր որ դացած է ինքը,
Եւ յաւիտեան տեսնենք, սիրենք,
Ու զԱյն գովենք երկինքը: Ոհ, Լայլի:
Թարգ. ԻԱ. 23 Թարգ. Elias Riggs

158 ԳԱԼ Կ՝ՈՒՁԵՕ

- 1 Կը ճամբորդենք տունն երկնային,
Գալ կ'ուզե՞՞ս, գալ կ'ուզե՞՞ս.
Որ հոն երգենք սէրն մեր փրկչին,
Գալ կ'ուզե՞՞ս, գալ կ'ուզե՞՞ս:
Բիւրաւ որներ այն տունն հաւան,
Եւ հոն անդուլ կ'ուրախանան,
Ու դեռ անթիւ ճամբորդք ալ կան.
Գալ կ'ուզե՞՞ս, գալ կ'ուզե՞՞ս:
- 2 Կ'երթանք Գառնուկը տեսնելու,
Գալ կ'ուզե՞՞ս, գալ կ'ուզե՞՞ս.
Իր սուրբ անունը գովելու,
Գալ կ'ուզե՞՞ս, գալ կ'ուզե՞՞ս.
Կենաց պըսակ պիտի դընենք,
Ու ոսկիէ քընար զարնենք,
Յնձում ալ լիովին վայլենք.
Գալ կ'ուզե՞՞ս, գալ կ'ուզե՞՞ս:
- 3 Ով դուն յոգնած, բեռնաւորուած,
Գալ կ'ուզե՞՞ս, գալ կ'ուզե՞՞ս:

Քեզի հանգիստ կայ պատրաստուած,
 Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.
 Քեզ ընդունիլ Տէրն կը բաղձայ.
 Ով որ Անոր կը հաւատայ՝
 Տէրովը փառքն պիտի տեսնայ.
 Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս:

- 4 Ասկէ ուրիշ ճամբայ չրկայ,
 Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.
 Ապաշխարէ ու հաւատայ,
 Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս.
 Փրկչիդ այս ձայնն մըտիկ ընես.
 «Խայդ առ, եկուր իմ ետեւէս,
 Ու փրկութիւնս պիտի տեսնես.»
 Գալ կ'ուզե՞ս, գալ կ'ուզե՞ս:
- Թարգ. Ժ. 29 Թարգ. I. F. Pettibone

159 Ա Յ Ս Օ Ր

- 1 Յիսուս կ'ըսէ այսօր,
 «Նձի եկուր.»
 Ինչո՞ւ, ով մեղաւոր,
 Չես մտանար:
- 2 Կ'ըսէ, «Այսօր փնտռէ
 Գուն ապաւէն,
 Ձի մահն ու դատաստան
 Միշտ քեզ մօտ են!»

- 3 Այսօր քեզ կը կանչէ,
 Ով մեղաւոր,
 Սիրով կը հրաւիրէ.
 Լըսէ անօր:
- 4 Հոգին ևս կը կանչէ,
 Անոր լըսէ.
 Ձինք մի տրամեցընէր,
 Շնորհաց օրն է:
- ԹԲԲ. Գ. 15

160 ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻ

- 1 Տունդ եկ, տունդ եկ,
 Սիրտդ է ցաւագին,
 ձանապարհըդ մըթիին,
 Ամայի, միայնակ,
 Որդի անառակ,
 Տունդ եկ, ոհ, տունդ եկ:
- 2 Տունդ եկ, տունդ եկ,
 Քու դարձիդ կ'ապասեմք,
 Գուռին քով կը հսկենք,
 Ու շարաւ ժամանակն,
 Որդի անառակ,
 Տունդ եկ, ոհ, տունդ եկ:
- 3 Տունդ եկ, տունդ եկ,
 Ձրդէ մեզք և ամօթ,

Եւ վիշտեր անծանօթ,
Եւ փրձիշն խորամանկ.
Որդի անառակ,
Տունդ եկ, ոհ, տունդ եկ,

4 Տունդ եկ, տունդ եկ,
Հայրըդ քեզ կը գըթայ.
Անոր տունը հաց կայ.
Փոթա, ով սովամահ
Որդի անառակ,
Տունդ եկ, ոհ, տունդ եկ,

Ղ. - 1. Ժ. 17 Թարգ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

161 ՄԵՂԱԻՈՐԻՆ ՅՈՐԴՈՐԱՆՔ

1 Քարեղէն սիրա, արդ զղջա,
Կահուղցիբ խաչէն յաղթուած.
Տես արիւնն հողին վըրայ,
Եւ մարմինը ջախջախուած.
Մեղաւոր, սս ի՞նչ ըրիր.
Տէրը դո՛ւն ըսպաննեցիր:

2 Տէրն մեղքերդ ըսպաննեցին,
Գամ զարկին իր մարմինին,
Փուշերով պըսակեցին,
Մըխեցին նիզակ կողին.
Իր հոգին ան զոհ ըբաւ,
Քու մեղացդ համար մեռաւ:

3 Արդ կ'ուզե՞ս այս մահն փրկէն
Քու հոգւոյդ ունայն ընել.
Իր արիւնն կ'ուզե՞ս կրկին
Ոտքերուդ կոխան ընել,
«Ոչ» ով Տէր, մեղքէս զատուիմ,
Ընդունէ կոտորած սիրա իմ:
Յ. 15. Ժ. Թ. 37, 2-+. Ժ. 10

162 ԱՀԱ ԿԱՅՆԱԾ ԴՐԱՆԴ ԱՌՋԻՆ

1 Ահա կայնած զըրանդ առջին՝
Քեզ կը ձայնեմ պաղատագին.
Սիրա մեղաւոր, լըսէ շեշտերս,
Կընա՞մ գալ ներս, կընա՞մ գալ ներս,
Կընա՞մ գալ ներս, կընա՞մ գալ ներս,
Կընա՞մ գալ ներս, կընա՞մ գալ ներս,
Կընա՞մ գալ ներս, կընա՞մ գալ ներս,

2 Փուշով պսակուած քեզի համար
Ըսպսեցի համբերատար.
Լըսէ, հոգի փրկիդ աղերս՝
Կընա՞մ գալ ներս, կընա՞մ գալ ներս,
Կընա՞մ գալ ներս, կընա՞մ գալ ներս,
Կընա՞մ գալ ներս, կընա՞մ գալ ներս,

Կընա՞մ գալ ներս,

3 Թող շուր շանցնի իմ աղերսանք,
Յիշէ իմ վիշտն ու դառն տանջանք,
Մահուան մըղեց քեզ համար սէրս,

Սերտ մեղաւոր, կրնա՞մ գալ ներս:
 Կբլ: Ահա կայնած, Լայն:

4 Բեղի բերի ներում, հրճուանք,
 Խաղաղութիւն, սուրբ սէր, նոր կեանք.
 Խեղճ սիրտ, ահա, իմ նըւէրներս.
 Ձիւ կ'ընդունի՞ս, կրնա՞մ գալ ներս:

Կբլ: Ահա կայնած, Լայն:
 Յ-յր. Գ. 20 Թարգ. Յ. Թ. ԳՄՅԱՆԱՆ

163 ՅՒՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՅԻՆ Կ'ԱՆՅՆԻ

- 1 Ի՞նչ են այս մեծ բաղմութիւններ,
 Այս անձկութեամբ դիզուող խումբեր,
 Այս ժողովները օրէ օր,
 Եւ այս գրգռումը անսովոր:
 «Յխուս նազովրեցին կ'անցնի»,
 Մեղմ ձայներով շատերէն կ'ըսուի:
- 2 Յխուս նազովրեցին ո՞վ է,
 Որ ժողովուրդն այդպէս շարժէ.
 Կրնա՞յ անցնող օտարական
 Իր կամքին պէս իշխել մարդկան:
 Յխուս նազովրեցին կ'անցնի,
 «Մեծ մարդարէ», շատերէն կ'ըսուի:
- 3 Ան է որ մեր վիշտերն կը բեց
 Եւ մեր ախտերը բըժըշկեց.

- Հիւանդ և կաշ և կոյր բերին,
 Եւ անոր ոտքը ձըգեցին:
 Յխուս նազովրեցին կ'անցնէր,
 Սրտաբերկեալն յուսով կը լեցուէր:
- 4 Մեր օրերուն մէջ ալ կու գայ,
 Մեր դռներուն կը մօտենայ.
 Այո, և կը հասի մոտեկ,
 Եւ մեզի հետ ընթրիք ընել:
 Յխուս նազովրեցին կ'անցնի,
 Ի՞նչ բերկրութեամբ զինքը կ'ընդունի:
 - 5 Ծանրաբեռնեալք, շուտով եկէք,
 Ներում, հանգիստ, շընորհք զըտէք,
 Գըտէք հոս բարիքներ անհուն
 Եւ անվախճան ուրախութիւն:
 Յխուս նազովրեցին կու գայ,
 Փորձուածներուն ապաւն մը կայ:
 - 6 Բայց եթէ այս հրաւերն մերժէք,
 Այս սէրն անհուն արհամարհէք,
 Ինչքն ալ ցաւով ձեզ կը ձըգէ,
 Ձեր դառն աղօթքը կը մերժէ:
 Յխուս եկու ու մեկնեցաւ,
 Ա՛լ վրկութեան ժամանակն անցաւ:

164 ՓՐԿԶԻՆ ԵԿԼԷ

1 Փրկչին եկէք, ոհ, մի ուշանաք,
Բաց է ճամբան, սուղ է ժամանակ.
Մեր մէջ կայնած ձայնով քաղցրալուր
Կ'ըսէ, «Ինձի եկուր:»

Ոհ, ի՞նչ քաղցր պիտի ըլլայ հրճուանք,
Երբ, Փրկիչ, քեզի հետ միանանք,
Եւ վայելենք դէմքիդ լոյսն անչէջ
Մեր երկնային տան մէջ:

2 Ան իր հրաւերն կ'ուզղէ ամէնուն,
Իր գոթն անբաւ է և սէրն անհուն.
Ձայն մեր ընտրեալ Փրկչին անուանենք,
Մի վարանիք, եկէք:

Ոհ, ի՞նչ քաղցր, Լայն:

3 Նա մեր մօտն է այսօր մանաւանդ,
Անսանք ձայնին, ըլլանք հրնադանդ,
Մենք ալ կրկնենք հրաւերն սիրալուր,
«Տէրն կը կանչէ, եկուր:»

Ոհ, ի՞նչ քաղցր, Լայն:

Ե. Ե. Ե. 6, 7 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

165 ՈՒՍԱԳՐՈՒԹԻՒՆ

1 Ով մեղաւոր անգրեկած
Անթիւ կասկածներով,

Յանցանքներու տակ ճնշուած
Ահիւ և երկիւղով,

2 Եկուր սրտով խոնարհական.
Թէև քեզ արգիլէ
Մարմինն, աշխարհ կամ Սատանան,
Այս որոշումն ըրէ —

3 «Պիտի դիմեմ Տէր Յիսուսին,
Իր բակը ես գիտեմ.
Մեղքերս լեռան կը նըմանին,
Բայց հոն պիտի մտնեմ:

4 Շիտակ ան մարդասէր Փրկչին
Շուտով պիտի երթամ,
Եւ ողորմած Թագաւորին
Ոտից առչեւ իյնամ:

5 Թերեւս ձայնիս մրտիկ ընէ,
Թերեւս շնորհաց հասնիմ,
Իր գաւազանն երկընցընէ,
Որ դպչելով ապրիմ:

6 Թերեւս աղերսըս ընդունի.
Բայց եթէ մերժըիմ,
Ուրիշ տեղ յոյս չըկայ ինձի.
Պիտի հոն կորսըիմ:»

7 Այլ ոչ, ով մեղաւոր խոնարհ,
Հոն չես կրնար մեռնիլ:

Վերջն ալ հանգիտաբ կատարեալ
իր աթոռին առջևնս:

Մ-տԷ. ԺԱ. 28

168 ՄԵՂԱՒՈՐԻՆ ՓՐԿՈՒԹԻԻՆԸ

- 1 Ով զարմանալի սէր աստուածային,
Որ ինք մեր աշխարհ զրկեց իր Որդին,
Եկաւ, մեզ փրկեց մահէն, զժոխքէն,
Ու մեզ մօտեցուց մեր Ըստեղծողին:
- 2 Բոլոր մեր մեղքերն ինք իր վրայ առաւ,
Խաչին վրայ Տէրն մեր տեղը մեռաւ:
Իր ամենասուրբ արիւնը և կեանք
Ըզմեղ փրկելու անհուն զին տըւաւ:
- 3 Տեսէք մեր փրկիչն, որ մահը յաղթած՝
Անճառ մեծ փառքով երկինք է ելած:
Մեղի համար հոն կը բարեխօսէ,
Իր շօր Աստուծոյն աջ կողմը նստած:
- 4 Տէրն զատաստանի վերէն պիտո՞ իջնէ,
Ահեղ փողերով պիտի մեզ կանչէ:
Իսկոյն ալ բացուի ամէն գերեզման,
Ու ննջեցեալներն առջևը բերէ:
- 5 Արդար Դատաւոր, ինձի շքերհօրդ տուր,
Անկէ ապահով իմ անձրս անցուր,
Եւ քու արիւնովդ մեղքէն մաքրուած՝
Սուրբ հրեշտակաց մէջ հոգիս բազմեցուր:

Թ-վԳ. Գ. 16

169 Ո՞ՒՐ Է ՈՐԴԵԱԿՍ ՀԷՔ

- 1 Ոհ, ո՞ւր մընաց արդեօք այսօր
Որդեակն իմ սիրական,
Ինքն էր կենացըս յոյսն բոլոր,
Սիրոյս ալ առարկան:

Ոհ, ո՞ւր է որդեակս այսօր:
Ոհ, ո՞ւր է որդեակս մոլոր,
Սիրտս է կտորած, զինք մոռնալ չեմ կրնար,
Ոհ, ո՞ւր է որդեակս այսօր:

- 2 Երբ ծուծըր զար իր մօրը քով
Յօղի պէս էր մարութ
Սիրուն էր յոյժ և քաղցր զէմքով,
Այնքան հեղ էր սիրան իւր:
Ոհ, ո՞ւր է, Լայն:
- 3 Ոհ, ինձ նորէն արբուէր, որդեակ,
Տեսնել քու զէմքդ սիրուն:
Որուն ժըպիտը անուշակ
Կ'ընէր զըւարթ մեր տուն:
Ոհ, ո՞ւր է, Լայն:
- 4 Ոհ, փնտուեցէք հոգւոյս հատոր,
Իր մօրը նազելին:
Չի սիրտս կ'անձկայ ըսել անոր,
Ո'սիրեմ քեզ տակաւինս:
Ոհ, ո՞ւր է, Լայն:

Դ-աՎ. ԺԵ. 11-32 Թարգ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆԿ

170 ԱՍՏՈՒԾՄՈՎ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ

1 Թափառական հոգիս,
Դադրէ՛ այս աշխարհիս
Մէկ բեւեռէն մինչեւ ի միւսն
Հանգիստ չըկայ քեզի՛:

2 Տես Աստուծոյ տապան,
Նայէ այն բաց դըրան.
Շուտով մըտի՛ր, հոն բընակէ,
Ունայն յոյսերդ ձըգէ՛:

3 Հանգիստ պիտի ըլլաս,
Եւ շատ ուրախանաս.
Ամէն երջանկութեամբ լեցուիս,
Տէրովմով փրկուիս՝:

4 Ով անհանգիստ հոգիս,
Դադրէ՛, այս աշխարհիս
Մէկ բեւեռէն մինչեւ ի միւսն
Հանգիստ չըկայ քեզի՛:

Եբբ. Դ. 9-11

171 ՀՐԱԻԷՐ ԱՌ ՄԵՂԱԻՈՐԸ

1 Հոգին հոգւոյս կ'ըսէ,
«Ով մեղաւոր, եկու՛ր.»

Եկեղեցին ալ կը կրկնէ
Ամէն՝ մէկուէն, «Եկու՛ր.»

2 Ամէն լըսողն ըսէ
Ամէն մարդու, «Եկու՛ր.
Եթէ արդարութիւն կ'ուզես,
Միակ աղբիւրն եկու՛ր.»

3 Այո, ով ծարաւի,
Ուրախութեամբ եկու՛ր.
Կենաց ջուրն է առատ, ձըրի.
Յիսուս կ'ըսէ, «Եկու՛ր.»

Յայտ. ԻԲ. 17

172 ԿԷՍ ՀԱՄՈՂՈՒԱՅ

1 Կէս համոզուած ես հաւատալու,
Կէս համոզուած ֆրիստոս սիրելու,
Միտքըդ ըսել կու գայ,
«Հոգի, առ այժմ գընա,
Եբբ ժամանակ գըտնեմ,
Գեղ կը կանչեմ.»

2 Կէս համոզուած դու, մի ուշանար,
Մեծ հրաւերին անհոգ մի ըլլար,
Կանչողն ֆրկիչըդ է,
Սիրով քեզի կ'ըսէ,
«Հանգիստ կու տամ քեզի,
Եկու՛ր խնծի.»

3 Կէս համոզուած դու, հունձքը կ'անցնի,
Շուտ քու վրճխոք պիտի կընքընի.
Զըլլայ որ ետ մընաս
Եւ ետքը դառն ողբաս.
«Ոհ, ոհ, կէս համոզուած,
Բայց կորսըւած.»

Գ-բ. ԻԶ. 28, ԻԳ. 25 Թարգ. Elias Riggs

173 ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱԽԷՐԸ

1 Եկէք ինձի, բոլոր յողնած և բեռնա | ւորուած - |
ներ, || և ես պիտի հանգ | չեցընեմք | ձեզ, ||

2 Առէք իմ լուծս ձեր վրայ, և սորվեցէք ինձ որ
հեզ եմ և խո | նարհ սըր | սող, || և ձեր ան-
ձերուս հան | գիտս պիտի գըտ | նէք, ||

3 Քանզի իմ լուծս քաղցր է, և իմ | բեռս՝ թե |
թև, || Քանզի իմ լուծս քաղցր է, || և իմ բեռս՝
թև | թև, ||

4 Եւ Հոգին և հարսը կ'ըսեն, Եկ, և ով որ կը լսէ՝
Թող | ըսէ, | Եկ, || և ով որ ծարաւի է՝ Թող
գայ, և ով որ կ'ուզէ՝ կենաց | ջուրն առնու
ձը | ըրի, || Ա | մէն, | Ա | մէն, ||

Մ-բ. ԺԱ. 28-30. Յայտ. ԻԲ. 17

174 ԱՌ ՇՆՈՐՀԱՅ ԱԹՈՈՆ

1 Եկ, տըրտմալից դու, երբ ցու քեզ պատած է,
Եկ շընորհաց աթոռին ջերմ, խոնարհ.
Հոս բեր քու սիրտըդ, վիշտով երբ խոցուած է.
Դեզ կը գըտնէ հոս ամէն ցաւ դժուար,

2 Հոս մոլորեալն կը գտնէ կենաց լոյսը,
Հոս ալ տըրտեալըն՝ ցնծում անըսպաւ.
Մըխիթարիչն կու տայ հոս խըբախոյսը.
Դեզ կը գըտնէ հոս ամէն ցաւ դժուար:

3 Հոս կենսատու երկնից ջուրը բղխեալ է,
Սէր կը վազէ աթոռէն անդագար.
Քեզ է կոչումը, պայմանն հաւատալ է.
Դեզ կը գտնէ հոս ամէն ցաւ դժուար:

Ե-բ. Գ. 16 Թարգ. ՄԿՐՏԻՉ ՔԻՐԷՉՃԵԱՆ

175 ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1 Քանի որ մահը կ'ուշանայ,
Ողորմութիւն և յոյս ալ կայ.
Բայց, ոհ, շուտով խորունկ գէշեր
Պիտի կըտրէ ամէն յոյսեր,

2 Այսօր Աստուած կը հրաւիրէ.
Կենաց խօսքը ի՞նչ քաղցըր է.

Ով մեղաւոր, վաղէ, կուս,
Պատրաստ է Տէրն քեզ ներելու :

3 Արագ թեւերն ժամանակին
Քեզ գերեզմանը կը տանին .
Եւ այն ասեանն ուր յոյս չըկայ՝
Հոգիդ պիտի ներկայանայ :

4 Այն աւերակ, անյոյս երկիր՝
Ուրախութեան յոյս չըծագիր .
Աստուած չըկայ աղօթք լըսող,
Յիսուս չըկայ հոգիդ փրկող :

Բ Կ-բ. 2-2

176 ԱՂՕԹՔ ՈՐ ՔՐԻՍՏՈՍ ՃԱՆՉՅՈՒԻ

- 1 Ով վարդապետ Յիսուս, իմ Տէր,
Ո՛րչափ կու գայ սրբտիս դըժուար,
Որ շուրջս պատող բիւրաւորներ՝
Ըստ արժանւոյն քեզ չեն ճանչնար :
- 2 Քեզ՝ մէկ հատիկդ ի բիւրս բիւրոց,
Անունդ՝ անուանց մէջ սիրելի,
Պաշտեն, սիրեն դասք զըւարթնոց,
Իսկ սիրտ մարդկան քեզ դէմ գոցուի :
- 3 Մարդիկ միայն քեզ կը տեսնան
Անարգըւած՝ և վիրաւոր :

Քու դէմք աւրած, ցաւդ ան ըման,
Արիւնաներկ մարմինդ բոլոր :

- 4 Ով Թագաւոր փառաց, շնորհաց,
Տէր իմ, Փրկիչ իմ սիրական,
Քաղցր դէմքդ ծածկող այդ քօղը բաց,
Քեղեցկութիւնդ մարդիկ տեսան :
- Ե-՝ ԵԳ. 1-3, 10-12 Հեղ. ՏԻԿ.ՂԻ.ՇՄԱԻՈՆԵԱՆ

177 ՄԷԿ ԺԱՄ ՄԸ ԿԱՅ, ՄԷԿ ԿԷՏ ՄԸ ԿԱՅ

- 1 Մէկ ժամ մը կայ, մէկ կէտ մը կայ,
Թէպէտ մեզ անծանօթ,
Ամէն մարդուն վըճիռն կու տայ,
Կա՛մ փառք և կա՛մ ամօթ :
- 2 Գըծով մը անտեսանելի,
Անյայտ մեր աչքերէն,
Տէրողը գութը կը զատուի
Անոր բարկութենէն :
- 3 Բայց մարդը այն զըծէն անցած՝
Քուցէ անհոգ մընայ,
Միշտ և անյոյս և կորսուած՝
Դժոխքի մէջ արթըննայ :
- 4 Տէրն ո՞րչափ պիտի համբերէ
Անոնց որ մեղք գործեն :

Ե՞րբ բարկութեամբ պիտի ըստ,
«Հանգիստըս չը մտնենն»

5 Ո՞ւր է այն ահաւոր սահման.
Յոյսն ե՞րբ կը վախճանի.
Ով մեղաւորք, այս պատասխան
Վերէն կու գայ ձեզի.

6 «Այսօր ձեր Աստուծոյն ձայնին
Թէ որ պիտի լըսէք,
Ձեր սիրտը ապրտամբութեամբ
Ա՛լ մի խստացընէք.»
Ե՞ր. 2. 3 Թարգ. Elias Riggs

178 ՅԻՍՈՒՍԻ ԵՎ ԱՅՍՈՐ

- 1 Յիսուսի եկ այսօր:
- 2 Կը փրկէ քեզ այսօր:
- 3 Հաւատա դուն այսօր:
- 4 Ինք կարող է այսօր:
- 5 Ինք պատրտատ է այսօր:
- 6 Կ'ընդունի քեզ այսօր:
- 7 Արդ փնտռէ զինք այսօր:
- 8 Ոհ, կանչէ զինք այսօր:

- 9 «Ողորմէ ինձ» այսօր:
- 10 Կը լըսէ քեզ այսօր:
- 11 Կը ներէ քեզ այսօր:
- 12 Կը մաքրէ քեզ այսօր:
- 13 Կը սիրէ քեզ այսօր:
- 14 Մի մերժեր զինք այսօր:

Ե՞րբ. Գ. 13, 15 Թարգ. Elias Riggs

179 ՏԷՐՈՋԸ ԶԱՅՆԸ

- 1 Տէրոջը ձայնը լըսեցի.
Ըսաւ, «Ինձի եկուր.
Գըլուխըդ, ով յոգնած հոգի,
Կուրձքիս վրայ հանգչեցուր.»
- 2 Ինչպէս էի՝ աճոր եկայ,
Կոյր՝ մերկ՝ յոգնած՝ արտում.
Հոս ապաստանաբան գըտայ.
Ան ինձ տըւաւ խնդում:
- 3 Տէրոջը ձայնը լըսեցի.
«Ձըրհարար խըմէ
Կենաց ճուրէն», ըսաւ ինձի,
«Եւ խըմելով ապրէ.»

4 Եկայ, գաւաթըս լեցուցի
Այն կենսատու չըրով:
Անով ծարաւըս անցուցի,
Հիմա կ'ապրիմ անով:

5 Տէրոջը ձայնը լըսեցի.
«Իս աշխարհի լոյսն եմ.
Եկուր, գիշերդ պիտի անցնի,
Յորեկդ փայլեցընեմ:»

6 Եկայ, և ան եղաւ ինձի
Արև, լուսոյ շքան.
Եւ այն լոյսով քալեմ պիտի
Մինչև ճամբուս վախճան:

Մարտի 18. 18

Թարգ. Elias Riggs

180 ԶՂՋԱՅԵԱԼ ՄԵՂԱԽՈՐԻՆ ԱՂՈԹՔԸ

1 Ով Տէր գըթած, որ կը լըսես
Աղօթքը խեղճերուն,
Ամէն արցունք ալ կը սրբես
Աչքէն արամածներուն:

2 Տես աթոռիդ առջին ինկաւ
Ծառադ, խեղճ մեղաւոր:
Ըզքեզ վնտուել շե՞ս հրամայած,
Ինձի չըսի՞ր «Եկուր»:

3 Միթէ մեղքիս վախը կընա՞յ
Զիս քու քովէդ վանել:
Ինձի միայն յոյս կը մընայ
Առջիդ շընորհք գտնել:

4 Թող քու անհուն ողորմութիւն
Իմ յոյսըս հաստատէ.
Թող բըժշկող ձայնդ՝ ցնծութիւն
Սըրտիս մէջ տարածէ:

Ղ. 11. 13

Թարգ. C. C. Tracy

181 ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻ

1 Եղո՛ւկ, ինձի, ի՛նչ էր ըրի.
Իմ բարերար Հայրս թողուցի,
Եւ չանսալով բարի խրատի,
Մեղայ, մեղայ յամենայնի:

2 Դառն ցաւերով և վիշտերով
Արդարապէս կը պատժուիմ,
Կամաւ իմ Հօրս տունէն ելայ
Որ սովամահ հոս կորընչիմ,

3 Ինձ փրկութեան ա՛լ յոյս չըկա՞յ.
Դառնամ առ Հայրս, գողեմ, «Մեղայ,
Զեմ արժանի որդի ըլլալի
Զիս ընդունէ իբրև ծառայ»:

4 Այո, մեղայ, Աստուած իմ Հայր,
 Գու ոտքդ կ'իջնամ ես կորսըւած.
 Անթիւ մեղքերըս ինձ ներէ,
 Եւ ընդունէ զիս, Հայր զըթած:

Ղ.ա. Ժ. 17-19 Թարգ. Ա. Մ. Ի. Գ. Ն. Ա. Տ. Ի Ս. Ի Ս. Ե. Ա. Ն.

182 ՄԵՂԱԻՈՐԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԴԻՄԵԼԸ

- 1 Եղբ'եկ եմ ես, ով Տէր, աղբաստ,
 Մերկ եմ ու կոյր և յուսահատ,
 Քեզմէ ի զատ որո՞ւ երթամ,
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:
- 2 Իմ մէջս չըկայ արդարութիւն,
 Յոյս, փրկութիւն կամ քառութիւն:
 Ինչպէս որ եմ, քու ոտքդ կ'իջնամ,
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:
- 3 Դուն քու արիւնջդ թափեցիր,
 Եւ խեղճ մեղաւորիս ըսիր,
 «Գու փրկութիւնդ ես կ'ըլլամ»:
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:
- 4 Հոգիւն և հարսն «Ծկուր», կ'ըսեն,
 «Ձըրի խումբ կենաց չուրէն»:
 Ես կը լրտեմ ու կ'արտորամ,
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:

5 Դուն ալ սիրով զիս ընդունէ,
 Բոլոր մեղքերըս, Տէր, ներէ.
 Լըւա զիս որ մաքուր ըլլամ,
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:
 Թ. 29 Թարգ. Elias Riggs

183 ՅՈՐԴՈՐ ԱՌ ՄԵՂԱԻՈՐԻ

- 1 Քեզ ի՞նչ եղաւ. մի քընանար,
 Մի, Յովնանի պէս մի ըլլար.
 Եւ, արթընցիր, ով իմ հօգիս,
 Վըւանգի մէջ կը տեսնեմ զիս:
- 2 Ահե՛ղ վըտանդ, մահը կու գայ,
 Արագութեամբ կը մօտենայ,
 Որ խեղճ մարմինդդ հոս ձըգէ,
 Քեզ ատեանին առջև հանէ:
- 3 Ահե՛ղ ատեան, սուրբ և արդար,
 Ողորմութիւն չիբ, չես գտնար.
 Ամենագէտ, ասող չարաց,
 Բազմի դատել, ՈՐ է՛ն Աստուած:
- 4 Ահե՛ղ Աստուած, «մաշող կըրակ»
 Քննող սրտից, որոնց մի՛ակ
 Ինքն է անղեակ, վըկայ չուղեր.
 Վըճիւ կու տայ, ալ ես չառնեբ:

5 Ուրեմն ելի՛ր, մի յապաղի՛ր,
 Փութով այն նեղ դըռնէն մըտի՛ր.
 Բնաւ մի շեղի՛ր, յառաջ վազէ,
 Եւ անդադար չընոր՛ք խնդրէ՛:

184 ԼԱԼԸ ՉՓՐԿԵՐ ՁԻՍ

1 Լալը չըփրկեր զիս.
 Անդադար դառն արցունքներս
 Չեն կրնար սրբել մեղքերս,
 Ոչ հեռացընել վախերս.
 Լալը չըփրկեր զիս:
 Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
 Ինձ համար չարչարուեցաւ,
 Ձիս փնտռել յերկնից իջաւ.
 Ինք պիտի փրկէ զիս:

2 Գործը չըփրկեր զիս,
 Անձնուրաց երախտիքներ,
 Ճիգն ու ջանք աւ մարդասէր,
 Բնաւ հոգիս չեն նորոգեր.
 Գործը չըփրկեր զիս:
 Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
 Ինձ համար չարչարուեցաւ,
 Ձիս փնտռել յերկնից իջաւ.
 Ինք պիտի փրկէ զիս:

3 Ոչ ալ ըսպասելը.
 Ըսպասելըն է մեռնիլ.
 Ինձ չօգնե՛ր անյոյս պառկիլ
 Արարչիս դէմ գանգատիլ,
 Ոչ ալ ըսպասելը:
 Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
 Ինձ համար չարչարուեցաւ,
 Ձիս փնտռել յերկնից իջաւ.
 Ինք պիտի փրկէ զիս:

4 Կը փրկէ հաւատքը.
 Աստուծոյ Որդւոյն նայիմ,
 Եւ իր բազուկներն նետուիմ,
 Ա՛լ անոր կ'ապաւինիմ.
 Կը փրկէ հաւատքը:
 Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ,
 Ինձ համար չարչարուեցաւ,
 Ձիս փնտռել յերկնից իջաւ.
 Ինք պիտի փրկէ զիս:

Եփես. Բ. 8, 9 Թարգ. Elias Riggs

185 ՈՒՇ ՄՆԱԼՈՒՆ ՎՏԱՆԳԸ

1 Ինչո՞ւ դուք ըսէք թէ Դեռ կանուխ է
 Երկնից ու մահուան վըսյօքը խորհիլ
 Երազիի մը չուտով թողմի՛ն հընար է,
 Ինձի ալ այսօր հընար է մեռնիլ:

2 Թէ որ ապրատամբ հոգիս անարդէ
Տէրովը շընորհքն անհունն և բարի,
Վերջն ալ Սուրբն Աստուած զիս պիտի մերթէ,
Երկնից փառաց մէջ պիտի չընդունի:

3 Երբոր բարկանայ, ալ ևս ի՞նչ ընեմ,
Ու երբ սիրելու տեղ Տէրն զիս ատէ,
Որ իր շընորհքներն հիմա կ'անարգեմ,
Ու սիրտս չարութիւնն և մեղք կը սիրէ:

4 Ոհ, ի՞նչ սոսկալի է իր ձեռքն ինձ
Իր ուժը անհունն ի՞նչպէս հասկընամ.
Երբ ինք ըսկըսի ինձի բարկանայ,
Անգամ մը զարնէ, դէժօխփը կ'երթամ:

5 Այն ժամը կանչել պարտալ է բընտու,
Ներում, թողութիւն ու շնորհքը ինձ դրել,
Ապաշխարութեան ատենը անցաւ,
Եւ յոյս չըմընաց իմ Տէրըս տեսնել
Եւ. ԵԵ. 6, 7

186 ՅԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱՅ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ

1 Կարօտ եմ, Տէր, մեծ զօրութեան,
Որ սըրբութեամբ քեզ ծառայեմ.
Քանզի սիրտս է բոյն ցանձութեան,
Շատ մեղքերու բեռան տակ եմ:

2 Անշուշտ պիտի ևս կորսուիմ
Այս խղճալի վիճակիս մէջ,
Թէ որ շուտով շընորոգուիմ,
Չըմաքըրիմ շնորհքովըդ մեծ:

3 Գիտեմ որ ևս եմ անարժան
Աստուածային քու շընորհաց.
Չի անարգած եմ, շատ անգամ,
Քու Սուրբ Հոգիդ՝ ինձ պարգևուած:

4 Ու խտով կրկին քեզ կ'աղաչեմ,
Տէր, Սուրբ Հոգիդ ինձ պարգևէ.
Թող համաձայն անոր քալեմ,
Ըզդոյն հեռու ամէն մեղքէ:

Ե.բ. Բ. 17, 18 Նեղ. ՄԿՐՏԻԶ Տ. ՔԻՐԷԶՅԵՆ

187 ՄՈՒԱՐ ՈԶԽԱՐ

1 Մղաբ ոյխար էի,
Եւ հօտն չէի սիրեր.
Չէի անսար Հովուիս ձայնին,
Ու զղուիլ չէի ուզեր:
Ես անառակ էի,
Իմ տունս չէի սիրեր.
Հօրմէս հեռու կը փախչէի,
Մըտիկ չէի ըներ:

- 2 Չոր անապատ և մեծ,
Անտառ խիտ, ահադին.
Փնտռեց Հովիւը իր ոչխարն,
Ու Հայրը իր Որդին
Մահուան մօտ զիս գըտան,
Սաստիկ վիրաւորուած.
Ձիս փաթթեցին սիրոյ կապով,
Եւ վեր առին՝ մարած:
- 3 Յիսուս է իմ Հովիւս,
Ինքն է որ զիս սիրեց.
Որ զիս լըաց իր արինոփ,
Հոգիս ալ դարմանեց,
Մոլար ու կորսըւած,
Ինկած, ան զիս գըտաւ.
Ձիս ան առաւ ուսին վըրայ,
Եւ իր փաբախն բերաւ:
- 4 Ա՛լ չեմ մոլար ոչխար,
Փարախըս կը սիրեմ.
Հովուիս ձայնն ալ ինծի քաղցը է,
Ուղղուիլ յօժար ես եմ,
Այլ ևս չեմ անառակ,
Իմ տունըս կը սիրեմ.
Քաղցը է ինծի իմ Հօրըս ձայնն,
Իր մօտ կենալ կ'ուզեմ:

188 ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԵԱՆ

ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

- 1 Ո՛վ Տէր, լըսէ ձայնն աղօթքիս,
Ու դէր ականջ՝ աղաչանքիս.
Եւ ծառայիդ տուր պատասխան,
Ո՛վ Տէր Աստուած արդարութեան:
- 2 Քու ծառայիդ հետ մի մտնել
Դատաստանի, Տէր մարդասէր.
Քանցի բընաւ մարդ մ'ալ չըկայ,
Որ քու առջիկ արդարանայ:
- 3 Իմ ձեռքս քեզի կ'երկնցընեմ,
... Ձի քեզ միայն իմ Տէրս գիտեմ.
Չորցած երկրի պէս՝ անձս քեզի
Մեծ փափաքով կը ծարաւի:
- 4 Ինծի սուրբ կամքըդ սորվեցուր,
Կատարելու շընորհքդ ալ տուր.
Ձի անձս քեզի եմ վերցուցած,
Դուն ևս ինծի միակ Աստուած:
- 5 Թարի Հոգիդ առաջնորդէ,
Ու զիդ երկիրդ զիս մտցունէ.
Ձիս ապրեցուր անուանդ համար,
Չարէն փրկէ, Աստուած արդար:

189 ՅԱՆՊԱՏՐԱՍՏԻՅ ԻՆՁՈՒ ՄԵՌՆԻՍ

- 1 Ով անձըս, շուտ ապաշխարէ,
Ատկէ քեզի վարձք մահ ունիս,
Քեզմէ մեղաց լուծը ձըզէ-
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս:
- 2 Հեղ Յիսուսի հիմա դիմէ,
Իսկոյն կտրէ յոյսերդ քեզմէ-
Յիսուսի պէս Փրկիչ ունիս,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս:
- 3 Դուն յարստամ պատրաստ կեցիր,
Եւ քու պարտքերդ լաւ ճանցիր,
Բարիք գործէ, միջոց ունիս-
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս:
- 4 Ով Սուրբ Հոգի, դուն ինձ օգնէ,
Մահուան համար զիս պատրաստէ-
Սըբացուցիչ որ քեզ ունիմ,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ:
- 5 Ով Հայր, Որդի և Սուրբ Հոգի,
Երբորդութիւն ըսքանչելի,
Ես որ կընէքդ ճակատս ունիմ,
Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ:

Եջի. ԼԳ. 11 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

190 ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ

- 1 Դիտելու մէկ կէտ մը կայ,
Որ մըտքիս տանջանք կու տայ-
Արդեօք Տէրը կը սիրե՞մ,
Ես իրե՞նն եմ, կամ թէ չեմ:
- 2 Թէ սիրեմ, այսպէս կ'ըլլամ
Յըտացած և անկենդան-
Իր անուան ծանօթ չեղողք
Վաս ինձմէ կ'ըլլան արդեօք:
- 3 Ընթերցմունք, քարոզ, աղօթք,
Ինչ ընեմ լի է մեղօք-
Դուք, սրտանց Տէրն սիրողներ,
Ա՞ս է, ո՞չ, վիճակը ձեր:
- 4 Տէր, ջըբուէ իմ տարակոյս,
Դու սրբոցդ արև ու լոյս-
Լոյս ծագէ գործիդ շնորհաց,
Եթէ այն է ըսկըսուած:
- 5 Քեզ որչափ սիրած ալ եմ,
Տուր որ աւելի սիրեմ-
Ո՞չ, սիրած չեմ նախ թէ որ,
Ինձ օգնէ, սկըսիմ այսօր:

Յւլն. ԻԱ. 16 Թարգ. ՄԿՐՏԻՁ Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

191 ԽՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

- 1 Խորութիւնն ողորմութեան.
Միթէ՛ Տէրն ինձի նըման
Զար մէկուն կլնա՞յ ներել,
Գլուխն մեղաւորաց փըրկել:
- 2 Աստուծոյ Որդին մերժած,
Խաչն ալ ոսնակոխ ըրած,
Իւր շնորհքներն անարգեցի,
Զինքն ըստ էւոյ արամեցուցի:
- 3 Բայց Յիսուս է Միջնորդ իմ,
Իւր արեանն ապաւինիմ:
Տէրն է սէր, գիտեմ, կ'ղղամ,
Ալ ինչո՞ւ վախկոտ ըլլամ:
- 4 Համարձակ անոր երթամ,
Աթոսին առջևն իյնամ,
Մեղքերուս ներումն առնեմ,
Եւ առաս շընորհք գտնեմ:
- 5 Տէր, օգնէ ինձ որ զղջամ,
Մեղքերուս վըբայ ողբամ,
Որ մոլար ճամբաս ձըգեմ,
Քեզ զառնամ ու ծառայեմ:

192 ՄԻ ԱՆՅՆԻՐ ԻՆՏՄԷ, ՓՐԿԻԶՍ

- 1 Մի անցնիր ինձ մէ, փըրկելըս,
Աղաղակս լըսէ.
Ընդունէ խոնարհ աղերսըս,
Մի անցնիր ինձ մէ.
Ով փըրկելըս,
Աղաղակս լըսէ,
Ընդունէ խոնարհ աղերսըս,
Մի անցնիր ինձ մէ:
- 2 Ոհ, իմ անարժանութեանըս
Թողութիւն շնորհէ,
Եւ իմ անհաւատութեանըս
Դուն, ով Տէր, օգնէ.
Ով փըրկելըս, Լայն:
- 3 Քու արժանաւորութեանըդ
Եւ կ'ապաւինիմ:
Զլս փրկէ որ գըթութեանըդ
Մեծ շնորհքովն ապրիմ:
Ով փըրկելըս, Լայն:
- 4 Մըթիթարութեանս աղբիւրըս,
Բայ ի քէն, ով Տէր,
Թէ՛ երկնից մէջ, թէ՛ երկրիս վրայ
Մէկը չեմ ուղեր,
Ով փըրկելըս, Լայն:

193 ՔԵՂԻ ԿԱՐՈՏ ԵՄ

1 Քեզի կարօտ եմ, Տէր,
Ոհ, ամէն ժամ:

Անոյշ է ձայնդ ինձի,
Քեզի կու գամ:

Կարօտ եմ, ոհ, կարօտ եմ,
Միշտ քեզի կարօտ եմ,

Օրհնէ զիս, ով Փրկիչ իմ,
Քեզի կու գամ:

2 Քեզի կարօտ եմ, Տէր,

Նղիւր ներկայ:

Նրբ մօտ ըլլաս, փորձանքն
Կը թեթեւնայ:

Կարօտ եմ, Լայն:

3 Քեզի կարօտ եմ, Տէր,

Շուտով եկուր,

Թէ ոչ իմ կեանքս բոլոր
Կ'անցնի ի զուր:

Կարօտ եմ, Լայն:

4 Քեզի կարօտ եմ, Տէր,

Բու կամքդ յայտնէ,

Եւ քու մեծ խոստումներդ
Ինձ կատարէ:

Կարօտ եմ, Լայն:

5 Քեզի կարօտ եմ ես,

Տէր բարերար:

Զիս մի թողուր, Յիսուս,

Որք և անձար:

Կարօտ եմ, Լայն:

ԵՔբ. Դ. 15, 16

Թարգ. C. C. Tracy

194 ՅՈՅՍ ԱՆՅՈՅՍԻՆ

1 Անյոյսին յոյս, ով Յիսուս,

Հաստատուն խարխիս հողւոյս

Սիրտս, հոգիս դուն նորոգէ,

Մեղքերէս զիս ազատէ:

2 Աստուծմէ օտարացած՝

Մեղքերէս եմ ամնջլուած:

Ազատում ես կը փնտռեմ:

Ո՞ւր պիտի Փրկիչ գտնեմ:

3 Շատ օրեր քեզմէ հեռի՝

Զիս փրկիչ ես ջանացի:

Արդ բոլոր յոյսերս հատած՝

Քեզ կու գամ, ով «Դառ մորթում»:

4 Քեզ գտնել է, Տէր, իմ ջանք,

Առ քեզ է իմ հառաչանք:

Բու վէրքերդ մեղքիս դարման,

Դին կենացս՝ շիթ քու արեան:

- 5 Տէր Յիսուս, յոյս անյոյսին,
 Ինձ դարձուր նայուած՝ շուկին.
 Այս պահուս մինչ կ'աղօթեմ՝
 Ոչ թէ քեզ հոգւովս գտնեմ:
 Ա. Տէր. Ա. 1, Կառ. Ա. 27

195 ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍՆ ԵՄ

- 1 Այո, ըյս ես, Տէր սիրելի,
 Գեղ չբզբտած՝ ես կոյր էի.
 Լըսեր էի թէ սիրտս է չար,
 Վա՛յ եղկեւոյս չէի ըզգար:
- 2 Լըսեր էի թէ մեղք ունիմ,
 Եւ թէ դրժոխք բաժինս է իմ.
 Հոն կ'երթայի ես շարաչար,
 Վա՛յ եղկեւոյս չէի ըզգար:
- 3 Լըսեր էի թէ սէր ես դու,
 Կեանք եւ հանգիստ կու տաս մարդու,
 Եւ թէ ըզչարն կ'ընես արդար,
 Վա՛յ եղկեւոյս չէի ըզգար:
- 4 Բայց երբ ըզքեզ բաժինս ըրի,
 Իմ սիրտս ու սերս քեզի տրի,
 Հաւատացի տեսայ, կ'զգամ.
 Օգնէ ինձ որ ա՛լ չլ կուրնամ:

- 5 Ինձի նըման շատեր ալ կան,
 Որ տակաւին կոյր կը մընան:
 Բայ աչքերնին որ քեզ տեսնեն,
 Եւ նեղ դռնէն շուտ ներս մտնեն:
 Թ-Է. Բ. 12 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱԽՈՆԵԱՆ

196 ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՄԵՌՆԱՆ ԱՇԽԱՐՀԻ

- 1 Եթէ աշխարհ է գեղեցիկ,
 Ու իր փառքերն են շողշողուն,
 Հարրստութիւն, պատիւ, բարիք
 Կը գըրաւեն ըզսիրտ մարդուն,
- 2 Ձըւարձութիւնք հեշտացուցիչ
 Են ցանկալի հաճոյք մարմնոյն,
 Անարգ սէր իբր գոհացուցիչ
 Թէ կը խարեն ըզսիրտ մարդոյն,
- 3 Թող ինձ ըլլայ մեռած ամէն.
 Ոչ գեղեցիկ, ոչ շողշողուն
 Բընաւ ինձի չըներգործեն,
 Ձի են խաբող ունայնութիւն:
- 4 Աշխարհ ինձի է խաչ ելած,
 Ես աշխարհի՛ բոլորովին,
 Ով Սուրբ Հոգի, օգնէ՛ բարձանց,
 Կենդ անացուր դիտ երկինքին:

- 5 Իմ փառքս ըլլայ խաչն Յիսուսի,
 Չըւարճութիւնս՝ անոր խօսքերն,
 Թող ես ապրիմ միշտ կենդանի՝
 Կատարելու իր սլատուէրներն:
- Գ-ը. Զ. 14 Հեղինակ ՄԿՐՏԻՉ Տ. ՔԻՐԷՉՆԱՆ

197 ՔՐԻՍՏՈՍ ԻՄՍ Է

- 1 Տէրը դուռըս կը գարնէր՝
 Յայտնելով իր սէրն անհուն,
 Ինձ իր մահը կը յիշէր,
 Եւ իր քաւչական արիւնն.
 Ես մեղքերդ ներել կ'ուզեմ,
 Ով մեռնող հոգի, մտնե՞մ:
- 2 Երբ այս շնորհալի խօսքերն
 Իմ թշուառ հոգիս լըսեց,
 Իր սիրոյն ուժովը Տէրն
 Կարծր սիրտըս շուտ կտարեց,
 Յայնժամ դուռը լայն բացի,
 «Տէր Յիսուս, մտի՛ր» ըսի:
- 3 Խօսքն հազիւ բերնէս ելած՝
 Ներս մըտաւ. ես ալ խկոյն
 Ոտքերուն առջեւն ինկած՝
 Խնդրեցի ողորմութիւն.
 Իմ անձէս, զետի նըման,
 Սէր և վիշտ մէկտեղ անցան:

- 4 Քանի որ անոր ստքերն
 Արցունքովս կը լըւայի,
 Ես ձըրի բոլոր մեղքերդ
 Կը ներեմ, ըսաւ ինձի.
 «Հաստատուն դուն գըտնըւէ
 Մինչև մահ, և պըսակուէ»:
- 5 Այս խօսքով խկոյն իմ սիրտս
 Սուրբ ուրախութեամբ լեցաւ,
 Եւ մըրբկածովի հոգիս
 Փառաւոր հանգիստ մըտաւ.
 Հիացայ իր սուրբ սիրոյն,
 Երկնաւոր երանութիւն:
- 6 Երազի պէս սուտ հաճոյք
 Ա՛լ անհետ եղան աչքէս.
 Մերժեցի բոլոր ախարհք
 Որ ա՛լ չըզատուիմ փրկէս.
 Ես անորն եմ, սէր նորա
 Արդ իմս է. Ալէլուիա:
- Թ-յԳ. Գ. 20 Թարգ. Elias Riggs
- 198 ՄԵՂԱՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
- 1 Աստուած ողորմած, ինձի ողորմէ,
 Անհուն գըթութեամբդ իմ մեղքըս քաւէ:

- Ամէն յանցանքէս լըւա զիս մաքրէ,
Եւ իմ մեղքերէս, ով Տէր, զիս սրբէ:
- 2 Քանզի յանցանքներս յայտնի են ինծի,
Մեղքս ալ միշտ աչքիս առջին կը կայնի:
Մինակ քեզի դէմ ես մեղանչեցի,
Ու մեծ չարութիւն առջեւդ գործեցի:
- 3 Թէ որ զիս պատժես, դուռն կ'արդարանաս
Ու դատատանովդ անբժծ կը մընաս:
Քանզի յանցանքով մօրմէս յրդացայ,
Երնած ասեմս ալ մեղքի մէջ ծընայ:
- 4 Մաքրէ մշտիկով որ ես սրբանամ,
Զիւնէն աւելի ճերմակ ես ըլլամ:
Ամէն մեղքերէս դուռն զիս ազատէ,
Մըխիթարութեամբդ ուրախ զիս ըրէ:
- 5 Ով Տէր, ներսի զիս սուրբ սիրտ ըստեղծէ,
Ինծի նարդուած հոգի մը շնորհէ:
Զիս քու երեսէդ բընաւ մի ձըգեր,
Ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի առներ:
- 6 Քանզի, ով Տէր, դուռն զոճեր չես կամիր,
Սուղձակէցներ քրնաւ չես հաւնիր,
Տէրով հաւնած զոճն կտորած հոգին է,
Խոնարհ սրտին սէրն անոր հաճոյ է:

Ս-Ղ. ԵՍ.

199 ՏԵՐ, ԶԱՅՆԴ ԿԸ ԼՍԵՄ

- 1 Տէր, ձայնդ կը լըսեմ,
Որով զիս կը կանչես:
Կու գամ որ զիս սուրբ արիւնովդ
Լըսաս, մեղքէ մաքրես:
Տէր քեզի կու գամ,
Հիմա զիս լըւա,
Զիս մաքրէ ոուրբ արիւնովդ:
Հեղեալ ի Գողգոթայ:
- 2 Տըկար և պիղծ կու գամ,
Դու, Տէր, ինձ ոյժ կու տաս,
Եւ, որ ձիւնէն ճերմակ ըլլամ,
Սուրբ արիւնովդ կ'ըլուսս:
Տէր, քեզի կու գամ, Ե-յի:
- 3 Զիս, Տէր, վստահութեան,
Յուսոյ և հաւատոյ
Կը հրախրես, խաղաղութեան
Եւ կատարեալ սիրոյ:
Տէր, քեզի կու գամ, Ե-յի:
- 4 Թող յարձակին փորձանք,
Կու տաս ինձ յաղթանակ,
Կու տաս հոս շնորհք և ըսփոփանք,
Վերջն ալ փառաց պըտակ:
Տէր, քեզի կու գամ, Ե-յի:

5 փա՛ռք քաւութեան արեան,
 փա՛ռք Գրիստոսի շնորհաց,
 Մեր կատարեալ արդարութեան
 Եւ անվախճան կենաց:
 Տէր, քեզի կու գամ, Լայն:
 Ս-Ղ. ԵԱ. 7, 8 Թարգ. Elias Riggs

200 «ԵԿԷՔ ԻՆՄԻ»

- 1 Ես կը լըսեմ ձայնդ, ով Յիսուս,
 Անոր համար կու գամ,
 Սիրուն քու ձայնդ ականջս լեցուց,
 Ի՛նչպէս ես չարտորամ:
 Կու գամ, կու գամ, զիս մի մերժեր,
 Յոյժ կ'աղաչեմ, ով Տէր.
 Արժանացուր յոգնած հոգիս՝
 Սուրբ հանգըստեան երկնից:
- 2 Հոգիս կեանքէս է ձանձրացած՝
 Այս չոր ձորին եղերքն.
 Սիրտս ներսի զիս է խըռոված՝
 Մեղքիս ճնշող բռնէն:
 Կու գամ, Լայն:
- 3 Ունայն տեղ ես շատ ջանք ըրի
 Փրկել զիս իմ ուժովս,
 Յանցանքս սրբել ես չրկրցի
 Բարեգործութիւնովս:
 Կու գամ, Լայն:

- 4 Բու սուրբ արիւնըդ թափուեցաւ
 Խաչափայտին վըրայ.
 Բոլոր իմ մեղքս հոն քաւուեցաւ
 Արդար գլխուդ վըրայ:
 Կու գամ, Լայն:
- 5 Ո՛րչափ սուրբեր արդէն եկան
 Բու տեսութիւնդ վայել:
 Դուն ես ճամբան որով կըցան
 Այն սուրբ հանգիստն մտնել,
 Կու գամ, Լայն:
 Մ-ԴԷ. ԺԱ. 28 Թարգ. Ա. Հ. ՃէճԻՋԵԱՆ

201 ԿԸ ՀԱԻԱՏԱՄ

- 1 Ես յաւիտեան հանգիստ կ'ըլլամ
 Միայն քու քովդ, Յիսուս,
 Բու վէրքերէդ կեանք կ'ստանամ,
 Փրկիչդ դուն ես ինձ յոյս:
 Կը հաւատամ, կը հաւատամ
 Որ Յիսուսի մահուամբ
 Եւ իր արեամբ, անդին արեամբ,
 Մեղքէ ազատ կ'ըլլամ:
- 2 Խաչեալ Փրկիչս և իմ Աստուածս,
 Մեղաց քաւիչ աղբիւր:
 Բու արիւնէդ սրբակէ վըրաս,
 Պահէ զիս միշտ մաքոր:
 Կը հաւատամ, Լայն:

3 ԼԷ՛ւա զիս, Տէր, և քուկդ ըրէ,
 Լըւա, Լղիր դուն իմս.
 Ոչ թէ միայն ոտքերս մաքրէ,
 Ձեռքերս, գրլուխս և սիրտս:
 Կը հաւատամ, Եւր՛ն:

4 Բու արեւնովդ իմ սիրտս սրբէ,
 Մինչ քեզ տեսնեմ այքով:
 Փառաց յուսով աչքերս գոցե,
 Հոգիս լեցուի սիրով:
 Կը հաւատամ, Եւր՛ն:

Փէ: Գ. 7-11 Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԴԱՐՐԻԷԼԻԱՆ

202 ԼՈՅՍ ԲԱՐԵՐԱՐ

1 Լոյս բարերար, տիրող մէզին մէջէն
 Գուն զիս ուղղէ.
 Մութ է գիշերն, և ես հեռու՝ տունէն,
 Ձիս հոն ուղղէ:
 Պահէ քայլերս, խընդերքըս չէ ըընաւ.
 Տեսնել հեռուն. ինձի մէկ քայլ է բաւ:

2 Այսպէս չէի միշտ, ես չէի խնդրեր
 Որ զիս ուղղես.
 Իմ եւքս ու մուգս ես կ'ընտրէի, բայց արդ
 Գո՛ւն զիս ուղղէ.
 Շէն օր սիրող, անվախ և անտարբեր,
 Կամքս էր հրպարտ. անցեալըս մի յիշեր:

3 Բու ալ՛դ հըզօր օրհնած է ջարդ, և դեռ.
 Ձիս պիտ' ուղղէ
 Ժայռին, ճահճին վրայէն՝ խոր ըստուերներ
 Մինչև քաշունին,
 Եւ հեա այգուն ժպտին իմ սիրելիք,
 Չորս կորուսեր էի ես մէկ պահիկ,
 Յ-Վ. Ը. 12 Թարգ. Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

203 ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՀԱՍԱՏՈՒԹԻՒՆԸ

1 Հաւատքս քեզ կը նայի,
 Ով Գառն Գողգոթայի.
 Փրկիչ, իմին
 Չայնիս մըտիկ ըրէ.
 Իմ մեղքըս, Տէր, քաւէ.
 Ըլլամ ես յայսմհետէ
 Միայն քուկին:

2 Թող քու շընորհքդ անհուն
 Ընէ սիրտս հաստատուն,
 Նախանձս վառէ.
 Մահումբդ զիս կը փրկես.
 Ուստի բոցի մը պէս
 Իմ սէքըս սաստկապէս
 Վառիլ կ'արժէ:

3 Այս մութ ճամբուս վախճանն
 Մինչև աչքերս տեսանն՝

Յառաջ տար զիս,
 Խաւարըս ըյս ըբէ,
 Այգիս արցունքն սրբէ.
 Եւ մի թողուր քեզմէ
 Չատուի հոգիս:

4 Կեանքիս երազն անցած՝
 Երբ մահը իմ վըրաս
 Կը յարձակի,
 Օրհնեալ Փրկիչ, սիրով
 Ամէն վախ յաղթելով՝
 Վեր առ զիս ասպհով,
 Որ անձս ասլրի:

Ե.. ԽԵ. 22

204 ԵՐԲ ՀԱՒԱՏՔՈՎ ԿԱՐՈՂ ԸԼԼԱՄ

1 Երբ հաւատքով կարող ըլլամ
 Երկինքն իմս է ըսել,
 Վախէ ազատելով կրնամ
 Լացող աչքերս սրբել:
 Թող դէմս ելեն մեծ զօրութեամբ
 Աշխարհքն ու Սատանան.
 Կրնամ նայիլ հանդարտութեամբ
 Անոնց կատաղութեան,
 Թէև իմ վըրաս անթիւ հոգեր՝
 Փոթորիկի նման,

Եւ կամ ցաւեր ու դառն վիշտեր
 Յարձակելու ըլլան,

4 Երբեք պիտի չըյաղթըիմ,
 Այլ ամէնուն յաղթեմ.
 Միայն թէ հայրենիքս հասնիմ,
 Փրկչիս երեսն տեսնեմ:

5 Հոգւոյս հանգիստը հօն պիտի
 Ծովու նրման ըլլայ,
 Եւ ա՛լ վշտաց ախբ չանցնի
 Խաղաղ սրտիս վըրայ:

Բ ՊԷ. Ա. 10 Թարգ. Elias Riggs

205 ԻՆՉՊԷՍ ՈՐ ԵՄ

1 Ինչպէս որ եմ, մեղքով լեցուած,
 Խեղճ մեղաւոր ու կոբարած,
 Աչքերս դէպ ի Փրկիչդ ուղղած,
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:
 2 Ինչպէս որ եմ, չըսպասելով
 Հոգիս սրբել պարապ յոյսով,
 Լոկ արիւնիդ վստահելով,
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:
 3 Ինչպէս որ եմ, շատ տանջուած,
 Ու բազմաթիւ մեղքով պատած,
 Ասդին անդին միշտ տատանած,
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ:

- 4 Ինչպէս որ եմ, զուհի, Տէր, գիտես,
Բոլոր մեղքերըս կը ջնջես,
Աղաոտ հոգիս զուհի կը սրբես.
Դառն Աստուծոյ, քեզի կու գամ:
- 5 Ինչպէս որ եմ, այնպէս կու գամ,
Շնորհէ որ միշտ քու քովդ ըլլամ,
Ու յաւիտեան երեսդ տեսնամ.
Դառն Աստուծոյ, քեզի կու գամ:
- Յովհ. Ա. 29, Ե. Ա. 18

206 ՃԱՄԲԱՍ ԳՈՒՆ, ՏԷՐ, ԸՆՏՐԷ

- 1 Ճամբաս զուհի, Տէր, ընտրէ,
Թող ինձ խաւար ըլլայ.
Զեռաքովդ առաջնորդէ,
Ընտրէ ինձի ճամբայ,
Ես չեմ համարձակիր
Բընաւ վիճակս ընտրել.
Դուն կառավարս եզիր,
Սորվեմ շիտակ քալել:
- 2 Խնդրած արքայութիւնս
Է քուկըդ, ով Տէր իմ.
Գուհի ալ ըլլայ շաւիղս,
Թէ ոչ՝ կը մտորիմ:
Դուն օրով վիճակս
Անհուն իմաստութեամբ:

- Ա. և ընցաւ բաժակո
Վիշտով կամ վայելմամբ:
- 3 Ընտրէ բարեկամներս,
Ախտերս, առողջութիւնս,
Փորձանքս ու հոգերս,
Եւ կամ հանգստութիւնս,
Ինձի խոստմունք արելը
Որ աղատես չարէն.
Տէր, առաջնորդս եղիր,
Իմաստութիւնս Ամէն.
- Յ. Բ. Ի. 10, Մ. Գ. Ի. 2. 39 Թարգ. Elias Riggs

207 ՏԷՐ, ԻՆՉՊԷՍ ՈՐ Կ'ՈՒՉԵՍ

- 1 Տէր, ինչպէս որ կ'ուզես,
Գու կամքըդ իմս ընեմ.
Սիրոյ ձեռացըդ մէջ
Ամէն բան կը յանձնեմ,
Առաջնորդէ ինձի,
Ընտրէ ինձի ճամբայ.
Թող միշտ սրտանց երգեմ.
«Գու կամքըդ, Տէր, ըլլայ»:
- 2 Տէր, ինչպէս որ կ'ուզես,
Թէ՛ տաս ու բախտութիւն,
Թէ՛ լաւագոյն սեպես
Վիշտ, ցաւ ու նեղութիւն,

Եւ արտասուաց մէջէն
Թէ աստղըս երեւնայ,
Թող յոյսըս չըմարի.
«Քու կամօքըդ, Տէր, ըլլայ»

3 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Ինչ որ ըլլայ վիճակս,
Զիս քեզ նշման ընես,
Ըլլաս իմ օրինակս.
Երկրիս վրայ դուն լացիբ,
Մառադ ալ հոս թող լայ,
Միայն թէ հետս եղիբ.
«Քու կամօքըդ, Տէր, ըլլայ»

4 Տէր, ինչպէս որ կ'ուզես.
Գուն հետս ըլլաս, իրաւ,
Ինչ որ ալ որոշես՝
Ինձի ամէնն է լաւ,
Ամէն բան ապահով՝
Ներկայ և ապագայ.
Երգեմ միշտ ցնծումով,
«Քու կամօքըդ, Տէր, ըլլայ»

Մ-բ. Ժ. 36 Թարգ. Elias Riggs

203 ԻՄ ՏԵՐՍ ԻՆՁ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ

1 Իմ Տէրըս ինձ կ'առաջնորդէ,
Իբ սուրբ ձեռքովը զիս կ'ուղչէ.

Ուր որ ըլլամ, ինչ որ ընեմ,
Առաջնորդող ձեռքն կը տեսնեմ.
Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իբ սուրբ ձեռքովը զիս կ'ուղչէ,
Ես աշակերտ միշտ գտնուիմ,
Եւ հետեւող հաւատարիմ.

2 Թէ անապատը թափառիմ,
Կամ Եդեմի շուքէն անցնիմ,
Լոյս կամ խաւար թէ զիս պատէ,
Դարձեալ Աստուած կ'առաջնորդէ.
Կ'առաջնորդէ, Եւ յի:

3 Տէր, ձեռքդ ձեռքիս մէջ ևս բռնեմ,
Այսուհետեւ չըտորնջեմ,
Գոհ եմ, վիճակըս ինչ որ է,
Զի Տէրըս ինձ կ'առաջնորդէ.
Կ'առաջնորդէ, Եւ յի:

4 Երբ հոս ընթացքըս կատարեմ,
Շնորհքովդ երբ այլաբնիս յաղթեմ,
Մահուան ցուրտ գետն զիս չըխոտովէ,
Հոն ալ Տէրն ինձ կ'առաջնորդէ.
Կ'առաջնորդէ, Եւ յի:

Ս-դ. Ի. 2, 3 Թարգ. Elias Riggs

209 ՓՐԿՉԻՍ ԲԱԶՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

- 1 «Փրկչիս բազուկներուն մէջ
Պիտի հանգչի հոգիս,
Անոր սիրոյն զբօշակը
Պիտ' ըլլայ հովանիս»
Հրեշտակային երգի պէս
Չայն մը յերկնից կու գայ,
Ինձ ամենայն վշտաց մէջ
Քաղցըր հրճուանք կու տայ:
Փրկչիս բազուկներուն մէջ
Պիտի հանգչի հոգիս,
Անոր սիրոյն զբօշակը
Պիտ' ըլլայ հովանիս:

- 2 Հոն աշխարհիս հոգերը
Զիս չեն կրնար ներդել.
Ստատանային հրապոյրքը
Ա՛լ չեն կրնար խարել:
Հոս քիչ մ'ալ աշխատանք կայ,
Քիչ մըն ալ վերձու թիւնք:
Քիչ մըն ալ ցաւ և վիշտ կայ,
Ու դեռ քիչ մ'ալ արցունք:
Փրկչիս բազուկներուն մէջ, Եւ յիշ:

- 3 Յիսուս, քաղցր ասպաստանըս,
Հոգւոյս համար մեռաւ:

Ա՛լ այս անշարժ վեժին վրայ
Յոյսըս հաստատուեցաւ:
Անդորր հոս կ'սպասեմ ես
Մինչև գիշերն անցնի,
Ե ոսկեղէն եզրին վրայ
Այդ փառաւոր ծագի:
Փրկչիս բազուկներուն մէջ, Եւ յիշ:
Ս. Է. Գ. 17 Թարգ. Elias Riggs

210 ՀԱՅՐ ԻՄ, ՔՈՒ ԿԱՄՔԻ ԹՈՂ ՈՒՍՅ

- 1 Արեւ, անձրև ինք կը զրկէ,
Երկուքն ալ պէտք են ծաղիկին.
Եւ արտասուք ու խրնդու թիւն
Հարկ են կարօտ, խեղճ հոգիին.
Թէև արև, անձրև ինձ գայ,
Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ:

- 2 Երբեք սիրով լնցուած դաւակն
Իր շօրը դէմ արտունջ կ'ընէ՞.
Ըստեղծօղիս հետ թող իմ սիրտս
Հըրու զաւկի պէս միշտ գործէ.
Թէև արև, անձրև ինձ գայ,
Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ:

- 3 Ինձ որոշուած կենաց փիճակն
Ամենաբաւ կ'ուզեմ սեպել
Եւ երբ իյնայ վրաս շուք մահուան,

Ուրախութեամբ սա երգն ըսել:

«Թէեւ արև, անձրև ինձ գայ,

Հայր իմ, քու կամքըդ թող ըլլայ»

Մ-րբ. 2. 10 Թարգ. Miss C. E. Bush

211 «ՔՈՒ ՀՈԳԻ ԻՄ ՎՐԱՍ ՁԳԷ»

1 Ի՞նչ քաղցր է, Տէր, ապաւինել

Քոյին մեծ զօրութեան,

Առաջնորդող բազուկդ տեսնել,

Ըզգալ ի նեղութեան:

2 Դուն, Տէր, կ'ուզես որ քեզ յայտնեմ

Բոլոր ցաւերս, վիշտերս,

Որ վրադ, վրաստանութեամբ, ձըգեմ

Ամէն օրուան հոգերս:

3 Կ'ուզես որ քեզ միայն նայիմ,

Խընամքդ խնդրեմ սրտով,

Նեղիչ վախերըս փարատեմ

Խոնարհ, շերմ աղօթքով:

4 Արդ, ով իմ սիրտս, ինչո՞ւ խռովես

Դալիք չար վախերէ,

Մինչդեռ փրկչին հրաւերն ունիս,

«Քու հոգդ իմ վըրաս ձըգէ»:

Մ-ը. ԵԵ. 22 Թարգ. Ն. Ս. Թ. ՆԱՀԻԿԱՆ

212 ՏԼԻՆ Է ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴ

1 Թէեւ նըւաղեալ մեր ճամբան մենք կ'երթանք,

Տէրն է առաջնորդ և իր խօսք մեր բերկրանք:

Թէեւ տառապանք և փորձանք խիստ մօտ են,

Ի՞նչ հոգ, երբ ունինք Տէրը մեզ ապաւեն:

2 Ինչպէս կ'խնամէ ոխարնեըն իր հօտին,

Ինք կ'առաջնորդէ մեզ կանանչ արօտին:

Խոպան դաշտերուն մէջ գառներն կը գրկէ,

Որոգայթն երէ մոլորեալն կը փրկէ:

3 Երբ ամպ մեզ պատէ, մեր Աստուածն է մեր ըյս,

Մըրեկ թէ մեր շուրջ գուայ, Տէրն է մեր յյս:

Թէեւ պարտասած՝ մեր ճամբուն մէջ բերկրինք:

Ձի Տէրն առաջնորդ է, մեր առնն է երկինք:

Ս-ը. ԽԲ. 14 Թարգ. Ա. Ե. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

213 ՅԻՍՈՒՍ ՀԱՍՏԱՏ ՀԻՄ

1 Ո՞րքան հաստատուն է հիմն ձեր հաւատքին՝

Դըրուած Աստուծոյ խօսքին մէջ սըրբազան:

Անսուտ են անօր խոստումներն թանկագին,

Ձեզի՝ որ ընտրած էք Յիսուսն ապաւտան:

2 «Երբեք մի վախնար, բընաւ մի վըհատիր,

Քանզի ես Աստուածդ եմ յպատարաստ քեզ նեցուկ:

Միշտ հետըդ կ'ըլլամ, խոստումներս չեն պատիր,
Ասպար, զօրավիզ է հըզօր իմ բազուկս:

3 Աթորու նի ջուրերէ երբ անցնիս սրբաաթուռնոյ,
Գետեր վիշտերու չըպիտի կոխեն քեզ:
Նեղկայութիւնովս կ'օրհնեմ միշտ վորձութիւնդ
Սրբագործ ելով թախիծներդ հոգեկէզիս:

4 »Հողին, որ կ'ընարէ դիս իրեն ասպուէն,
Բընաւ չեմ մատներ ձեռքը իր ստիւթն.
Եթէ յարձակի դըժոխքն ալ համօրէն,
Բընաւ, ո՛հ, բընաւ չեմ լըքեր այն հողինս
Ե. ԽԳ. 1-7 Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

214 «ԵՍ ՁԵՅ ԲԱՐԵԿԱՍՄ ԱՆՈՒԱՆԵՑԻ

1 Երգէ, ով հոգիս, օրհներգ մը անոր,
Որ կ'առաջնորդէ իմ կեանքս յարածամ,
Անվախ կը մ'անեմ ամէն ճամբայ նոր,
Քանզի Տէր Յիսուս է ինձ բարեկամ:

2 Լոյսի, բառու երի մէջ պիտի երգեմ,
Վըստան շեշտերով բերկըրիմ ու ցընծամ:
Կարող չէ հառնիլ ինձ շարիք դըժխեմ,
Քանզի Տէր Յիսուս է ինձ բարեկամ:

3 Թող դիս պաշտըն վիշտեր՝ դըժընգակ,
Վըբաս յարձակի կասկած ալ աարտամ,
Փոյթ չէ, կը տանի հուսառքս յաղթանակ,
Քանզի Տէր Յիսուս է ինձ բարեկամ:

4 Մահն ալ իմ հոգիս բաժնեւ չըկրնար
Անկէ որ աըսու ինձ կեանք անթառամ:
Մէկզի կ'զրորի իմ տապանաքար,
Քանզի Տէր Յիսուս է ինձ բարեկամ:
Յ-Ը- ԺԵ. 15 Թարգ. Յ. Գ. ԿԻՒԼԵԱՆ

215 ՏԷՐ, ԻՆՏԻ ԱՌԱՋՆՈՐՈՒՄ

1 Տէր, լնծի առաջնորդէ,
Որ չը մարբիմ քեզմէ.
Խաւարին է իմ ճամբան,
Տէր, սիրովդ եղիր պաշտպանս:
Տէր, սիրովդ եղիր պաշտպան,
Տէր իմ, Տէր իմ, Տէր, ինձի առաջնորդէ,
Միշտ սիրովդ ճամբաս ուղղէ,
Ամէն օր ձեռքէս բըռնէ:

2 Դուն հոգւոյս լեր ասպատան,
Երբ ցաւոց ալիք գոռան.
Ապանով եմ, Տէր, քու քով,
Կեանք անդորր ուր իմ քեզմով:
Տէր իմ, Տէր իմ, Լ-Յ-Ն:

3 Տէր Յիսուս, ուղղիլ կեանց,
Զիս հասցուր երկիրն փառաց,
Հոն երգեմ երգ յաղթութեան,
Հոն դովեմ քեզ յաւիտեան:
Տէր իմ, Տէր իմ, Լ-Յ-Ն:

Ս-Գ. ԻԵ. 4, 5

216 ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՌ ՏԷՐ

- 1 Տէր, ուրախ կ'ըլլամ միշտ ես
 Երբ վըստան եմ լոկ ի քեզ.
 Սիշտ վըստան սուրբ վարչութեան,
 Խընամոցըդ հայրական.
 Քու սիրոյդ, ուժիդ վըստան,
 Քու կամքիդ անսամ անան,
 Երջանիկ կ'ըլլամ միշտ ես
 Երբ վստան եմ լոկ ի քեզ:
- 2 Քեզ վըստան, միակ իմ լոյս
 Գիշերոյ մըթ ին ժամուս.
 Թէ՛ առողջ և թէ՛ հիւանդ,
 Թէ՛ հարուստ և թէ՛ տընանիկ,
 Թէ՛ արխուր և թէ՛ ուրախ,
 Յարածամ ի քեզ վստան,
 Երջանիկ կ'ըլլամ միշտ ես
 Երբ վստան եմ լոկ ի քեզ:
- 3 Յոյս իմ է խաչիդ ատեանն,
 Եւ հաւատքս ի շնորհ միայն.
 Լոկ ի քեզ կ'ապար ինիմ,
 Քեզ, Յիսուս, քաջ Փրկիչ իմ.
 Թէ՛ ի կեանս և թէ՛ ի մահ
 Միշտ, ո՛հ, միշտ ի քեզ վստան,
 Երջանիկ կ'ըլլամ միշտ ես
 Երբ վստան եմ լոկ ի քեզ:

Սուր. Իէ. 1

Թարգ. Ա. Ս. ՏԱՐԱԳՃԵԱՆ

217 ՏԷՐՈՋԸ ԹԵՒԵՐՈՒՆ ՏԱԿ

- 1 Թեւերըդ, Տէր իմ, Թող ըլլան
 Ինձ հովանի և ապաստան
 Հոն բընակիմ ես անվըրդով
 Ձերժ վըսանգէ և ապահով:
- 2 Այս աշխարհի կեանքի շրջան
 Լի է վախով ամէն վայրկեան,
 Թեւերուդ տակ միայն, ով Տէր,
 Կընամ ապրիլ ես անվեհեր:
- 3 Արիւն, քրտինք հոտին ճակուտ,
 Կը հալածու իմ ոտխներէս,
 Կ'ուզեմ գտնել հանգիստ անձիտ.
 Թեւերուդ տակ, խնդրեմ, առ զիս:
- 4 Գողգոթայի սարին վըրան
 Լացող աչքերս թող քեզ տեսնան,
 Տէր իմ, խաչին շուքովը ես
 Թող պաշտպանուիմ իմ մեղքերէս:
- 5 Տէր, տարածէ թեւերդ իմ վըրան.
 Անոնք ըլլան թող ինձ վըրան.
 Մինչև վերջին բոպէն կեանքիս
 Թեւերուդ տակ հանգչի հոգիս:

Սուր. ԴԱ. 1,4 Հեղինակ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

218 ՔՈՒ ԿԱՄՔՂ ԸԼԼԱՅ

1 «Քու կամքդ ըլլայ» ॥ արագընթաց
 կեանքիս հոսանք ժայ | ուռտ ա | փանց |
 Մէջթէ հոսէ, կ'երգեմ սրտանց, |
 Քու կամքդ ըլլայ ॥

2 «Քու կամքդ ըլլայ» ॥ ղըւարթ արև
 Եթէ փայլի գըլ | խոս վե | բև, |
 Յնծմամբ կ'երգեմ ես արդարև, |
 Քու կամքդ ըլլայ ॥

3 «Քու կամքդ ըլլայ» ॥ թէև ամպոս
 Ըլլան երկինք, ծամ | բան ա | ղօտ, |
 Պիտի կրկնեմ շեշտով նուաղոս, |
 «Քու կամքդ ըլլայ» ॥

Մ-րբ. ԻԶ. 42

219 ՄԻԱՅՆ ՓՐԿՉՈՎ

1 Ինծմէ բարձրագոյն սուրբ Վէմին հաւատքի՝
 Հոգիս իր ցաւով, վիշտերով կը թռչի.
 Թէպէտ մեղաւոր, սակայն բուկղ եմ, Տէր իմ,
 Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ազրիմ
 Փրկիչ իմ քեզմով, Փրկիչ իմ, քեզմով
 Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ազրիմ

2 Մենիկ ժամերուս, տանջանքի դառն ատեն,
 Երբոր փորձութիւնք խեղճ հոգւոյս շուրջ պա-
 տեն,
 Կեանքի ալէ՛ծուփ ծովուն մէջ երբ թաղուիմ,
 Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ազրիմ
 Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
 Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ազրիմ

3 Շատ հեղ, գոռ մարտի մէջ ճնշեալ ոստիսն,
 Բեզի գիժելով ես զըտայ ապաւէն.
 Եւ որչափ յաճախ, ա՛հ, սուրբ Վէմհաւատքեա,
 Քեզմով կորուստէ պաշտպանուած է հոգիս
 Փրկիչ իմ, քեզմով, Փրկիչ իմ, քեզմով,
 Փրկիչ իմ օրհնեալ, լոկ քեզմով ես կ'ազրիմ
 Ս-ղ. ԿԱ. 1-4 - Թարգ. Ա. Ս. ՓԱՇԿԵՄՆ

220 ՅԻՍՈՒՍ ԿԱՐՈՂ Է ՓՐԿԵԼ

1 Փառք Յիսուսի, փառք, փառք անհուն,
 Որ ձրի փրկանք և կեանք տըւաւ.
 Սուրբ քառութիւն կայ ամենուն,
 Կրնայ փրկել զիս ալ հարկաւ.
 Այո, նա կարող է փրկել,
 Տըւէք ամենուն այս մեծ լուր.
 Իր կուրծքն ինձ յենարան,
 Որ չիթերն սուրբ արեան
 Ձիս լընան, ըլլամ ձիւնէն մաքուր

2 Անոյս, անոյս, մեղսագրբաւ
 Հոգիս զիճակէ աննախանձ

Ի լոյս հանեց, և զայն ըրաւ.
Ժառանգ թագոց և պնւատանց,
Այո, նա կարող է, և այլն:

- 3 Սիրոյն բարձունք, ոհ, ի՞նչ քաղցր են,
Շնորհաց խորերն՝ ի՞նչ անյատակ.
Ա՛հ, ծրծէի ևս իր սէրէն
Եւ ապրէի իր թեւոց տակ,
Այո, նա կարող է, և այլն:

ԵՔբ. Է. 25 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

221 ԿԱՅ ԵՐԲԵՔ ԸՆՏԻՐ ՀՈՎԻԻ ՄԸ

- 1 Կա՞յ երբեք ընտիր հովիւ մը
Սիրելի փրկչին նըման.
Կա՞յ անոր նըման հըզոր մը
Որ ըլլայ մեզի պաշտպան.
Գըթութիւնն անոր անհուն է,
Սէրն անոր՝ Աստուածային.
Մեր խորհուրդը, մեր երազը
Չեն հասնիր անոր չափին:

- 2 Քան զովկեան վրտեմ ու լայն է
Աստուծոյ ողորմութիւնն.
Իր արգարութեան մէջ գութ կայ,
Պատուական է փրկութիւնն.
Դատապարտեալին շընորհք կայ,
Փրկեալին ալ օգնութիւն:

Մեռեալին, ոհ, յոյս և կեանք կայ,
Այն է Յիսուսի արիւնն:

- 3 Յաւիտեան մեր չօրը գութը
Կը մընայ անչափելի.
Եւ անհուն էակին սիրան է
Ակ սիրոյ ըսքանչելի
Ո՛ւր էր որ անկեղծ սրտով մը
Մեր Տէրոջը յուսոյինք,
Անգաղար անոր լոյսին մէջ
Բերկորութեամբ միշտ քալէինք:

Յ-Կ. Ժ. 11, 15, ԺԵ. 13 Թարգ. C. C. Tracy

222 ԳԵՐԱՉԱՆՅ Է ՍԷՐ

- 1 Քան գիտութիւն է գերազանց քու սէր,
Յիսուս փրկիչըս, իմ հոգիս բայց դեռ.
Կ'ուզէ լաւ ևս տեղեակ ըլլալ սիրոյդ
Բարձանց, խորքին, ուժին, չափին, և շաւ
Լաւ ևս տեղեակ:
- 2 Քան խօսք ճարտար է գերազանց քու սէր,
Յիսուս փրկիչ իմ, բայց խեղճիս շրթներ
Պիտ' աճարչտաց պատմեն հեռու կամ մտ,
Քու սէր, որ կը վանէ երկիւղ, ամօթ,
Եւ սէր կ'առթէ:
- 3 Քան զովութիւն է գերազանց քու սէր,
Յիսուս փրկիչըս, բայց իմ սիրաբն դեռ.

Կ'ուզէ երգել այն սէր, զեղուն, ազատ,
Որ ապրատամբս ըբաւ մի հարազատ
Որդի երկնից:

4 Սիրոյդ զեղմունքն հոս չեմ կարող թէպէտ
Գիտնայ, պատմել և զայն երգել յաւէտ,
Կրնամ սակայն սիրոյդ ակին մաքուր
Մօտը բերել իմ խեղճ սիրտս թափուր,
Որ զայն լեցնես:

5 Երբ քաղցրը գէմքն տեսնեմ զըթած Փրկչին,
Եունրը գըրած անոր զահուն առջին,
Ոհ, յայնժամ իմ հոգիս ցնծմամբ զեղուն՝
Անոր խորին, հըզօր, վըսեմ, բեղուն
Սէրն պիտ' երգէ:
Եփե- Գ. 18, 19 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

223 ՍԷՐ ՔՐԻՍՏՈՍԻ

1 Ունայնութիւն ունայնութեանց,
Բոլոր աշխարհ է փուճ և սուտ.
Միայն Փրկիչ Քրիստոս Աստուած
Եւ սէր նորին է ինձ օգուտ:

2 Պէտք է որ ևս զայն շատ սիրեմ,
Զի նա այնչափ նախ զիս սիրեց.
Պէտք է անոր սիրտս նըլ իրեմ,
Քանզի նա զինքն ինծի շնորհեց:

3 Հոգւոյս համար նա զի՛նք զօհեց,
Որպէս զի ևս արգարանամ.
Մեզքիս համար մահ ճաշակեց,
Որպէս զի ևս անմահանամ:

4 Արդեօք ո՞ր մարդ՝ կամ ո՞ր հրեշտակ,
Փրկչիս նըման ինձ սէր ցուցուց.
Կըրեց վասն իմ վիշա զըժընդակ,
Եւ փրկութեան ինձ յոյս թողուց:

5 Տէր, քու սիրովդ իմ սիրտս վառէ,
Որ քեզ միայն սրտանց սիրեմ,
Եղբարցս համար յիս սէր ազդէ,
Որ սէրս սիրոյդ նըմանցունեմ:

Հ--Վ. Ե. 7-9

224 ՍԷՐ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

1 Ով Տէր Յիսուս, քեզ կը սիրեմ,
Քանզի քու սէրդ ինձ շատ քաղցր է.
Ես բարձրաձայն պիտի երգեմ,
Թող զայն բոլոր աշխարհ լըսէ:

2 Այո, քաղցր ևս հոգւոյս իմին,
Յոյս, փրկութիւն, կեանք ևս ինծի,
Անարգ բան է գոհարն անդին,
Ոսկին ալ ինձ շնչին փոյի:

3 Գու մեծ շընորհքդ սրտիս վրայ, Տէր,
 Միշտ կեանք արուղ հոտ կը բուրէ.
 Կը բըժըշկէ ամէն ցաւեր,
 Բոլոր իմ անձս կը նորոգէ:

4 Ոչ նեղութիւն, ոչ հալածանք
 Ձիս քու սէրէդ կընան զատել.
 Ու ոչ ալ մահ: Ե ոչ ալ կեանք
 Ձիս քու անձէդ կընան բաժնել:

5 Պիտի պատմեմ սերն մեծ փրկչիս,
 Մինչև վերջին իմ չունչս հասնի.
 Յայնժամ, օրհնեալ փրկիչ, հոգիս
 Քու սուրբ գրկիդ մէջ թող հանգչի:

Հ--Է. Ը. 35-39

225 ՄԻՇՏ ԶՕՆՈՒԱԾ ՔՈՒ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ

1 Աւ, Տէր, կեանքս, ըլլայ թող ան
 Միշտ ձօնուած քու սուրբ անուան.
 Աւ ձեռքերս, և թող շարժին
 Միշտ հըրու՝ սիրոյդ ուժին.
 Աւ ոտքերս, և թող քայլին
 Մէշտ ուղիդ՝ քու սուրբ ճամբէն.
 Աւ իմ ձայնս, և թող, ով Տէրս,
 Քեզ միայն ուղղեմ երգերս:

2 Աւ շրթներս, անոնց վըրայ
 Սուրբ պատգամդ թող միշտ թրթռայ:

Աւ ինչքերս, տիրէ գանձիս,
 Ձեմ պահեր բան մը անձիս.
 Աւ իմ խելքս, գործէ թող այն
 Սուրբ կամքիդ միշտ համաձայն.
 Աւ ժամերս, օրերս, որ յար
 Քու սիրովդ սահին ի սպառ:

3 Աւ իմ կամքս, տիրէ անոր
 Արդ, ով Տէր, կամքովդ հըգօր.
 Աւ նաև իմ սիրալս շար,
 Ձայն ըրէ հոգւոյդ տածար.
 Սէրս ալ առ, անոր գանձին
 Դու եղիլ տէրն առանձին.
 Աւ անձս ալ, թող այն, ով Հայր,
 Միշտ ապրի ընկ քեզ համար:

Հ--Է. ԺԲ. 1 Թարգ. Ե. Թ. ԳԱՅԱԵԱՆ

226 ԱՍՏՈՒԾՈՅ ՀՆՏ ՀԱՂՈՐԿՈՒԹԻՒՆ

1 Տէր իմ, քեզ կը սիրեմ,
 Միայն քեզմով կ'ապրեմ.
 Թէ որ Աստուածըս ես մերժեմ,
 Շուտով կը կորսուիմ:

2 Քու սէրդ այնչափ քաղցր է
 Որ բանտն պալատ կ'ըլլայ.
 Ուր ես ներկայ՝ դըրախտն հոն է,
 Ուր չես՝ դըժոխք կ'ըլլայ:

3 Հրեշտակք սուրբ անդադար
 Թող քրնարներ զարնեն.
 Երկինք հոն չըկրնար ըլլալ
 Թէ որ քեզ չըտեսնեն:

4 Աւ տիեզերքն ամէն
 Ինձի իրացընէ
 Հաճոյք մը տալ կարող ոչ են,
 Թէ հեռանաս ինձմէ:

5 Սիրոյ ծովն, անսահման
 Ուրախութեամբ լեցուն,
 Գու ես, Տէր, և սրտիս շրջան,
 Հոգւոյս ցընծմանց կեդրոն:

Սուր. ԼԶ. 7.9

227 ԿԱՏԱՐԵԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

- 1 «Խաղաղութի՞ւն, լըմա՞ն լաղաղութիւն»
 Այսպէս խօսի Տէր Յիսուսի արիւնն:
- 2 «Խաղաղութի՞ւն, երջանկութիւն անբա՞ւ,
 Ինչ որ ըլլայ, կամքն Յիսուսի է լաւ:
- 3 «Խաղաղութի՞ւն» փորձանք կան բիրտաւոր
 Գիրկն Յիսուսի պիտի հանգչինք անդորր:
- 4 «Խաղաղութի՞ւն» զատուած ընկերներէ,
 Զանոնք և մեզ մեր Տէրն կը պահպանէ:

- 5 «Խաղաղութի՞ւն» Թող վաղը մութ ըլլայ.
 Յիսուս կեցած է աթոռին վըրայ:
- 6 «Խաղաղութի՞ւն» Թող գայ կենաց վախճան.
 Մահուան վըրայ Յիսուս է յաղթական:
- 7 Հերի՛ք է. վիշտ և փորձութիւն կ'անցնի,
 Պատրաստ է մեզ խաղաղութիւն երկնի:
 Ե. ԻԶ. 3 Թարգ. C. C. Tracy

228 ՓՐԿԻԶՍ ՄԻՇՏ Է ՄՕՏ

- 1 Թող իմ արբուունջըս ա՛լ դադարի,
 Քանզի Յիսուս միշտ մօտ է ինձի,
 Տէրս ու Փրկիչըս իմ քովս կը մընայ.
 Երբ կը խօսի ինք, իմ սիրտս կը ցընծայ:
 Երկնաւոր սուրբ հրեշտակներ
 Իմ ճամբուս կ'ըլլան ընկեր,
 Աւ Փրկիչըս մարդասէր,
 Փրկիչըս, Փրկիչըս, Փրկիչըս միշտ է մօտ:
- 2 Աւ չըվախնամ, ու չըթուանամ.
 Զի արթուն ըլլամ, թէ քընանամ,
 Հանգիստ վայելմ ես կամ թէ թափառիմ,
 Քաղցրը Փրկիչըս միշտ քօպըս ունիմ.
 Երկնաւոր սուրբ հրեշտակներ, Լայն,
- 3 Հոս վայելածս է վայրկենական,
 Բայց երկնաւոր վայելք կը մընան.
 Հոս հաւատարմ թող Փրկչիս հետ քալեմ:

Հոն յախտեան անոր սէրն վայելեմ
Երկնաւոր սուրբ հրեշտակներ, Եւջն:
Եւ. 1Գ. 14, Սուշ. 1Գ. 7 Թարգ. Elias Riggs

229 ՕՐՀՆԵԱԼ ԵՐԱՇԽԻՔ

1 Օրհնեալ երաշխիք, իմ է Յիսուս.
Ոհ, այս խորհուրդըն ի՛նչ քաղցր է հոգւոյս.
Փրկութեան ժառանգ, Տէրոջն եմ ես,
Իբարեւոյն սըբբուած մեղքերէս:
Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին.
Ու երգեմ սէրն անհուն իմ փրկչին.
Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին,
Ու երգեմ սէրն անհուն իմ փրկչին:

2 Իրն եմ ես, Ան իմ Տէր և Աբքայ,
Կ'զգամ իբ փառքը անձիս մէջ ներկայ.
Սուրբ հրեշտակներ գալով երկինքէն՝
Շնորհաց, սիրոյ երգ կը ջըբմընջեն:
Պիտի պատմեմ, Եւջն:

3 Ալ զիս յանձնած եմ անոր բազկաց,
Յոյժ երջանիկ եմ, անվախ, անկասկած.
Իբ բարութեամբ է լեցուն հոգիս,
Միակ իբ սէրը նիւթ է երգիս:
Պիտի պատմեմ, Եւջն:

Բ Տէր. Ա. 12 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

230 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

1 Երջանիկ անոնք են
Որ փրկչին կը լրահեն,
Եւ իրենց գանձը վերն գիշեր են,
Լեզուներ կարող չեն
Սըբոց փառքը պատմել,
Որ փրկչին սիրոյն համն առեր են:

2 Իմ կենացըս օրերն
Ես պիտի օրհնեմ Տէրն.
Փրկութիւնը իրժով է միայն.
Ամէնքն ալ հաւատան
Եւ հասնին փրկութեան,
Մէկ ցնծում ու մէկ երգ ունենան:

Փէլ. Գ. 4

231 ՍՈՒՐԲ ԸԼԼԱԼՈՒ ԲԱՂՁԱՆՔ

1 Ով Տէր, մեզի պատու իրեցիր
Որ սուրբ ըլլանք սրտով.
Սըբոց միայն երնէկ արւիր,
Որ քեզ տեսնեն աչքով:

2 Ով սուրբ Աստուած, դուն զիս սրբէ
Ամէն տեսակ մեղքէ.
Անմահ հոգիս դուն պատէ
Մեղաց պատճառներէ:

- 3 Գուռն իմ սրտին նոր սէր աղղէ,
Որ սուրբ ըլլալ չանամ:
- Եւ իմ հոգին լուսաւորէ,
Որ սուրբ օրէնքդ ճանչնամ:
- 4 Իմ սիրաբն, Տէր, քեզի դարձուր,
Որ միշտ մեղքէն փախչիմ:
- Գուռն Սուրբ Հոգւովդ ինձի շնորհք սուր
Որ քեզ միայն յարիմ:
- 5 Ես կը բաղձամ սուրբ ըլլալու,
Որպէս զի դրախտ մտնեմ:
- Ես կը ցանկամ սուրբ ըլլալու,
Որպէս զի քեզ տեսնեմ:

Ա ՊԻՊ. Ա. 15, 16

232 ԵՐԱՆԵԼԻ ՕՐ

- 1 Երանելի այն օրն է, Տէր,
Որ ես բաժինըս քեզ ըրի:
 - Ուրախ հոգիս անդուլ իր սէրն
Ու ցնծութիւն պատմէ պիտի:
- Երանելի այն օրն ըսուի,
Որ Տէրն մեղքերս ներեց ինձի:
«Յրիժուռն կեցիր, աղօթք ըրէ,
Ու միշտ ցընծա», ինձի կ'ըսէ:
- 2 Իմ սիրտս բոլոր անոր կու տամ
Որ իմ սիրոյս է արժանի:

- Իր սեղանին երբ մօտենամ,
Ուրախ երգով իր տունն լեցուի:
Երանելի այն օրն ըսուի, Եւ այն:
- 3 Ահա փրկիս ես ուխտ ըրի,
Տէրոջն իմ ես ու իմս է ան:
- Ձիս ան կանչեց, անոր դացի
Ես՝ ճանչնալով ձայնն պատուական:
Երանելի այն օրն ըսուի, Եւ այն:
- 4 Փրկիչդ վըրայ յոյս դընելով,
Խառովեալ հոգիս, հանգիստ ըլլաս:
- Ամէն բարիք վայլես իբժնով,
Եւ իր քովէն չըհեռանաս:
Երանելի այն օրն ըսուի, Եւ այն:

- 5 Իմ ուխտըս, ով փրկիչ Յիսուս,
Ամէն օր նորոգեմ պիտի:
- Ու երբ հասնիմ մահուան ժամուս,
Երգեմ պիտի ձեռնս սիրելիս:
Երանելի այն օրն ըսուի, Եւ այն:

Եւ. ԽԳ. 5 Թարգ. I. F. Pettibone

233 ԲԱՐԻ Է ԻՄ ՀՈԴԻՈՅՍ

- 1 Երբ խաղաղութիւն իբրեւ գետ կը յորդէ,
Կամ ցաւք իբր ալիք հողմայոյդ,
Ինչ որ է բաժինս ուսուցիր դու ինձ թէ՛
Բարի է, բարի է իմ հոգւոյս:

Թէքէքէ. Բարի է իմ հոգւոյս,
Բարի է իմ հոգւոյս, բարի է, բարի է
իմ հոգւոյս:

2 Թէև վարձու թիւնք ու դեւեր զիս պատեն,
Յիշե՛մ թէ զբթած Տէրն սիրուն
Իմ թշուառութիւնս նրկատած է արդէն,
Ինձ համար թափած է իր արիւն:
Բարի է, Եւրշ:

3 Մեզ յերս, ոհ, խորհուրդ մեծ և ըսքանչելի,
Մեղքերս, ո՛չ մասամբ այլ լլրիւ,
Խաչին վրայ դամուած, ոչ ես ինձ կրբելի.
Փառք Տէրոջս այժմ և միշտ փառք պատիւ:
Բարի է, Եւրշ:

4 Տէր, շուտ գայ այն օրն երբ ցնդ ին սև ամպեր,
Հաւատքին ըլլայ տեսութիւն.
Երբ փողը հընչէ, և ի՛նչէ փառաց Տէրն,
Այս նաև բարի է իմ հոգւոյս:
Բարի է, Եւրշ:

Ս-չ. ԵԾ. 18, 22 Թարգ. Ա. Ե. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

234 ՍՈՒՐԲ ԸԼԼԱՄ

1 Ոհ թէ սուրբ ըլլամ ես,
Միշտ ա՛լ աւելի
Սիրտս, հոգիս և միտքըս
Գեղ հընադանդի:

Օրէ օր պարտքերըս
Աւելի սիրով
Կատարեմ, ով Տէ՛րըս,
Գու հոգւոյդ շնորհքով:

2 Գու հոգիդ, ով Հայրըս,
Անդադար ինձ տուր,
Որ մաքուր ընէ զիս,
Աւելի մաքուր:

Եւ իմ հառաչանքըս
Գէպի վեր երթայ,
Միշտ իմ պաղատանքըս
Աստուծոյս ըլլայ:

3 Երբ շատնան վիշտերըս,
Վախս ու տարակոյս,
Ոհ, յանձնեմ հոգերըս
Միշտ իմ Աստուծոյս:

Ինք բոլոր խաւարըս
Լոյս պիտի ընէ,
Ի՛նչ որ հիմա մութ է
Պիտի բացատրէ:

4 Բարձրը և ա՛լ բարձրը
Գիւերէս թռչիմ,
Միշտ երկնից սուրբ լոյսը
Բերկրութեամբ հասնիմ.
Թող ըլլայ մաղթանքըս
Գեղ ընդունելի:

Այս է, Տէր, իմ Հանքըս,
Դուն օգնէ ինձի:

Ա Յ-Ը. Գ. 3

Թարգ. Elias Riggs

235 ՏԷՐ ԻՄ, ՓՐԿԻԶ, ԵԿՈՒՐ

1 Տէր իմ, Փրկիչ, եկուր,
Հասէ բնակիլ իմ քով:
Ըրէ իմ սիրտս մաքուր,
Սրբէ զայն քու Հոգւով:
Եկուր, Փրկիչ, սիրովդ անձառ,
Եւ սիրտս ըրէ քեզ սուրբ տաճար:

2 Դուն տիրէ իմ մըտքին,
Հոգւոյս ալ կիրքերուն,
Մինչև հըպատակին
Քու դօրութեանդ անհուն:
Եկուր, Փրկիչ, սիրովդ անձառ,
Եւ սիրտս ըրէ քեզ սուրբ տաճար:

3 Թայնժամ իմ սիրտս կ'ըլլայ
Քու սուրբ սիրոյդ խորան,
Որուն վըրայ շողայ
Աբևն խաղաղութեան,
Եկուր, Փրկիչ, սիրովդ անձառ,
Եւ սիրտս ըրէ քեզ սուրբ տաճար:

Ս-Դ. 7, 10

Թարգ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

236 ՍՐԲՈՅ ՕՐԻՆԱԿԸ

1 Տուր ինձ հաւատոյ թելերը,
Որ թռչիմ ու վեր ելեմ:
Սրբանիկ անթիւ սուրբերը
Եւ երկնից մեծ փառքն անձեմ:

2 Հոս երբեմն իրենց մահիճը
Աբցունքով կը թընէին,
Մեղքերու դառն փորձութեան դէմ
Միշտ կը պատերազմէին:

3 «Ուսկից էր ձեր յաղթութիւնը»
Հարցընեմ. և միտքան
Յաղթանակն ու փրկութիւնը
Յիսուսի խաչին կու տան:

4 Դիտեցին անոր քայլերը,
Եւ անոնց հետեւեցան,
Մինչև որ հասան երկնքը,
Անոր սուրբ հանգիստն մըտան:

5 Դոհութիւն քեզի, մեր Տէրը,
Որ քայլերդ մեզ կ'ուղղեն,
Եւ վըկաներուդ խումբերը
Նայն ճամբան կը ցուցընեն:

ԵՔ. Ռ. 1

Թարգ. Elias Riggs

237 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

- 1 Ո՛րչափ օրհնեալ է այն կապանք,
Որով եղբարքս կը միանանք.
Այս շնորհք տըւաւ մեզի Յիսուս,
Աղբիւրն շնորհաց, Փրկիչ հոգւոյս:
 - 2 Մեր յոյսն ու վախն են հաւասար,
Նաև խնդում գլուարթաբար.
Մեր մտմբտութիւն հոգ, նեղութիւն
Չունին բընաւ տարբերութիւն:
 - 3 Մենք մեր եղբօր բոլոր վշտաց
ենք մասնակից, և արտասուաց.
Թէ մէկ եղբայր մեզմէ զատուի,
Մեզ ցաւ կու տայ անտանելի:
 - 4 Բայց հաստատուն մեծ յոյս ունինք
Չայն տեսնելու վերին երկինք.
Այս աներկբայ յոյս և հաւատ
Կ'ընեն ըզմեզ հոգէ ազատ:
 - 5 Եւ միացած ուրախ սրտով
Մենք այն օրուան կ'անձկանք սիրով.
Մեզք, վիշտ և հոգ յայնժամ փախչին,
Եւ սէր մաքուր ի մեզ հանգչի:
- Հով. ԺԲ. 5

238 ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ

- 1 Եղբայր ենք մենք, մէկ չօր որդիք,
Զըկայ մեր մէջ մեծ կամ սրբաբիկ.
Մէկ ուսուցիչ ունինք՝ Յիսուս,
Մէկ մեր հաւատք, և մէկ մեր յոյս:
- 2 Մէկ ճամբայով կ'երթանք մէկ տուն,
Տուն լուսեղէն, յաւերժ սիրուն.
Ուր մահ կամ վախ չըկայ մեզի,
Ամէնքը հոն սիրով են լի:
- 3 Ի միասին հոն յաւիտեան
Պիտի բնակինք մենք համաձայն.
Ուստի սիրենք հոս մէկըզմէկ,
Մէկ սիրտ բլանք և մէկ խորհուրդ,
Մ-դ-ի-Ի-Յ. 8 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

239 ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

- 1 Եկէք, Տէրն սիրողներ,
Պատմենք ցնծութիւննիս.
Մէկտեղ ելլեն մեր քաղցր երգեր
Մինչև աթոռն փրկչիս:
- 2 Եւ թող անոնք շերտեն,
Որ Տէրը շրճանջցան.
Բայց Արքային որդւոց ամէն
Վայել է որ փառք տան:

3 Հոս իր սուրբ Սիօնին
 Յնծուան կը վայելինք,
 Մինչև հասնինք Երկնաւորին,
 Իր փառքն անհուն տեսնենք:

4 Ուստի մենք միշտ երգենք,
 Բընաւ արտում չըլլանք:
 Իմամանուէիւն հողէն կ'անցնինք,
 Դէպ ի երկինք կ'երթանք:

Յ-լ. Ե. 18

240 ԻԱԶՐ ՏԱՆԻՒ

1 Միթէ Յիսուս ընկ խաչն տանի,
 Եւ մարդս ազա՞տ ըլլայ:
 Ո՛չ, խաչ մը կայ ամէն մեկուն.
 Ինծի ալ խաչ մը կայ:

2 Ի՞նչ երջանիկ վերի սուրբերն,
 Որ հոս կը տրամէին.
 Բայց հոն անխառն սէր կը վայլեն,
 Յնծում ալ լիովին:

3 Օրհնեալ է խաչս, պիտի տանիմ,
 Մինչև որ մահն ինձ գայ,
 Ու վեր ելլեմ, պըսակս առնեմ.
 Ինծի պըսակ մը կայ:

Դ--լ. Թ. 23

Թարգ. 1. F. Pettibone

241 ԱՅՍՕՐ ԱՅԳԻՒՍ ՄԷՋ ԳՈՐԾԷ

1 Օգի՛ն մէջ մեղմ, լըռիկ, բայց աղքու ձայն մը կայ,
 Որ ըստէպ ախանջնուս կը հընչէ:
 Առաւըանց, թէև մենք չսպասենք, ան կու գայ,
 Կէս օրին, իրկիունն ալ մեր շուրջը կ'ըլլայ:

«Այսօր այգիիս մէջ գործէ,»
 «Այսօր այգիիս մէջ գործէ,»

2 Եւ այս ձայնն ուղղապէս երկինքէն իջնելով
 Մեզ, ուր որ թափառինք, կը գտնէ:
 Թէ՛ դաշտի, թէ՛ քաղքի մէջ մեզի հասնելով,
 Թէ՛ լըսենք և թէ՛ ոչ, անդադար գոչելով,

«Այսօր այգիիս մէջ գործէ,»
 «Այսօր այգիիս մէջ գործէ,»

3 Ան մեր Հայրն է որ մեզ մեծ սիրով կը կանչէ,
 Իր ձայնին հընազանդ ըլլանք մենք:
 Անդադար օրհնութիւն իր ձեռքէն մեզ կ'իջնէ,
 Մենք ուրեմն, իր սիրոյն նըւիրուած ի սրտէ՛

Այսօր այգիին մէջ գործենք,
 Այսօր այգիին մէջ գործենք:

Մ-ԴԷ. ԻԱ. 28, 29

242 ՕՐ Մ'ԱՂ ՏԷՐՈՋԸ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

1 Տէրօջըս սուրբ գործին մէջ
 Օր մ'ալ ինձ արուեցաւ,
 Երկրիս լըբու մը,
 Երկնից ծագումը:
 Օր մ'ալ ինձ մտակցաւ:

Սիրովն փրկչիս
 Կ'ուրախանայ հոգիս:
 Տէրոջըս սուրբ գործին մէջ
 Օր մ'աւ շնորհած է ինձը,
 Օր մ'աւ ճօտ է երկինքը,
 Երկրէս օր մ'աւ պակասած:

2 Օր մ'աւ գործել կրցած եմ
 Տէր Յիսուսի համար,
 Ինքն է իմ Տէրըս,
 Իմ յոյս ու սէրըս:
 Թող հաւատարմարար
 Իմ Տէրս պատուեմ,
 Անոր միշտ ծառայեմ,
 Տէրոջըս սուրբ գործին մէջ, Լայն:

3 Օր մ'աւ շընորհուեցաւ ինձ.
 Ինչ բերկրութիւն եղաւ
 Պատմել թէ Տէրը
 Յայտնեց իր սէրը,
 Մեզի համար մեռաւ:
 Այս պատմելով
 Իմ սիրտս լեցաւ սիրով:
 Տէրոջըս սուրբ գործին մէջ, Լայն:

4 Օր մ'աւ ջանքով անցած է,
 Աշխատանքով լեցուն,
 Բայց յայտնըւած է
 Եւ մօտեցած է

Երկնից մէջ վառք անհուն,
 Իմ Յիսուսիս
 Յանձնեմ յոգնած հոգիս:
 Տէրոջըս սուրբ գործին մէջ, Լայն:

5 Հանգիւտ Տէր Յիսուսի հետ՝
 Զանքէն կռու կու գայ.
 Քաղցր է այս ջանքը,
 Այս աշխատանքը,
 Եթէ քու կամքդ ըլլայ,
 Ով Տէր, կ'ուզեմ
 Որ օր մըն ալ գործեմ:
 Տէրոջըս սուրբ գործին մէջ, Լայն:
 Յ-վհ. Թ. 4 Թարգ. Miss C. E. Bush

243 ՀԱՅԳ ԶԳԷ ԶՐՈՅ ԵՐԵՍԸ

1 Հացդ ձրզէ ջըրոց երեսը,
 Մի կարծեր թէ կ'ընկղմի:
 Թէև ուշանայ արդիւնքը,
 Անպատճառ գտնես պիտի:
 Տուր բաժին եօթին, ութին ալ
 Կարօտից առատ բաշխէ,
 Չի Աստուած խոստում տըւած է,
 Որ քեզ աւելի օրհնէ:

2 Հացդ ձրզէ ջըրոց երեսը,
 Չի մէկ սերմ տարուած ալեօք:

Բուսնելով հեռու երկրի մէջ՝
 Կը բերէ պըտուղ ատոք,
 Նոյն կերպով բարի ջանիցդ մէջ՝
 Քեզ կ'օգնեն բուսն ալիքներն՝
 Փրկարար ճշմարտութիւնը
 Քարողել երկրիս ծայրերն:

- 3 Հաջդ ձըդէ ջըբոց երեսը,
 Ճոխ բարիք միշտ տարածէ,
 Թշուառաց հասցուր դարմանը,
 Լըքեալն երն մըխիթարէ:
 Մի վախճար թէ քաղց հասնի քեզ,
 Տէրն պիտոյքդ կը լեցընէ:
 Միշտ կու աայ քեզ փոխարէնը,
 Վարձքն ալ լի կը պարզուէ:

Ժող. ժԱ. 1, 2

244 ԵՐԳ ԿԵՆԱՅ

- 1 Տըխուր ողբով մ'ըսեր ինձի,
 Այս կեանքն է լոկ երազ.
 Գործ կայ ինձի, գործ կայ քեզի
 Ամէն տեղ հանապազ:
 2 Կեանքն իրական է, փութալան,
 Եւ նըպատակ ունի.
 Անոր վախճան չէ զերեզման,
 Անդին ալ կը նայի:

3 Կեանքս օգտակար և թանկագին
 Ընել ենք հրախրուած:
 Երուն հող էիր, դառնաս հողին,
 Հողւոյն վրայ չէ ըսուած:

4 Այլն դարու մեծ բարերար
 Մարդոց կեանքն կը փայլի.
 Մեր ետեւէն հետք օգտակար
 Զըգել է պարտք մեզի:

5 Յառաջ երթանք, վեր նայելով
 Մեր կեանք վրսեմ ընենք.
 Արթուն ըլլանք, և եռանդով
 Տէրոջը ծառայենք:

Մող. ԼՁ. 9, ԴԱ. 14-16 Թարգ. Elias Riggs

245 ԲԱՆ ՄԸ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ

- 1 Յիսուս, քու կեանքդ անգին
 Տըւիր ինձի.
 Ես պարտական եմ կեանքս
 Զոհել քեզի:
 Հոգիս թող քեզ պաշտէ,
 Իր ուխտը կատարէ,
 Նըւէր մ'ալ ընծայէ,
 Տէր իմ, քեզի:
 2 Կ'երթամ աթոռն շնորհաց
 Յանուն փրկիչս:

Հաւատքըս կը նայի
Բարեխօսիս:

Օգնէ խաչս տանելու,
Մեծ սէրըդ պատմելու,
Մաղթանքս ալ ուղղելու,
Հօր Աստուծոյս:

- 3 Շնորհէ որ աշխատիմ
Նրման քեզի-
Որ, օր իւրաքանչիւր,
Գործ սիրելի,
Բարիք մը ըսկըսած,
Մէկ օրհնութիւն գործուած,
Մէկ կորուսեալ վերկուած,
Զեռօքս լինի:

- 4 Ինչ որ ունիմ և եմ՝
Կու տամ քեզի-
Իմ անձս, արտում, ուրախ,
Գու կիշ լինի
Նւ երբ երեսդ տեսնամ,
Վերն ալ առջիդ իյնամ,
Յայնժամ պիտի ըլլամ
Նրէք քեզի:

Բ Կոր. Ե. 14, 15

246 ԴՈՒՆ ՅՈՒՆԱՅ ԵՍ

- 1 Դու յոգնած կամ վրհատած ես,
Խիստ կը տառապի՞ս.

Տէր Յիսուս կ'ըսէ, «Եկուր ինձ,
Որ հանգչիս»:

- 2 Ապացոյց կայ ցուցնելու ինձ
Թէ ուղղիս է Ան.
«Զեռքերուն, ոտքին, կողին վրայ
Վէրքեր կան»:

- 3 Կայ զարդարելու պըսակ մը
Ճակատն Իշխանի,
«Կայ, այո, զուշէ զափնի մը
Հաւատտիս»:

- 4 Ի՞նչ վարձք, եթէ զինք գտնեմ հոս,
Ու հետեւիմ միշտ.
«Շատ արցունք և աշխատանք կայ,
Շատ ալ վիշտ»:

- 5 Թէ խնդրեմ որ ընդունի ինք,
Կը մերժէ՞ զիս Ան:
«Ոչ, մինչև երկինք, երկիրն ալ
Վերջանան»:

- 6 Հետեւիմ, գտնեմ, մեռնիմ ալ,
Կ'օրհնէ՞ զիս Յիսուս.
Սուրբք՝ «Այո», կ'ըսեն, «Երբք չիք
Տարակոյս» Ամէն:

Մ-ԴԷ. ԺԱ. 28, Թ-ԿԵ. 2. 37

Թարգ. ՊՕԴ, ՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ

247 ՔՐԻՍՏՈՆԷԻՆ ԳՈՐԾԸ

- 1 Գործ կայ ինձ յանձնըւած,
Երկնից յարմարցրնել
Անմահ հոգիս, և իմ Աստուածս
Վարքովս վառաւորել:
- 2 Բոլոր ընկել ներուս
Հոգիներուն համար
Աշխատելով ներկայ դարուս
Ըլլամ միշտ օգտակար:
- 3 Ով Տէր, ինձի օգնէ
Առջեւըդ քալելու,
Եւ քու շնորհքովդ զիս պատրաստէ
Վերջին հաշիւս տալու:
- 4 Վառէ զիս նախանձով,
Հսկեմ, աղօթք ընեմ.
Չըկայ ասկէ զաս ապահով
Ուրիշ ճամբայ, զիտեմ:
- 5 Եթէ քեզի անասմ,
Ինձ կայ կեանք անվախձան.
Բայց եթէ ուխտադրու՞մ ըլլամ,
Մահ յաւիտենական:

248 ՈՎ ՏԷՐ, ԹՈՂ, ԳՈՒ ՀՆՏԳ ԳԱԼԵՄ

- 1 Յօժար ծառայութեամբ, ով Տէր,
Ըլլամ քեզի խոնարհ ընկեր,
Սիրոյ գաղտնիքըդ ինձ յայտնէ,
Զիս համբերող ու քաղցր ըլլէ:
 - 2 Սիրով, գութով քեզ նրմանիմ,
Որ թուլասիրան մեղմով չահիմ,
Որ մնլորեալը ետ բերեմ,
Եւ Հօրը տունն առաջնորդեմ:
 - 3 Յիսուս, շնորհէ մըտերմութիւնդ,
Ինձ սորվեցուր համբերութիւնդ.
Սիրով, գործով քեզ հետ քալեմ,
Եւ բարիով չարին յաղթեմ:
 - 4 Թող լոյս ծագի ճամբուս վըրան,
Յուսով վայլի թող ապագան.
Խաղաղութիւնդ ինձ տուր, ով Տէր,
Տուր որ ըլլամ քեզի ընկեր:
- Կ-դ. Ա. 10 թարգ. C. C. Tracy

249 ԱՆՁՆՈՒՐԱՅՈՒԹԻՒՆ

- 1 Յիսուս, աշխարհը եմ ձրդած,
Քու խաչս առի որ առ քեզ դամ:

Մերկ և աղքատ ու անարգուած,
Հերիք է ինձ որ քեզ ճանչնամ:

2 Այս աշխարհիս սուտ բարիքներ,
Որոնց վըրայ յոյս ունէի,
Ինծի եղան պարտազ բաներ,
Ու քեզ միայն ես իմս ըրի:

3 Թող այս աշխարհ զիս անարգ է,
Տէր Յիսուսի նշնպէս ըրաւ:
Մարդոց դատումն իս կը մերժէ,
Ռայց դուն զիս մի մերժեր բընաւ:

4 Կարող չէ վիշտ ինձ վընասել,
Սըբօր Գրիստոս իմ հեարս է:
Սաւ, նեղութիւն, տանջանք քաշել՝
Ինձ բերկրութիւն, ցնծում ալ է:

5 Ով իմ հոգիս, ուրախ եղիր,
Առջևըդ փառք կայ անդադար •
Վըսեմ կըչու մըդ լաւ ճանցիր,
Մարմնոյ վիշտէն ալ մի վախնար:
Պ.Վ. Թ. 23

250 ԳՈՐԾԵԼՈՒ ԱՏԵՆՆ Է

1 Ծաղկաւէտ դաշտին վըայ
Յողը կը փայլի •
Առաջան հրաւէրն է
Քեզ, ով պատանի:

Օ՛ն, շահէ ճանքովդ
Ոսկեղէն ժամեր •
Գործելու ատենն է,
Շուտ կու գայ գիշեր:

2 Տես, որ մտակցած է
Արդ օր հասարակ •
Կէս օրուան յորդորն է
Քեզ, միջահասակ,
Բեռ և տարութիւն կայ,
Գործըդ մի ձգեր •
Բանդի վարձքովդ մեծ է
Սըբօր գայ գիշեր:

3 Կ'երկարին շուքերը •
Օրն կը վախճանի,
Իրիկուան խըրատն է
Քեզ, ով ձերունի
Քիչ է ժամանակըդ,
Ձեռքըդ չըթուշնայ,
Կատարէ քու գործըդ,
Չի գիշեր կու գայ:

Յ.Վ. Թ. 4, 2-ու: ԺԳ. 11 Թարգ. C. C. Tracy

251 ԽՈՐ ՁՈՐԸ

1 Ով տառապանաց աշխարհը,
Ի՛նչ սուր են փուշերդ ինծի:

Ո՛ւր էր որ զիս տանէր մէկը
Այս խոր ձորէն:

2 Ով Իսրայէլի տանողը,
Եկ ամպի, կրակի սինով,
Անվրտանգ անցուր մեր անձը
Այս խոր ձորէն:

3 Քաջ Հոգիւ դուն, Տէր Յիսուս իմ,
Բաց քու սիրոյդ բազուկներ.
Հետս եղիւր, զօրեղ պաշտպան իմ,
Այս խոր ձորէն:

4 Սուրբ Հոգի, հրգօր Աստուած մեր,
Թշնամեաց յաղթէ ուժովդ.
Մի թողուր զիս դեռ չելած վեր
Այս խոր ձորէն:

5 Ոհ, Ի՛նչ վիշտ ու ցաւ քաշած եմ
Հոս կեանքիս բաժին եղած.
Ընդունէ զիս երբ ելլեմ ես
Այս խոր ձորէն:

Հ--վ. Բ. 35, 39 — Հեղինակ Ա. Հ. ձե՛ձե՛ձե՛Ան

252 «ԱՂԷԿ ԵՂԱԻ ԻՆՄԻ ՈՐ ՎՇՏԱՅԱՅ»

1 Ով Հայր, օրը հաղար անգամ
Վարդից համար քեզ վառք կու տամ,
Իսկ ոչ երբեք փրչոց համար
Փառք քեզ, ըսի վրստահարար:

2 Յերկինս՝ վարձքի ես ակն ունիմ,
Թէ հոս սերով կըրեմ խաչն իմ:
Բայց կը մոռնամ թէ այս կենաց
Մէջ ալ առիթ է պարծանաց:

3 Եթէ Որդւոյդ գործն յաշխարհի
Չարարանքով կը կատարուի,
Հարկաւ ինձ ալ պէտք են փուշեր,
Արժէք ունին և իմ ցաւեր:

4 Տէր, զիս լրա ու սիրտս մաքրէ,
Թէև անցնիմ հուրէ, չուրէ.
Եւ փորձութեանց՝ դիմադրելով
Նոր զօրութիւն շահիմ հոգւով:

5 Իբրև մանուկ, Հայր, անվրդով
Իմին բաժինս գրկեմ սիրով:
Փուշ, խաչ և ցաւ, վիշտեր համայն
Թող ինձ թրւին սիրոյդ նըշան:

Ս--չ. ձժԹ. 71 — Հեղ. ՏԻԿԻՆ ՀՌ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

253 ՆԱԻԸ ՓՈԹՈՐԿԻ ՄԼՁ

1 Խաղաղ էր ծովը Գալիլեայի,
Երբ նաւ մ'անոր վըրան
Ճամբայ ելաւ. շատ հաճելի
Կու դար այն տեսարան,
Սակայն յանկարծ մեծ փոթորիկ
Մովուն վըրայ կ'ելլէր:

Խաւարն կօխեց; ու հոյն սաստիկ
Արեք կը վերջընէր:

- 2 Միայն մէկ անձ չըսարսփած՝
Նոյն նաւակին մէջ կար.
Այն ալ գըլուխը վար դըրած՝
Հանդարտ կը քլնանար:
«Ոհ, վարդապետ, քու հոգըդ չէ՞»,
Կ'ըսեն, ամենք կ'ընկզմինք.
Շուտով ելիր ու մեզ փրկէ.
Ահա կը կորսուինք:»

- 3 Այն աղաղակն էրբոր լսեց,
Անմիջապէս ելաւ.
Հովերն ու ծովն յանդիմանեց,
Խաղաղութիւն եղաւ:
Կ'ապշին այն ձայնը լըսողներ,
Եւ իրարու կ'ըսեն,
«Այս ո՞վ է որ ծովն ու հովեր
Անոր մտիկ կ'ընեն:»

- 4 Երբ քու նաւակըդ, ով հողիս,
Ընկզմելու մօտ է,
Յայնժամ վախով չըդարհուրիս,
Փրկելիդ աղաղակէ՛:
Այն որ երկինքը կը նստի,
Կարող է քեզ փրկել:
Սաստեղ ամէն փոթորիկի,
Եւ զաւու կեցիր՝ ըսել:

- 5 Յիսուս, սաստէ զօրեղ խօսքովդ
Մեր թշնամիներուն.
Ալ մեզ չըսեն թէ «Աստուծամով
Չըկայ ձեզ փրկութիւն:»
Մեր հոգիին «Բաջլէր» բսէ.
Քու փրկութիւնդ ճաննանք,
Եւ ազատուած ամէն չարէ՛:
Քերզմով ու բախանանք:

Մ-ԴԷ. Ը. 23-27

Թարգ. Elias Riggs

254 ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԷՄԸ

- 1 Ոհ, մերթ ըստուերներն ի՞նչ խոր են,
Կեանքի շաւիղն ի՞նչ դառնաղին.
Վըլսեր ալ երբեմն ուժգնօրէն՝
Մըրկի պէս կոծեն մեր հոգին,
Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
Դէպ ի վէմն որ բարձր է քան զանձն իմ:
- 2 Ոհ, մերթ օրն է ո՛րչափ երկար,
Եւ խոնջ եմ մարմնով բովանդակ.
Սակայն ես տածանք չեմ ըզգար,
Հանգչիմ երբ վէմին շուքին տակ,
Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
Դէպ ի վէմն որ բարձր է քան զանձն իմ:
- 3 Մընալ կ'ուզեմ միշտ, վէ՛մ, քու մօտ,
Այքերս թէ խինդ կամ չիթ ծորեն.

ձամբաս հարթ ըլլայ կամ լեռնոտ,
Անցնիմ ալ մահուան մութ ձորէն:
Յայնժամ թողէք զիս, վեր թռչիմ
Դէպ ի վէճն որ բարձր է քան զանձն իմ:
Սու. ԿԱ. 2 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

255 ԴՈՒՆ ԶԻՍ ԿԸ ՅԻՇԵՍ, ՏԷՐ

1 Փորձանքներուն մէջ անհամար
Եւ փուշերուն մէջ սրբածայր,
Խորհուրդ մ'անոյշ կ'անցնի մըսքէս
Թէ դուն զիս կը յիշես,
Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ի՞նչ վախնամ երբ մտնու ինձ,
Եւ, Տէր, զիս կը յիշես:

2 Կեանքի հոգեր կու գան ուժգին
Մըթազներու արկար հոգին.
Կրնամ անոնց կուրծք պարզել ևս
Մինչ դուն զիս կը յիշես,
Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ի՞նչ վախնամ երբ մտնու ինձ,
Եւ, Տէր, զիս կը յիշես:

3 Թող մութ ամպեր գան ու երթան,
Դժուար կամ հարթ ըլլայ ձամբան,
Հոգ չեմ ընեք, վասան հմ ես
Որ դուն զիս կը յիշես:

Դուն, Տէր, զիս կը յիշես,
Ալ ի՞նչ վախնամ երբ մտնու ինձ,
Եւ, Տէր, զիս կը յիշես:
Ե-Գ. ԺԶ. 60 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

256 ՄԻ ԶԻՋԱՆԻՐ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ

1 Ո՛հ, մի զիջանիր, մի անսար փորձելին,
Զի մէկ զիջանիրն կը տանի ուրիշին.
Մեղքին դէմ կուտէ և կիրքերդ զըսպէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ:
Քու Փրկիչդ կը զըթայ քեզ,
Յաղթութիւն պիտի տայ քեզ,
Կը լըսէ քու աղօթքդ,
Քեզ կը զօրացընէ:

2 Ատէ սրտութիւն և ամէն չար խօսքեր,
Եւ ապականիչ ընկերներ մի սիրեր.
Վախցիր Աստուծոյ, սուրբ անունը յարդէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ:
Քու Փրկիչդ, Լայն:

3 Աստուծոյ պիտի վարձք տայ ամէն յաղթողին,
Յաղթէ հաւատքով փորձութեան և մեղքին.
Արթուն եղիր միշտ, եռանդով աղօթէ,
Նայէ Յիսուսի, որ քեզ զօրացընէ:
Քու Փրկիչդ, Լայն:

257 ՀԵՌՈՒ ԲԱԺԱԿ

- 1 Բմպելիքէ կեանք հեռի,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ.
Ձբդործածենք զինի, օղի,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ,
Մեզ չէ պիտոյ, օգուտ չունի,
Վընասը շատ, վրտանգ ունի.
Հեռո՛ւ, բաժակ, հեռո՛ւ բաժակ,
Հեռո՛ւ, հեռո՛ւ, բաժակ,
- 2 Տես սա արըշիուն ո՛րչափ տո՛ղոյն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ.
Ինկած դեաին, դէմքը դալկուն,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ,
Իր հանդերձներն պատառ, պատառ,
Իր դէմք տըխուր ու խեղագար,
Հեռո՛ւ բաժակ, հեռո՛ւ բաժակ,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ,
- 3 Խեղճ դաւակունք հաց կը մոբան,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ.
Սե ամուսինն թափառական.
Հեռո՛ւ, հեռու բաժակ,
Տունն աւերակ, զբրամ չունի,
Ինքը տըկար, պարտք շատ ունի.
Հեռու բաժակ, հեռո՛ւ բաժակ,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ,

- 4 Ով բարեկամք, ա՛լ չըխըմենք,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ.
Սե ո՛չ գընենք, ո՛չ վաճառենք,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ,
Ժուժկալութիւնն թէ ընդունինք,
Փորձութիւնն խկ կ'աղատինք,
Հեռո՛ւ բաժակ, հեռո՛ւ բաժակ,
Հեռո՛ւ, հեռո՛ւ բաժակ,
Ա-ւ-լ. ԻԳ. 29.32 Թարգ. Յ. Յ. Լիւ՛նսնն

258 ՅԱՂԹՈՂԻՆ ԱՐՄԱՆԵՆԻՆ

- 1 Հայր, ճամբադ ինձ սորվեցուր,
Փորձութեան այս ժամանակն
Այնպէս անցընել ցուցուր
Որ առնեմ կենաց պլուակն,
Յաղթողին արմաւենին
Յայնժամ տուր որ ձեռքս առնեմ,
Սե սրբոց ու հրեշտակաց հետ
Սս նոր երգն երգեմ,
- 2 Սիրտս սիրով թող լեցընէ
Երկնային քաղցր Աղաւնին.
Չար կերքերս դաղընցընէ,
Որ յաղթեմ ամէն մեղքին,
Եաղթողին արմաւենին, Խայն:

- 3 Ձիս խաղաղութեամբ լեցուր,
 Փոթորիկը հանդարտի.
 Գանգատներըս դադրեցուր,
 Թող հոգիս սիրովդ հանգչի.
 Յաղթողին արմաւենին, Լայլի:
- 4 Հրամանովդ սուրբ հրեշտակներ
 Ռոյոբախքս բանակ դընեն,
 Եւ վերէն սիրոյդ աչքերն
 Մինչև վերջը վրաս հսկեն.
 Յաղթողին արմաւենին, Լայլի:

259 ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՌԱՅ

- 1 Ով Քրիստոսի օրհնել ծառան,
 Աղէկ քեզ պատրաստէ,
 Յիսուս Քրիստոս, մեծ առաջնորդն
 Աչքիդ առջին բըռնէ.
 Անոր սիրով լեցուած,
 Աշխարհ ետիդ ձըգած,
 Տէրոջ ձայնին մըտիկ ըլէ.
 Եւ միշտ յառաջ վաղէ:
- 2 Քու Տէրդ ճամբադ կը պատրաստէ,
 Որ անվրտանդ վաղեւս,
 Ինկած ատենդ կը վերցընէ,
 Որ զինք վառաւորես:

Քեզ միշտ կը կերակրէ,
 Վէրքերդ կը բըժըլկէ.
 Քեզի ալ երբ վառքովը գայ,
 Փառաց պըսակ կու տայ:

- 3 Քու Տէր Աստուածդ մեղաւորներն
 Այն օրն պիտի պատժէ,
 Եւ անհնազանդ հետեւողներն
 Փառքէն պիտի զրկէ.
 Ուստի հնազանդ եղիւր,
 Շնորհացը մէջ կեցիր.
 Վարձատրութեան օրն երբոր գայ
 Վարձքդ մեծ պիտի ըլլայ:

Ե՛կէ. 2. 10, 11

260 ՏՈՒՆՍ Է ԵՐԿԻՆՔ

- 1 Օտարական եմ հոս,
 Տունս է Երկինք.
 Փըրկիչըս է Քրիստոս,
 Տունս է Երկինք.
 Երկրիս վըրայ իբաւ
 Վըսանդ կայ, վերտ և ցաւ,
 Բայց վերբ վառք անբաւ.
 Տունս է Երկինք:
- 2 Ունիմ հոս փորձութիւնս,
 Տունս է Երկինք:

Կարճ է սլանդոսութիւնս,
 Տունս է երկինքս,
 Մըրիկն է վայրենի,
 Սակայն շուտով կ'անցնի.
 Ես տունս հասնիմ պիտի.
 Տունս է երկինքս:

3 Ուստի չեմ գանգատիր,
 Տունս է երկինքս.
 Բաժինըս չէ երկիր,
 Տունս է երկինքս,
 Փրկչիս խոստմունքն ունիմ,
 Որ իր աջ կողմ կայնիմ,
 Եւ իր աթոռն նստիմ.
 Տունս է երկինքս:

Եբբ. ԺԱ. 13

Թարգ. Elias Riggs

261 ՀՈՍ ԶԻՔ ՀԱՆԳԻՍ

1 Իբրբ պանդուխտ աշխարհ կը թափառիմ,
 Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
 Իբրբ ճամբորդ երկրի վրայ կը շրջիմ,
 Բայց կ'օրհնելիմ, բայց կ'օրհնելիմ,
 Այգս եմ յառած փառաւոր այն օրուան,
 Երբ մեղք ու ցու պիտի անհետանան.
 Սերտս կը հըրճուի լըսելով Փրկչին ձայն,
 Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ:

2 Հոս նեղութիւնք է վիշտեր խիստ դառն են,
 Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
 Հոս կը թողում բարեկամքըս ամէն,
 Պէտք է երթամ իմ հայրենիքս,
 Ոհ, ո՛րչափ քաղցր է խոստումն Յիսուսին,
 Թէ օրհնեալ են ոյք ի Տէր ննջեցին.
 Արժանացան փառաւոր վիճակին,
 Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ:

3 Իբր անապատ է աշխարհս վշտալից,
 Հոս չիք հանգիստ, հոս չիք հանգիստ.
 Հոս վարած կեանքըս է կեանք մեղսալից.
 Փրկչիս արեւն կը քաւէ զիս
 Ծուռ շարիքէն պիտ' ըլլամ աղատեալ,
 Ծուռ պիտ' երթամ Յիսուսի գերկն լյնալ,
 Հոն պիտ' ըլլամ յաւիտեանըս օրհնեալ,
 Հոն կայ հանգիստ, հոն կայ հանգիստ:

Ա Մհ-յ. ԻԹ. 15

262 ԵՍ ՊԱՆԴՈՒԹՅ ԵՄ

1 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ.
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ.
 Զիս մ'արգիլէր գուն, քանզի կ'երթամ ես,
 Որ միշտ կենաց աղբիւրէն խըմեմ ես,
 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ:

2 Կը ցանկամ ես տեսնել այն փառքը՝
 Ձոր երկնից մէջ միշտ սուրբերն կը վայելեն,
 Այս աշխարհի մէջ ճամբաս շատ մութ է,
 Բայց այն օրհնեալ երկինքը պայծառ է:
 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ:

3 Այն քաղաքը՝ ուր որ կ'երթամ ես,
 Իմ փրկչիս պայծառ լուսովը կը փայլի:
 Հոն ոչ ցաւեր կան և ոչ վիշտեր ալ
 Ոչ արցունքներ, ոչ արտամութիւններ ալ:
 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ:
 Եւ. ԻԳ. 4, Ս-դ. 1, Թ. 12

263 ԵՐԿՆԻՅ ՓԱՅԼՈՒՆ ԴԱՇՏԵՐԸ

1 Շուտով օրերս կ'անցնին կ'երթան.
 Ու ես, որ հոս պանդուխտ եմ,
 Փափաք չունիմ որ միշտ կենամ,
 Քանզի հոս շատ նեղուած եմ:
 Յորդանանու գետին հասանք,
 Կ'անցնին մեր ընկերները:
 Ու մեր զիմաց կը տեսնուին
 Երկնից փայլուն դաշտերը:

2 Ուստի, եղբարք, արթուն կենանք,
 Նայինք մեր Հօրը սուներ:

Փրկչին ձայնին լսող ըլլանք,
 Շահինք մեծ իրկութիւնը:
 Յորդանանու գետին հասանք, Լայն,
 3 Մենք հոս լստեպ ցաւեր կը կրենք,
 Ու մեր սրբտեր խոցուած են:
 Բայց յաւիտեական վայելք
 Մեզի յերկինս պահուած են:
 Յորդանանու գետին հասանք, Լայն,
 Ս-դ. 7.

264 ՊԱՆԴԻՍՏՈՒԹԵԱՆ ԵՐԳ

1 Ել, հողիս, թեւերդ լայն բաց,
 Վերին կոչուել յիշէ:
 Այս կեանքին բաներն ձրգած՝
 Դէպ ի երկինք թռչէ:
 Արեգակ, լուսին, աստղեր,
 Եւ աշխարհս ալ շուտ կ'անցնին,
 Ել, հողիս, արդ դէպ ի վեր,
 Ի կողմն Տէր Յիսուսին:

2 Դետն ի ծովը կը վազէ
 Բընաւ կանգ չառնելով:
 Ես առն դէպ ի երկինք կ'ելլէ
 Ըստեղծողին կամքով:
 Եւ այսպէս Հոգւով ծընածն
 Վեր կ'ելլէ արտօրալով:

Որ տեսնէ փառաց Աստուածն,
Հանգչի հոն ապահով:

3 Ի՞նչ է փառք, հարըստութիւն,
Երբ վեր աչքերս յառեմ.
Փռւճ՝ աշխարհ, մարմին, արեւն,
Անոնց հընարքն կ'ատեմ.
Պանդուխտներ տուն չեն շիներ,
Օտար մարդն առաուն կ'երթայ.
Երբ անցնի լոկ մէկ զերեր,
Կ'ուզէ ելլել ճամբայ:

4 Պանդուխտներ, ալ մի տրտմիք,
Առէք ձեր յաղթանակն,
Շուտ ձեր Տէրը սիրելիք,
Ձեզի կու տայ պըսակն.
Քիչ ատեն համբերելով՝
Ձեր վայելքն ալ կը արուի.
Ու ցաւերն հոս թողելով՝¹
Հանգչիք ծոցն Յիսուսի:

Փիւ. Գ. 14

265 ՅԱԻԺՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ

1 Ո՞ր կայ հանգըստութիւն
Յոգնած, արբամած հոգւոյն.
Ունայն է ծովը դայն փնտռել
Կամ մինչ բուռն քալել:

2 Աշխարհըս չըկընար
Երջանկութիւն մեզ տալ.
Կեանք չէ՝ այս կեանքն ապրիլ միայն,
Ո՛չ ալ մեռնիլ՝ այս մահն:

3 Այս արտասուաց ձորէն
Անդին կեանք կայ նորէն.
Այն չըլափուիր տարիներով.
Լեցուն է սուրբ սիրով:

Ուրիչ մահ մ'ալ կու գայ,
Որուն վախճան չըկայ:

Ոհ, ի՛նչ ցաւեր դառն, անվախճան,
Երկորդ մահուան մէջ կան:

5 Աստուած, Տէր դրթութեան,
Շընորհքդ թափէ մեր վրան,
Որ մենք փախինք այն մահուանէ,
Ու չըզատուինք քեզմէ:

ԵՔ. Դ. 9-11

266 ՅՆՆՈՒՄՈՎ ՎԱԶԵՆՔ

1 Մենք ցընծումով, ցընծումով միշտ վազենք,
Մինչ սուրբերուն փառաւոր տեղն ելլենք.
Տէր Յիսուսի ձայնն լըսենք ու ցընծանք,
Եւ ցընծումով, ցընծումով քովն երթանք:

Կարճ է ճամբան, շուտ պիտի վերջանայ,
Մեր տունը միշտ Աստուծոյ քովն ըլլայ.
Տէր Յիսուսով փրկութեան, ոհ, հասնինք,
Հոն ցընծումով, ցընծումով միշտ հանգչինք:

2 Մեզմէ առաջ գացողներ շատ եղան,
Եւ մեզ ալ հոն տեսնելու կը ցանկան,
Որ Գառնուկին քաղցրածայն երգ երգենք,
Միշտ ցնծումով, ցնծումով դայն օրհնենք:
Քաղցրը ձայներ ականջիս կը հասնին,
Փըրկեալներուն քընաբներն կը լսուին.
Սուրբ հրեշտակաց մեղեդին կը լրսենք,
Հոն ցնծումով, ցնծումով կը վազենք:

3 Մահը շուտով թէեւ մեզ հոն տանի,
Չը վախնալով վեր ելլենք Յիսուսի.
Գերեզմանին մէջ անոր պէս պառկինք,
Եւ ցնծումով անոր հետը ննջենք:
Սուրբ յարութեան առաւօտը ելլենք,
Մահն յաղթըւած, խափանուած ալ տեսնենք,
Սուրբ երկնային քաղաքին մէջ շքինք,
Հոն ցնծումով, ցնծումով բընակինք:
Ք ԿԵ. Ե. 1, 3

267 ԵՐԿՆԻՅ ՃԱՄԲԱՆ

1 Մենք երկնից ճամբան զըրտած ենք,
Տէր Յիսուս անոր լոյսն է.

Յորեկուան ու գիշերուան մէջ
Մեզ պիտի առաջնորդէ,
Երբ անցնինք ահեղ հոսանքը
Գէպ ի հանգրտեան երկիրը,
Չենք կորսընցընէր շաւիղը,
Զի փրկիչն է մեզի լոյս:

2 Այն որ կատարի այլքը
Շուտ կը ցաւ խաղաղցընելու
Կը ցըրուէ մեր արհաւիրքը,
Այն կընայ հոգին փրկելու
Երբ անցնինք, Խայն:

3 Ով Հոյիւ, առաջնորդէ մեզ,
Մեր ոտքերն չըմոլորին.
Վըրտանդէ դու պահպանէ մեզ,
Որ պահենք միշտ մեր ուղին,
Երբ անցնինք, Խայն:

Յ-ՎՏ. ԺԳ. 2-6 Թարգ. Elias Riggs

268 ՀՐԵՇՏԱԿԱՅ ՈՂՁՈՅՆԸ

1 Իմ տունս է յերկին, հոս յըկայ ինձ հանգիստ,
Արդ Հի՞մ տրանջիմ, երբ յայտնին փորձեր խիստ.
Լըռէ, նրսեմ սիրտ, յուրեղոյն զոր խիթաս՝
Զուղիդ լոկ կարճէ, ի քո տուն մերձեւաս:
Անդ էն զըւարթունք գան իւրեանց զաշնակով,
Բարեա՛ւ գաս, կ'երգեն քաղցրալուր ձայներով:

Կանգնեալ ի բիւրեղ դուռն ոգիք լուսավառ-
նըւագեն ինձ ողջոյն յիւրեանց վնճ բնագաւառս:

- 2 Ինձի համար չէ իմ բարիքս որոնել
Յայսպէ՛ս մի աշխարհ, ո՛չ յոյսերս աստ կերտել:
Քաղաք՝ զայն գիտեմ զոր ձեռք ոչ է հիմներ,
Երկրի փափաքիմ զոր մեղք ոչ է պըղծեր:
Անդէն զլուարթունք, Եւոյն:
 - 3 Փուշեր, տատասկներ թող աճին շուրջ զինև,
Հակիլ յեմ կամիր ես վարդից աստ վերև.
Ես ոչ զիմ բաժին, ո՛չ հանգիստ կը խնդրեմ
Մինչև որ յաւէտ Փրկչին գիրկ զայն գտնեմ:
Անդէն զլուարթունք, Եւոյն:
- Բ Կոր. Ե. 1 Թարգ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐՊԷՅ

269 ԻՄ ՏՈՒՆՍ Է ԵՐԿԻՆՔ

- 1 Իմ տունս է երկինք, հոս չըկայ ինձ հանգիստ,
Արդ ի՞նչ արտնչեմ, երբ հասնին փորձեր խիտ.
Լքուէ, տըխուր սիրտ, թէ գայ իսկ յուեզոյնն,
Ուղիք կը կարճի, շուտ տանի քեզ չօրդ տուն:
Յայնժամ հրեշտակներն գան իրենց դաշնակով
Ողջոյն նըւագել քաղցրալուր ձայներով,
Բիւրեղ գըբանց մէջ ոգիներ լուսավառ.
Կ'երգեն, Բարեաւ գաս այս մեր սուրբ բնա-
գաւառ:
- 2 Ինձի համար չէ իմ բարիքս փնտռել
Մէջ այս աշխարհին, կամ յոյսերս հոս կանգնել:

Քաղաքն այն գիտեմ զոր ձեռքեր չեն հիմներ,
Երկրին փափաքիմ ուր որ մեղք չէ մըտեր:
Յայնժամ հրեշտակներն, Եւոյն:

- 3 Թող շուրջս աճին սուր փուշեր, տատասկներ.
Երկրի վարդից վրայ ես հանգիլ չեմ ուզեր.
Ես ոչ իմ բաժինս, ոչ հանգիստս կը խնդրեմ
Մինչև որ յաւէտ Փրկչին գիրկ զայն գտնեմ:
Յայնժամ հրեշտակներն, Եւոյն:
- Բ Կոր. Ե. 1 Թարգ. Թ. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ

270 ԻՄ ԿԵԱՆՔՍ Է ՔՐԻՍՏՈՍ

- 1 Իմ կեանքս է Քրիստոս,
Եւ ինձ օգուտ է մահ.
Խաշս ինձ կտւ տայ ուրախութիւն,
Բողոք վընաստ է շահ:
- 2 Հոս լով պանդուխտ եմ ես,
Իմ տունս է վերն շինուած.
Ամէն գիշեր վրանս կանգնելով
Օր մ'ալ եմ մօտեցած:
- 3 Ընկերս է Տէր Յիսուս,
Անոր ճամբան կ'ընտրեմ.
Անոր ցաւին մասնակցելով
Ունիմ հըրձուանք վըսեմ:

- 4 Լերանց վրայ արշալոյս
Զորերն կ'արթնցընէ.
Լոյս երկնային աչքիս առջև
Խաւարն կը հալածէ:
- 5 ձամբուս վախճանն է մօտ:
Հանգչիլ ես կ'արտորամ:
Փուճ գանձերով զիս մի փորձէք,
Իմ թագս առնել կ'երթամ:

- 6 Մընամ հաւատարիմ
Միեւ ձայնն փրկչիս ըսէ,
«Ողջո՛յն, զաւակ իմ սիրելի,
Իմ փառքըս ժառանգէ՛»

ՓԷԻ Ա. 21 Թարգ. C. C. Tracy

271 ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԻԻԹԱՐՈՒԹԻՒՆ

- 3 Տըրամած ատենս երբ կարենամ
Իմ անձս Տէրով յանձնել,
Խոնարհ սըրտով կարող ըլլամ՝
Պատժող Աստուածս օրհնել,
Շուտով վըրաս ցընծում կու գայ,
Տըխուր հոգիս կ'ուրախանայ:
- 2 Գըթած փրկչիս ոտքերն ինձալ
Դառն վիշտերով պատած,
Եւ հոն աղօթք ընել ու լսլ
Շատ արցունքներ թափած՝

- Անուշ կու գայ իմ հոգիս,
Զի Տէրն լըող է իմ ձայնիս:
 - 3 Օրհնեալ է ան երբօր կու տայ,
Օրհնեալ՝ երբ ես կ'առնէ.
Սիրով ինձի այցի կու գայ,
Սիրով ալ կը պտտժէ.
Աստուած արդար է և բարի,
Իր կամքը թող միշտ կատարուի:
- Ք Կ. Գ. 2. 10

272 «ՄԻՆՉԵՒ ՈՐ ՏԵՐԸ ԳԱՅՅ»

- 1 Մի դանդաղելը, ով իմ հոգիս,
Քու կեանքդ է կարճ, գործ շատ ունիս.
Ինչ տաղանդներ որ Տէրն քեզ տայ,
Լաւ գործածէ «Դէնչ»- ո՞ր թայս:
- 2 Թէ նեղութիւնք դէզ դէզ կ'ընն,
Այլ և ահեակ քեզ պաշարեն,
Մի շըւարիբ, հանգիստ մը կայ
Բոլոր սըրտց «Էրբ Տէրը թայս»
- 3 Խոնարհ եղիբ, սակայն արի.
Յառաջ մըղէ քու գործդ բարի.
Քու Տէրդ է մօս, սիրտդ ու ժողովայ,
Քու դիրքդ պահէ «Դէնչ»- ո՞ր թայս:
- 4 Եւ երբ ընթերեաց Տէրունական,
Հաղորդ կ'ըլլաս մարմնայն, արեան,

Պատմէ այլոց՝ սէրն անմտաց,
«Մինչև որ դայ քեզ Տէրն փառաց:»

5 Անոյս շքննն քեզ դառն վիշտեր,
Երբ սիրելիքդ ննջին ի Տէր.
Մահէն անդին անվերջ կեանք կայ,
Կը միանաք «Երբ Տէրը գայ:»

6 Ով անձկալից սիրտս, համբերէ,
Թէև փառաց կառքն յապաղէ.
Կ'անցնին ցաւերդ, վախճան կու գայ,
Բու ոյժդ կրկնէ «Գլխի՛ն՝ որ գայ:»

7 Երբ քու աչք, ոտք, բազուկ, մարմին
Լոյսէ, ուժէ ա՛լ զբկը ին,
Ծոյլին՝ պատիժ, իսկ՝ քեզ վարձք կայ,
Փառաց պըստկ) «Երբ Տէրը գայ:»

Ա. ԿԵ. ԺԱ. 28, ԹՅՊ. ԻԲ. 7, 20

Հեղինակ ՏԻԿ. ՀՌ. ՇՄԱԽՈՆԵԱՆ

273 ԵԿՈՒՐ ԻՆՄԻ

1 Շուրջըս կենաց յուզեալ ծովուն
Լացով իմ աչքըս | կը նա | յի. ||
Բայց ինչ կու գայ մի ձայն սիրուն,
Եւ այն կ'ը | սէ. «Ե | կուր ին | ծի:» ||

2 Կ'ըսէ թէ ո՛ւր նեղեալ հոգւոյս
Հանգստութիւն կը | գտնը | լի. ||

Ոհ, երբ կ'ըլլամ յոգնած, անոյս,
Ի՞նչ քաղցր այն | ձայն, «Ե | կուր ին | ծի:» ||

3 Երբոր վախճան կը մտենայ,
Ու սիրտըս շատ կը | զարհու | ըի. ||
Մահուան երկիւղը վրաս կու գայ,
Այն ձայն կ'ը | սէ, «Ե | կուր ին | ծի:»

4 Աշխարհս կ'անցնի, եկուր ինծի,
Երկիրս բընաւ հան | գիտա չու | նի. ||
Աչքերդ գէտ | երկինք վերցոր,
Ես եմ բա | ժինդ, ե | կուր ին | ծի:» ||

5 Ով ձայն գըթած, ով ձայն սիրուն,
Յաւ կամ տաղանայ երբ | վրաս հաս | նի. ||
Տուր խըբախոյս դուն իմ հոգւոյն,
Մեղմով ը | սէ, «Ե | կուր ին | ծի:» ||

ԹՅՊ. ԻԲ. 17

Թարգ. C. C. Tracy

274 ՏԵՐԸ ՄԵՐ ՄԻԱԿ ՄԻԻԹԱՐԻԶԸ

1 Նեղեալ հոգւոյս դուն օգնական.
Երբ տրտմութիւնք իմ վրաս կու գան,
Երբ զիս պատէ ծով նեղութեան,
Քեզի դիմեմ, Յոյս իմ միայն.

2 Կ'ուզեմ ցաւերս քեզի յայտնել,
Չի դուն կարող ես բըժըշկել.

Քու խօսքդ միայն զիս կ'աղափոքե
վըրաս եկած ամէն ջաւէ:

- 3 Բայց երբ իմ ներսըս երկմըտիմ,
«Իմա ես» ըսել երբ վարանիմ,
Ուրախութիւնըս կը հատնի,
Բոլոր իմ յայտըս կը կըտորի:
- 4 Աքդ, ո՞ւր երթամ, Տէր սիրական,
Դուն ես միայն ինձ օգնական.
Հոգիս քեզի կ'ապաւինի,
Յաւոց մէջէն քեզ կը նայի:
- Բ ԿԵՐ. Ա. 3, 4

275 ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԻԽԹԱՐՈՒԹԻՒՆ

- 1 Յիսուս, դուն մեզ մըխիթարէ
Մեր նեղութեանը մէջ:
Աստուած Փըրկիչ, մեզ պաշտպանէ
Մինչև մեր կենաց վերջ:
- 2 Դուն Սուրբ Խօսքովդ ըսիր մեզի,
«Եկէք ինձ, յոգնածներ,
Ինձմէ գրտէք հանգիստ սրբախ,
Թըլուստ ըստեզձուածներս»
- 3 Ո՛վ Տէր Յիսուս, քեզի կու գամ,
Տուր ինձ հանգըստութիւն:

ՄԻԽԹԱՐՈՒԹ. ԵՒ ՔԱԶԱԼԵՐՈՒԹ. 277

Սրտիս ցօւերն քեզ կը բանամ,
Տուր ինձ դուն ցնձութիւն:

- 4 Քեզմէ ուրիշ որո՞ւ երթանք,
Զի դուն ես փրկութիւն.
Քեզի գալով կեանք կը գտնանք
Եւ սուրբ խաղաղութիւն:
- 5 Դուն մեզ օգնէ ի մէջ վշտաց,
Յիսուս, քեզ կ'աղափոքեք,
Որ քու անունդ միշտ գերապանծ
Անդուլ փառաւորենք:
- Բ ԹԻՄ. Բ. 15, 16

276 ԻՆՔ ԿԸ ՀՈԳԱՅ

- 1 Հոգի Տէրովը վրայ ձըգէ,
վըստահէ միշտ իր խօսքին,
Պիտ' տեսնես թէ միշտ ինք է
Ապաստան մը թանկագին:
- 2 Իր ձեռքերն քեզ կը բռնեն,
Կանգնելու քեզ ոյժ կու տան:
Զի Յիսուս իր սիրածներն
Կը պահէ միշտ անասան:
- 3 Այս երկինք ու այս երկիր
Թող անցնին ու չիք դառնան:

Բայց անբաւ ձըբի շնորհքն իր
Անփոփոխ է յաւիտեան:

- 4 Ով Յիսուս, Տէր բարերար,
- Վէմ անխախտ եղիր մեզ դուն.
- Պիտ՝ ըլլանք քեզմով մենք յար
- Սիօնի պէս հաստատուն:

Ս-չ. ԾԵ. 22 Քարդ. Յ. Ս. Ա. Ի. Բ. Ս. Ա. Ն. Ե. Ա. Ն.

277 ՀՈԳԻ ՏԷՐՈՋԸ ՎՐԱՅ

Հոգդ Տէրովը վրայ ձըգէ,
 Հոգդ Տէրովը վրայ ձըգէ,
 Տէրովը վրայ ձըգէ,
 Հոգդ Տէրովը վրայ ձըգէ:

Ու ան քեզ պիտի խընամէ ու մըխիթարէ:
 Բեզ պիտի խընամէ ու մըխիթարէ,
 Բեզ պիտի խընամէ ու մըխիթարէ,
 Բեզ պիտի խընամէ ու մըխիթարէ:

Հոգդ Տէրովը վրայ ձըգէ,
 Հոգդ Տէրովը վրայ ձըգէ:

Ա ՊԵՊ. Ծ. 7

278 ՏՐՏՄԵԱԼ ՀՈԳԻՈՅՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

- 1 Խաղաղութիւն ըլլայ քեզի,
- Ով վըտալից տըրամեալ հոգի.

Արդ աղաղակդ թող դադարի,
 Եւ արցունքներդ շուտով կըտրի.
 Ահա քեզ զեզ գըտնըւեցաւ,
 Որ վերցընէ կըսկիծդ ու ցաւ:

- 2 Թէև սրտիդ հառայանքէն,
 Դառնակսկիծ սաստիկ ցաւէն
 Սորված են պինդ ապառաժներ
 Ողբերգական եղանակներ,
 Բայց Տէրն վերքերդ կը բրժըչկէ,
 Բոլոր մեղքերդ ալ կը քաւէ:

- 3 Ով մարդ, մեղքով բեռնաւորուած,
 Եկ համարձակ Տէրովդ գըթած.
 Քու ծանրը բեռդ մէկդի ձըգէ,
 Եւ ապաւէնդ Քրիստոս ըրէ.
 Տէրն է փրկիչդ, Ի՛նչ խօսք օրհնած.
 Դուն միշտ սիրէ, օրհնէ զԱստուած:

Ղ. 17-21

279 ՁԱԽՈՐԴՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- 1 Վեր նայէ վեր, սիրելի հայր,
 Թո՛ղ վիշտերդ ձանձրայի.
 Վեր նայէ վեր Յիսուսի միշտ,
 Որ սիրեց մեզ աւելի,
 Վեր նայէ վեր, սիրելի մայր,
 Ոհ, Ի՛նչ մարդասէր Յիսուս:

Կ'ստիպե քեզ որ խնդրես զի՛նք,
Եւ հոգեբոյ մէկդի թողուս:

2 Վեր նայէ վեր, սիրելի հայր,
Մեր այս կեանքն շուտով կ'անցնի:
Բայց անձառ. ցնծում երկնից մէջ
Անցիկալին տեղ կ'ստացուի:
Վեր նայէ վեր, սիրելի մայր,
Թող հոգեբոյ խիստ վշտալի:
Սուրբ սրտով, զերմ աղօթքով մենք
Գանք մէկտեղ յերկինս պետի:

3 Վեր նայէ վեր, սիրելի հայր,
Դէ՛զ ի տունըդ երկնաւոր:
Հոս ամէնքս խաչ կըբած ենք,
Հոն հանգիստ կայ փառաւոր:
Վեր նայէ վեր, սիրելի մայր,
Վեր՝ պայծառ երկնից կամար,
Որ յիշես այն խոստացեալ փառք:
Որու դու ժառանգ եղար:

4 Վեր նայէ, սիրուն կըբայր, վեր,
Օ՛ն, ամէնքս յառաջ երթանք:
Քաղցր հանգիստ փրճառենք երկինքը:
Շուտ կ'անցնի անտի այս կեանք:
Վեր նայէ վեր, սիրելի քոյր,
Քու վերին տունդ բերկրալի:

Հոն աւր կը յուսանք մէկտեղ գալ,
Անվախձան սիրով բնակիլ:

Եւ. ԻԶ. 3 Թարգ. ՄԿՐՏԻԶ Տ. ՔԻՐԷՉՃԵԱՆ

1 Կերպով մը անշուշտ պետի Տէրը հոգայ.
Իմ կերպովս չըլլայ ալ,
Քու կերպըդ չըլլայ ալ,
Բայց Տէրը պետի իր կերպովը հոգայ:
Օ՛ն, Տէրոջը յուսա, պետի նա հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա, պետի նա հոգայ:

2 Յարմար ժամու մէջ պետի Տէրը հոգայ.
Իմ ժամբս չըլլայ ալ,
Քու ժամըդ չըլլայ ալ,
Բայց Տէրը պետի իր ժամուն մէջ հոգայ:
Օ՛ն, Տէրոջը յուսա, պետի նա հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա, պետի նա հոգայ:

3 Մի յուսահատիբ, պետի Տէրը հոգայ.
Ինք ինչ որ խօսած է
Անփրկ պ կատարած է,
Վստահ ըլլանք, Տէրը անշուշտ կը հոգայ:
Օ՛ն, Տէրոջը յուսա, պետի նա հոգայ.
Օ՛ն, Տէրոջը յուսա, պետի նա հոգայ:

4 Օ՛ն, Տէրը ծովուն մէջ ճամբայ կը բանայ՝
 Ինք միշտ յաղթական է,
 Մեզի ալ պաշտպան է.
 «Մեր երգն այս ըլլայ՝ Պիտի Տէրը հոգայ»
 Օ՛ն, Տէրովը յուսա, պիտի նա հոգայ.
 Օ՛ն, Տէրովը յուսա, պիտի նա հոգայ.
 Ս-դ. 11: 5, Մ-դ. 2. 25-34 Թարգ. Elias Riggs

281 ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻԲԸ

1 Գաղտնի իմաստութեամբ Աստուած
 Հրաշքներ կը կատարէ,
 Փոթորիկին վըրայ նըստած՝
 Ամպերն իր կառքն կ'ընէ:
 2 Իր առաջադրութիւնքն անհուն՝
 Հանք են խոր հանճարի.
 Իր գերագոյն խորհուրդն փայլուն
 Ի գործ պիտի դրուի:
 3 Վախկոտ սուրբեր, ոհ, քաջ եղէք,
 Ամպերն երկիւղ կու տան,
 Բայց վախճանին ըսպանեցէք,
 Բարիք պիտի տեղան:
 4 Տըկար այքով ու խորհուրդով
 Դուք Տէրը մի դատէք.
 Խոժոռ նայուածքներուն ներքեւ
 Փըպիտ պիտի տեսնէք:

5 Խորհուրդն ամէն ժամ կը բացուի,
 Պիտի շուտ հասուննայ.
 Բողբովն թէպէտ դառն գտնուի,
 Ետդիկն անոյշ կ'ըլլայ.
 6 Թերահաւատութիւն մարդկան
 Մուար է, կը խարէ.
 Աստուած ինքն է իրեն թարգման,
 Ամէն բան կը պարզէ:
 Թարգ. Elias Riggs

Ե-՝ ԽԲ. 16

282 ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱԻԷՆԸ

1 Տէք Աստուած մեր ապաւէնը
 Ու մեր զօրութիւնն այ է.
 Ինք մեզ նեղութիւնն տեսնը
 Կ'սփոփէ և կը փրկէ:
 2 Մեր Տէրովը ժողովուրդը
 Թող ուրեմն չըվախնայ.
 Զի իր յոյսը հաստատուած է
 Ճշմարիտ հիման վըրայ:
 3 Թէպէտև գոռան չուրբը,
 Ու ծովուն ալ մէջ ձգուին
 Յախտեանկան լեռները,
 Բայց պիտի ան չըշարժի:
 4 Մեր Սիօնը ապահով է,
 Զի իր Տէրը կը տիրէ:

Եւ իր յոյսը Աստուծոյ է.
Անկէա կ'առաջնորդէ:

5 Եհովայ, Զօրաց Աստուածը
Օգնական մեզի կ'ըլլայ.
Ինքը Յակոբին Աստուածը
Կը տիրէ երկրիս վըրայ:

6 Տէր Աստուած մեր ապաւենը
Ու մեր զօրութիւնն ալ է.
Ինք մեզ ներշնչութեան ատենը
Կ'օգտօք է կը փրկէ:

Ս-դ. ԽԶ. Թարգ. Elias Riggs

283. ԱՅՍՕՐ ԱԻԵԼԻ ՄՕՏ ԵՄ

1 Քաղցրիկ աղոռ խորհուրդ մը կայ,
Կրկին կրկին իմ միտքս կու դայ.
Մօտ եմ երկնից ա՛լ աւելի
Այսօր քան թէ երբեք էի:

2 Մօտ եմ իմ շօրըս երկնաւոր
Ինձ պատրաստած տան փառաւոր.
Մօտ եմ ճերմակ մեծ աթոռին,
Մօտ եմ յասպիս փայլուն ծովին:

3 Կենացս վախճանն ա՛լ աւելի
Մօտ է, որ բոռս ունէս ձրգուի.
Մօտ եմ իմ խայս վար դընելու
Մօտ եմ պըսակս ժառանգելու:

4 Հայր իմ, եղիր ինձ վէ՛մ ամուր,
Տըկար մարմինս դուն զօրացուր.
Զիս քու զօրեղ թեւովդ բռնէ,
Յոյսս անհաստատ դուն հաստատէ:

5 Պատրաստ ըլլամ մահուան գետէն
Անցնիլ էրբոր կանչես մէկէն.
Թերեւս մօտ եմ ա՛լ աւելի,
Քան թէ իմին միտքես կ'անցնի
Հ-ւ-վ. ԺԳ. 11 Թարգ. Տիկ. ՀՌ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

284 ԹԱՂԷ ՊՈՒ ՅԱԻԵՐԴ

1 Թաղէ քու ցաւերըդ,
Ով թերահաւատ.
Սըբբէ արցունքներըդ,
Մ'ըլլար յուսահատ.
Իսլոր արտմութիւնըդ
Պատմէ Յիսուսի.
Շուտով ներդութիւնըդ
Պիտի փարատի:

2 Խաւածք է գիշերը,
Լոյս պիտի ծագի.
Քեզի համար Տէրը
Միշտ հոգ կը տանի
Խընդրէ իր արեւը,
Անշուշտ քեզ կու տայ:

Դիմէ անոր քովը,
Գու բեռդ կ'ամբառնայ,

- 3 Բեղի ինք նըպաստ է
Մեծ իմաստութեամբ.
Օգնել միշտ պատրաստ է
Անհուն զըթութեամբ.
Դընտ և տրտմածը
Դուն մըխիթարէ.
Բողոք մընացածը
Տէրովըդ պատմէ:

Ե. Լ. 10

Թարգ. Elias Riggs

285 ԽԱՉԻՆ ՔՈՎ ՏԵՂ ԿԱՅ

- 1 Բեղ համար, ով սըգաւոր,
Խային քով տեղ կայ,
Գու սըբտիգ վիշտերն բոլոր
(Ինք հրաւէր կու տայ)
Հիմա քու փըրկչիդ պատմէ.
Ամէն բան ազատ խօսէ,
Ինք անշուշտ քեղ կը լըսէ.
Խային քով տեղ կայ:
- 2 Մուրըողդ, ոհ, արտորցիբ,
Խային քով տեղ կայ,
Փրկութեան ճամբան զըտիբ,
Երջանիկ ճամբայ.

Ով յոգնած, բեռնաւորուած,
Փորձու թիւններով տանջուած,
Հանգըստեան ևս հրաւիրուած:
Խային քով տեղ կայ:

- 3 Ալ անհոգ ես, մեղաւոր,
Խային քով տեղ կայ.
Յիսուսի դիմէ այսօր,
Ինք միայն կընայ
Գու բոլոր մեղքերդ ներել,
Տարակոյսըդ վերջընել,
Եւ հոգիդ մըխիթարել.
Խային քով տեղ կայ:
- 4 Տես, աղբիւր մը կենդանի,
Խային քով տեղ կայ,
Բաց ինձի է, բաց քեղի.
Ձրխապէս թող դայ
Թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ,
Թէ՛ ծառայ և թէ՛ աղատ.
Մի ըլլաբ դու յուսահատ,
Խային քով տեղ կայ:
- 5 Հարսը և Հոգին կ'ըսեն,
Խային քով տեղ կայ.
Լըսողներն ալ թող պատմեն,
Թող այխարհ գիտնայ
Թէ սիրոյն գանձն է լըցուն,
Եւ ողորմութիւն անհուն

Մասուցուած է ամէնուն.

Խաչին քով տեղ կայ:

Կառ. Ա. 19-22

286 ԱԻԵԼԻ ՄՕՏ ԵՐԿՆԻՑ

1 Մէկ քաղցր վըսեմ խորհուրդ
Շատ հեղ կու գայ ինձի:

Մօտ եմ երկնից այս օր, այս օր
Քան զոր երբեք էի:

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից այս օր, այս օր
Քան զոր երբեք էի:

2 Մօտ եմ իմ հօրըս տանն,
Ուր օթեւանք շատ կան:

Մօտ եմ մեծ աթոռին այս օր,
Մօտ է ոսկի զըրան:

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից այս օր, այս օր
Քան զոր երբեք էի:

3 Մօտ եմ գերեզմանին,
Յաւէս ազատելու:

Մօտ՝ խաչըս ձրգելու այս օր,
Պըսակս իսկ աննելու:

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից այս օր, այս օր
Քան զոր երբեք էի:

4

Փրկիչ իմ, մօտս եղիլը

Երբ խոր ձօրէն անցնիմ:

Զի մօտ եմ ես երկնից այս օր
Քան զոր ես կը խորհիմ:

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից,

Մօտ եմ երկնից այս օր, այս օր
Քան զոր երբեք էի:

Եբր. ՃԱ. 16

Թարգ. ԳԱՅԻՈՍ ՔԷՄԱԼԵԱՆ

287 ՊԻՏԻ ՆԱԾԿԷ ԶԻՍ

1 Երբ յուզուին մըրիկք կենաց իմ,
Վըզողին ծով ու ցամաք,

Ապաստան պիտի փնտռեմ ես

Աստուծոյս թեւերուն տակ:

Կը ծածկէ զիս, կը ծածկէ զիս,

Ոչ մէկ վնաս հոն չըհասնիր ինձ:

Ապահով զիս կը ծածկէ Տէրս

Իր թեւոց հովանոյն տակ:

2

Տառապանք թող յարձակին վրաս,
Միշտ կ'ուղղեմ աչքս ի վեր ես:

2/ի սիրով և ոչ ցասամամբ՝ ինձ
 Կը հասնին անոնք Հօրմէս:
 Կը ծածկէ զիս, Լայն:

3 Յարձակի թող թշնամեաց գունդ,
 Սատանան շանթեր ցանէ.
 Տէրն անոնց հարուածներէն բիւր՝
 Բիւր բերկրանք պիտի հանէ:
 Կը ծածկէ զիս, Լայն:

4 Խաչս առած կենաց մարտին մէջ,
 Մեղքիս կուրծք տալու ատեն՝
 Հայրն վերէն պիտի ճրաման տայ
 Որ հրեշտակք շուրջըս պատեն:
 Կը ծածկէ զիս, Լայն:

Սուր. ԴԱ. 4 թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

288 ԾՈՎ ԿԵՆԱՅ ԳՈՌԱՅ, ՅԻՍՈՒՍ

1 Ծով կենաց գոռայ, Յիսուս,
 Դուն ուղղիչ եղիւր նաւուս.
 Թաւալին մութ ալիքներ,
 Ծածկելով թագուն ժայռեր:
 Կողմնացոյցս եղիւր, Յիսուս,
 Եւ ընթացքն ուղղէ նաւուս:

2 Մօր ձայնին կ'անսայ որդեակ,
 Քու ձայնիդ՝ ովկիան վայրագ:

«Լուս. կեցէք» շեշտիդ իշուտով
 Հնազանդին ալիք վրդով:
 Տէր ծովուց, հըղօր Յիսուս,
 Դուն ուղղիչ եղիւր նաւուս:

3 Սրբ մօտ գամ լոյս եղերքին,
 Պարզըւի առջևս երկին.
 Թէ նաւուս յանկարծակի
 Բուռն յորձանք մ'ալ յարձակի,
 Տէր, լըսեմ ձայնդ բարերար,
 «Ես ուղղիչք եմ, մի վախմար»

Մարի. Դ. 35-48 թարգ. Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

289 ՕՐՀՆԵԱՆ ԳՈՒՆԸ

1 Շատ համարներ սուրբ մատենին
 Մըխիթարեն մեր խեղճ հոգին.
 Բայց կա՞յ արդեօք հաստ մը ա՛յսքան
 Նընորհալի, քաղցր, աննըման,
 Ինչպէս երգեց Սաղմոսերգուն՝
 «Նա քուն կու տայ իր սիրեւոյն»:

2 «Քաղցր երազով ննջէ խաղաղ»
 Մեր սիրելոյն կ'ըսենք յաճախ.
 Բայց երազներ չար վերլստին
 Կը խըռովեն քունն հիւանդին.
 Սակայն խաղաղ կ'ըլլայ իր քուն,
 Երբ «Նա քուն տայ իր սիրելոյն»:

3 Ձերմ ու տաղնայ, երկայն զիշեր,
 Խեղճ հիւանդին ոյժն են մաշեր.
 Բայց Անեղին աչքն անաղօտ
 Ձայն կը հըսկէ մինչ առաւօտ:
 «Հերիք է իմ շընորհքըս քեզ,
 Ձի սիրելըոյս քուն կու տամ ես»:

4 Երբ ես թողումսյս փուճ աշխարհ
 Ու սըլանամ վերին զաւառ,
 Եւ շուրջ մահճիս րսէք դառն լաց,
 Մեղմով ըսէք իմ սիրելեաց,
 Որ ողբալէ դադրին իսկոյն.
 «Ձի նա տըւաւ քուն սիրելոյն»:
 Սուշ: ձի: 2 Թարգ. Վ. Յ. ՅԱԿՈՐԵԱՆ

290 ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵՒ ԱՆՀԱՍՍԱՏ ԲԱՆԵՐ

1 Ով մարդ, հոգեօր, վիշտեօր ունիս.
 Միշտ չեն մընար, չըվըրդովիս.
 Յաւ, նեղութիւն ու տառապանք,
 Աղքատութիւն և դառն տանջանք
 Շուտով կ'անցնին, կ'անհետան,
 Քիչ ատենէն չիք կը դառնան:

4 Ով մարդ, ունի՞ս հարըտութիւն,
 Մ'ուրախանար, չէ մընայուն,
 Ինչք, ըստացուածք, կալուածք ու տուն,
 Ոսկի, արծաթ, զանձեր թագուն

Շուտով կ'անցնին կ'անհետան,
 Քիչ ատենէն չիք կը դառնան:

3 Ով մարդ, ունի՞ս մեղք, չարութիւն,
 Վախցիր, ողբա ծնկան վրայ դուն.
 Ատոնք ձըգէ, ապաշխարէ,
 Տէր Յիսուսի շուտով դիմէ.
 Քանզի զըժոխքն է հաստատուն,
 Անոր տանջանքն է մընայուն:

4 Ով մարդ, դուն նոր սիրտ ըստացա՞ր,
 Եղա՞ր Սրբոյ Հոգւոյն տաճար.
 Սիրէ զԱստուած քո և զընկեր,
 Ուրախութեան երգէ երգեր,
 Քանզի երկնից երանութիւնն
 Ի հաստատուն և մընայուն:

Հ--Է. Բ. 35-39 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

291 ԴՈՒՍՏՐ ՍԻՕՆԻ

1 Դուսաըը Սիօնի, լեր ուրախ,
 Արդ ցնծա, Երուսաղէմ.
 Տես, կու գայ քեզ թագաւորդ,
 Վեհ Իշխան խաղաղութեան:
 Կընէրէ՞: Ովտանա՞, Որդի Դաւթի,
 Քեզ ողջօ՞յն, Արքայ խոնարհ:
 2 Ովտանա՞, Որդի Դաւթի,
 Լեր օրհնեալ ժողովրդեանդ:

Հասասատէ գահդ այժմ յաւէտ,

Ովսաննա՛ քեզ ի բարձունս:

Կբ.՝ Ովսաննա՛, Որդի Դաւթի,
Քեզ ողջո՛յն, Արքայ խոնարհ:

3 Ովսաննա՛, Որդի Դաւթի,
Քեզ ողջո՛յն, Արքայ խոնարհ:
Անասան մընայ միշտ գահդ,

Որդի Հօր յաւիտենից:

Կբ.՝ Ովսաննա՛, Որդի Դաւթի,
Քեզ ողջո՛յն, Արքայ խոնարհ:

Ե. Կ. 1, Կբ. 11 Թարգ. Յ. Թ. ԴԱՅԱՅԱՆ

292 Ա Ր Թ Ն Յ Ի Ր

1 «Արթնցիբ, կ'անցնի գիշերը»
Լերանց վրայէն գոչին դէտերը,
«Երուսաղէ՛մ, շուտ արթնցիր»

Մութն լսեց այս արձագանգը,

Եւ խոր գիշերն ըզգաց հրճուանքը.

«Թաւարն կ'անցնի, Էլէք Կոյսեր...

Փեսան կու գայ, Էլէք:

Լոյսերը վառեցէք.

Ալէլուիա:

Յ'ն, ընթրիքին պատրաստ եղէք,

Որ դուք փառքով հարսնիք մտնէք»

2 Լըսելով դէտին գոչումը՝
Սիրտ Սիսնի ցնծմամբ լեցուն է.

Կանգնի զբարթ բստուերներէն,
Ձի իր Տէրն, որ զի՛նք սիրած է,
Փառքով և յաղթական եկած է.

Լոյս ծագեցաւ, իր աստղն ելաւ.

«Ողջո՛յն, ողջո՛յն քեզի,

Յիսուս Աստուածորդի.

Ալէլուիա»

Յնծմամբ կու գանք, Տէր շնորհալի,

Ընթրիքդ վայել է հանդիսի

Ե. Եբ. 1, 2

Թարգ. C. C. Tracy

293 Մ Ա Ղ Թ Ա Ն Բ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԱՄԱՐ

1 Եկեղեցիդ ընդհանրական

Որ քու սիրոյդ է առարկայ,

Տէր իմ, շնորհքըդ հայրական,

Յուցուր այօօր անոր վըրայ:

Աշակերտներըդ կ'աղօթեն

Մեծ հաւատքով ամէն երկիր.

Իրենց յոյսէն դատարկ չլլին.

Դուն, ով Յիսուս, մեր մէջ կեցիր:

2 Տէր, քու բանիդ խոստումն յիշէ,

Եւ արդ հաճէ զայն կատարել.

Թող Սուրբ Հոգիդ մղի իմ արէ,

Սորվեցնէ ըզքեզ օրհնել:

Բաց մեր աչքերն լոյսին Փրկչիդ,

Ու մեր սիրտերն զարձուր, ուղղէ.

Եւ աղօթող եկեղեցիդ
Թող երջանիկ դար վայելէ :

- 3 Թող տարածուի Աւետարան
Մինչեւ երկրիս ծայրերն հեռու :
Եւ ամէն տեղ լըսուի թող ձայն
Նոյն օրհնութեան և երգերու :
Ժողովուրդներ խիստ վայրենի
Խային առջեւ դան, ժողովին,
Պատիւ տան մեր անյաղթելի
Թագաւորաց Թագաւորին :

Սուլ. 2է. 2, 3, 5

294 ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՅԻՆ ՈՐՆ Է

- 1 Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ
Է միմիայն և անսասան :
Ձի զայն հիմնեց քու Սուրբ Հոգիդ,
Առաջնորդողն ճշմարտութեան :
- 2 Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ
Ձը սրբալիր մինչ յաւիտեան,
Երբ հետեւող է Սուրբ Խօսքիդ,
Եւ անձանօթ է սրտութեան :
- 3 Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ
Քու սուրբ անուամբ է ժողովուած,
Հոն քարոզուի խօսք Սուրբ Իրքիդ,
Մարդկանց պատուէր հոն չէ մըտած :

- 4 Ով Տէր, քու սուրբ եկեղեցիդ
Քաղքի անուամբ չէ որոշուած :
Այլ կատարողն ըզխօսք Փրկչիդ՝
Ան է անոր մէջ հաստատուած :
- 5 Տէր, մեզ պահէ յեկեղեցիդ,
Ի սուրբ փարախ ընտրեալ դասին :
Մեզ հասցունէ քու Սուրբ Հոգիդ
Այն երանեալ յաղթանակին :
- Եփե. Ե. 23, 25, 27

295 ԵԿԵՂԵՅԻՆ ԻՈՅ ՀԻՄՆ

- 1 Եկեղեցին հիմնեալ է
Լոկ Գրիստոսի վըրայ :
Եւ յաւիտեան Տէրովը
Սիրոյն է առարկայ :
Նոյն Տէրն որ ըստեղծեց զայն՝
Փրկել յերկնից իջաւ,
Նոյն Տէրը էր սուրբ հարսը
Արեամբ ծախու առաւ :
- 2 Շատ աղգերէ ընտրեալ է,
Բայց մէկ եկեղեցի :
Մէկ արիւնով փրկուած է,
Մէկ Տէր, մէկ լոյս ունի :
Պարծանքը՝ մէկ անուն է,
Սընունդը մէկ սուրբ հաց :

Մէկ յոյս, մէկ սէր ունի այն,
Եւ մէկ աղբիւր կենաց:

- 3 Իր վիշտն ու տառապանքը
Թէև հոս խիտ դառն են,
Թաւերժական սփոփանքը
Պատրաստ է վերն իրեն:
Պիտի ըլլայ նեղեալը
Հանգիստ և յաղթական,
Եւ, ոհ, ի՛նչ փառաւոր է
Իր քաղցըր ապագան:

- 4 Կ'ելլէ սրբոց աղօթքը՝
«Ն՞՞՞րբ, Ե՞՞՞րբ, Տէր սիրելի,
Պիտի անցնի գիշերը
Եւ առաւօտ ծագի»
Օրհնեալ են այն սուրբերը,
Ըլլանք անոնց նրման,
Եւ ժառանգենք անոնց հետ
Փառք յաւիտենական:

Ա Կ-ր. Գ. 11

Թարգ. C. C. Tracy

296 ԵՐԳ ԶԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ

- 1 Ով Տէր փրկիչ, Հովիւ հովուաց,
Դուն որ Գըլուխ ես ոլխարաց,
Աղերսելու կու գանք քեզի,
Յաջողութիւն տաս այս հովուի:

Զինք խրախուսէ և պաշտպանէ,
Ազատ լինի փորձութենէ:
Հակէ գառանց, հովուէ հոգիք,
Մինչև ցըմահ լինի մարտիկ:

- 2 Երբ պաշտօնեայք զայս ձեռնադրեն,
Եղիւր ներկայ, և երկինքէն
Սրբէ, օրհնէ տըկար ծառադ,
Մընայ անբիժ և անարատ:
Զինք խրախուսէ, Եւ՛յն:

- 3 Անոր խղճիւ միշտ ջանալով
Եւ Սուրբ Հոգւոյն անչէ՛ջ ջահով
Եկեղեցիք թող զարգանան,
Խաւար սրտեր ալ լուսանան:
Զինք խրախուսէ, Եւ՛յն:

- 4 Քարոզելովն Աւետարան,
Որ կենարար է Սուրբ Մատեան,
Մահուան ձորէն մինչ չեն անցած՝
Հոգիք մարդկան լինին փրկուած:
Զինք խրախուսէ, Եւ՛յն:

- 5 Հովիւն և այս եկեղեցին
Անյաղթ սիրով զիրար գրկեն.
Լինին լոյս և պերճ օրինակ,
Արժանանան ի յաղթանակ:
Եկեղեցին աւաջնորդէ,
Ազատ լինի փորձութենէ:

Հսկէ դառանց, սիրէ հոգիք,

Մինչև ցրմահ լինի մարտիկ:

Ա ՊԵՊ. Ե. 1-4

297 Ա Ղ Օ Թ Ք

ԱԻՆՏԱՐԱՆԸ ՔԱՐՈՋՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

- 1 Տէր, քաղցրութեամբ վերէն նայէ
Բու քարոզչներուդ:
Անոնց սիրտ տուր, և միշտ ոգնէ
Շնորհքով քու Սուրբ Հոգւոյդ:
- 2 Աղղու ձայնով թող քարոզեն
Աւետարան փրկչիդ:
Բոլոր աշխարհս քեզ դարձնեն,
Մեծնայ եկեղեցիդ:
- 3 Ամէն աղագաց հասկըցընեն
Թէ լոկ Յիսուս փրկիչ
Մեզի համար իջաւ վերէն,
Եւ է մեզաց քաւիչ:
- 4 Ով Տէր, թէ որ հունձքեր շատ կան,
Եւ կան քիչ մըշակներ,
Ոյժ տուր անոնց քարոզութեան,
Ըլլան շատ պաղարեր:
- 5 Փրկիչ Յիսուս, անհուն քու սէր
Ամէն մարդիկ անշնան,

Եւ թող ամէն կըռսապաշտներ

Շուտով քեզի դառնան:

Ե՛՛՛՛. Գ. 11.13

298 ԵՐԳ ԶԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

- 1 Ով Տէր մեր, Սուրբ Աստուած,
Երկնից խումբէն պաշտուած,
Մեր ձայն լսէ:
Յայտ տօն ձեռնադրութեան
Ներկայ լեր ոգնական,
Շունչովդ ալ սրբութեան
Մեզ ներլնչէ:
 - 2 Ետառդ Հոգւովդ օծէ,
Յաջողութեամբ կնքէ
Իր աշխատանքն:
Շնորհքովդ լեցուն սպրի,
Միշտ Յիսուսի նայի,
Եւ եռանդուն լինի
Իր պաղատանքն:
 - 3 Այս պսակն ըլլայ օրհնեալ,
Սիրոյ կապով կասեալ,
Մինչ մահ տուէ:
Շատ հոգիներ փրկուին,
Փայլի եկեղեցին,
Սիւներն հաստատ կանգնին:
Հանդէսն օրհնէ:
- Ա ՏԷՄ. Գ. 1-9

299 ԱԲՐԱՀԱՄԻ ՀԵՏ ԵՂԱՍՆ ՈՒԽՏԸ

ՄՇՏՆՋԵՆԱԻՈՐ Է

1 Ի՞նչ լայն խոստմունք, ի՞նչ փառաւոր՝
Աբրահամի տրուած,
Բերդի և սերունդիդ բոլոր
Պիտի ըլլամ Աստուած։»

2 Այս խօսքն սիրոյ զարմանալի
Դարէ դար կը տեւէ։
Քրիստոս, ուխտին Հրեշտակն, մեզի
Խոստմունքը կը կնքէ։

3 Մեր զաւակներն ինք կ'ընդունի
Սիրոյ բազուկներով։
Իր օրհնութեամբ երանելի
Կ'ըլլան և ազատով։

4 Հաւատարիմ է Տէր Յիսուս,
Ուխտէն մեզ չըմերժեր։
Եւ իր գիրքէն զաւակներնուս
Անունը չըջնիւր։

Ե՛. ԺԷ. 7 Թարգ. Elias Riggs

300 ԱՂԹՔ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1 Ով Հայր Աստուած ողորմութեան,
Հո՞՞ճէ ընել այս երախան

Բուկին շնորհաց ուխտիդ որդի,
Որ քեզ պաշտէ սիրով սրաի։

2 Որդիդ Աստուած, Փրկիչ մարդկան,
Քեզ նըւիրուած այս երախան
Բու արիւնովդ գընուած ըրէ,
Ժողովրդեանըդ հետ խառնէ։

3 Ով Սուրբ Հոգի, սրբացուցիչ,
Որ ես միայն բնութեան մաքրիչ,
Այս երախան սրբէ, մաքրէ,
Նոր սիրտ անոր դուռ պարզուէ։

4 Ով Հայր, Որդի և Սուրբ Հոգի,
Սրբորգութիւն ըսքանչելի,
Մենք գայս քեզի կը նըւիրենք,
Բուկըդ ըրէ, Տէր, կը խնդրենք,
Մարտ. ԺԸ. 14 Հեղ. Գ. Մ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

301 ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԳ

1 Տէր բազմագութ ու ողորմած,
Խնդրենք, սիրոյդ բազուկներով
Այս երախան քեզ նուիրուած՝
Առ, նորոգէ ձըրի շնորհքով։

2 Մեր նախահօրը արմատէն
Ամէնքըս ալ մեղքով ծընանք։

Օտարացանք մեր Աստուծակն,
Ու բարկութեան որդիք եղանք:

- 3 Բայց դուն սիրով ու զըթուփեամբ
Մեղապարտից որորմեցար,
Կատարեցիր անդին արեամբ
Քու ուխտդ, Տէր, որ խոստացար:
- 4 Մեծ խոստմունքներ դուն ես տըւեր
Բարեկամիդ Արբանակին,
Յի որը ազգեր ու լեզուներ
Քու սերունդովդ օրհնելին:
- 5 Ի գործ զըրիւ քու խօսքդ, Տէր,
Ի գործ զըրիւ անհուն սիրով:
Մեզի հասան այս խոստմունքներ,
Ու մեր որդւոցը, Յիսուսով:
- 6 Ուստի այս երախան բերինք,
Հօտիդ մէջ, ով Տէր, ընդունէ:
Մենք ընկ ջրով մրկըրտեցինք,
Դուն քու Հոգւովդ մրկըրտէ:
- 7 Յուցուր անոր ուղիղ ճամբան,
Նոր սիրտ անոր մէջ ըստեղծէ:
Թող կանչուի որդի խոստման,
Դուն միշտ անոր առաջնորդէ:

Մ-բլ. Ժ. 13-16

302 «ԱՍԻԿԱ ԸՐԷՔ ԶԻՍ ՅԻՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

- 1 Շնորհացըդ խօսքը կը լըսեմ
Խոնարհ սրտով և հեղ:
Պատուէրդ պիտի, Տէր, կատարեմ,
Պիտի յիշեմ ըգգեղ:
- 2 Սիրով մարմինդ պարզեւեցիր,
Երկնից հաց, որ ուտեմ:
Ուխտիդ գաւաթն ալ ձեռքս տըւիր,
Որ քեզ Տէր, միշտ յիշեմ:
- 3 Կընամ[՞] մոռնալ Գեթսեմանի,
Կամ հոն տաղնապղ տեսնել
Արեան քրտինքդ սոսկալի,
Եւ քեզ Տէր, չը յիշել:
- 4 Գառն Աստուծոյ, առ Գողգոթա
Երբ աչքըս դարձընեմ,
Ու քեզ տեսնեմ խայիդ վըրայ,
Ի՞նչպէս քեզ չը յիշեմ:
- 5 Ինձի համար կըրած ցաւերդ,
Քանի որ շունչ կ'առնեմ,
Ո՛հ, Տէր Յիսուս, քու գութդ ու սէրդ
Անշուշտ պիտի յիշեմ:

6 Եւ երբ մահկանացու ճամբաս
 Ա՛լ ի՛ր վախճանն գտնէ,
 Երբոր արքայութեամբըդ գաս՝
 Գուն, ով Տէր, զիս յիշէ՛:
 Ա.Կ.Բ. Ժ.Ա. 23-25 Թարգ. Elias Riggs

303 Յ Ի Շ Ա Տ Ա Կ

- 1 Գու սէրդ միթէ մոռնա՞նք, Յիսուս,
 Բը՛նու ալ չըլլէ՛նք.
 Սէրն որ հատուց մեր պարտքն անյոյս
 Եւ որ ի՛րն ի՛նչ մեր մեղք,
 Մոռնա՞նք քու վըշտային կեանքն ևս,
 Աղօթքըդ քրտնալին,
 Յօղով ցօղուած գըլուխդ, որ մեղ
 Պահես միշտ յուսալին:
- 2 Գեթսեմանին կրնա՞նք մոռնալ,
 Եւ ճիգըդ տազնապոտ,
 Երբ լեռն պատեց անեղ խաւար,
 Եւ մարդ չըկար քեզ մօտ,
 Կրնա՞նք մոռնալ փուշէ պըսակ,
 Ամօթն և ապտակներն,
 Երբ դէմդ ելաւ զըժօխք վայրագ,
 Երկիր մերժեց քու սէրն:
- 3 Ո՛հ, քու շնորհաց քաղցը յիշատակ
 Պիտ՛ քաղցըդոյն ըլլայ.

Մեր սրտերուն մինչ ի յատակ
 Դէմքիդ նըկարն ցոլայ,
 Մոռնայ կրնա՞նք կենաց ցնծումն,
 Մոռնալ աշխարհ համայն,
 Բայց չենք մոռնար քու սէրդ անհուն
 Հիմա և յաւիտեան:

Դ.Ա.Ի. Ի.Բ. 19 Թարգ. Ա.Ե. ԻԳ.ՆԱՏԻՈՍԵԱՆ

304 ՀԱԳՈՐԴՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԸ

- 1 Փրկիչը սեղան կը կազմէ
 Մեր սօվը կըշտացընելու.
 Եւ մեղաւորներն կը կանչէ
 Երկնից կերակուրն ուտելու:
 Ահա սովամահ տեսնելով՝
 Մեզի իր մարմինը կու տայ.
 Մեզի համար զոհ ըլլալով՝
 Իր մահը մեր կեանքը կ'ըլլայ:
- 2 Ուստի, եղբայրներ սիրելի,
 Ուրախութիւնով մօտեցէ՛ք.
 Ձեր Տէրն է որ ձեզ կը խօսի,
 «Մարմինըս առէք ու կերէք.»
 Անկեղծ ու խորին զոյնումով
 Այս սուրբ սեղանին մօտենանք.
 Բո՛ւր մեր զործքերն մերժելով՝
 Միայն Յիսուսի հաւատանք:

3 Ով Տէր, դուն մեր մէջ գտնուէ,
 Քու ներկայութիւնըդ ցուցուր.
 Եւ այս քու սեղանըդ օրհնէ,
 Քեզմով մեր սրտերը լեցուր,
 Խօսքիդ համեմատ, կ'ազանենք,
 Մեզի քու Հոգիդ պարգեւէ.
 Եւ մինչ հոս մենք քեզ կը յիշենք,
 Դուն այլ ով Յիսուս, մեզ յիշէ:

Մ-բ. ԺԴ. 22, 23 Թարգ. Elias Riggs

305 ՓԱՓԱՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

1 Սըրընթաց եղևերուի նրման՝
 Որ ջուրերուն վըտակներուն
 Կը փափաքի ի ծարուսթեան,
 Ես այ անձամբ յոյժ կաթողին
 Քեզ կը խնդրեմ, Տէր փրկութեան,
 Լրսէ սըրտիս հառաչանքին:

2 Տենչամ տեսող սուբբ, անարատ,
 Ս՞րբ դամ պիտի ու երեւնամ
 Տէրողս առջևը գրթառատ.
 Սըբոբ կ'ըսեն, Ո՞ւր է Աստուածդ,
 Դիշեր ցորեկ ինձ անընդհատ
 Գառն արտասուք միայն է հաց:

3 Ոհ, կը ցանկամ այն օրերուն,
 Որ սուբբ տաճարըդ կ'երթայի

Ուրախութեամբ յոյժ պատարուն.
 Եւ օրհնութիւն սաղմոսերով՝
 Պահապանիդ յաւէժ անքուն
 Կը ցանկայի միշտ հոգիով:

4 Բայց դուն, անձն իմ, ի՞նչ կը արամիս
 Շատ հոգեբու մէջ ընկղմած,
 Ի՞նչ շարունակ կը տագնապիս.
 Յուսա ի Տէր և ա՛ռ խրախոյս.
 Դեռ ժամանակ քու ձեռքդ ունիս.
 Մի խըռովիբ իբրև անյոյս:

5 Օրհնէ զԱստուած բոլոր սրտով,
 Որ քեզ կարող է բժշկել
 Իբ քաղցը աչքին հայեցուածքով.
 Տէր, ի խորոց սրտիս կ'ըզամ՝
 Սաստիկ փափաք մեծ եռանդով,
 Որ տեսութեամբդ ուրախանամ:

Ս-ը. ԽԲ. 1 Թարգ. Elias Riggs

306 ԻՆՁ ՀԱՃՈՅ ԵՆ ԲՈՒ ՅԱՐԿԵՐ

1 Ի՞նչ հաճոյ են քու յարկեր
 Վերն՝ ուսկից տեղոյ լոյս սէր.
 Վարն իսկ, ուր կայ մեղք ու մահ,
 Ի՞նչ յուսով լի քու սըրահ.
 Սիրտս անձկայ, տենչայ, նուաղի,
 Տէր, տեսնել դէմքդ շնորհայի,

Սրբ պաշտել գայ սուրբ կաճաւ.
Սուրբ Աստուածդ ի սուրբ տաճար:

2 ճնճղուկին խկ երանի՛ր,
Բոյն դըրած մերձ Սեղանի.
Սրանի՛ր բիւր այն սրբոց,
Սիրտք որոց են Հօրդ ի ծոց,
Աղանուոյն պէս թափառելի,
Որ չունէր դադար, վայրիկի,
Սրբ դառնայ անքոյթ քու նաւ,
Հոն գտնէ հաճոյք անբաւ:

3 Այս ըլլայ բաժինըս, Տէր,
Փորձութեանց մէջ իմ ընկերս
Ապահով, մեղքէ ալ դերծ,
Գամ ապրիլ շնորհիւդ քեզ մերձ,
Գու արեւդ իմ ու վաճան,
Պահապանդ իմ և պաշտպան,
Փառք, շքնորհք տաս անպակաս.
Տէր, ցողէ իմ ալ վըրաս:

Սուրբ 2Դ. 1-4 Թարգ. Ա. Մ. ԻՓԵԱՍԻՈՍԵԱՆ

307 ԵՐԳ ՆԱԻԱԿԱՏԻՔԻ

1 Աստուած անհուն, երկնից երկինքն
Է քու բընակարան.
Ի՞նչպէս քեզ տուն կառուցանեն
Տըկար ձեռքեր մարդկան,

Տաճար վրսեմ և փառաւոր
Կարող չենք պատրաստել.
Ոչ ալ խորան քեզ վայելուչ
Կարող ենք նըւիրել:

2 Բայց, երկնաւոր Հայր մեր, հաճէ
Գութով արդ խոնարհել
Հաճէ նըւէրն ընդունելով
Փառքովդ հոս յայտնըւիլ
Հողի խոնարհ և սիրտ կոտրած՝
Է քեզ հաճոյ տաճար.
Տէր, քու շնորհքովդ մեր սիրտն ըրէ
Բընակարան յարմար:

3 Հոս մատուցուած աղօթքը, Տէր,
Ըլլայ միշտ լըսելի.
Մեր փառարանութիւնք ըլլան
Նըման անոյշ խուսկիի
Հոս, Տէր, փրկիչ մեր սիրելի,
Յիշենք քու սէրդ անհուն,
Սւ ձայնակցինք յետոյ երկնից
Ալէլուիաներուն:

Ե՛կէ. Բ. 19-21 Հեղինակ C. C. Tracy

308 ԵՐԳ ՆՈՒԻՐՄԱՆ

1 Ով Եհովա Աստուած, մեր Հայր,
Քեզ կ'աղերսենք խոնարհարար,

Երեսդ մեկի այսօր դարձուր,
Տաճարս այս նոր՝ փառքովդ լեցուր:

- 2 Այս տանըս մէջ ամէն Սուրբ Օր
Պաշտենք ըզքեզ սրտով բոլոր.
Ձերմ աղօթքներ վեր բարձրանան
Անուշահոտ խուսկի նրման:
 - 3 Պաշտօնեաներդ թող այբ բեմէն
Սիրոյդ պատգամն միշտ հաշակեն.
Անառակներն դառնան առ Հայր,
ԸզՏէբն գտնեն սխարք մոլար:
 - 4 Հոս ըսփոփին յուսահատներ,
Մըխիթարուն աղքատ և ծեր.
Հոս մանուկներ մեր սիրասուն
Սորվին յարգել քու սուրբ անուն:
 - 5 Հոս քու Որդիդ մեկի ցուցուր,
Հոս մեր սիրտերն սիրով լեցուր.
Ձեռքոյն կասյոյն խաղաղութեանս
Պահէ ըզմեզ միշտ միաբան:
 - 6 Փառք ի բարձունս, երգ օրհնութեան
Մատուցանենք Երբորդութեան.
Եւ երբ դադրին հոս մեր ձայներ,
Ըզքեզ գողին նոր սերունդներ: Ամէն:
- Բ Մ-ոյ. Զ. 18-21 Հեղ. Տիկ. ՀՌ. ՇՄԱՌՈՆԵԾԱՆՆ

309 Ա Ր Զ Ա Կ Ո Ւ Մ

- 1 Ով Տէր, դարձեալ կ'օրհնենք քու սուրբ անուն
Սրբարանէդ մեր արձակման պահուն.
Անբաւ սիրոյդ մինչ այժմ էնք օրհնարան,
Տուր հաւաստիքը քու խաղաղութեան:
- 2 Հիմա երբ, Տէր, վերադառնանք ի տուն,
Ընկեր ըլլայ մեզ քու խաղաղութիւն.
Մեզ զերծ պահէ մեղքէ, ճամբէ մոլոր,
Թող սրբութեամբ անցնի քու այս Սուրբ Օր:
- 3 Տուր այս կեանքի մէջ քու խաղաղութիւն,
Ոյժ աղկարին, ըսփոփ դառն ցաւերուն.
Երբ վերջանայ կեանքի պայքարն ուժգին,
Մեր հոգիները քովդ յաւերժ հանգչին:
Յ-ԷՏ. Թ. 27 Թարգ. Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ

310 ԵԿԵՂԵՅԻՈՅ ՆԱԻԱԿԱՏԵԱՅ ՀԱՄԱՐ

- 1 Ով Տէր Աստուած Իսրայէլին,
Երկինքն, երկիրն ալ լեցունող,
Երկնից երկինք ամենեւին
Պարունակել քեզ շին կարող:
- 2 Բայց երկնային պարգևներով
Քու տաճարներդ կը զարդարես,
Ու մեր աղօթքը լընկելով
Մարդոց շէնքերն տաճարդ կ'ընես:

- 2 Արդ մենք այս տունը շինեցինք
 Գեղի տաճար նը իրելու,
 Եւ հոս սրտանց կը փափաքինք
 Ներկայութիւնդ վայելելու:
 - 4 Եւ կ'աղաչենք խոնարհ սըրտով,
 Մեր այս նըւէք դուռն ընդունէ:
 Եւ հոս քու տանըդ մէջ փառքով
 Առատ շընորհքըդ տարածէ:
 - 5 Գու տանըդ մէջ դարէ ի դար
 Անթիւ մարդիկ խօսքերդ լըսեն,
 Եւ Սուրբ Հոգւովդ կենդանարար
 Սրտանց քեզի դառնան: Ամէն:
- Բ Պէտ. Բ. 6

311 Ա Ր Ձ Ա Կ Ո Ւ Մ

- 1 Դեռ չարձակուած՝ օրհնէ մեզ, Տէր,
 Տըպաւորէ բանդ մեր մէջ դուռն:
 Վառէ սիրովդ մեր գաղջ սիրտեր,
 Ըրէ մեր կամքը եռանդուռն:
 Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
 Եղիք, Յիսուս, մեր լոյսն անշէջ:
- 2 Կ'անցնի այս օրն, ժամերն ալ իր:
 Դու ամէնուն կ'առնես հաշիւ —
 Դոյզն յաղթանակ շընորհածիր,
 Դըրժուած ուխտեր, անկուտ անթիւ:

- Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
 Եղիք, Յիսուս, մեր լոյսն անշէջ:
 - 3 Պահէ խաղառ ճամբէ մ'ըլոր,
 Միշտ ընթանանք շաւղէդ անամբ:
 Գան մեր անցեալ օրերն բոլոր՝
 Օրհնէ ներքին խաղաղութեամբ:
 Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
 Եղիք, Յիսուս, մեր լոյսն անշէջ:
 - 4 Փա՛ռք թողութեանդ, բայց տուր յաւէտ
 Ուրախութիւն և սուրբ տենչանք,
 Սիրտեր սիրող ու սըրբաւէտ:
 Գեղ նըմանիլ ըլլայ մեր ջանք:
 Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
 Եղիք, Յիսուս, մեր լոյսն անշէջ:
 - 5 Խեղճ, մեղաւոր, տըխուր, աղքատ՝
 Աչքն ամէնուն քեզ կը նայի:
 Տուր գըթութիւն, շընորհք առատ,
 Ով Ամենայն յամենայնի:
 Բոլոր կեանքի, մահուան ալ մէջ
 Եղիք, Յիսուս, մեր լոյսն անշէջ: Ամէն:
- Ե. Կ. 20 Թարգ. Գ. Ե. ԿԻԻԼԵԱՆ

312 ԼՍԻ, ՅԻՍՈՒՍ ԿԸ ԿԱՆԶԻ

- 1 Կը լըսուի Տէրոյք ձայնը,
 «Ո՞վ կ'երթայ այսօր գործել:

Ա՛լ արտերը ճերմրկած են,
 Ժամանակ է այժմ հնձելու
 Եւ Տէրոջը վարձքն առատ է,
 Ինք պիտի հատուցանէ:
 Ո՞վ յօժար է պատասխան տալ
 Ձեռն ահա, Տէր, զիս զրկէ՞ս»

2 Թէ հեթանոսաց երկիրը
 Ձեռն կարող դուն պըտըտիլ
 Խաւարի մէջ նստողները
 Փրկելու՝ ծովէն անցնիլ
 Քու տըգէտ դըրացիները
 Մեղմ կարեկցութեամբ մնտուէ,
 Եւ անոնց՝ Փրկիլիք մեծ սէրը
 Քարողէ և բացատրէ:

3 Թէև հրեշտակաց լեզուովը
 Տէրը չըկրնաս յայտնել,
 Կամ անպատմելի պարգևը
 Պօղոսի պէս քարողել
 Բայց կրնաս պատմել թէ շայրը
 Միածին Որդին տըտաւ,
 Թէ Որդին անհուն սիրովը
 Ամենուն համար մեռաւ:

4 Փրկելու կորսըւածները
 Հրաւիրուած ևս դուն օգնել:
 Ընդունէ հրաւերն, մ՛ըսեր թէ
 «Բան մը չեմ կրնար ընել»»

Քեզ տըրուած Տէրոջը գործը
 Բերկրութեամբ միշտ կատարէ:
 Կանչողին շուտ պատասխան տուր,
 Ձեռն ահա, Տէր, զիս զրկէ՞ս»

Մարտ. Թ. 36-38

313 ՍԻՕՆԻ ԱՐՇԱԼՈՅՍԸ

1 Ով Սիօնի բերկրալից արշալոյսը,
 Թանձրը խաւարը և սուգը կ'անցնին:
 Հիմա մարդոց՝ ցընծութիւնը և յոյսը,
 Կեանք անվախճան մեռելոց կը տըրուին:

2 Ով Սիօնի բերկրալից արշալոյսը,
 Հին դարերու մէջ որ դուշակուցաւ,
 Մարգարէից խօսքին պէս, ահա Կոյսը
 Բեթլէհէմի մէջ Փրկիլը ծընաւ:

3 Գերութեան կը դառնան գերիները,
 Ետապութեանը տունէն կ'ազատին:
 Պատը քակուած է, և հեթանոսները
 Հիմա Հրէից հետ մէկտեղ կը բերկրին:

4 Անապատին մէջ՝ շուշանը և վարդը,
 Ձոր երկրին մէջ կ'երեւին վըտակներ:
 Պատերազմներ դադարած են, և մարդը
 Իր ընկերին դէմ ա՛լ կուր չըհաներ:

5 Ի՞նչ կը լըսենք. հեռուօր կողմները,
 «Փառք Աստուծոյ ի բարձունքս» կ'երգեն.
 Մենք անոնց հետ լըսել տանք մեր ձայները,
 Փառք Աստուծոյ յաւիտեանքս: Ամէն:
 Եւ. ԵԱ. 3 Թարգ. Elias Riggs

314 ԵՏԻՒ ՕՐՈՒԱՆ ՓԱՌՔԸ

1 Թող Սիօնի օրդիւքը
 Ուրախութեամբ ջնձան.
 Պիտի անցնի շարիքը,
 Բարի օրեր կու գան.
 Ահա ետքի օրերը,
 Լերանց գլխուն վըրայ
 Սիօն, Տէրոջը լեռը,
 Պիտի խիստ բարձրանայ:

2 Ազգաց շատ բազմութիւնը
 Անոր պիտի դիմեն.
 «Երթանք Տէրոջը տունը»,
 Մարդիկ պիտի ըսեն.
 «Յիւնիք Տէրոջը լեռը,
 Ինք գինք մեզի յայտնէ.
 Աստուած իր ճամբաները
 Մեզի սորվեցընէ»

3 Մարդիկ իրենց սուրերը
 Խոփեր պիտի շինեն,

Նիզակներուն տէգերը
 Յօռոցներու վօխեն.
 Ոխով եղբարք եղբարց վըսյ
 Պիտի չըյարձակին.
 Պատերազմի արհեստը
 Բընաւ ալ չըսորվին:

4 Ոհ թէ մեր այքն այս յոյսը
 Ի գործ դրուած տեսնէ,
 Եւ Սիօնի սուրբ ըյսը
 Աշխարհ լուսաւորէ.
 Յայնժամ Տէրոջ տաճարը
 Յնձմամբ երկըրպագենք.
 Ա՛լ ցրուեցաւ խաւարը,
 Անոր լուսովն քայլենք:
 Եւ. Բ. 2-4 Թարգ. Elias Riggs

315 ԱԻԵՏԱՐԱՆԻ ՔՐՈՂՁՈՒԹԻՒՆԸ

1 Պատուէր տըւաւ Փրկիչն մարդկան
 Բոլոր իրեն աշակերտաց,
 Որ քարոզեն Աւետարան
 Ամէն երկիր ամէն ազգաց:

2 Զայս պատու իրան դուն միշտ յիշէ,
 Ով Քրիստոսի եկեղեցի,
 Խաչաւ Փրկիչն միշտ քարոզէ
 Անհաւատի, հեթանոսի:

3 Ամէն մարդիկ փրկչին հաւատն,
Անով գտնեն յոյս, փրկութիւն.
Եւ հասկընան թէ նա միայն
Է կեանք, ճամբայ, ճամբատութիւն:

4 Տէր, քու խօսքովդ լուսաւորե
Ամէն մարդիկ բոլոր երկրի.
Բոլոր աշխարհ քեզ ճանաչե
Իբրև մէկ հօտ միոյ Հովուի:

5 Քու սուրբ խոստմունքդ յաւերժական
Մեղաւորներն դարձի բերեն,
Որ բերկրանօք քեզ յաւիտեան
Վերն երկնից մէջ փառաւորեն:

Մ-բ: Ժ. 2. 15

316 Ա Ղ Օ Թ Ք

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1 Զարթիւր, զարթիւր, Այ տիրական,
Շարժե ուժովդ զազգ մարդկան,
Որ զօրութիւնդ աշխարհ տեսնե
Եւ յաղթութիւնդ գովարանե:

2 «Ես Եհովա եմ, Տէր Աստուած,»
Դոչէ թող ձայնդ՝ հեթանոսաց,
Ձայնեդ մեհեանք թող կործանին,
Եւ պիղծ սեղանք թող տապալին:

3 Մարդու արին տ՛լ չըթափուի,
Ունայն զոհեր չըլլան մեղքի.
Որդիք մարդկան տպաւնին
Մեղաւորաց միակ փրկչին:

4 Յոյց զօրութիւնդ, Այ տիրական,
Որ շարութիւնք բնաջինջ ըլլան.
Ճամբատութեանդ լըսն ալ թող գայ,
Որ սըտութիւնն անհետ ըլլայ:

5 Տուր Սիօնին յաջող օրեր,
Յըբուած ազգերն ժողովէ, ոյ Տէր,
Թող մեր աչքերն տեսնեն ապշած՝
Բոլոր աշխարհ մէկ հօտ եղած:

6 Ամենակալ բարի Աստուած,
Ղրկէ շնորհք բոլոր մարդկանց,
Որ ան յաղթէ դիմամարտից,
Տիրէ Քրիստոս, Տէր ամենից:

Եւ. Եբ. 1

317 ԱՍՏՈՒԾՄԷ ՎԱԽՅՈՂՆԵՐԸ ՕՐՀՆԵԱԼ ԵՆ

1 Աստուած, զըթա ու մեղ օրհնէ,
Լոյսն երեսիդ մեր վրայ ծագէ.
Եւ փրկութեան ուղի ճամբան
Թող ամէն ազգ շուտ ճանաչէ:

2 Տէր, քեզ փառք տան ժողովուրդներ,
Ուրախանան, ցնծան ազգեր:

2ի դուն շիտակ պիտի դատես,
Առաջնորդես ազգաց, ով Տէր:

3 Երկիրն պըտուղ պիտի բերէ,
Եւ մեր Աստուածն ըզմեզ օրհնէ:
Եւ աշխահիս ամէն ծայրեր
Պիտի դողան, վախնան անկէ:

Սուշ. Կի: Թարգ. Elias Riggs

318 ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱՆՈՒԻԼԸ

1 Ով Տէր Աստուած արդարութեան,
Արդարութիւնդ տուր Արքային:
Պիտի ընէ նա դատաստան
Եւ իրաւունք ժողովուրդին:

2 Մարդիկ պիտի վախնան անկէ,
Արեւ, լուսին քանի որ կան:
Ազգէ ազգ ալ պիտի տեւէ
Իր զօրութեանը գաւաղան:

3 Պիտի իջնէ անձրեւի պէս՝
Հնձած կտրած խոտին վըրայ:
Երկիր թըջող շաղերուն պէս
Պիտի ցօղէ դեռնի վըրայ:

4 Այն օրն արդարն պիտի ծաղկի,
Իազաղութիւնն ալ միշտ տեւէ:
Տեքամբ ամէն ազգ օրհնբուի,
Ինք յաւիտեան պիտի տիրէ:

5 Անուն փրկչին փառաւորուի,
Չայն յաւիտեան մարդիկ օրհնեն:
Անոր փառքովն Երկիր լեցուի,
Բոլոր ազգերն ըսեն, Ամէն:
Սուշ. ՀԲ.

319 ՓՐԿՁԻՆ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ

1 Տէր, հիմա մեր փրկչին
Արքայութիւնը տուր,
Շուտով Տէր Յիսուսին
Աթոռը բարձրացուր:
2 Զի ինք է միայն արժանի
Նըստիլ աթոռն տիեզերքի:

2 Անհուն արդարութեամբ
Պիտի կառավարէ,
Եւ մեծ խաղաղութեամբ
Մեր վրայ պիտի տիրէ:
Տընանկներուն պիտի խղձայ,
Եւ աղքատաց պիտի գըթայ:

3 Աղօթք անոր համար
Պիտի միշտ մատուցուի,
Անունն ալ անդադար
Պիտի փառաւորուի:
Արքայութիւնն պիտի մընայ,
Մինչեւ ո՞ր ալ լուսին չըլայ:

- 4 Բարեք՝ նրման շաղի,
Առատ պիտի տեղայ.
Եւ շնորհք պիտի թափի
Հնձուած խոտին վըրայ.
Երկրիս պըտուղն պիտի ելլէ,
Ու մեր Աստուածը մեզ օրհնէ:
- 5 Դարձեալ թող հրեշտակներն
Երկրիս վըայ երևնան,
Եւ մահկանացուներն
Թող բարձրաձայն ցնծան.
«Փառք ի բարձունըս» թող երգեն,
Բոլոր երկիրն ըսէ, Ամէն:

Ս-ը. ՀԲ. Թարգ. Elias Riggs

320 ՀԵԹԱՆՈՍՆԵՐԷՆ ԱՂԱՂԱԿ

- 1 Մեղի ողբի ձայն մը՝
Երկրի ծայրերէն,
Սուգի աղաղակ մը
Կու գայ ազգերէն.
Կ'ըսէ, «Եղբայրներ մեր,
Մեղի շուտ եկէք.
Խիստ մեծ են ցաւերն մեր,
Մեղի օգնեցէք.»
- 2 «Մեղքով պինդ կապուած ենք
Ու դատապարտուած.
Մահուան մէջ նստած ենք
Յոյսէ զըրկըւած.

- Մէկ անձ մը չըկայ ալ
Մեզ մըխիթարող,
Ըրած աղօթքնուս ալ
Չըկայ միտք դընող:
- 3 Դուք որ Յիսուսինն էք,
Մեր ձայնն լսեցէք.
Չըբի դուք առած էք,
Չըբի ալ արէք.
ձամբան փրկութեանը
Մեզ սորվեցուցէք,
Մեղքի մեծ դարմանը
Մեզի ճանչցուցէք:
- 4 Անմահ հոգիները
Կրակէն հանելու՝
Բոլոր ձեր ջանքերը,
Արժան է տալու:
Արժաթ և ոսկի ալ
Բընաւ մի խնայէք,
Նաև ձեր անձերը
Կամաւ զոհեցէք.»

Ե. թ. 6, 23

321 «ԵՐԱՆԻ ՁԵՁԻ

ՈՐ ԱՄԷՆ ՋՈՒՐԵՐՈՒ ՔՈՎ ԿԸ ՅԱՆԷՒՔ»

- 1 Առտուն քու սերմը ցանէ,
Կէս օրն և իրիկուն,

Առատ ձեռքով միշտ տարածէ
Կենաց տեղեկութիւն:

- 2 Անշուշտ պիտի բուսնի
Կանանչ ու գեղեցիկ,
Ըլլայ խոտ, հասկ, ցորեն ալ լի,
Հասուն, բերապատիկ:

- 3 Փուճ տեղ դուն չես կրնար
Սուրբ սերմը սերմանել,
Կարող է Տէրը և յօժար
Պրտուղն յառաջ բերել:

- 4 Ուստի ցանէ յուսով
Ըզբանն ճշմարտութեան,
Որ օրն հնձոց փառաց թագով
Երգես երգ ցնծութեան:

Ժող. ԺԹ. 6

322 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՐԳ

- 1 Երկրիս ամէն ծայրերը
Մեղի կ'աղաղակեն.
Մութի մէջ նըստողները
Դառն արցունքով կ'ըսեն,
«Տըւէք մեզի սն լոյսը,
Ահա կը կորսը ինք».
Ճանչնանք մեր մեծ Փրկիչը,
Որ յաւիտեան ապրինք:»

- 2 Հնդկաստանի հովերը
Թող քայքայուեն փրչեն,
Եւ հոտուէտ լեռները
Թող համեմեր բուրեն,
Թէպէտ և ըննութիւնը
Սիրուն է և պայծառ,
Սակայն խեղճ մարդկութիւնը
Ինկած է և թշուառ:

- 3 Դուք որ լուսաւորուած էք
Լուսով մը երկինքէն,
Ճշմարտութիւն սօրված էք
Մեր մարգասէր Փրկչէն,
Կրնա՞ք կենաց ճըրագը
Եղբայրներէն պահել.
Կրնա՞ք մարդոց որդիքը
Անյոյս մահուան մատնել:

- 4 Ոչ, այլ ձեր ունեցածը
Կարօտներուն տըւէք
Եւ ձեր ձըրի առածը
Ձըրի հաղորդեցէք.
Մեծ փրկութեանը լուրը
Փութով թող քարոզուի.
Մեծ փրկութեանը ջուրը
Մարւողներուն արբուի:
5 Ով դուք, երկնից հովերը
Արեւտարան տարէք:

Եւ դուք, ծովու ջուրերը,
 Անոր ճամբայ ըրէք.
 Շուտով երկրիս ծայրերը
 Թող բարձրաձայն ջնձան,
 Կոտրեն բոլոր ազգերը
 Մոլորութեան շղթան:

Գործ. ԺԵ. 9 Թարգ. Elias Riggs

323 ՊԱՏԳԱՄԵ ՅԻՍՈՒՍԻ ՍԻՐՈՅՆ

1 Կ'աւզեմ պատմել հին լուրը
 Վերին կենաց անհուն,
 Տէր Յիսուսի փառացը
 Եւ իր անբաւ սիրոյն,
 Պատմեմ ես այն հին լուրը,
 Զի է հաւատալի,
 Կը հաստատէ իղձերըս,
 Ախորժ և բերկրալի,
 Պատմեմ միշտ այն հին լուրը,
 Թող գործս ըլլայ երկինքը
 Կրկնել հին պատմութիւնը
 Տէր Յիսուսի սիրոյն:

2 Պատմեմ ես այն հին լուրը,
 Ի շատ զարմանալի.
 Միտքէ ձրնած կեղծիքը
 Այնպէս չէ հրաշալի.
 Պատմեմ միշտ այն հին լուրը,
 Ինձ է շատ սիրելի:

Այս է նաև պատճառը
 Որ կը պատմեմ քեզի,
 Պատմեմ, Լայն:

3 Պատմեմ ես այն հին լուրը,
 Յիշելն է քաղցրութիւն.
 Շատ հեղ կրկնել կու տայ ինձ
 Անհուն ուրախութիւն,
 Պատմեմ ես այն հին լուրը
 Անոնց որ չեն լրսած,
 Մեծ փրկութեան պատգամը,
 Սուրբ Գիւրքն ալ չեն տեսած,
 Պատմեմ, Լայն:

4 Պատմեմ ես այն հին լուրը,
 Զի այն որ լաւ գիտէ,
 Ուրիշ լըսողներուն պէս,
 Նորէն լըսել կ'ուզէ,
 Եւ երբ երկնից փառաց մէջ
 Երգեմ նոր երգն սրբոց,
 Ըլլայ այն հին, հին լուրը
 Զոր եմ սիրած վաղուց,
 Պատմեմ, Լայն:

Ս-Ղ. ձԻԵ. 5

324 Մ Ե Մ Ա Ի Ե Տ Ի Ս Ը

1 Թուգայի լերանց վրայովը
 Աւետիս բերող կ'եմէ:

Քաջալերական խօսքովը
Գերի Սիօնին կ'ըսէ,
«Քու Աստուածըդ
Հիմա լուծըդ կը քակէ»:

2 «Վա՛յ, երկարեցա՞ւ զիշերբդ,
Քու ցաւերըդ բազմացա՞ն.
Քաշուեցա՞ն բարեկամներդդ,
Թշնամիք գոռողացա՞ն.
Քաջ լեր հիմա,
Բարիքի օրեր հասան»:

3 Քու արեւդ ահա ծաղած է,
Գիշերուան խաւարն անցու.
Նեղութիւնդ ամբողջ անցած է,
Տէրն քու ազատիչդ եղու.
Փրկութիւնըդ
Լիովին կատարուեցաւ»:

Ս. յ. Ժ. 7

Թարգ. Elias Riggs

325 ԹՈՂ ՎԱՌԻՆ ԱՂՕՏ ՆՐԱԳՆԵՐԸ

1 Կը փայլէ մեր Հօրը գութը
Իր լուսոյ գահէն վերերն.
Բայց պահէն մեղի յանձնած է
Սղերփին վրայ կանթեղներն,
Թող վառին աղօտ ճրագները,
Լոյս զրկեն այեաց մէջէն.

Տատանեալ մարած նա որդ մը
Դուն կընաս փրկել կորստէն:

2 Ոհ, մեղաց գիշերն պատած է,
Ալիքները կը գոռան,
Անձկանօք դիտող աչքեր կան,
Որ եզերքը լոյս տեսնան:
Թող վառին, «-յն»:

3 Արդ, եղբայր, վառէ կանթեղդ,
Նաւորդներն թող հրաւիրուին.
Կը փնտռեն նաւահանդիւարը,
Ոհ, մութին մէջ չըկորսուին.
Թող վառին, «-յն»:

Մ-դ. Ե. 16 Թարգ. ՄկրՏԻԶ Տ. ՔԻՐԷԶՆԱՆ

326 ՍԵՐՄԱՆԵԼ ԵՒ ՀՆՁԵԼ

1 Կը ցանեն իրենց սերմն արչալոյս ծագելէն,
Կը ցանեն կէս օրուան աաքութեանը առեն,
Կը ցանեն ալ մինչև սխրալի իրիկուն,
Կը ցանեն և ի մէջ գիշերուանը մութուն,
Հուսնձքն ի՞նչ պիտի ըլլայ:

2 Կը ցանեն թէ՛ խօսքով, թէ՛ գործքով անգողար,
Ո՛րչափ քաղցը խօսքեր ու գործքեր բարերար
Աստուծոյ օրհնութեամբը կը մըխիթարեն
Մեր սրտերն աշխարհիս փորձութեանց գառն
առեն.

Հուսնձքը անուշ կ'ըլլայ:

3 Կը ցանեն և ոմանք Աստուծոյ պատգամներն,
 Պատուէրներն, խոստուսմներն և ըսպանանա-
 լիքներն.
 Կը յայտնեն Գրխատուի բարի խօսքն փրկութեան,
 Եւ արտերը ճերմակ կ'ըլլան ուր որ երթան.
 Հունձքը հարուստ կ'ըլլայ:

4 Եւ ոմանք ալ անգործ ձեռքերնին կը ծալեն,
 Բայց և այնպէս իրենք ալ սերմեր կը ցանեն.
 Ծուլութեան սերմերէն կը բուսնին դառն ցաւեր
 Եւ հոգեր անօգուտ ու պարտապ զղջումներ.
 Հունձքը արտուով կ'ըլլայ:

5 Թէ՛ մութի մէջ և թէ՛ լոյսի մէջ մենք ցանենք,
 Թէ՛ տրկարութիւնով, թէ՛ դժով սերմանենք,
 Առանձին, բազմութեան հետ, սիրով, բարկու-
 թեամբ,
 Թէ՛ իմաստութիւնով, և թէ՛ անմըտութեամբ,
 Հունձքը ըստոյգ կ'ըլլայ:

Գ-ւ. 2. 7, 8

327 ԱՆԶԵՂԶԻՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ

1 Քաղցրը փրկի մը ունիմ ես երկնից մէջ,
 Թէ և բարեկամք են քիչուոր և արկար,
 Հըզօր և զրթած իմ վըբաս կը հըսկէ ինք.
 Ոհ թէ իմ փրկիլըս քու կինդ ալ ըլլար:
 Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
 Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ:

2 Հայը մը ունիմ որ ինձի պարգեւած է
 Յոյս մը, ոհ, շատ քաղցըր ու երանելի,
 Եւ ինք զիս պիտի շուտ կանչէ իր առջեւը,
 Բայց ո՛ւր էր որ քեզ ալ իմ հետս տանէի:
 Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
 Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ:

3 Ինձ փառասոր և անբիժ հանդերձներ կան՝
 Պատրաստ իմ աչքերս ըզմայլեցընելու:
 Բայց երբոր զանոնք փառաց մէջ վերն հաղնիմ ես,
 Ոհ, քեզ ալ արուէր այն ըզգեւտն հաղնելու:
 Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
 Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ:

4 Խաղաղութիւն մը ունիմ իմ սրտիս մէջ
 Զոր աշխարհասէրք ընձաւ չեն վայելեր.
 Անոր աղբիւրն է մի միայն իմ փրկիլըս,
 Ոհ թէ այս վայելքը քեզի ալ տրուէր:
 Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
 Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ:

5 Տէրն երբդ տնէ քեզ, ուրիշներ փնտուէ դուն,
 Զի ինք նախ ըզքեզ փնտուելու հաճեցաւ.
 Անոնց համար ալ կ'ընդունուի քու աղօթքըդ,
 Ինչպէս իմինս քեզ համար ընդունուեցաւ:
 Սրտէս անդադար այս աղօթքը կ'ելլէ,
 Սիրելիս, որ Աստուածըս իր սէրն քեզ յայտնէ:

328 ԵՐԳ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

- 1 Յիսուս Գրիստոս, քուկղ է միայն
Գործն մեր մեծ փրկութեան.
Դուն խոստացար որ յաւիտեան
Ըլլաս մեզ օգնական.
Բեղ կը խնդրենք մենք միաբան,
Լուսաւորէ դուն մեր ճամբան,
Դարձուր բոլոր աշխարհն քեզի,
Որ քու անունդ փառաւորուի.
Փառաւորուի,
Անունդ փառաւորուի:
- 2 Դուն, ով Յիսուս, առաջ դացիր,
Եւ մեզ ճամբայ բացիր,
Խաչ, նեղութիւն, մահ կրրեցիր,
Ըզմեղ երկինք առիր.
Մենք քայլերուդ թող հետեւինք,
Մեր խաչը միշտ սիրով տանինք.
Երբեք ալ չըյուսահատինք,
Ամէնքս մինչեւ քեզի հասնինք,
Քեզի հասնինք,
Մինչեւ քեզի հասնինք:
- 3 Դուն սցորենի հատին» նրման
Մըտար, Տէր, գերեզման.
Եւ օրհնեցիր աշխարհ համայն
Քու սուրբ խօսքովդ միայն:

Ղրկէ նորէն բոլոր աշխարհ
Նոր ծառաներ փառացդ համար,
Քու գործդ անձամբ յառաջ դուն տար,
Յիսուս Գրիստոս, Տէր բարերար.
Տէր բարերար,
Գրիստոս, Տէր բարերար,
Գործ. Գ. 12

329 Հ Ի Ն Լ Ո Ւ Ր Ը

- 1 Տուր ինձ այն հին, հին լուրը
Վերին անտես իրաց,
Տէր Յիսուսի սիրոյն վրայ,
Եւ իր անհուն փառաց,
Շատ պարզ պատմէ զանոնք ինձ
Իրբև փոքրիկ տղոց,
Բանգի ես շատ տրկար եմ,
Անգոր իմանալու:
Տուր ինձ այն հին, հին լուրը,
Տուր ինձ այն հին, հին լուրը,
Տէր Յիսուսի սիրոյն վրայ,
Եւ իր անհուն փառաց:
- 2 Զայն մեղմ կերպով պատմէ ինձ,
Որ ես լաւ հասկընամ
Զարմանալի փրկանքը,
Իրբև մեզաց դարման.

Եւ շատ անդամ կրկնէ ինձ,
 Չի կը մտնամ դիւրաւ.
 Առաւօտուս ձկանուխ ցօղ՞
 Միջօրէիս կորեաւ:
 Տուր ինձ, Լայն:

3 Շուտով այն հին, հին լուրը
 Հաճէ ինձի պատմել,
 Քանզի իմ մեծ մեղքերս ալ
 Կրնայ Յիսուս քաւել:
 Կրկին կրկին այն լուրը
 Պատմէ եթէ կամիս,
 Որ ինձ վշտաց ատենը
 Մըխիթարի լինիս:
 Տուր ինձ, Լայն:

4 Տուր ինձ այն հին, հին լուրը
 Վախու պատճառ երբ կայ,
 Կամ աշխարհիս սուտ փառքը
 Հրապոյր երբ ինձ ըլլայ:
 Եւ երբ փառաց աշխարհը
 Հոգւոյս վըրայ ծագէ,
 Տուր ինձ այս հին, հին լուրը,
 «Քրիստոս քեզ կը փրկէ»:
 Տուր ինձ, Լայն:

330 ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ԱՂՕԹՔ

- 1 Ո՛վ քաղցը փրկել, հոս գալ հաճէ,
 Որ շնորհք ըրեր այն հարսնիքին.
 Ներկայութեամբ, Տէր, մեզ օրհնէ,
 Ծղիւր հոս ալ մեզ հիւր անգին:
- 2 Տէր, կը խնդրենք, ձիրքդ օրհնութեան
 Այս երկուքին վըրայ հանգչին,
 Եւ բարութիւնըդ անվախճան
 Երջանկացնէ աստ և յերկին:
- 4 Տէր բարերար, առատ շնորհքով
 Լեցուր անոնց ըստեմարան
 Առատութեամբ, ողջութիւնով:
 Տուր սիրտ գովիչ քոյդ բարութեան:
- 4 Այս կեանքն է արեւանջ մէկ ծով,
 Փոթորկալից, վըտանգաւոր:
 Մէկտեղ ապրին միշտ սուրբ վարքով,
 Մինչև հասնին երկինք անդորր:
- 5 Երբ մահը դայ դատէ դանոնք,
 Քակէ այս կապն իւր ցուրտ ձեռօք,
 Թող պատկերիդ յիսուսին ստոնք,
 Դարձեալ միանան քու սուրբ շնորհօք:
 Մարի. ԺԹ. 5, 6

331 ՄԱՂԹԱՆԻ ԱՌԱՍՏՈՒԱՆ

1 Այս ամուլ լըռին, դէսլի դահդ վերին,
Ով կենաց Աստուած, արդ կ'ուղղէ հայցուած:
Գու աջովդ պահէ դառն ցաւէ, հոն,
Կեանքն անոնց միշտ հոս երգ մ'ըլլայ, սաղմոս:

Խճէրճ. Ով Աստուած, յոյսէ մի պըսակ հիւսէ,
Դիր անոնց ճակտին, թող ըրերկրին, ժպտին,
Մի դըրախտ ժպտուն թող ըլլայ այս տուն,
Գաղցը կեանքի ծորան, սուրբ սիրոյ խորան:

2 Երբ ցաւեր ցիրեն, Տէր, տուր ոյժ վերէն,
Թող փարին փրկչին, միշտ նային խաչին,
Յաւերու լուծին տակ թող շըհիւծին,
Այս սիրուն յարկին տէրն ըլլայ Երկին,
Խճէրճ. Ով Աստուած, Լայն:

3 Տունն ըլլայ ցըծուն, սուրբ սիրոյ անուն,
Հոն ծըլին մանկունք, յոյժ բարի դաւկունք,
Լոյսն ըլլան ազգին, վառ գոհարք անգին,
Խունկ ու բոյր սըփուեն ու աշխարհն օրհնեն:

Խճէրճ. Ով Աստուած, Լայն:
Են. Բ. 18 Հեղինակ ՅՈՎ. Հ. ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ

332 Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք

1 Խորհըրդաւոր է այս հանդէս,
Ուր այս ամուլք պարկեշտ ու հեղ

կու դան միմեանց ձեռք տալ յօժար,
Սէր ու խտելով անկեղծաբար,
Գաղցը ըլլայ այդ միութիւն,
Եւ խաղաղ անոնց տուն.
Օ՛ն, մաղթ ենք որ այր և կին
Անբաժան միշտ ապրին:

2 Անոնց գըլխուն կը բոլորի
Նարթա չըքնաց ու ծէրանի.
Սակայն պըսակ Տէրով շնորհքին
Գեղեցկագոյն է և անգին:
Գաղցը ըլլայ, Լայն:

3 Մէկտեղ ապրիլ կը խոստանան,
Ժըպտիլ տըտմիլ միանգամայն,
Այժմ կ'աւելնայ նոր ընտանիք,
Մաղթ ենք անոնց կեանք երջանիկ,
Գաղցը ըլլայ, Լայն:

Ե՛ր. Ե. 28 Հեղինակ Բ. Ե. ԷՒՍԷՐՃԱՆ

333 ՊՍԱԿԻ ԱՂՕԹՔ

1 Տէր, քաղցը աչքով վերէն նայէ
Հարսին ու փեսային.
Ներկայութեամբդ հոս դանըւէ,
Օրհնէք տուր պըսակին:

2 Յիսուս, Գըլուխ մեր ամէնուն,
Ասոնք քեզ կ'աղաչեն,

Դու պարզեւէ յոյս, սէր անհուն,
Որ քեզ մէշտ ծառայեն:

3 Երնէկ անոնց որ միանան,
Տէր, քու սուրբ հրամանով:
Արդ պըսակէ հարսն ու փեսան
Յաւերժ անկան սիրով:

4 Աշխատանքով կենացըս մէջ
Եկեղեցւոյդ օգնեն.
Ու վերն ալ քու լուսովդ անշէջ
Երջանկութիւն վայլեն:

Յ․ Է․ Բ․ 2, 11

334 ԵՐԳ ՏԱՆ ՆԱԻԱԿԱՏԵԱՅ

1 Այս նոր բընակարան,
Հայր բարեգութ,
Բնտիր պարգև մըն է
Չաւակներուդ:

2 Ունիս տուն երկնաւոր
Մեզի պատրաստ,
Նաև աընակ սիրուն
Տըւիր մեզ աստ:

3 Քանի վառի կըրակ,
Սէր ալ վառի:

Տունէս թող մշտահոս
Բարեք ըլլի:

4 Մինչդեռ այս յարկն սիրուն
Կը վայլենք,
Անհուր, անտուն հոգիք
Գութով յլչենք:

5 Յիսուս, հիւր պատուական
Բեթանիայի,
Բարեհաճէ ըլլալ
Հոս հիւր մեղի:

Ս․ Դ․ ձի․ 1 Հեղինակ C. C. Tracy

335 Տ Ո Ւ Ն

1 Ոչինչ են աչքիս աշխարհի հաճոյքներ,
Յաժուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ.
Հոն զիս կ'ողողէ մի հրապոյր երկինքէն,
Զոր խիստ շատեր զուր ուրիշ տեղ կը փնտռեն:
Տուն, տուն, քաղցր իմ տուն,
Յաժուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ:

2 Զուր տեղ կը շողան ճոխութիւնք իմ չորս դին,
Տըւէք, ոհ, ինծի ցած խրճիթս վերըստին.
Տըւէք իմ հըլու թռչուններս սիրական,
Նաև իմ մտքիս, ոհ, հանգիստն աննըման:
Տուն, տուն, քաղցր իմ տուն,
Յաժուկ տանս նըման տեղ երբեք չեմ գտներ:
Ս․ Դ․ ՁԳ․ 10 Թարգ․ Յ․ Թ․ ԳԱՅԱՍԱՆ

336 ԱՍՏՈՒԱԾ ՕՐՀՆԷ ԱՅՆ ՏՈՒՆՆԸ

- 1 Աստուած օրհնէ այն տունը
 Երկնից լուսովն փայլուն,
 Ուր որ անմեղ մանկունք կան
 Դէմքով զլուարթ, սիրուն.
 Աստուած օրհնէ բարի մայրն
 Եւ հայրը սիրելի.
 Տէրն պաշտպանէ այն տունը,
 Եւ չարն վանէ անտի:
- 2 Աստուած օրհնէ այն տունը
 Ուր ինք կը պաշտուի,
 Եւ ուր աղօթք ամէն օր
 Կ'ելլէ նըման խունկի.
 Աւա՛ղ, աւա՛ղ դժբաղդ տան
 Ուր Տէրն է մոռցըւած,
 Ուր Յիսուսի անունը
 Երբեք չէ յարգըւած:
- 3 Աւա՛ղ, աւա՛ղ դժբաղդ տան,
 Դառն վիշտերով արխուր,
 Ուր ոչ յարմար ըզգեստ կայ
 Եւ ոչ ալ կերակուր:
 Աստուած օրհնէ մեր տունը,
 Այս յարկն ընտանեկան.
 Եւ մեր բընակարանը
 Ընէ երկնից նըման:

337 Ն Ո Ր Տ Ա Ր Ի

- 1 Այս նոր տարուան սեռէն, Հայր իմ,
 Ներս անցնելու կը զարանխի.
 Ամէն բան գոց, ծածուկ, մըթ ին
 Եւ անծանօթ ինձ կը թըւին:
- 2 Լի թերութեամբ անցեայն անցու,
 Չոր լիկ յիշելն սրախ տայ ցու.
 Արագ արագ կ'անցնի ներկան,
 Սարսափ կ'ազդէ մութ ապագան:
- 3 Տարուէ տարի եւս աւելի
 Սիրտս կը գտնամ չար, մեղսալի.
 Տըգէտ եմ ես, յիմար, անզօր,
 Իսկ թշնամիս՝ խիտ զօրաւօր:
- 4 Ով Հինաւուրց, անխախտ դու Վէմ,
 Հոգւոյդ քաղցրիկ ձայնն կը լրտւմ
 Թէ ի՛նչպէս լոյսն քու երեսաց
 Յըրուէ խաւարն, վանէ ի բաց:
- 5 Տըկարն ի՛նչպէս կը զօրանայ՝
 Եթէ սրտանց քեզի հաւտայ,
 Եւ թէ օրէնքը մընայուն
 Կ'ընէ տըգէտը իմաստուն:
- 6 Ուստի, Հայր իմ, բունէ ձեռքէս,
 Որ հետեւ իմ ուր զիս ուղղես,

Հաստատ զխնամ մ'չ կեանք, ո'չ մահ,
Ո'չ հրեշտակներ, ո'չ չարին ահ,

7 Ո'չ չարչարանք, ո'չ նեղութիւն,
Ո'չ թշնամեաց իշխանութիւն,
Ո'չ վախ, վրտանդ, սիրելեաց սէր,
Ո'չ ապառնի ներկայ բաներ,

8 Ո'չ բարձրութիւն, ո'չ խորութիւն,
Եւ ո'չ իրաց փոփոխութիւն,
Եւ ո'չ երբեք մի արարած
Կարեն կորզել զիս քո ձեռաց:

Հ--Է. Ը. 28, 35-39 Հեղ. Տէկ. ՀՌ. ՇՄԱԻՈՆԵԱՆ

338 ՏԱՐՈՒԱՆ ՎԱԽՃԱՆԻՆ ՀԱՄԱՐ

ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻԻՒՆ

1 Եկէք մեր ճամբան նորոգենք,
ճամբան ի Սիօն որ կ'երթայ.
Թառաջ վազենք, կանգ ալ չառնենք,
Մինչև որ մեր Տէրն երևանայ,
Անոր բարի կամքը սիրով
Ջանանք անդադար կատարել,
Մինչև կարենանք ապահով
Փրկին սուրբ հանգիստը մըտնել:

2 Այս կեանքն է նրման երազի,
Ոհ, թէ երազողն արթննար.

Տարին օրուան պէս կը թռչի,
Բոպէն թե ունի, չըկենար:
Տարին օրուան պէս կը թռչի,
Մօտ է ահաւոր դատաստան.
Վրճիռն ալ անայլայլելի,
Կա՛մ կեանք եւ կա՛մ մահ յաւ խեան:

3 Արդեօք երբոր մահ ինձ հասնի,
Կրնա՞մ ես երգել յաղթանակ,
Ըսել թէ Հաւատքս պահեցի
Եւ թէ կը մընայ ինձ պրսակ:
Ոհ թէ երբ ձրգեմ այս երկիր,
Տէրոջ քաղցըր ձայնն ինձ ըսէ,
«Իմ ուրախութիւնըս մըտիւր,
Ու իմ աթոռիս վրայ նստէ!»

Ս--Ը. ԽԸ. 14 Թարգ. Elias Riggs

339 Ն Ո Ր Տ Ա Ր Ի

1 Օրերըս չուտ կ'անցնին կ'երթան
Ոստայնանկին կրկոցին պէս.
Արագութեամբ կ'անհետանան
Յոյժ վազանցիկ շոգիի պէս:
2 Ամէն վայրկեան մօտ կը բերէ
Չիս իմ կենացըս վախճանին.
Ամէն քայլ կը մօտեցընէ
Մահուան ու ցուրա գերեզմանին:

3 Ի՞նչ չուտ անցաւ անցեալ տարին,
Թրուաւ, դընաց, անհետացաւ.
Անձն իմ, արդեօք բըր՞օք բարին,
Թէ չարութիւնըդ աւելցաւ:

4 Վա՛յ ինձ, բաղում անգամ մեղայ՝
Ժամերս պայտապ տեղ վատնելով,
Քանքարթագոյց ծառայ եղայ՝
Կըցած բարեքըս չընելով:

5 Ո՛վ Տէր, բրէ ողորմութիւն.
Ինձ սորվէցուր համբել օրերս,
Որ ըստանամ իմաստութիւն,
Քեզ նըւիրեմ բոլոր ժամերս:

Ս-դ. Գ. 12 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱԽՈՆԵԱՆ

340 Ն Ո Ր Տ Ա Ր Ի

1 Հայր մեր, այժմ կը նըւիրենք
Նոր տարին քեզի.
Ինչ որ դուն բաշխես, գիտենք
Այն է միշտ բարի.
Հոս վիճակ մը մընայուն,
Ձերժ ամէն ցաւէ,
Ձենք խնդրեր. այլ քու անուն,
Հայր, փառաւորէ:

2 Ոհ, կարո՞ղ է միտքն մանկան
Բախտը սահմանել,

Խորհուրդով իւր ապագան
Հօրմէն լաւ ընարել:
Յաւէտ բարեքներդ անհուն
Հարկ է միտք բերել,
Եւ ցնծմամբ քու սուրբ անուն,
Հայր, փառաւորել:

3 Տէր, թէ որ մեզի մընան
Այժմու պարգեւներ,
Եւ կամ երկինքէն տեղան
Նոր օրհնութիւններ,
Եւ ինչ ալ այս նոր տարին
Մեզի ընծայէ,
Քու անունըդ պաշտելի,
Հայր, փառաւորէ:

Բ ՕՐ. ԼԱ. 8 Թարգ. C. C. Tracy

341 Գ Ա Ր Ո Ի Ն

1 Տերև, ծաղիկ, նոր կեանք ու սէր
Մեզի բերաւ Գարուն.
Լեռ, ձոր ու դաշտ հընչեն երգեր,
Յնծմամբ են պատարուն.
Թըռչուն, ծաղիկ, ծառ միասին
Բերած են ընծաներ.
Խեղճ սիրտ, ինչո՞ւ մնաս անբաժին,
Չունի՞ս միթէ նըւէր:

Օրհնութիւն, փառք բարձրաձայն,
Այս է քեզ, Տէր, մեր ընծան:
Օրհնութիւն, փառք անդադար
Պարգևելիչ համար:

- 2 Շնորհաց ցօղեր, ոհ, կ'ողողեն
Իմ մեղսալից հոգիս:
Եւ սէր հասի փայլիլ վերէն
Տըխուր, աւեր սրտիս:
Մինչ իր բերքերն կրկիր ձօնէ,
Թռչունն ալ իր կրգեր,
Խեղճ սիրտ, շունկ՞ս մէկ բան գոնէ,
Գարուն քեզ չէ՞ կկեր:
Օրհնութիւն, փառք Խայն:

- 3 Շնչէ, Տէր, սէրբդ տաք, խորունկ,
Իբրև շունչ հարաւին,
Որ դան յառաջ բողբոջ ու խունկ,
Եւ ձօխ արդիւնք դիզու ին:
Եւ երբ ձայնէդ կրկիր ցնծայ,
Ծափեն ձոր և բլրուր,
Թող սիրտս ալ քեզ բերէ ընծայ
Նոր կրգ մը քաղցրալուր:
Օրհնութիւն, փառք Խայն:

Գործ. ԺԳ. 16 Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

342 ԲԱՐԻ ՊԱՐԳԵՒՆԵՐ

- 1 Երթանք հերկենք արտերը,
Ցանենք արդ սերմ ընտիր.
Կ'աճեցրնէ զայն Հայր Աստուած
Ձեռքովը անխրաիր.
Բեղուն կ'ընէ Ան հողն ու ցանք՝
Անոնց տալով ձիւն, սառ.
Մեղմիկ հողեր, շողն արեւին,
Անձրեւը զովարար:
Բոլոր այս պարգևները
Կ'իջնեն մեզ կրկինքէն.
Արդ փառք Տէրով, փառք անդադար՝
Անոր սիրոյն համար:
- 2 Սոսկ ան է ըմտեղծողը
Բոլոր արարածոց.
Ծաղկին կու տայ կրանք ու բոյր,
Ասաղին ալ փայլ ու բոյ.
Անոր կ'անսան կոհակն ու հով.
Ձաղերն ան կը հոգայ.
Յաւէտ մեղ՝ իր որդիներուն
Կու տայ հաց առօրեայ,
Բոլոր այս պարգևները, Խայն:
- 3 Արդ գոհութիւն քեզ, ով Հայր,
Պարգևներուդ փոխան —

Յանքի, հուանձքի, առողջութեան,
 Կեանքի և սնունդի համար,
 Սիրայդ փոխան մեր ընծաներն,
 Հայր, քեզ բերած ենք արդ՛:
 Իսկ Դու մեզմէ կ'ուզես յաւէտ
 Մեր սիրաը շնորհատարաւ:
 Բոլոր այս սլարգեւանքը, Եւր՛:
 Սուր՛ ձեռն: Թարգ. Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ

Իր բազուկը պաշտպանէ ձեզ,
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:
 Տէր ընդ ձեզ, Եւր՛:

4 Տէր ընդ ձեզ մինչև զիրար տեսնենք.
 Տարածէ ձեր վրայ իր սէրը.
 Խափանէ մահուան խայթերը,
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:
 Տէր ընդ ձեզ, Եւր՛:

Ա ՊԵՐ. Ե. 14

343 Տէր ընդ ձեզ

344 Հ Ո Ւ Ն Ձ Ք

1 Տէր ընդ ձեզ մինչև զիրար տեսնենք.
 Խորհուրդովն առաջնորդէ ձեզ,
 Իր փարախը հաւաքէ ձեզ,
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:
 Տէր ընդ ձեզ, Տէր ընդ ձեզ,
 Մինչև վերը ժողովուրդն,
 Մեր փրկիչն ալ տեսնենք,
 Եւ մէկտեղ անոր երկրպագենք:

1 Օրհնենք մենք Տէրն հուանձքին,
 Ձեռք, սիրտ, ձայն միասին
 Թող բարձրանան,
 Լեռ, ձոր երգեն, խրնդան,
 Անտառ. պուրակ թընդան,
 Արտեր իրենց բերքն տան,
 Գետեր ջընծան:

2 Տէր ընդ ձեզ մինչև զիրար տեսնենք.
 Իր թեւոց ներքև ծածկէ ձեզ,
 Մանանայ միշտ պատրաստէ ձեզ,
 Եւ շնորհէ որ վերն զիրար տեսնենք:
 Տէր ընդ ձեզ, Եւր՛:

2 Այո, իր սուրբ անուն
 Չեղմ գահաթեամբ անհուն
 Արդ հրոյսակենք.
 Երբ բարիքներ տեղան,
 Եւ ճոխ է մեր սեղան,
 Յիշենք Տէր Եւր՛վան,
 Եւ զայն օրհնենք:

3 Տէր ընդ ձեզ մինչև զիրար տեսնենք.
 Երբ վըտանդ կամ վիշտ պատէ ձեզ,

3 Օրհնենք մենք Տէրն հուճաքին,
 Զեռք, սիրտ, ձայն միասին
 Թող բարձրանան.
 Արտէն բշտեմարան
 Երբոր բերենք որան,
 Օրհնենք միաբերան
 Տէր Եհովան:

Ե. Բ. 22 Թարգ. Գ. Յ. ԿիիլևԱն

345 ԳԵՂԵՑԻԿ ԶԵՈՒԲԵՐ

1 Գեղեցիկ ձեռքեր փոքրիկ,
 Որ Տէրոյ պատու էր դորձեն.
 Գեղեցիկ աչքեր փոքրիկ,
 Վառուած լուսով երկինքէն:
 Ի՛նչ գեղեցիկ այն ձեռքեր փոքրիկ,
 Որ աէրոյ պատուէր դորձեն.
 Ի՛նչ գեղեցիկ այն աչքեր փոքրիկ,
 Վառուած լուսով երկինքէն:

2 Այդ բոլոր ձեռքեր փոքրիկ
 Թող օգնեն փրկչին փաստին.
 Այդ բոլոր սրտեր փոքրիկ
 Ենոր սիրով թող յուզուին:
 Ի՛նչ գեղեցիկ, Եայն:

3 Այդ բոլոր շրթներ փոքրիկ
 Միշտ փրկչին թող աղօթեն.

Թող քայլն ոտքեր փոքրիկ
 Անոր գրծած շաւիղէն,
 Ի՛նչ գեղեցիկ, Եայն:

4 Ի՛նչ ընել որ կարենան
 Զեր ձեռքեր Տէրոյ համար,
 Զայն ըրէք դուք, զայն միայն,
 Ուժով, սիրով, միշտ յօժար:
 Ի՛նչ գեղեցիկ, Եայն:

Ե. ԵՐ. 7 Թարգ. Ա. Կ. Կիիլ, ՊէնկեԱն

346 ՍԼԻ ՏԱՆ ՄԼՁ

1 Գեղեցիկ ամէն շէնքեր,
 Երբ սէր կայ տան մէջ.
 Զուարթ, սիրուն ամէն գէմբեր,
 Երբ սէր կայ տան մէջ,
 Հոն կայ քաղցրը միութիւն,
 Ճըշմարտ խաղաղութիւն,
 Իսկապէս յաջողութիւն,
 Երբ սէր կայ տան մէջ,
 Սէր տան մէջ, սէր տան մէջ,
 Իսկապէս յաջողութիւն,
 Երբ սէր կայ տան մէջ:

2 Պարզ խըրճիթն է հրճուալից,
 Երբ սէր կայ տան մէջ.
 Զերծ մտանէն յուր կըրից,
 Երբ սէր կայ տան մէջ:

Հոտաւէտ ծաղիկներով

Տես երկիր դրախտի պէս գով,

Կեանք անդորր ու ապահով,

Երբ սէր կայ տան մէջ:

Սէր տան մէջ, սէր տան մէջ,

Կեանք անդորր ու ապահով,

Երբ սէր կայ տան մէջ:

3 Վերն երկինք կը ծիծաղի,

Երբ սէր կայ տան մէջ:

Վարն երկիր սիրով է ինչ

Երբ սէր կայ տան մէջ:

Զով չորերն, անոյշ երգերն,

Եւ ճաճանի ազեղ եթերն,

Տէրն ալ կը հաւնի բարձրերն,

Երբ սէր կայ տան մէջ:

Սէր տան մէջ, սէր տան մէջ,

Տէրն ալ կը հաւնի բարձրերն,

Երբ սէր կայ տան մէջ:

4 Յիսուս, գութըդ ինձ յայտնէ,

Յայնժամ սէր տան մէջ:

«Բուկդ եմ» իմ հոգւոյս ըսէ,

Յայնժամ սէր տան մէջ:

Թող քու լոյսըդ հրաշափառ,

Արեւէն ալ շատ պայծառ,

Փարատէ մէզն ու խաւար,

Յայնժամ սէր տան մէջ:

Սէր տան մէջ, սէր տան մէջ,

Փարատէ մէզն ու խաւար,

Յայնժամ սէր տան մէջ:

Ա Յովն. Դ. 18

ՅԼԷ ՓՈՒՐ ԶԵՌԻՆ

1 Ոհ, փոքր ձեռքերը ի՞նչ կրնան ընել

Տէրովը հաճելի.

Աղքատներուն կրնան օգնել

Եւ թշուառներն մըխիթարել.

Այս շնորհքն ինձի՛ աըրուի:

2 Ոհ, փոքր շրթունքը ի՞նչ կրնան ընել

Տէրովը հաճելի.

Կրնան աղօթք մատուցանել

Եւ քաղցը խօսքեր արտասանել.

Այս շնորհքն ինձի՛ աըրուի:

3 Ոհ, փոքր աչքերը ի՞նչ կրնան ընել

Տէրովը հաճելի.

Կրնան դէպ ի երկինք նայիլ

Եւ Սուրբ Մատեանն կարդալ սորովիլ.

Այս շնորհքն ինձի՛ աըրուի:

4 Ոհ, փոքր սրտերը ի՞նչ կրնան ընել

Տէրովը հաճելի.

Շնորհքով կընան ապաւինել

Յիսուս փրկչին, և զայն սիրել:

Այս շնորհքն ինձի՛ աըբուի:

5 Զեռքեր, շրթունք, սրտեր, երբ միաբան
Տէրոջը հասնելի

Գործեր կատարելու նանան,

Փրկչին շատ սիրելի կ'ըլան:

Այս շնորհքն ինձի՛ աըբուի:

Ժ. Ժ. 1

348 ՓՈՒՐ ԲԱՆԵՐ

1 Փոքրը կաթիլէնէրը

Ի՞նչը կը կազմեն,

Աւազի հատերը

Լեռն ալ կը դիզեն:

2 Փոքրը վայրկեանները

Թէպէտ բան մը չեն,

Բայց անթիւ դարերը

Անոնցմէ կ'ելլեն:

3 Փոքրը յանցանքները

Սիրտն կ'ապականեն,

Եւ շատ մեծ մեղքերը

Անոնցմէ կ'ելլեն:

4 Փոքրը բարիքները

Շատ մարդոց կ'ազդեն,

Եւ սիրոյ խօսքերը

Հոս երկինք կ'ընեն:

Մ. Գ. Ի. 21

349 ՏՂՈՒ ՄՐ ԱՂՈՒԹԻՐ

1 Պըզտիկ տըղու մը սօրվեցուր,
Ով Տէր, աղօթք ընել,

Եւ Սուրբ Հոգիդ ինձի ղըրկէ

Չար սիրտըս նորոգել:

2 Ինկած էակ մը ծնունդէս՝

Քեզի դէմ մեղք ըրի,

Եւ թէ որ դուն ինձի չօգնես,

Հոգիս կը կորսուի:

3 Բայց, Տէր Յիսուս, հըղօր փրկիչ,

Մեղքերըս սրբելու

Մեռաւ, յարեաւ և համբարձաւ

Հոգիս սգատելու:

4 Պըզտիկ տըղաք անոր թող գան

Որ մեղքերնին ներուին:

Չանոնք իրեն սիրով կ'առնէ,

Իրմով միշտ կ'օրհնուին:

5 Որոնք կանուխ զայն կը վնասեն

Անուշտ պէտի ապրին,

Յիսուս անոնց կ'առաջնորդէ

Որ հետը բնակին:

Ա. Թ. Գ. 10

350 ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԴՊՐՈՑ

- 1 Կիրակին մեղք է քունով անցընել:
Ուստի ես կանուխ կ'որոշեմ ելլել:
Այս կանոնն ալ միշտ պահելու ջանամ,
Կիրակի օրուան դպրոցէ՛ն չը մնամ,
Թռչուններն առտուն խնդաղին կ'ելլեն,
Երգելով անտառն կը հրնչեցընեն.
Նըմանող անոնց ինչ^օւ ես չըլլամ,
Կիրակի օրուան դպրոցէն չը մնամ.
- 2 Երբ կու գայ գարուն, կամ փայլուն ամառ,
Ծաղիկներ, պըտուղ, մէ՛կը չուշանար.
Ոնդադար ես ալ փութաջան ըլլամ,
Կիրակի օրուան դպրոցէն չը մնամ,
Աղօթքով՝ չընորհք Տէրո՞յժէն խնդրեմ,
Ու համարս ճշտիւ եռանդով սերտեմ.
Այս բարի կանոնն բնաւ չը մոռնամ,
Կիրակի օրուան դպրոցէն չը մնամ.

Ս-ւ. ճԺԲ. 2է

351 Փ Ա Յ Լ Ի Ն Ք

- 1 Յիսուս կը պատուիրէ մեզ
Որ լուսատու ըլլանք.
Ինչպէս ճըբագ մութին մէջ,
Մենք ալ նոյնպէս լոյս տանք.

- Բոլոր աշխարհ խաւար է,
Ուստի պէտք է փայլիս
Դուն քու փոքր անկիւնիդ մէջ,
Եւ ես ալ իմինիս:
- 2 Յիսուս կը պատուիրէ մեզ
Փայլել իրեն համար.
Դիտէ ինք թէ մեր լոյսը
Աղօտ է թէ պայծառ.
Վերէն ինք կը դիտէ մեզ
Թէ արդեօք կը փայլ^օս
Դուն քու փոքր անկիւնիդ մէջ,
Եւ ես ալ իմինիս:
- 3 Յիսուս կ'որոշէ որ լոյս տանք
Մեր ընկերաց համար.
Քանզի աշխարհիս մէջ կայ
Տեսակ սեռակ խաւար.
Մեղքեր, ցաւեր, վիշտեր կան,
Ուստի պէտք է փայլիս
Դուն քու փոքր անկիւնիդ մէջ,
Եւ ես ալ իմինիս:
- Ս-ԴԲ. Ե. 16 Թարգ. Miss Maria West

352 ՏԵՍ ՄԵՂՈՒՆ ԱՇԽԱՏԱՍԻՐ

- 1 Տես, մեղուն աշխատասէր
Ամառուան մէջ կը գործէ,

Ժողովելու ալ զանց չըներ
Մեղը ամէն ընտիր ծաղկէ:

2 Տես, ի՛նչպէս վալուռն մամով
կը շինէ խորշեր իրեն,
Ու կը լեցընէ վուրթով
իր անոյշ կերակուրէն:

3 Եւ ալ օգտակար գործի
Տամ ջանքերըս անդադար,
Ձի շատ սրողայթ ունի
Սատա՛ան ծոյլին համար:

4 Թող բարի ուսման քներով
Մանկութիւնըս ան ընեմ,
Եւ սրտով ու նախանձով
Միշտ Տէրովը ծառայեմ:

Ա. - 1. 2. 6-8

353 ՅԻՍՈՒՍԻ ՕՐՀՆՈՒԹԻԻՆՆՐ

1 Երբոր կը կարդամ պատմութիւնը սիրուն,
Թէ Յիսուս երկրիս վրայ կը քալէր,
Թէ բարի հովիւի պէս իր դառնուկներուն,
Ինք մարդոց նոյն աչքով կը նայէր:

2 Մանկունքը իր բազուկներուն մէջ կ'առնէր.
(Իր սէրը ի՛նչ քաղցըր ու ձըրի)
Կը խորհիմ՝ երբ ան մանըր աշգաքը կ'օրհնէր,
Ո՛հ թէ ես անոնց մէկն ըլլայի:

3 Ո՛հ թէ անոր ձեռքը զլսուս վրայ դրուէր,
Լըսէի ես այն ձայնն քաղցրութեան,
Եւ ինձի ալ անոնց պէս նայէր երբ կ'ըսէր,
«Թող աըէք որ մանկունք ինձի գանս»

4 Բայց զիս ալ փրկիլը իրեն կը կանչէ,
Որ իր սէրը ես ալ ժառանգեմ.
Ու թէ որ հոս զինքը խնդրեմ ես ի սրտէ,
Շուտով զայն պիտի վերը տեսնեմ:

Մ. - 1. 13-16 Թարգ. Elias Riggs

354 ՓԱՌՔ ՏՈՒԷՔ

1 Դուք կ'ուղէ՞ք հլեշտակ մ'ըլլալ,
Փառք, փառք, փառք աըէք:
Դուք կ'ուղէ՞ք ձեք հոգն մոռնալ,
Փառք, փառք, փառք աըէք:
Արտուտին պէս թեւերով,
Ու գարնան քաղցր երգերով,
Եւ ուրախ զըւարթ սրբտով
Փառք, փառք, փառք աըէք:

2 Թէ որ ձեզ ատէ աշխարհ,
Փառք, փառք, փառք աըէք:
Թէ որ դուք երգէք մինակ,
Փառք, փառք, փառք աըէք:
Թէ որ վիշտ, ցաւ ձեզ գանոյ,
Որ միշտ ամենուն կ'ըլլայ:

Հոն ալ բարութիւն մը կայ.

Փառ.ք, փառ.ք, փառ.ք առւէք:

3 Կայ Միջնորդ մեզի համար,

Փառ.ք, փառ.ք, փառ.ք առւէք:

Իր անհուն սիրոյն համար

Փառ.ք, փառ.ք, փառ.ք առւէք:

Երբ մահուամբ երկինք ելլէք,

Դուք յայնժամ պիտի երգէք

Հրեշտակաց խումբին հետ մէկ.

Փառ.ք, փառ.ք, փառ.ք առւէք:

Սուլ. Ը. 1,2 Թարգ. ԲԱՐՄԱԿ, ՎԱՐԴՈՒԿԵԱՆ

355 ՅԻՍՈՒՍ ԶԻՍ ԿԸ ՍԻՐԷ

1 Տէր Յիսուս զիս կը սիրէ,

Իմ Սուրբ Գիրքըս այս կ'ըսէ,

Ի՞նչ գութով ինք ընդունեց

Փոքր աղջայքը, և օրհնեց:

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս,

Սուրբ Գիրքըս այս կ'ըսէ:

2 Տէր Յիսուս զիս կը սիրէ,

Զիս իրեն կը հրաւիրէ.

Ինք առաւ ինձ կեանք անբաւ,

Երբ իմ սեղըս ինք մեռաւ:

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս:

Սուրբ Գիրքըս այս կ'ըսէ:

3 Տէր Յիսուս զիս կը սիրէ,

Ապահով կ'առաջնորդէ.

Ինք է ինձ Հովիւ բարի,

Իր փառախն զիս կը ասնի,

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս,

Սուրբ Գիրքըս այս կ'ըսէ:

4 Ոհ, թէ ևս ալ զինք սիրեմ,

Միշտ անոր ձայնին լըսեմ,

Միեւեւ վեր փոխադրեմ իմ,

Եւ անոր հետ բընակիմ:

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս,

Ոհ, կը սիրէ զիս,

Սուրբ Գիրքըս այս կ'ըսէ:

Գար. 20

Թարգ. C. C. Tracy

356 ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՏՂԱՅԲ

1 Տէրո՞յ թո՞ռն չըջապատած

Տըղայք կան ըի բաւոր:

- Որոնց մեղքերը են թողուած,
Տեսքով են փառաւոր.
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած:
- 2 Ամբիծ, Տերմակ հանդերձներով
Տես ամէն մէկն հագուած,
Ու յաւիտենական լուսով
Դրախտի մէջ բընակած,
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած:
- 3 Այն երկնային աշխարհն փայլուն
Որո՞ւ ձեռքով եղան,
Ուր որ կայ սէր, խաղաղութիւն,
Ի՞նչ միջոցով մըտան:
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած:
- 4 Փրկչին արինը թափուելով
Անով մաքրուեցան.
Այն սուրբ աղբիւրը բացուելով
ձերմակ, մաքուր եղան:
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած:
- 5 Փրկչին շնորհքը խնդրեցին
Որքան որ հոս կեցան,

- Ու հիմա հոն կը բընակին,
Կ'օրհնեն զայն յաւիտեան:
Կ'երգեն, Օրհնեալ, օրհնեալ,
Օրհնեալ ես, բարձրեալ Տէր Աստուած:
Թ՝ՅԳ. Է. 14

357 ԲԱՐԻ ՀՈՎԻԻՐ

- 1 Ով հօտիդ բարերար ձովիւր,
Ոչխարներդ կը պահես քու քովըդ,
Կը տանիս հոն զանո՞ք սիրովըդ,
Ուր որ երջանիկ կ'ըլլան:
Ձիս ալ առ, կ'աղաչեմ, ով Տէրըս,
Չօրացուր իմ տրկար ոտքերըս,
Ու ներէ իմ անթիւ մեղքերըս:
Որ ես քու գառնուկդ ըլլամ:
- 2 Եւ քեզմէ թէ որ հեռանամ ես,
Անապատն ու լեռներն երթամ ես,
Գայլերէն շատ պիտի վախմամ ես,
Մեծ գող պիտի ունենամ:
Բայց զիս առ, կ'աղաչեմ, ով Տէրըս,
Չօրացուր իմ տրկար ոտքերըս,
Ու ներէ իմ անթիւ մեղքերըս:
Որ ես քու գառնուկդ ըլլամ:
- 3 Իմ ձամբաս թէև շատ երկայն է,
Բայց միշտ քու օգնութիւնդ շերկայ է:

Զիս յողնածըս քու ձեռքդ բռնած է,
 քու քովըդ հանդիստ կ'ըլլամ:

Զիս ալ առ, կ'աղայեմ, ով Տէրըս,
 Զօրացուր իմ տրկար ոտքերըս,
 Ու ներէ իմ անթիւ մեղքերըս,
 Որ ես քու գառնուկդ ըլլամ:

- 4 Ով Յիսուս, թող քալեմ քու քովըդ,
 Ոհ, լուս զիս քու արեւնովըդ,
 իմ հոգիս տար երկինք սերովըդ,
 Որ հոն ապահով ըլլամ:
 Հոն խնամ ես փրկիդ առջևը,
 Տամ քեզի գոհութիւն, պատիւը,
 Զի դուն ես սերելի Հովիւր,
 Ինու բակն յաւիտեան կենամ:
- Թ. 15. Ժ. 27

368 ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ

- 1 Լըսէ իմ ձայն, ով իմ Աստուած,
 Թարմ մանկական սըրտիկըս բաց,
 Որ քաղցը հաս ձաղկի նման
 Ըլլամ բազմաբուբիան:
- 2 Շընորհք տուր ինձ, ով Տէր արդար,
 Եղիւր ինձի միշտ հոգատար,
 Որ առաւօտ և իրեկուն
 Արհնեմ քու սուրբ անուն:

- 3 Պարկեշտ ըլլամ ամէն՝ ատեն,
 Որ ուրիշներ ալ զիս չատեն,
 Սիրեմ ընկերս սրտով մը հեղ,
 Սիրեմ ծընողքս ու քեզ:

- 4 Տուր, ծընողացս ուրախութեան
 Պատճառ ըլլամ ամէն վայրկեան,
 Եւ քեզ ըլլամ բարի որդի,
 Ետանդըդ արժանի:

Սուր. ԿԱ. 1

369 ՊԶՏԻԿ ՏՂՈՒ ՄԸ ՓԱՓԱՔԸ

- 1 Հրեշտակ մ'ըլլալ կ'ուզեմ ես,
 Երկինքը բընակել,
 Թագ մ'ունենալ գլխուս վրայ
 Եւ սուրբ քընար զարնել:
 Այն տեղ փրկիս առջևը
 Յայտնողական երգեր
 Պիտի անոյշ լեզուով մը
 Երգեմ ցորեկ գիշեր:

- 2 Այն երջանիկ երկինքը
 Ողբի մը ձայն չըլլար,
 Եւ չարութիւն գործողը
 Այն տեղ բընաւ չերթար:
 Բայց օրհնութիւնն ու փառքը
 Մագուր և սուրբ սրտով

Պիտի տամ ես Տէրոջը
Անճուն ցընծութունով:

3 Ես յանցաւոր տըղոյ եմ,
Բայց Տէրը կը ներէ,
Եւ իր ձըրի շնորհքովը
Հոգիս պիտի փրկէ:
Ով սիրելի փրկչըս,
Երբ մեռնելու ըլլամ,
Հրեշտակներուն խումբովը
Շիտակ քու քովըդ գամ:

4 Ո՛հ, այն օրհեալ ատեն ես
Հրեշտակ պիտի ըլլամ,
Սրբոց հետ միասին ես
Փրկչիս առջին լցնամ:
Փառք, օրհնութիւն, պատիւը
Անոր մատուցանեմ,
Անթիւ օրեր իր քովը
Գիշեր ցարեկ երգեմ:

Մ-ԳԼ. ԻԱ. 16

360 ՏՂՈՒՆ ԱՂՍԹՔԸ

1 Ով փրկիչ մեր, կ'աղաչենք,
Խեղճ մեղանշական մենք ենք,
Միշտ յիշէ մեզ,
Միշտ սիրէ մեզ,
Ինչպէս խնամքդ կ'ուզենք:

Մեր Թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նըւիրենք,
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Մինչ երկնից մէջ սէրդ գովենք:

2 Դուն գըթած ես, երբոր մենք
Սուրբ ճամբէդ կը մտորինք,
Դուն դարձաւ մեզ,
Եւ ուղղէ մեզ,
Որ ետեւէդ քալենք:

Մեր Թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նըւիրենք,
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ,
Մինչ երկնից մէջ սէրդ գովենք:

3 Տէր, շնորհէ որ, կեանքն անցած,
Քեզ տեսնենք, աթոռդ նըստած:
Հոն օրհնենք քեզ,
Եւ պատուենք քեզ,
Չի ենք քեզմով փրկուած:

Մեր Թագաւորն քեզ կ'անուանենք,
Մեր սրտերն կը նըւիրենք,
Միշտ պահէ մեզ,
Եւ օրհնէ մեզ:

Միշտ երկնից մէջ սէրդ գովենք:

Ե. Խ. 11

Թարգ. 1. F. Pettibone

361 ՈՎ Ս Ա Ն Ն Ա

1 Խնչ սըրտաշարժ երգոց ձայներ
 Կ'արձագանդեն Սաղէմի դաշտէն.
 Խնչ քաղցրանուագ աղաղակներ,
 Որ կը գոչեն Սիւնի բլրէն.
 Փառաբանութիւն երգենք,
 Փառաց ձայներ հընչեցընենք.
 Ովսաննա, Ովսաննա,
 Ովսաննա Գառին Աստուծոյ:

2 Ահա մանկունք ցնծմամբ կ'երգեն
 Ովսաննա Քրիստոս արքային.
 Փրկչին դալուստն կը հռչակեն,
 Եւ փրկութիւն մեղաւորին:
 Փառաբանութիւն երգենք, և այլ:

3 Մեծիա անունն ցնծում տրւաւ
 Ամէն Հրէի, հեթանոսի.
 Ձի իր արեւադր մեղքը վերցու,
 Ուստի երգենք սէրն Յիսուսի:
 Փառաբանութիւն երգենք, և այլ:

Ղ. 13, 14

362 ԱՆՁՆԱՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

1 Տէր Յիսուսին ինչ նըւիրեմ,
 Որ զինքն ինծի արւաւ.

Իմ սէրըս ի՞նչպէս ցուցընեմ,
 Որ ինքն իմ տեղս մեռաւ:

2 Սէրք Յիսուսին կը նըւիրեմ
 Մանկութենէս ի վեր.
 Նըւաստ ընծաս, ես լաւ գիտեմ,
 Բընաւ ինք չանարգեր:

3 Հօգնէ՛՛ Տէր Յիսուսին կու տամ.
 Կարող է փրկելու
 Եւ պահելու, մինչ ես երթամ
 Երեսը տեսնելու:

4 Իմ հօգնէ՛՛ տամ Տէր Յիսուսին,
 Ռոլոր իմ խորհուրդներս,
 Անոր ճշմարտութեան խօսքին
 Նըւիրելով ժամերս:

5 Իմ շնորհակալ տամ Յիսուսին,
 Իրեն հետեւելով:
 Ոհ թէ բոլոր օրերս լեցուին
 Սուրբ, օգտակար գործով:

6 Իմ շնորհակալ տամ նըւիրեմ
 Քեզ, Տէր Յիսուս, շատ չէ.
 Սակայն ինչ որ ունիմ և եմ,
 Ընդունելով օրհնէ:

363 ԵՐԲ ԻՐ ԳԱՆՁԸ

- 1 Երբ իր գանձը, երբ իր գանձը
 Ժողովէ մեր փրկիչը,
 Իր բոյոր սիրելիները,
 Իրեն սեպհական,
 Պատուական քարերու պէս,
 Առտուան աստղերուն պէս
 Փայլելով անոր թագը
 Պիտի զարդարեն:
- 2 Արդարները, արդարները
 Իր արքայութեան մէջ
 Ժողովելով իր աթոռին վրայ
 Պիտի նսանցնէ,
 Պատուական քարերու պէս, Լայն:
- 3 Մանուկները, մանուկները,
 Որ զինքը սիրած են,
 Պիտ' ըլլան իր գոհարները,
 Իրեն սեպհական,
 Պատուական քարերու պէս, Լայն:

Մ-դ. Գ. 17

Թարգ. Elias Riggs

364 Ս Ո Ւ Ր Բ Տ Ղ Ա Յ Ք

- 1 Մութ գետէն անդին կան
 Շատ արդայք փոքրիկ,

- Որ մեղքէ աղատ են
 Հոն միշտ երջանիկ,
 Ամառուան ծաղիկներէն
 Գեր ի վերոյ գեղով՝
 Կը ցնծան ու միշտ կ'երգեն
 Նոր ըսկըսուած փառքով:
- 2 Հոս անոնց աչքերը
 Դառն կը թափէին
 Արտասուք, իսկ վերը՝
 Հիմա կ'ըմայլին,
 Հիմա քաջավարժ մատերն
 Քնարները կը զարնեն,
 Եւ անոնց անոյշ երգերն
 Փրկիչը կը գովեն:
- 3 Զի անոնց ամէնը
 Ինքը հոն ժողովեց,
 Մոլորած ատերն՝
 Ինք զանոնք փնտուեց,
 Ոչ ոսկի և ոչ գոհարք
 Կրնար զանոնք փրկել,
 Իր անգին արիւնն փրկանք
 Տըւաւ Եմամուէլ:
- 4 Այն տըղոց բաժինը
 Ինձ ալ արուեցաւ,
 Կը գովեմ քըրկիչըս,
 Որ իմ տեղս մեռաւ:

Ես անոր արեամբ փրկուած
Պիտի հոս խաչս տանիմ,
Եսքն ելլեմ ու հրեշտակաց
Գասուն հետ խառնըւիմ:

Ղ. 16

365 ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ ԳՈՐԾ ԵՐԿԵՆԻՅ ՄԷՁ

- 1 Երկնից մէջ պիտի գործ ունենան արդաքներ
Ընելու, մէկը թոյլ չը մընար.
Սիրտը սէր կ'ունենայ, միտքը շատ խորհուրդներ,
Ու ձեռաց ըղբայմունք կայ յարմար,
 Պիտի գործ ունենան,
 Պիտի գործ ունենան,
Տըղաքներ պիտի գործ ունենան.
 Այն փայլուն երկրին մէջ,
 Ուր որ լոյս կայ անշէջ,
Տըղաքներ պիտի գործ ունենան:
- 2 Աստուծոյ իմաստուն գործերուն վըրայով
 Պիտի հոն նոր բաներ միշտ սորվին,
Ու երկրիս բարիներն հոն առաջ երթալով
 Ուսուցիչ կ'ըլլան նոր հասնողին,
 Պիտի գործ ունենան, և այլ:
- 3 Եւ ինչպէս որ մեր Հայրը իր սուրբ հրեշտակներն
 Կը զրկէ իր սրգոց օգնելու,

Կարելի է մեզի ալ զրկէ արդաքներն՝
Իր սիրոյն պատգամներն բերելու,
 Պիտի գործ ունենան, և այլ:

Ա Կ. 9

Թարգ. Elias Riggs

366 ԱՂՈԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

- 1 Փառք քեզ, Հայր իմ, որ ինձ աըւիր
Գիշերուան մէջ հանգիստ ընաիր.
Տըւիր նաեւ արեւդ պայծառ.
Որ կը ծագի ինձի համար:
 - 2 Հայր իմ, փառք քեզ, որ դուն ունիս
Անհուն սէր և խնամք առ իս.
Եւ գեղեցիկ ըրիր զայլաբոհ
Ինձ շըմանող արգոց համար:
 - 3 Օգնէ ինձ որ ես կատարեմ,
Հայր իմ, առ քեզ իմ պարտքս ամէն.
Ըլլամ աղին և բարետիրտ,
Ուր իշներուն չըլլամ ես բիրտ:
 - 4 Ինչ որ ընեմ, գործեմ, խաղամ,
Օգնէ ինձ որ բարի ըլլամ.
Որչափ մեծնամ, ըլլամ սիրուն,
Հայր իմ, քեզի և ամենուն:
- Ս. 5

367 ՄԵՐ ՕՐԵՐԸ ԿԱՐՃ ԵՆ

- 1 Տէր-ջը սէրն անհուն
Իրմէ վախցողներուն՝
Կը նըմանի մօր մը սիրոյն
Իբ մէկ հատիկ որդւոյն:
- 2 Ի՛նչ կարճ են մեր օրեր՝
Նըման խոտի ծաղկին.
Երբ կը փըւեն սաստիկ հովերը,
Շուտով կը թառամին:
- 3 Ողորմութիւնքդ մեծ են,
Բընաւ վախճան չունին.
Եւ սերունդէ սերունդ՝ ամէն
Խոստմունքդ կը կատարուին:

Ե. Ի. 6-8

368 ԿԵՆԱՅ ՈՒՆԱՅՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱԽԷՆԸ

- 1 Ով Տէր, դուն ես մեզ ապաւէն,
Յոյս և ասպար ամէն ասեմ.
Երկիրս, աշխարհ՝ դեռ չըւտեղծուած՝
Յաւիտենից դուն ես Աստուած:
- 2 Դուն մարդն փոշի կը դարձընես,
«Մարդոց ուղիք, դարձէք» կ'ըսես:

Քանզի առջիդ հազար տարին
Նըման է երէկուան օրին:

- 3 Զանոնք բոլոր անյայտ կ'ընես,
Կ'ըլլան շուտ մը երազի պէս.
Առտուն ազուօր ծաղիկ կու տան,
Բայց իրիկունը կը չորնան:
- 4 Մարդիկ քու ոյժքդ չեն ճանչնար,
Ով Տէր, քեզմէ ալ չեն վախնար.
Մեր օրերուն թիւն սորվեցուր,
Ու երկնային հանճար մեզ տուր:
- 5 Ետաւաներուդ թող երեւնայ
Քու գործդ, և փառքդ յայտնի ըլլայ.
Տէր, թող քու լոյսդ մեզի ծագէ,
Դուն մեր ձեռաց գործերն օրհնէ:

Ս-դ. Դ. Թարգ. Elias Riggs

369 «ՀՈՍ ՄՆԱՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԶՈՒՆԻՆՔ»

- 1 Այս աշխարհիս ունայնութիւն
Խաբեց, ոհ, ի՛նչ մեծ բազմութիւն.
Զըլլայ մենք ալ անով խարտիճ.
Հոս մընայուն քաղաք չունինք:
- 2 Ազահութեան չար ծընունդներ՝
Ասելութիւն, նախանձ ու հեռ,
Մեկդի ձըղենք, հեռու փախչինք.
Հոս մընայուն քաղաք չունինք:

- 3 Ամէն ինչ որ շահինք հոս մենք,
Անող մարդոց բարիք բնենք.
Գանձ գիշերու թող չըբարդինք.
Հոս մընայուն քաղաք չունինք:
- 4 Օ՛ն, ցնծումով զէպ ի երկինք
Գալենք. ա՛ն է մեր հայրենիք,
Թէ որ հաւատք ու սէր ունինք.
Հոս մընայուն քաղաք չունինք:
- 5 Բարի, խոհեմ ու գործունեայ
Կեանք մը վարենք, քանի լոյս կայ.
Նրբ մահը գայ, հասնինք երկինք.
Հոս մընայուն քաղաք չունինք:

Ե՛բ. ԺԳ. 14 Հեղինակ Գ. Մ. ՇՄԱԽՈՆԵԱՆ

370 ԵՐԿՆԻՅ ՀԱՄԱՐ ՓԱՓԱՔ

- 1 Ի՞նչ է կեանքը, լոկ շողի մը
Որ շուտով անյայտ կ'ըլլայ,
Կամ պըլպլած աըկար պատրոյդ մը,
Սիրտս ինչո՞ւ անոք ցանկայ,
Բաց թեւերդ, հոգիս, թըւէր,
Երջանիկ երկիրն հասիր:
- 2 Տես, այն փառքը մեծափայլ է,
Չես կրնար նրկարագրել.
Հոն Յիսուս փրկիչդ շատած է,
Սուրբերուն Աբքայն և Տէր,
Բաց թեւերդ, և այլ:

- 3 Մեծ փառքով իր բուրբալքը
Երջանիկ հոգիք կ'երգեն.
Յնծումով բուրբ երկինքը
Անդադար կը լեցընեն,
Բաց թեւերդ, և այլ:

Թ-վ. Գ. 15

371 ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԵՐԳԸ

- 1 Գանի մը տարիէն
Մէկ օր մը պիտի գայ,
Երբ մահն ու գերեզմանըն ալ
Պիտի հասնին մեր վրայ,
Այն մեծ օրուան համար,
Ով Տէր, զիս պատրաստէ.
Գու արիւնովդդ զիս լըւա,
Ու մեղքերէս մաքրէ:
- 2 Դեռ քիչ մը ջանք ալ կայ,
Եւ քիչ մը աշխատանք,
Գանի մը օր ալ վշտալից,
Եւ ա՛լ պիտի չը լանք,
Այն քաղցր օրուան համար,
Ով Տէր, և այլ:
- 3 Գանի մը սուրբ օրեր
Մենք հոս պիտի վայլենք,
Եւ յուրաննական հանգիստ

Շուտով պիտի մըտնենք,
Այն սուրբ օրուան համար,
Ով Տէր, և այլ:

- 4 Այն որ սիրով մեռաւ
Որ մեղ մահէն փրկէ.
Շուտով կրկին պիտի զառնայ
Ու մեզ իր քովն առնէ:
Այն մեծ օրուան համար,
Ով Տէր, և այլ:

Յոբ. Է. 1-10

Թարգ. I. F. Pettibone

372 ՄԵՐ ԿԱՐՃ ԿԵԱՆՔԻ ԻՆՉՊԼՍ ԳՈՐԾԱՍԵՆՔ

- 1 Կախուած է կեանքս բարակ թելով,
Յանկարծ կը կըբարբի շունչով:
Ոհ, ի՞նչպէս չը խորհիմ:
Գուցէ վայրկեան մը զիս տանի
Երկինք, և կամ, է կարելի,
Անյոյս զըժոխք ձըգուիմ:

- 2 Տէր, զիբ առջիս երկնից լուսով
Այն օրն որ պիտի զաս ամսով
Դատել բոլոր մարդիկ:
Հոն ես ներկայ ըլլամ պիտի,
Վըճիռս ալ անփոփոխ տրուի,
Թշուառ կամ երջանիկ:

- 3 Ով Հայր, հօգիս դուն նորոգէ,
Անվերջ կենաց խորհուրդն ազգէ
Իմ անըզգայ սրտիս:
Անոր արժէքն ինձ ըզգացուր,
Եւ զիս փրկէ մահէն արխուր,
Անհուշ սիրովն փրկիս:

- 4 Իմ ջանքըս թող միշտ այս ըլլայ,
Եւ այս խորհուրդն առջիւս ներկայ,
Կոչումըս հաստատելու
Քու կամքդ ընել ինձի շնորհէ,
Եւ հայրական խրատիդ՝ օգնէ
Մինչ վերջը համբերելու:

- 5 Յայնժամ, Տէր, անարժան հոգիս
Ուրախութեանդ մէջ ընդունիս.
Եւ թող թագաւորիմ
Հոն՝ ուր հաւատքը տեսութիւն
Կ'ըլլայ և յոյսն՝ երջանկութիւն.
Տեսնեմ քեզ և սիրեմ:

Սուր. Լթ. 4, 5, 13

373 ՄԵՐ ՀՕՐԸ ՏՈՒՆԸ

- 1 Ճամբան երկար չէ այս կենաց,
Յաւեր, հոգեր, կըսկիծ ու լաց
Կ'անցնին, ամէն բան կը փոխուի
Անամայ երկնի, խաղաղ ծովի:

Հոսէ, խոր գետ,
Փըրփուրըզ վախ չաղէեր,
Նըժգեհն հօրը տունն է
Շատ կարօտցեր:

2 Հողւոյն իղձեր, շատ օր չանցած,
Կրնան մեկնիլ իսպառ ցընգած,
Երգ, բայ իրար են խառնըեր,
Հող չէ, հող չէ, շատ չըտուեր,
Հոսէ, խոր գետ, և այլն:

3 Տեսանք տըխուր աչքեր փակուած
Մեզմէ զատուող մեր սիրելեաց,
Բայց, ա՛հ, վերջին երգն ի՛նչ քաղցը էր,
ՁԳտնենք զիրար, շատ չըտուեր:»
Հոսէ, խոր գետ, և այլն:

4 Ըստեպ փըշոտ վայրի ճամբայ
Կոխելոյ անցնիլ մեզ հարկ կ'ըլլայ,
Եթէ ունինք հաւատք, յոյս, սէր,
Երնէկ մեզի շատ չըտուեր:
Հոսէ, խոր գետ, և այլն:

Թ. Բ. 2, 3 Թարգ. Տիկ. ՀՌ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

374 ԼՈՒՍՈՅ ԳՌՆԵՐՆ

1 Անյայտ է ինձի գալն Տէրոջը,
Ո՛չ կերպն, և ո՛չ ատենն գիտեմ,
Իսկ գիտեմ թէ պատրաստ ըլլալու եմ
Որ ցընձամբ յայտնըիլն ողջուեմ:

Յայնժամ թէ՛ աշխարհս կամ թէ՛ վերը,
Թէ՛ հոս թէ՛ սըրբոց մէջ լինիմ,
Լաւ գիտեմ որ իր սէրն կը պատէ զիս,
Իր սիրովն ալ հանգիստ բընակիմ:
Եւ երբ իր քաղցը ձայնն հրաւիրէ զիս,
Աւտուռ կամ գուցէ մութ գիշերն,
Բսելով թէ «Փըրկիչս զիս կանչած է,»
Ոհ, մտնեմ սուրբ քաղքին պերճ դըռներն:

2 Անյայտ է ի՛նչ կայ իմ առջեւս,
Թէ՛ վիշտ կամ թէ՛ անդորրութիւն.
Այլ գիտեմ թէ՛ ճամբուս աւարտումը
Կայ պատրաստ երկնային օրհնութիւն.
Եւ ո՛ւր որ ճամբաս կը տանի զիս,
Թէ՛ լեռն դըժուարին թէ՛ դաշտերն,
Փրկիչս մեծ սիրովը միշտ քալեմ ես,
Մեզմ կ'ըլլան ա՛լ ճամբուս տազնապներն,
Եւ երբ իր քաղցը ձայնն, և այլն:

3 Անյայտ է ի՛նչ գործ կ'սպասէ ինձ,
Ի՛նչ ջանք ապագայ օրերուս.
Լոկ կ'ուզեմ որ եռանդ պարգեւես ինձ,
Եւ օգնես ալ սրկար ձեռքերուս:
Եթէ ընդունայն ըրքանիմ ես,
Եւ ցաւ չարայար զիս նեղէ,
Տուր որ համբերեմ՝ մինչեւ որ իմ Տէրս
Երկինքին մէջ քաղտնիքն բացատրէ,
Եւ երբ իր քաղցը ձայնն, և այլն:
Մ-բ: ԺԳ. 35-37

375 ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

- 1 Ունայն աշխարհս ա՛լ կը ձրգեմ,
Հիմա երկինք երթալ կ'ուզեմ.
Հոն է ամէն բան լուսաւոր,
Սուրբ, պատուական և փառաւոր:
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն:
- 2 Իմ սիրելի եղբարք, մի լաք.
Ուրախ եղէք, իմ բարեկամք.
Մեղքէն ազատ եմ, ոչ թշուառ.
Եմ երջանիկ միշտ կատարեալ:
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն:
- 3 Խաւարն գընաց, է արշարոյս.
Ոհ, սուրբ քաղաք սրբաւոյն իր լոյս.
Արդարութեան ծագէ արեւ,
Հոգիս տեսաւ դբախտն արդարեւ.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն:
- 4 Ոհ, այս ժողով է սրբազան,
Գառն է անոր զըլուխ, իխան.
Որոնց փափաքն է չեքմեռանդ.
Երգել Տէրով նոր երգ զըւարթ.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն:
- 5 Կարդամ և ես երգ յաղթութեան,
Ըլամ այն սուրբ հօտին անդամ,

Լուսոյ ըզգեստ հազնիմ փայլուն,
Ընկերանամ երգիչ պարուն.
Ով Տէր Յիսուս, շուտ եկ. Ամէն:

Ա Կ-ր. ԺԵ. 55-57 Թարգ. ՄԿ. Տ. ԲԻՐԷ: 2 ձԵԱՆ

376 ՄԱՀՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

- 1 Հարկ է մեռնել, պիտի մեռնիմ.
Գեռ չը մեռած, ով Աստուած իմ,
Խնդրեքս քեզի մատուցանեմ.
Գուցէ ալ լըսէ, Տէր, կ'աղայեմ:
- 2 Ինձի հաւատք, յոյս և սուրբ սէր
Գուն պարգեւէ, խնդրեմ, ով Տէր,
Որ ուզածիդ պէս միշտ վարուիմ
Եւ երջանիկ մահուամբ մեռնիմ:
- 3 Մահուան ժամուս իմ քովս կեցիք,
Հըզօր բազուկդ գխուս տակ դիք.
Վերջին ցաւերըս թեթեւցուր,
Հանգիստ, խաղաղ լինձ մահ մը տուր:
- 4 Հաւատքս, ով Տէր, միշտ կենդանի
Պահէ մինչեւ որ շունչս հատնի.
Եւ իմ հոգիս ան տեղը գայ
Ուր հաւատքի ա՛լ պեմք չկայ:

ԵԲ-ր. Թ. 27 Հեղ. Գ. Մ. ՇՄԱԻՈՆԵԱՆԷ

377 ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՅՈՒՄ ՄԸ

- 1 Աշխարհ եկայ, կ'ապրեմ,
Օրերս, տարիքս կ'անցնին.
Մըտայ հոս յոյսերով,
Խորհիմ, գործեմ, խօսիմ.
Բայց ետքը ո՞ւր:
- 2 Հասնիմ յաջողութեան,
Բարեաց և օրհնութեան,
Առատ զըւարճութեան,
Գրեթէ զբախտի նըման.
Բայց ետքը ո՞ւր:
- 3 Թէ շատ օրեր վայելեմ,
Առողջ կեանք ալ վարեմ,
Բայց վերջապէս կարճ է,
Յաւեր պիտի գտնեմ.
Եւ ետքը ո՞ւր:
- 4 Կ'ելլեմ ես այն ատեն
Ողորմութեան կեանքին.
Յոյս, փրկութիւն մեկէն
Կ'անցնին մահուան գալէն.
Իսկ ետքը ո՞ւր:
- 5 Ահեղ փողին ձայնէն
Ատեանն պիտի ելլեմ,

Եւ մեծ Դատարուն
Վըճիրս պիտի լրեմ.
Բայց ետքը ո՞ւր:

- 6 Ահ, ո՞ւր անկէ ետեւ,
Մեղ ո՞վ կրնայ պատմել.
Մէկը երկինք կ'ելլէ,
Իսկ միւսն դըժոխք կ'իջնէ.
Ես յայնժամ ո՞ւր:

Թու. ԻԳ. 10

378 ՄԵՌՆՈՂԻՆ ԵՐԳԸ

- 1 Վերջին արեւս վար կ'արտորայ,
Մօտ է ինձ իրիկուն.
Իմ ասպարէզս կը վերջանայ,
Հեռու չէ Հօրըս տուն.
Խուճրեր հրեշտակաց
Թող բոլորաբաց կայնին,
Փայլուն թեւերովը թող զիս տանին
Անմահութեանըս տուն:
- 2 Շուտով սրբոց հրճուանքն ու երգն
Անշուշտ պիտի լրեմ,
Արդէն Յորդանանու եզերքն
Ոտքովըս կը կոխեմ.
Խուճրեր հրեշտակաց, և այլ:

3 Ոհ, մօտեցայ իմ Հօրըս տան
 Եւ ցնծութեամբ կ'երգեմ:
 Պայծառ խումբեր ահա կու գան,
 Թեւոց ձայնն կը լըսեմ:
 Խումբեր հրեշտակաց, և այլն:

4 Իմ Յիսուսիս յանձնեմ իմ սիրտս,
 Որ ինձ կու տայ պըստակ:
 Ինք իր արեամբ սըրբեց մեղքերս,
 Կու տայ ինձ յաղթանակ:
 Խումբեր հրեշտակաց, և այլն:

Բ ՏԷՒ. Գ. 6 Թարգ. Elias Riggs

379 ԳԵՏԻՆ ԵԶԵՐՔ

1 Արդեօք այն գետին եզերքը
 Մե՞ծ ոտքերն պիտի կոխեն,
 Ուր սուրբերն ու հրեշտակները
 Յընծութեամբ միշտ կը քարեն:
 Այո, մենք ալ ժողովուրդ հոն

Բողոք հըրեշտակաց ու սրբոց հետ:
 Այն յըստակ գետին եզերքը,
 Որ վերն աթոռէն կ'ելլէ:

2 Այն յըստակ գետին եզերքը
 Երբ ու բախտութեամբ կոխենք,
 Մենք ալ հոն երկնից երգերը
 Անդադար պիտի երգենք:
 Այո, մենք ալ և այլն:

3 Այն պայծառ գետին եզերքը
 Երբոր աչքերնիս տեսնէ,
 Յայնժամ Աստուծոյ Գառնուկը
 Աըցունքնիս պիտի սրբէ:
 Այո, մենք ալ և այլն:

4 Այն հանդարտ գետին եզերքը
 Քաղցրութեամբ կ'առաջնորդէ
 Իր հօտին բարի Հովիւը,
 Եւ զանոնք հոն կ'արածէ:
 Այո, մենք ալ և այլն:

5 Այն կենաց գետին եզերքը
 Վերջն է մեր պանդխտութեան.
 Հոն լեցուի պիտի մեր սիրտը
 Քաղցրութեամբ խաղաղութեան:
 Այո, մենք ալ և այլն:

Թարգ. ԻԲ. 1 Թարգ. Elias Riggs

380 ՄԱՀՈՒԱՆ ԳԵՏԸ

1 Կ'սպասեմ գետին եզերքը,
 Մի՞րոս անցնիլ շատ կը բաղձայ,
 Եւ կ'զգամ սրբոց քաղցը երգը
 Որ հեռուէն ականջս կու գայ:
 Կը տեսնեմ նոր սըշալոյսը,
 Երկնային լերանց ծայրերն,
 Ուր շարերն սանձիկ կարող չեն,
 Կը հանգչին ա'լ յոգնածներն:

- 2 Արտասոււաց ձորին այն կողմը՝
Սուրբ դաշտից վրայ շողշողուն
Կատարեալ երջանկութիւն կայ
Անվախճան դարեր փայլուն
Ոհ, կուզեմ ըլալ երկնից մէջ՝
Հրեշտակաց անշարժ տուներն,
Ուր չարերն տանջել կարող չեն,
Կը հանգչին ա՛լ յողջածներն:
 - 3 Նաւ պատրաստ է մութ գետին վրայ
Միւս եղերքն զիս տանելու,
Որ անցնի նեղուած հոգիս հո՛ն՝
Ուր չըկայ բան նեղելու:
Ոհ, ցնծմամբ կ'երթամ հանգիստը,
Ուր Յիսուս կայ և սուրբերն.
Հոն չարերն տանջել կարող չեն,
Կը հանգչին ա՛լ յողջածներն:
- ՓԻԼՒՊ. Ա. 21, 23 Թարգ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

381 ՀՈՆ ՅԱՒ ԶԿԱՅ

- 1 Սիրելիներս, եկեք,
Երբ մեռնելու մօտ եմ,
Երկնից վրայով ինձ երգեցէք,
Երգով թող վեր ելլեմ:
Հոն ցաւ կամ վիշտ չը կայ,
Հոն ցաւ կամ վիշտ չը կայ,
Երկինքը վեր, ամէնն է սէր,
Ա՛լ ցաւ կամ վիշտ չը կայ:

- 2 Երբ ճակատէս կաթին
Մահուան ցուրտ ծանր քրտինք,
Թող ցնծութեան երգեր լրսուին,
Հոս ըսկըսի երկինք:
Հոն ցաւ, և ոչ ոն:
- 3 Վախճանըս հասնելուն՝
Երեսըս դիտեցէք:
Որ վրաս երկնից խաղաղութիւն,
Փառաց նըշոյլ տեսնէք:
Հոն ցաւ, և ոչ ոն:
- 4 Թող Սիօնի երգերն
Լըսեմ երբոր մեկնիմ:
Գտնեմ երգի քաղցր բարեւներն
Երբոր երկինք հասնիմ:
Հոն ցաւ, և ոչ ոն:
- 5 Ա՛լ չը տեսնող այգերս
Սիրով դուք դոցեցէք,
Եւ պաղ ու անարիւն ձեռքերս
Կուրծքիս վրայ ծալեցէք:
Հոն ցաւ, և ոչ ոն:
- 6 Շուրջ անկենդան մարմնոյս
Սիրելիներս գալով —
Թող հոն տիրէ վախի տեղ յոյս —
Երգեն երկնից վրայով
Հոն ցաւ, և ոչ ոն:

382 ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՄԱՀԷՆ ՎԱԽԱՆՈՒ ԶԷ

- 1 Ո՛րչափ վախկոտ ու վառ կ'ըլլանք,
Նրբոր մահուան կը մօտենանք,
Զէ՞ որ խայթոցը դառն մահուան
Փըշրեց Յիսուս խաչին վըրան:
- 2 Զէ՞ որ մահն է միակ միջոց՝
Որով ազատ կ'ըլլանք ցառոց
Սւայն խաւար ու խոր ձորէն,
Ուր միշտ կու լանք մեր ծնած օրէն:
- 3 Զէ՞ որ մահն է միջոց միակ՝
Որով կրնանք ըլլալ զիտակ
Ան սուրբ, խորին խորհուրդներուն,
Որ հոս ծածուկ են ամէնուն:
- 4 Զէ՞ որ միայն մահով պիտի
Ազայխարողն հասասարի
Սուրբ հրեշտակաց՝ անմահութեամբ,
